

Հեղինակ
Լեւա Կակաշվիլի

Հեղինակային խումբ.
Բեքա Կվաճաճե
Գիորգի Ուգուլավա
Իրակլի Փերաճե



11

Պատմություն

Ուսուցչի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության
նախարարության կողմից, 2023 թվականին:



ՆԱԿԱԿԱՅՐՈՆ
ՅԱՅՄԱՅԱՅՄՈՒԹ

Պատմություն 11
Ուսուցչի գիրք

Հեղինակ՝ **Լեւա Կակաշվիլի**
Հեղինակային խումբ՝ **Բեքա Կվաճաձե, Գիորգի Ուգուլավա, Իրակլի Փերաձե**

Խմբագիր՝ **Նինո Գոգալաձե**
Դիզայներ՝ **Իա Սախաթաձե**

Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

Առաջին հրատարակություն, 2023
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՄՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-467-8

History 11
Teacher's Book

© Sulakauri Publishing, 2023
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

Կառուցվածքը	5
Միջնակարգ մակարդակի չափորոշիչը.....	13
Թեմայի կայուն պատկերացումները	33
Հասկացություններ	45
Աշակերտների գնահատման համակարգեր.....	47
Ուսանում-ուսուցման ռազմավարությունները	54
Թեմատիկ մատրիցաներ.	67
Հեղինակի մեկնաբանությունները.....	214

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասագրքի հիմնական գործառույթն է ամբողջությամբ համապատասխանել երրորդ սերնդի ազգային ուսումնական պլանի նպատակներին և նպաստել դպրոցական հանրությանն այս նպատակները ներդնել ուսումնական գործընթացում: Իր էությամբ այն ավելի շատ ռեսուրս է հանդիսանում, որն ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ բազմաթիվ ձևերով կիրառել՝ նպատակներին, մարտահրավերներին և մասնագիտական իրավասություններին համապատասխան, քան կուռ փաստաթուղթ, որն ուսուցչին աշխատանքային գործընթացում չի տալիս մանկրելու հնարավորություն: Այս առումով դասագիրքը պատասխանում է երկու հիմնական մարտահրավերների, որոնց աշխատանքի ընթացքում բախվում է դպրոցական հանրությունը. մի կողմից, այն խորը մշակում է ուսումնասիրվելիք հարցը, ներկայացնում այն տարբեր հեռանկարներից, կենտրոնանում պատճառահետևանքային հարցերի վրա, որպեսզի աշակերտը յուրաքանչյուր պատմական իրադարձության, գործընթացի և թեմայի մասին դատողություն անելու ժամանակ պատասխաններ ունենա այն հարցերին, թե ինչու և ինչպես է տեղի ունեցել այս իրադարձությունը, ներմուծում է միջնակարգ աստիճանին համապատասխան հետազոտական, դատողական և վերլուծաբանական դիսկուրս, և ժամանակագրական պատմական հեռանկարի հետ մեկտեղ իրադարձությունները մշակում է նաև թեմատիկ պատմական հեռանկարից:

Դրա նպատակն է, որ աշխատանքի գործընթացում ամբողջովին և խորքային ընդգրկի մշակվելիք հարցերն այնպես, որ լրացուցիչ ռեսուրսների օգտագործման նվազագույն կարիք լինի: Այս առումով այն սպառիչ ռեսուրս է ոչ միայն աշակերտի, այլև ուսուցչի համար, քանի որ նպատակ ունի դասի նախապատրաստման ընթացքում ուսուցչին

առաջարկել լրիվ, բազմակողմանի, սպառիչ և խորը մշակում, որպեսզի նա նվազագույն չափով ունենա լրացուցիչ ռեսուրս ստեղծելու անհրաժեշտություն:

Մյուս կողմից, նրա կառուցվածքային ճկունությունը, որը մենք մանրամասնորեն կքննարկենք ստորև, կօգնի դպրոցական համայնքին, որ այն լավ հարմարեցնի յուրաքանչյուր դպրոցի, ուսուցչի և դասի իրականությանն ու մարտահրավերներին, որպեսզի խուսափեն ժամանակի սակավության պատճառով նյութը չմշակելու կամ խորքային չմշակելու ռիսկերից: Մշակվելիք հարցի մասին այն առաջարկում է մի քանի շերտանոց տեղեկատվություն, որը հարցը մշակում է պարտադիր-բազիսային, խորքային և հետազոտական-գիտական մակարդակով, ինչն ուսուցչին հնարավորություն կտա, ըստ դպրոցական ուսումնական պլանի նպատակների և առաջնահերթությունների, իր անձնական, մասնագիտական, իրավունակությունների և տեսլականների ու դասարանի կարիքների ու մարտահրավերների՝ յուրաքանչյուր ուսումնասիրվելիք հարցը մշակել համապատասխան մակարդակով և խորությամբ: Դասագիրքը հնարավորություն է ստեղծում (և ոչ թե անհրաժեշտություն), իսկ ուսուցիչն, ըստ աշակերտի կարիքների, վերոնշյալ գործոնների համաձայն ընտրում է, թե ինչ մասշտաբով և ինչ խորությամբ կարող է մշակվել յուրաքանչյուր հարց:

Ընդհանուր առմամբ, դասագրքի մշակման արդյունքը պետք է լինի խորքային, միջնակարգ աստիճանի կարիքներին հարմարեցված, որակապես նոր տեսակի գիտելիք ստանալը, որը կնպաստի աշակերտին լավ, տարբեր հեռանկարներից գիտակցելու պատմական գործընթացը և ընկալելու այն որպես կենդանի, դինամիկ և ակտիվ գործընթաց, որը չի կորցնում կապն արդիականության հետ և

պատմական գործընթացը ներկայացնում է որպես շարունակական, զարգացող շղթա, որն օրգանապես կապում է տարբեր

պատմական դարաշրջանները, այդ թվում արդիականությունը: Այս առումով նրա արդյունքը պետք է լինի հիմնական աստիճանում արդեն ստացած գիտելիքի ակտիվացում նոր հեռանկարից, նրա մշակում համապիտանի, հասկացությունների տեսանկյունից և դրանց նկատմամբ հետազոտական, վերլուծական և ստեղծագործական վերաբերմունք ձևավորել:

Պետք է առանձնացնել այն գործոնը, որ, մի կողմից՝ դասագրքի մեթոդաբանական և կառուցվածքային մասը լիովին համապատասխանում է և նախատեսում նորագույն եվրոպական և ամերիկյան դասագրքերի փորձը, իսկ մյուս կողմից, նրանում նախատեսված են վրացական և արևմտյան նորագույն հետազոտության արդյունքները: Առանձնահատուկ շեշտադրում է արվում դասավանդման գործընթացում գիտական և հետազոտական դիսկուրսի ներմուծման վրա:

Առանձնահատուկ շեշտադրում է արվում տարբեր պատմական խնդիրները ժամանակակից համատեքստում քննարկելու վրա, որպեսզի աշակերտն ընկալի տիեզերքի պատմական զարգացման շարունակականությունն ու այս բնագավառի արդիականությունը, մինևույն ժամանակ հասնի այն պատկերացման, որ արդիականության համար հրատապ խնդիրները, ինչպիսիք են՝ անսահմանափակ իշխանության ռիսկերը, բնական կատակլիզմների հետևանքով առաջացած ճգնաժամերը և տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության առաջընթացի վրա նախ և առաջ պետք է ընկալվեն և ուսումնասիրվեն պատմական համատեքստում:

Դասագիրքը բաղկացած է երեք անկախ կառուցվածքային միավորներից՝ Աշակերտի գիրք, Ուսուցչի գիրք և Աշակերտի տետր:

Իր հերթին, Աշակերտի գիրքը միավորում է երեք թեմա. Միջնադար, Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ և Երկարատև XIX դար:

Թեման բաժանված է գլուխների (ընդամենը 7 գլուխ): Գլուխների բաժանման սկզբունքը նախատեսում է մեկ գլխի շրջանակներում մեկ, ամբողջական պատմական ժամանակաշրջանի և ենթաժամանակաշրջանի ընդգրկում, որպեսզի նրանում մշակված նյութը ստեղծի անկախ, կառուցվածքային և բովանդակային միավոր:

Իր հերթին, յուրաքանչյուր գլուխ բաղկացած է պարագրաֆներից (ընդամենը 68 պարագրաֆ), որն ամբողջությամբ ներառում է երկու կիսամյակ շաբաթական երկժամյա ծանրաբեռնվածության պայմաններում:

Յուրաքանչյուր գլուխ առանձին, անկախ կառուցվածքային և բովանդակային միավոր է: Գլուխը միշտ սկսվում է համալիր առաջադրանքով, որպեսզի աշակերտը հենց առաջին փուլում ծանոթանա կատարվելիք առաջադրանքին և հետագայում ուսումնական գործընթացն այս առաջադրանքին միտված, դրա պահանջների կամ առանձնահատկությունների նախատեսմամբ վարի (դրանում նրան կօգնեն նաև Աշակերտի տետրում տրված բազմազան նյութերն ու ակտիվությունները):

Ընդհանուր առմամբ, յոթ գլուխների շրջանակներում տրված է նույնքան համալիր առաջադրանք, ինչն ուսուցչին մի կողմից՝ հնարավորություն է տալիս, որ ամբողջ ուսուցումը վարի համալիր առաջադրանքի կատարման-իրականացման գործընթացում և յուրաքանչյուր մշակվելիք հարց կամ պարագրաֆ հարմարեցնի այս գործընթացին, մյուս կողմից՝ նա հնարավորություն ունի ընտրելու իր համար ցանկալի մեկ կամ մի քանի առաջադրանք, իսկ ուսումնական նյութի մնացած մասն ինքնուրույն մշակել: Դասագրքի կառուցվածքը նրան հնարավորություն է տալիս երկու եղանակով էլ աշխատել:

Յուրաքանչյուր գլուխ սկսվում է ներածական մասով, որը վերոհիշյալ համալիր առաջադրանքից բացի, սկսվում է կարճ ծանոթագրության ոճով գրված դարաշրջանի փոքրիկ ակնարկով, այսպես կոչված գլխի ներկայացմամբ և ամենակարևոր ու

հանգուցային տարեթվերի թվարկմամբ: Նույն տեղում սահմանված են հասկացություններ, որոնք մշակվում են համալիր առաջադրանքի միջոցով: Սովորաբար յուրաքանչյուր գլխում առանձնացված է երկու հասկացություն:

Առանձին պետք է նշել, որ յուրաքանչյուր գլուխ ուղեկցվում է տեսանյութերով՝ որպես ռեսուրս, որոնք հնչյունավորված են վրացերեն և աշակերտին հնարավորություն են տալիս շտրիխկոդի ակտիվացմամբ, «Մմարթֆոնի» միջոցով ստանալ լրացուցիչ տեղեկություններ գլխի շրջանակներում մշակված բոլոր կարևոր հարցերի մասին:

Այստեղ հարկ է նշել, որ առանձին է ներկայացված գլխի փակումը՝ դրա ամփոփիչ մասը, որ տրված է յուրաքանչյուր գլխի վերջում: Այն վերլուծական ակտիվությունների միջոցով մեկ անգամ ևս հիշեցնում է գլխում քննարկված նյութը և մշակել տալիս այն, և հենց նույն տեղում թեմատիկ բաժիններում աշակերտին առաջարկում ենք լրացուցիչ ընթերցանության գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական գրականություն, վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր, սերիալներ և այլն: Նման եղանակով աշակերտին առաջարկում ենք գրականության և փոփ մշակույթի միջոցով իրեն հետաքրքրող հարցերի շուրջ իր իսկ նախաձեռնությամբ լրացուցիչ տեղեկություններ ստանալ և, մինևնույն ժամանակ ընդգծում ենք պատմության արդիականությունը և նրա կապը ժամանակակից աշխարհի հետ:

Յուրաքանչյուր պարագրաֆ երեք հիմնական բաղադրիչների՝ հասկացության, ժամանակագրական պատմական հարցի և թեմատիկ պատմական հարցի մի ամբողջություն է: Երեքն էլ (հասկացություն, ժամանակագրական հարց և թեմատիկ հարց) այնպես են ընտրված, որպեսզի իրար հետ օրգանական կապակցման միջոցով ստեղծեն մեկ բովանդակային և տեղեկատվական ամբողջականություն և օգնեն աշակերտին հարցը մշակել բազմաթիվ տարբեր տեսանկյուններից: Համաձայն դասագրքի՝ հարցի լավ մշակումը նշանակում է դրա հասկացությունների, ինչպես նաև խորը

թեմատիկ (օրինակ, սոցիալական պատմության հարցերը) տեսանկյունից ուսումնասիրում, որպեսզի աշակերտը միջնակարգ աստիճանում ստանա սպառիչ, բազմապրոֆիլ գիտելիք և նրա մոտ ձևավորվի հարցի վերլուծական ընկալում՝ հիմնված գիտելիքների կառուցման կոնստրուկտիվիստական սկզբունքների վրա:

Ամմիչապես պարագրաֆը սկսվում է հանգուցային հարցով (որի մշակումն էլ պետք է լինի դասի գործընթացի հիմնական լեյտմոտիվը) և հասկացություններով: Առանձնացված են երկու հասկացություններ, որոնք մշակվում են պարագրաֆում: Հասկացություններն այնպես են խմբավորված, որպեսզի աշակերտը յուրաքանչյուր պատմական դարաշրջանում կարողանա այս դարաշրջանը մշակել բոլոր վեց հիմնական հասկացությունների (ժամանակ, տարածություն, աղբյուր, իշխանություն, հասարակություն, պատմական իրադարձություն/գործընթաց) տեսանկյունից: Այն հասկացությունները, որոնք առանձնացված են համալիր առաջադրանքում, մշակվում են ընդգծված և խորքային: Եթե, օրինակ, համալիր առաջադրանքի շրջանակներում մշակվում են իշխանությունը և հասարակությունը, աշակերտը կոնկրետ թեմայի շրջանակներում կմշակի բոլոր վեց հասկացությունները, թեև իշխանությանը և հասարակությանը ավելի հաճախ կհանդիպի պարագրաֆներում:

Պարագրաֆը հենց սկզբում ունի առանձին տրված համառոտ ծանոթագրություն, որն աշակերտին կօգնի հստակ պատկերացնել մշակվելիք հարցը, իմանալ նրա կարևորությունը և նախապես ունեցած գիտելիքն ակտիվացնելու վերհիշելու միջոցով նրա մոտ ձևավորվի հետևողական գիտելիք: Ծանոթագրության մասը նախապայման է ստեղծում նոր նյութը մշակելու համար:

Պարագրաֆի սկզբում՝ հենց ներածական մասում տրված է համապատասխան դարաշրջանի կարևոր դեմքի կողմից ասված կամ կոնկրետ դարաշրջանը նկարագրող արտահայտություն, մեջբերում, որը մի կողմից՝ բազմազանացնում է նյութը, այն դարձնում հրատապ և աշակերտներին

ծանոթացնում տարբեր կարևոր պատմական դեմքերի, մյուս կողմից՝ կարճ, պարփակ ուղերձի տեսքով մարմնավորում ամբողջ պարագրաֆի հիմնական գաղափարը և օրգանապես կապվում մշակվելիք նյութի հետ:

Յուրաքանչյուր պարագրաֆում առանձնացված է հիմնական և օժանդակ տեքստ (առանձին կառուցվածքային միավորների այսպես կոչված ներդիր, «Մա հետաքրքիր է»-ի ձևով) և նյութը տարբերակված ձևով է տրամադրված: Հիմնական տեքստը նույնիսկ առանց օժանդակ տեքստի ստեղծում է ամբողջական և տրամաբանական պատմություն, այնուամենայնիվ, ներդիրների միջոցով նյութը խորությամբ է մշակվում, և աշակերտին լրացուցիչ տեղեկություններ են տրամադրվում հիմնական տեքստում ակտիվացված հարցերի մասին: Այսպիսի ներդիրներով խուսափել ենք տեքստի գերծանրաբեռնումից, այդ թվում եզրույթներով, տարեթվերով և այլ սպեցիֆիկ նյութով, միևնույն ժամանակ, աշակերտը հնարավորություն ունի ստանալ ավելի խորը գիտելիքներ:

«Մա հետաքրքիր է» խորագիրն ավելի լրացուցիչ տեղեկությունների բնույթ ունի, որը, տարբեր հետաքրքիր ու հիշարժան մանրամասներ առաջարկելով, նպատակ է նախանշում վերակենդանացնել և արդիականացնել աշակերտի համար մշակվելիք նյութը:

Յուրաքանչյուր պարագրաֆի լրացուցիչ կցվում է Աշակերտի տետրում տեղադրված հավելված՝ սոցիալական պատմության թեմաներով, որոնք օրգանապես կապվում են հիմնական մշակվելիք հարցերի հետ և աշակերտին օգնում. մի կողմից՝ խորապես հասկանալ պարագրաֆի նյութը, այլ տեսանկյունից ընկալել հարցը, և միևնույն ժամանակ, պատմությունը տեսնել ոչ միայն ռազմական ու քաղաքական պատմության հեռանկարից, այլ նաև ծանոթանալ առօրյա կյանքին և բազմազան կենցաղային մանրամասների: Հենց այստեղ հարկ է նշել, որ հիմնական աստիճանում այս տեսակի պատմական պատումի վրա պակաս է արվում շեշտադրում, և դա մեզ հնարավորություն է տալիս միջնակարգ

աստիճանում ուսուցումը նոր աստիճանի բարձրացնել և նոր հեռանկարով տրամադրել աշակերտներին:

Ակտիվությունները տրված են տեքստի հիմնական մասում, ինչն օգնում է մեզ հարցերն անմիջապես մշակել դասի ընթացքում:

Բնականաբար, ակտիվությունները կազմված են՝ ելնելով հարցի բովանդակությունից: Բայց յուրաքանչյուր ակտիվություն, լինի դա քննարկում, դատողություն, աշխատանք քարտեզի վրա, ճանաչողական դիագրամի լրացում կամ աղբյուրի մշակում, ծառայում է մի քանի նպատակների՝ աշակերտը հասկանա դասագրքում տրված տեղեկությունը և հեշտությամբ կարողանա ստացած գիտելիքը դեկլարատիվից վերածել պայմանի հետ կապված գիտելիքի: Նման արդյունքը, բնականաբար, քայլ առ քայլ, ծանոթից դեպի անծանոթը շարժվելու սկզբունքով է ձեռք բերվում, և դասագրքի ակտիվությունները նույնպես, ինչպես նաև ամբողջ տեքստերը՝ այս սկզբունքների վրա են հիմնվում:

Ինչ վերաբերում է Աշակերտի տետրին ու Ուսուցչի գրքին, դրանք անկախ միավորներ են, սակայն ոչ՝ ուղղակի դասագրքի հավելում: Ընդհակառակը, ըստ մեր հայեցակարգի՝ նրանցից յուրաքանչյուրն ամբողջի մի մասն է, և յուրաքանչյուրն ունի իր սեփական գործառնությունը և ծանրաբեռնվածությունը:

Աշակերտի տետրը հետևում է Ուսուցչի գրքում տեղ գտած համալիր առաջադրանքներին և նրա ակտիվություններին: Գրավոր առաջադրանքները, դիագրամները, աղբյուրի վերլուծությունը և սոցիալական պատմություն պարունակող հավելվածներն օգնում են աշակերտին հեշտությամբ կատարել բարդ համալիր առաջադրանքը՝ տարբեր ակտիվությունների մշակման ճանապարհով: Միևնույն ժամանակ, լրացուցիչ, աշակերտը գրավոր աշխատում է գրքում ցրված համապատասխան առաջադրանքների վրա: Դասարանում դրանց վրա աշխատելը ուսումնական գործընթացը դարձնում է ավելի ծանրաբեռնված և հետաքրքիր, իսկ որպես տնային առաջադրանք կատարելու դեպքում

դրանք նոր նյութի յուրացման գործընթացում վերածվում են աշակերտի համար լրացուցիչ օգտակար ռեսուրսի: Տետրի վերջում տրված են նաև օգտակար հղումներ, որոնք աշակերտներին կտրամադրեն դասագրքում ուսումնասիրվող դարաշրջանի համապատասխան լրացուցիչ ինտերնետ ռեսուրսներ:

Ուսուցչի գիրքը նախատեսված է որպես օժանդակ ռեսուրս մանկավարժների համար, որպեսզի նրանք ավելի լավ կարողանան ուսանում-ուսուցման սկզբունքները ներդնել ըստ երրորդ սերնդի ազգային ուսումնական պլանի և տարեկան ծրագրերի: Ուսուցչի գրքում ներառված են այս նպատակներին ծանոթանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ միջնակարգ աստիճանի չափորոշում, ըստ բովանդակության դասավորված հարցերի ցանկի հետ մեկտեղ, հստակ ձևավորված են յուրաքանչյուր թեմայի արդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ստուգիչները: Դրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում: Ստուգիչները խմբավորված են ըստ նպատակային հասկացությունների: Դրանց հաջորդում են թեմատիկ կայուն պատկերացումները: Թեմայի հետ կապված կայուն պատկերացումների գործառույթն է աշակերտի մոտ պատկերացում ստեղծել ուսումնասիրվելիք թեմայի ուրվագծերի մասին: Ուստի ուսուցչի համար էլ հեշտ կլինի ձեռքբերվելիք ուղենիշներն ուրվագծել այս կամ այն հարցի առնչությամբ: Դրան հաջորդում են առարկայի նպատակային հասկացությունները և աշակերտների գնահատման համակարգեր, ինչպես որոշող, այնպես էլ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի վրա հիմնված զարգացնող գնահատման գործիքը: Կոնկրետ պատմական հարցի վրա հիմնված բոլոր մակարդակների գնահատման նմուշով ներկայացված զարգացնող գնահատման գործիքը, կարծում ենք, ուսուցիչների համար ավելի հասկանալի և ընկալելի կդարձնի SOLO տաքսոնոմիայի սկզբունքները և նպատակը:


Դասավանդման գործընթացն արդյունավետ անցկացնելու համար ուսուցիչներին առաջարկում ենք ուսանում-ուսուցման ռազմավարություններ

և որոշակի ակտիվությունների գնահատման խորագրեր, ինչը նրանց համար կհեշտացնի և՛ ուսումնական գործընթացը, և՛ ուսանում-ուսուցման սկզբունքների դասասենյակում ներդրումն ու իրականացումը:

Ներկայացված մատրիցաները դասավանդման գործընթացում հանդիսանում են ուսուցչի արդյունավետ օժանդակ ռեսուրս, և դրանք մեկ ամբողջության (Աշակերտի գիրք, Աշակերտի տետր, Ուսուցչի գիրք) օրգանական մաս են կազմում: Մեր կողմից բոլոր գլուխների համար կազմված համալիր առաջադրանքներով, ցանկության դեպքում, ուսուցիչը կկարողանա ապահովել դասագրքում տրված նյութի ամբողջությամբ ընդգրկում: Մեր հայեցակարգի համաձայն, համալիր առաջադրանքների կատարման ժամանակ հիմնական ռեսուրսը դասագիրքն է, և մնացած այլ ռեսուրսներ, դասագրքում տրված հարցերով հետաքրքրվելու դեպքում, ավելին իմանալու համար բերված ռեսուրս է, այլ ոչ թե՛ այլընտրանքային տարբերակ: Համապատասխանաբար, ուսուցիչների համար այս ռեսուրսների այս կամ այն պատճառով կիրառելի կարողանալը չի դառնա համալիր առաջադրանքը կատարելի կարողանալու և հարցը փոխանցելի կարողանալու պատճառ: Ավելին, հստակ են ըստ հասկացության կայուն պատկերացումների մշակվելիք քայլերի հաջորդականությունը և նաև այն հարցերը, որոնք այս քայլերի իրականացման ժամանակ պետք է տրվեն, և սա այս դասագրքում առկա հարցերի և ակտիվությունների օրգանական շարունակությունն է, ինչն այս երեք բաղադրիչների ամբողջականության և ս մեկ հավաստում է:

Ուսուցչի գրքի հաջորդ մասում կհանդիպեք հ ե դ ի ն ա կ ի հ ա ն ձ ն ա ր ա ր ա կ ա ն ն եր ի ն մ ան կ ա վ ա ր ժ ն եր ի հ ա մ ար : Այս գլուխը մ ան կ ա վ ա ր ժ ն եր ի ն կ օ գ ն ի դ ա ս ա գր ք ի հայեցակարգի ընկալման և ըմբռնման մեջ և ավելի արդյունավետ կդարձնի նրանց կողմից անցկացված դասերը:

XI ԴԱՍԱՐԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 3 ԹԵՄԱՅԻՑ ԵՎ 68 ՊԱՐԱԳՐԱՖԻՑ: ԴԱՍԱԳՐՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՈՐԱԳՐԵՐ.



Մո՛ւտք գործիր պատմություն.
Դիտի՛ր տեսանյութը իմացի՛ր
ավելին Հռոմեական կայսրության
ճգնաժամի մասին: Կայքի հղումը
տե՛ս գրքի վերջին էջում:


Վրաց լեզվով հնչյունավորած տեսանյութ, որն
ակտիվանում է սմարթֆոնի միջոցով QR կոդով
կամ կարելի է այն տեսնել բաց աղբյուրում՝
անցնելով նշված հղումով:

”

«Գերմանիայի
տիրակալները
փորձել են
մարժաավորել
Կարլոս Մեծի
երազանքի
վերածված
ծրագիրը՝
եվրոպական
աշխարհը վերածել
մեկ կայսրության»:

*Ժակ Կոֆֆ, Ժամանակակից
ֆրանսիացի պատմաբան*


Մեջբերում – հայտնի
պատմական անհատի
կամ պատմաբանի
արտահայտություն
դարաշրջանի կամ
կոնկրետ պատմական
իրադարձության մասին:



Ժամանակային գծի – դարաշրջանի և կոնկրետ ժամանակաշրջանի
հանգուցային իրադարձությունների և տարեթվերի թվարկում, որը
Ժամանակային գծի վրա ներկայացված է տեսանելիորեն հեշտ
ընկալելի տեսքով:

Միմոնիա
Այս տերմինը նշանակում էր հոգևոր ծառայության, գործողության կամ արտոնության ձեռքբերում ու վաճառք: Տերմինը գալիս է Միմոն Մագուսից, որը կրոնական ավանդույթի համաձայն փորձում էր Պետրոս առաքյալից գումարի դիմաց իրեն փոխանցել գործություն՝ հրաշքներ գործելու համար:

Տեքստին զուգահեռ ներկայացված է **բառարան**, որը բացատրում է աշակերտի համար անձանթը բառերը կամ հասկացությունները:



Մեմոել Ադամ
(1794 -1797)

Ամերիկացի քաղաքական գործիչ և փիլիսոփա, Ամերիկայի հիմնադիր հայրերից մեկը: Գործունեություն է ծավալել Նյու Ինգլենդում, ակտիվորեն մասնակցել է Ամերիկյան հեղափոխությանը և աջակցել հանրապետական գաղափարներին:

Համառոտ կենսագրություն – տեքստին զուգահեռ ներկայացված համառոտ տեղեկություններ համապատասխան դարաշրջանի գործիչի մասին:

Մա հետաքրքիր է

Որտեղի՞ց է առաջացել «Լուսավորություն» տերմինը:

Լուսավորություն տերմինը համեմատաբար ուշ շրջանի է: Անգլերեն տերմինը՝ «Enlightenment» հայտնվում է միայն XIX դարում: Մինչ այդ գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտը այս տերմինը 1784 թվականին օգտագործում է գերմաներեն՝ Aufklärung-ը: Նմանատիպ նշանակություն ունեւ ֆրանսերեն Lumière տերմինը, որն օգտագործվել է դեռևս 1733 թվականին: Այս բոլոր տերմինները մոտավորապես միանման նշանակություն ունեն:

Մա հետաքրքիր է – լրացուցիչ տեղեկություններ տեքստում ներկայացված հետաքրքիր հարցի վերաբերյալ:

Առաջադրանք

4 Դատողությունն արա

Ինչո՞ւ էր եկեղեցին թերահավատորեն ընկալում գիտական հայտնագործությունները:

5 Դատողությունն արա

Ինչո՞ւ էին գիտությունն ու եկեղեցին տիեզերքն ընկալում տարբեր կերպ:

Առաջադրանք – օգնում է նյութը հասկանալուն, նրա վերլուծաբանական ըմբռնմանը և մշակմանը, նպաստում քննդատական, վերլուծաբանական և ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Ունի նյութի զուգադրման գործառույթ:

Սահմանադրական միապետություն

1789/1791 – 1793

Առաջին Հանրապետություն

1792 – 1804

Դիագրամներ, որոնց վրա վիճակագրական և այլ տեղեկություններ տրված են կառուցված տեսքով:

Աղբյուր 2

Լորդ Ուելինգթոն, անգլիացի հրամանատար, Նապոլեոնի ամենասկզբունքային հակառակորդներից մեկը

«Նապոլեոնի ներկայությունը մարտի դաշտում համարժեք է 40 հազար զինվորի առկայության: Նա հավատով ու ուժով է լցնում և՛ զինվորներին, և՛ մարշալներին: Նրա անձնական հզորությունը զինվորներին ուժ է տալիս հաղթահարելու դժվարությունները: Նրանք հավատում են, որ Նապոլեոնի հետ միասին անպայման հաղթելու են»:

Աղբյուր – աշակերտին տեղեկություններ է տրամադրում սկզբնաղբյուրի տեսքով: Օգնում է նյութի նկատմամբ իր անձնական վերաբերմունքի ձևավորման մեջ: Դրա նպատակն է նպաստել աշակերտի քննադատական և վերլուծական մտածողության ձևավորմանը և պատմական իրադարձությունների տարբեր կերպ մեկնաբանմանը:

ՆԵՐՂԻՐ

Նապոլեոնը և նրա ընտանիքը

Նապոլեոնի առաջին կինը 1796 թվականից Ժոզեֆինան էր: 1810 թվականին Ավստրիայի պարտությունից հետո նա բաժանվել է Ժոզեֆինայից և ամուսնացել դինաստիական ամուսնությամբ: Վագրամի ճակատամարտի և հինգերորդ կոալիցիայի պարտությունից հետո Նապոլեոնը ամուսնացել է Ավստրիայի արքայադուստր Մարի Լուիզայի հետ: Նրանք ունեցել են որդի՝ Նապոլեոն Երկրորդին: Այս դեպքում ևս Նապոլեոնը գնացել է դինաստիական միապետության ճանապարհով և իրենից հետո պատրաստվում էր իշխանությունը հանձնել որդուն: Նապոլեոն II-ը չի դարձել Ֆրանսիայի տիրակալ, նա բավականին երիտասարդ, 22 տարեկան հասակում մահացել է տուբերկուլյոզից:

Ներդիր – լրացուցիչ տեղեկությունների տեսքով տրված է այնպիսի տեղեկություն, որն օգնում է տեքստի խորքային ըմբռնմանը: Հիմնականում տեքստում տրված պատմությունը հենց ներդիրում է խորացված:

Ինչ կլիներ, եթե.

• Պատմությունը բազմաթիվ շրջադարձային իրադարձություններ և դրվագներ է հիշում, որոնք տրամագծորեն փոխել են աշխարհի զարգացումը:

Հիշի՛ր նախորդ գլուխը, ձեռք բերված գիտելիքներով գնահատի՛ր պատմական իրադարձությունները և այս գիտելիքի և քո վերլուծության հիման վրա գրի՛ր փոքրիկ շարադրություն. **Ինչ կլիներ, եթե Նապոլեոնը չպարտվեր Վաթերլոյի ճակատամարտում:**

• Շարադրություն գրելու ժամանակ նկատի՛ ունեցիր հետևյալ գործոնները.

ա. Ինչո՞ւ են տարիներ շարունակ եվրոպական կոալիցիաները կռվել Նապոլեոնի և դրանից առաջ՝ Ֆրանսիական հեղափոխության դեմ:

բ. Որքա՞ն կուտ աջակցություն ուներ Նապոլեոնը ֆրանսիական հասարակությունից:

գ. Հասարակական կարգի ո՞ր սկզբունքն էր մարժնավորում Նապոլեոնը այդ դարաշրջանի Եվրոպայում: Ինչո՞ւ էր նա եվրոպական միապետությունների համար անընդունելի:

դ. Որքանո՞վ գլոբալ նշանակություն ուներ Վաթերլոյի ճակատամարտը:

Ինչ կլիներ, եթե.

Վարժություն, որն ի մի է բերում ամբողջ գլուխը, արձագանքում է նրա յուրաքանչյուր պարագրաֆին, նպաստում ճանաչողական և վերլուծաբանական կարողությունների զարգացմանը, նպաստում վերացական մտածողությանը:

Հավելված

• Միջնադարի մարդկանց բնական միջավայրը

Հնագույն դարաշրջանում Հռոմեական կայսրությունում կամ հունական աշխարհում ապրող մարդն իր առօրյայի մեծ մասն անցկացնում է դրսում՝ քաղաքի կամ բնակավայրի կենտրոնական հրապարակում, ֆորումում, թատրոնում, հավաքների վայրերում: Միջնադարում ամեն ինչ փոխվեց՝ մարդը հայտնվեց իր սեփական տանը փակված: Գյուղացու փոքրիկ հողաշեն տնակ լինելը դա թե կոմսի պալատ, նույն նպատակին էր ծառայում. պետք է պատսպարեր ու պաշտպաներ մարդուն դրսում գտնվող թշնամուց, որովհետև միջնադարում դրսում ժնջված մարդուն շատ վտանգներ էին սպառնում: Միջնադարյան հասարակության մեջ տանը շնորհիվ սուրբ իմաստ և այն, ըստ սովորության իրավունքի, համարվում էր անձեռնմխելի վայր:

Հավելվածն աշակերտներին ծանոթացնում է սոցիալական պատմության տարբեր ասպեկտներ (սնունդ, հագուստ, ճարտարապետություն և այլն), ինչը մի կողմից նպաստում է հիմնական տեքստում տրված տեղեկությունների ավելի խորը ըմբռնմանը, իսկ մյուս կողմից՝ սովորական մարդու կյանքի մանրամասների նկարագրությունը հեշտացնում են կոնկրետ դարաշրջանը տեսնելն ու ըմբռնելը:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չափորոշիչը նախատեսված է միջնակարգ աստիճանի աշակերտների համար: Դրա հիման վրա պետք է պատրաստվի երկու դասընթաց. (1) Դրանցից առաջինը՝ «Պատմությունը» նշանակում է համաշխարհային պատմական նշանակություն ունեցող իրադարձությունների/ գործընթացների ուսուսման պարտություն և դրանց հետ է կապում Վրաստանի պատմության հարցերը, (2) երկրորդ դասընթացի՝ «Վրաստանի պատմության» շրջանակներում՝ շեշտը դրվում է վրաց պատմագիտության հրատապ խնդիրների հետազոտության/խորքային ըմբռնման վրա:

Չափորոշչում արդյունքների և նպատակային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ նպատակներ:

Բովանդակությունը նկարագրվում է թեմաների (ենթաթեմաների), հարցերի և ենթահասկացությունների տեսքով: Ազգային ուսուսման պլանը սահմանում է պարտադիր թեմաներ, իսկ թեմաներին համապատասխան հարցերն ընտրում են դպրոցները:

Յուրաքանչյուր թեմա ուղեկցվում է արդյունքներին հասնելու ստուգիչներով: Դրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում: Ստուգիչները խմբավորված են ըստ նպատակային հասկացությունների:

Աստիճանի արդյունքները

Միջնակարգ աստիճանի չափորոշչում տրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է դասիչ, որը ցույց է տալիս առարկան, ուսուցման փուլը և չափորոշիչ արդյունքի համարը. Օրինակ, **Պատմ.միջն.1.**

«Պատմ.»՝ մատնանշում է «Պատմություն» առարկան:

«Միջն.»՝ մատնանշում է միջնակարգ աստիճանը:

«1»՝ մատնացույց է անում չափորոշիչի արդյունքի համարը:

Պատմության չափորոշի արդյունքները (VII-X դասարաններ)

Արդյունքների ստուգիչը	Արդյունքներ	Նպատակային հասկացություններ
Պատմ.միջն.1.	Աշակերտը պետք է կարողանա. Պատմական աղբյուրն օգտագործել սեփական կարծիքի/ դիրքորոշման հիմնավորման համար: Պատմագիտության զարգացման օրինաչափությունները կապել այն գիտակցության հետ, որ նոր աղբյուրներ/ ապացույցներ հայտնաբերելու դեպքում հնարավոր է ցանկացած իրադարձություն նորովի հասկանալ/ վերարժևորել:	Պատմական աղբյուր (Պատմ.միջն. 1, 2, 4, 5)
Պատմ.միջն.2.	Պատմական իրադարձությունների վերլուծության ժամանակ համարժեք օգտագործել ժամանակագրական միավորները և պատմաաշխարհագրական տերմինները: Պատմական գործընթացների մասին տարածա-ժամանակային ասպեկտներն ուսուճասիրել՝ փոփոխականության երևույթը հասկանալու համար:	Ժամանակ (պատմական ժամանակաշրջան) (Պատմ.միջն. 1,2,3,4,5,6)
Պատմ.միջն.3.	Պատմական իրադարձությունը/գործընթացները դասակարգել և տիպաբանորեն խմբավորել (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ նշանով)՝ տարբեր պատմական դարաշրջաններում և նոր ժամանակներում գոյություն ունեցող տիպիկ նման իրադարձությունները և գործընթացները փոխկապակցված քննարկելու համար:	Տարածություն (միջավայր, տարածք) (Պատմ.միջն. 1,2,3,4,5,6)
Պատմ.միջն.4.	Նույն պատմական իրադարձությունը/ գործընթացը/ անհատի գործունեությունը տարբեր կերպ մեկնաբանել, վերլուծել և գնահատել՝ բազմատեսանկյուն մոտեցումների առավելությունը գիտակցելու համար:	Հասարակություն (Պատմ. միջն. 1,2,3,4,5,6)
Պատմ.միջն.5.	Պատմական իրադարձությունները և գործընթացները տեսնել/գնահատել ինչպես կոնկրետ դարաշրջանում ապրող մարդկանց աչքերով, այնպես էլ դարաշրջանից հեռանալով, մի կողմից՝ դարաշրջանի եզակիությունը, մյուս կողմից՝ համակողմանի գաղափարների զարգացման օրինաչափությունները հասկանալու համար:	Իշխանություն (Պատմ. միջն. 3,4,5,6,7,8)
Պատմ.միջն.6.	Երկրի անցյալը, ներկան և ապագան հասկանալ միասնական համատեքստում: Պատմական օրինակների վրա հիմնվելով՝ ժողովրդավարության սկզբունքները (մշակութային, էթնիկ և կրոնական բազմազանության նկատմամբ դրական վերաբերմունք, հավասարություն, խաղաղապահական գործընթացներ) կապել պետականության և հայրենասիրության հետ:	Պատմական իրադարձություն / գործընթաց (Պատմ. միջն. 3, 4, 5, 6)

Պարտադիր թեմաներ.

«Պատմություն» և «Վրաստանի պատմություն» դասընթացները կդասավանդվեն զուգահեռաբար: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, թե որ պարտադիր թեմաները պետք է դասավանդվեն փոխկապակցված.

Պատմություն	Վրաստանի պատմություն
X դասարան	X դասարան
1. Նախապատմական ժամանակաշրջանը և Հին Արևելքը	Վրաստանը քարի և բրոնզի դարերում
2. Հնագույն դարաշրջան	Վրաստանը հնագույն դարաշրջանում (մինչև մ.թ. III դարը)
3. Ուշ անտիկ դարաշրջան և վաղ միջնադար	Վրաստանը ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում (մինչև 1014 թվականը)
XI դասարան	XI դասարան
4. Միջնադար	Զարգացած միջնադարը Վրաստանում
5. Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ	Վրաստանը XV-XVIII դարերում
6. «Երկարատև XIX դարը»	Վրաստանը Ռուսաստանի կայսրության կազմում
XII դասարան	XII դասարան
7. «Կարճատև XX դարը»	Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն Վրաստանը Խորհրդային Միությունում
8. Աշխարհը հազարամյակի սահմանագծին	Վրաստանը և ժամանակակից աշխարհը

Ուսումնառության գործընթացում դպրոցները պետք է հետևեն վերը նշված թեմաների հաջորդականությանը:

Ազգային ուսումնական պլանը թեմաները լուսաբանելու համար անհրաժեշտ հարցերը պարտադիր տեսքով չի սահմանում: Այսպիսով, Ուսուցչի գրքում ներկայացնում ենք պարտադիր թեմաները և գնահատման ստուգիչները կապող աղյուսակներ միջնակարգ աստիճանի համար:

Յուրաքանչյուր աղյուսակ պարունակում է գնահատման ստուգիչներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են արդյունքները իրացվում կոնկրետ թեմայում:

X ԴԱՍԱՐԱՆ

Թեմա. Նախապատմական ժամանակաշրջանը և Հին Արևելքը

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիճակագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել նախապատմական և հին արևելյան ժամանակաշրջանների պատմական իրադարձությունները/գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Նախապատմական և հին արևելյան ժամանակաշրջանների հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք նախապատմական և հին արևելյան ժամանակաշրջաններում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի առանձնահատուկ ընկալում:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Նախապատմական ժամանակաշրջանի/բրոնզի դարի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել քարի և բրոնզի դարերի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել հին արևելյան ժամանակաշրջանում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել նախապատմական ժամանակաշրջանի/բրոնզեդարյան հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) հինարևելյան ժամանակաշրջանի Վրաստանի և Մերձավոր Արևելքի երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել նախապատմական ժամանակաշրջանի/բրոնզի դարի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները տիպաբանական առումով խմբավորել, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակից աչքերով), դրանք կապել/համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանը քարի և բրոնզի դարերում
<p>Թեման ենթադրում է քարի և բրոնզի դարերի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:</p>
<p align="center">Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները</p> <p>Աղբյուր /մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել քարի և բրոնզի դարերի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ): <p>Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ● Քարի և բրոնզի դարերի հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում), դրանք վերլուծել նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ: <p>Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ● Քարի և բրոնզի դարերի Վրաստանի հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքների (օրինակ՝ «Բերրի կիսալուսին», Միջագետք, Մերձավոր Արևելք և այլն) նշանակությունը: <p>Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ● Հետազոտել քարի և բրոնզի դարերում Վրաստանի տարածքում գոյություն ունեցած հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ), պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով: <p>Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) քարի և բրոնզի դարերի օրինակների հիման վրա: <p>Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> ● Հետազոտել քարի և բրոնզի դարի պատմության հետ կապված իրադարձությունները/ գործընթացները (օրինակ, երբևից է Վրաստանի տարածքում առաջանում «համալիր հասարակություն»), հանգուցային հարցերին առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

Թեմա. Հնագույն դարաշրջան (մինչև մ.թ III դարը)

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել հնագույն դարաշրջանի պատմական իրադարձությունները/ գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Հնագույն ժամանակաշրջանի հետ կապված պատմական իրադարձությունները/ գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք հնագույն ժամանակաշրջանում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի ֆենոմենի առանձնահատուկ ընկալում:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հնագույն ժամանակաշրջանի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել հնագույն դարաշրջանի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել հնագույն ժամանակաշրջանում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել հնագույն ժամանակաշրջանի հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) հնագույն ժամանակաշրջանի Վրաստանի և Մերձավոր Արևելքի և միջերկրածովյա երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել հնագույն դարաշրջանի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանը հնագույն դարաշրջանում

Թեման ենթադրում է անտիկ դարաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Հնագույն դարաշրջանի հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում): Վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հնագույն դարաշրջանի Վրաստանի հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ, բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքների (օրինակ՝ Կոլխեթի, Իբերիա, Պոնտոս, Հայաստան) նշանակությունը:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել հնագույն դարաշրջանի Վրաստանի տարածքում գոյություն ունեցած հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ), պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) հնագույն դարաշրջանի օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել անտիկ դարաշրջանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, հույներն ինչու նորաշեններ հիմնեցին Վրաստանի տարածքում), հանգուցային թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները տիպաբանական առումով խմբավորել, տարբեր տեսանկյուններից վերլուծել, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

Թեմա. Ուշ անտիկ դարաշրջան և վաղ միջնադար (մինչև 1014 թվականը)

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիճակագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի պատմական իրադարձությունները/գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի առանձնահատուկ ընկալում:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) Վրաստանի և Մերձավոր Արևելքի և միջերկրածովյա երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանը ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում (մինչև 1014 թվականը)

Թեման ենթադրում է ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում): Վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ Դարիալիի դարպաս, Դերբենտի դարպաս): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ), պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, որ սոցիալ-քաղաքական տարածքների մաս էր հանդիսանում Վրաստանը ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակից աչքերով):

XI ԴԱՍԱՐԱՆ

Թեմա. Միջնադար

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել միջին դարերի պատմական իրադարձությունները/ գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք միջնադարում պայմանավորում էին փոփոխականության/ ժամանակաշրջանի երևույթի առանձնահատուկ ընկալում:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել միջնադարի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել միջնադարում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել միջնադարյան հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) միջնադարյան Վրաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել միջնադարի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Զարգացած միջնադարը Վրաստանում

Թեման ենթադրում է զարգացած միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր /մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ) հիմնվելով՝ հետազոտել միջնադարյան Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարյան Վրաստանի պատմության հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում): Վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարյան Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ Սամցխե-աթաբազություն, Կղեկարիի էրիսթավիություն): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել միջնադարյան Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) միջնադարյան Վրաստանի օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել միջնադարյան Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, երբվանից են ձևավորվում ֆեոդալական հարաբերությունները Վրաստանում, ինչ առանձնահատկություններ ուներ այն), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

Թեմա. Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիճակագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի պատմական իրադարձությունները/գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի ֆենոմենի նորովի ընկալում:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի Վրաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանը XV-XVIII դարերում

Թեման ենթադրում է «Երկարատև միջնադարի» ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ հետազոտել XV-VIII դարերի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- XV-VIII դարերի Վրաստանի պատմության հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- XV-VIII դարերի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ սաբարաթիանո, քաղաքացիական): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել XV-VIII դարերի Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական դարաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) XV-VIII դարերի Վրաստանի օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել XV-VIII դարերի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, Վրաստանում ինչո՞ւ առաջացան իշխանություններ: Վրաստանն ինչո՞ւ մասնատվեց թագավորություն-իշխանությունների), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

Թեմա. «Երկարատև XIX դարը»

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել XIX դարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- XIX դարի հետ կապված (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ:
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք XIX դարում (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») ազդում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի ընկալման վրա:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- XIX դարի հետ (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») կապված իրադարձությունների/ գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել XIX դարում (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») Վրաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, տարբեր տեսանկյուններից վերլուծել, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանը Ռուսաստանի կայսրության կազմի մեջ

Թեման ենթադրում է 1801-1917 թվականների Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել 1801-1917 թվականների Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- 1801-1917 թվականների Վրաստանի պատմության հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- 1801-1917 թվականների Վրաստանի պատմության խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ Թբիլիսիի նահանգ, Գորիի գավառ): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1801-1917 թվականների ժամանակահատվածի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Դարաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) 1801-1917 թվականների Վրաստանի պատմության օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1801-1917 թվականների Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, Վրաստանին ի՞նչ արդյունքներ բերեցին Միխեիլ Վորոնցովի բարեփոխումները), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

Թեմա. «Կարճատև XX դարը»

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (գրավոր աղբյուրներ, աուդիո-ֆոտո-ֆոնո նյութ) հիմնվելով՝ վերլուծել XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») պատմական իրադարձությունները/ գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») հետ կապված պատմական իրադարձությունները/ գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ:
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք XX դարում (ենթադրվում է «Կարճատև XX դարը») ազդում էին փոփոխականության/ժամանակի երևույթի նորովի ընկալման վրա:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- XX դարի հետ (ենթադրվում է «Կարճատև XX դարը») կապված իրադարձությունների/ գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել XX դարի համար (ենթադրվում է «Կարճատև XX դարը») առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Վերլուծել այն գործոնները, որոնք XX դարում (ենթադրվում է «Կարճատև XX դարը») ազդում էին տարածության երևույթի նորովի ընկալման վրա:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք)՝ Վրաստանի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն

Թեման ենթադրում է Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1918-1921 թվականների հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Դարաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) 1918-1921 թվականների Վրաստանի պատմության օրինակների հիման վրա:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները/գործընթացները (օրինակ, Վրաստանին ինչո՞ւ քնդունեցին Ազգերի լիգա), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով:

Թեմա. Աշխարհը հազարամյակների սահմանագծին

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (գրավոր աղբյուրներ, աուդիո-ֆոտո-ֆոնո նյութ) հիմնվելով՝ վերլուծել «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները:

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ:
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանում ազդում էին փոփոխականության/ժամանակի երևույթի ընկալման վրա:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Վերլուծել այն գործոնները, որոնք «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանում ազդում էին տարածության երևույթի ընկալման վրա:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք)՝ «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի Վրաստանի և աշխարհի այլ երկրների օրինակների վրա հիմնվելով:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել «Մառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

Թեմա. Վրաստանը Խորհրդային Միության մեջ

Թեման ենթադրում է խորհրդային ժամանակաշրջանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել խորհրդային շրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- Խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել խորհրդային ժամանակաշրջանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության օրինակով:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները/գործընթացները (օրինակ, ո՞ր գործոնները նպաստեցին Խորհրդային Միության փլուզմանը), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով:

Թեմա. Վրաստանը և ժամանակակից աշխարհը

Թեման ենթադրում է 1990-ական թվականների և հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի ցուցաբերում:

Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները

Աղբյուր/մեկնաբանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

Ժամանակ – Աշակերտը պետք է կարողանա.

- 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

Տարածություն – Աշակերտը պետք է կարողանա.

- 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

Հասարակություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

Իշխանություն – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի օրինակով:

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները և գործընթացները (հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

Պատմական իրադարձություն/գործընթաց – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները և գործընթացները (օրինակ, ի՞նչ մարտահրավերների առջև է Վրաստանին կանգնեցնում գլոբալացումը), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

ԹԵՄԱՅԻ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Թեմատիկ կայուն պատկերացումները որակապես տարբերվում են նպատակային հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներից:

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումների գործառույթը աշակերտի մոտ ուսուսմասսիրվելիք թեմայի ուրվագծերի հետ կապված պատկերացման ստեղծումն է:

Առաջարկում ենք XI դասարանում ուսուսմասսիրվելիք թեմաների կայուն պատկերացումները.

Թեմա 1. Միջնադար

Նպատակային հասկացություն	Աշակերտը պետք է ըմբռնի, որ.
Ժամանակ	<ul style="list-style-type: none"> • Միջնադարը միաստվածային կրոնների՝ քրիստոնեության և իսլամի. մի կողմից դիմակայության, մյուս կողմից՝ փոխներգործության ժամանակաշրջան է: • Միջնադարում պատմության պարբերականացումը և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում սահմանված էր կրոնական նշանով ինչպես հայեցակարգային մակարդակով, այնպես էլ հավատացյալների համար կրոնական տոների հաշվարկման ձևով: • Չարգացած միջնադարում մասնատված քաղաքական միավորների խոշորացման միտումը փոխեց Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի քաղաքական քարտեզը: • Միջնադարում, ինչպես նաև վաղ ժամանակաշրջաններում մարդկանց հողին ամրացված մասի համար ցերեկվա և գիշերվա հերթագայումը հիմնականում կապված էր տնտեսական գործունեության հետ, սակայն ժամանակի վերահսկողությունը եկեղեցու ձեռքում է: • Ժամացույցներ ժամանակակից իմաստով միջնադարում գոյություն չունեին ո՛չ քրիստոնեական, ո՛չ էլ մահմեդական աշխարհում:
Տարածություն	<ul style="list-style-type: none"> • Չարգացած միջնադարում մասնատված քաղաքական միավորների խոշորացման միտումը փոխեց Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի քաղաքական քարտեզը: • Քաղաքակրթության երեք մեծ կենտրոնների՝ Բյուզանդական կայսրության, մահմեդական Արևելքի և «լատինական» Արևմուտքի հատման տարածքը Լևանտն էր: • Արաբական խալիֆայության փլուզումը Բյուզանդիային հնարավորություն տվեց տարածքային ընդլայնում իրականացնել Մերձավոր Արևելքի և Կովկասի ուղղությամբ: • Մերձավոր Արևելքի և Արևելյան Եվրոպայի տարածքը միջնադարում բազմաթիվ (թուրք-սելջուկներ, պեչենեգներ, ղվչաղներ) քոչվոր ժողովուրդներ են խախտել, ինչը հանգեցրել է այս տարածքների սահմանների և պետությունների փոփոխության: • Բյուզանդիայի համար մրցակիցներ հայտնվեցին առևտրառազմավարական տարածքների և երթևեկության ճանապարհների տիրապետման համար, որոնք կարողացան մասամբ գաղութացնել Լևանտի տարածքը: • Միջնադարում «Մետաքսի ճանապարհը» միացնում էր Եվրոպան ու Ասիան: Այս խոշոր տարանցիկ ցանցի որոշ երթուղիներ և հատվածներ անցնում էին նաև Վրաստանով: • Չարգացած միջնադարում Մոնղոլական կայսրության ներքին երթևեկության ճանապարհային ցանցն ու անվտանգությունը հեռավոր ճանապարհորդությունների հետաքրքրություն ու հնարավորություն առաջացրին ինչպես քրիստոնեական, այնպես էլ մուսուլմանական աշխարհում և այլուր, ինչը հանգեցրեց քարտեզների և աշխարհագրական գիտելիքների կատարելագործման:

<p>Աղբյուր</p>	<ul style="list-style-type: none"> ● Զարգացած միջնադարում աղբյուրների հիմնական տեսակներն են գրավոր (օրենսդրական, տարեգրություն, անալներ, էպոսներ, նամակներ, կենսագրական...) վիմագրական, ազգագրական, հնագիտական (ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում), սակայն քրիստոնեական աշխարհի համար վաղ միջնադարում առանձնահատուկ նշանակություն ունեցող եկեղեցական գրականությանը և սրբագրությանը զուգահեռ մեծ նշանակություն են ձեռք բերում պատմական ժողովածուները և աշխարհիկ բնույթի էպոսը: ● Միջնադարում հատուկ դեր է ստանձնում զինանշանագիտությունը, որն ավելի բնորոշ է եվրոպական տարածքին: ● Միջնադարում միաստվածային կրոնները սահմանեցին սրբավայրի, ծիսական նպատակի, բնակատեղի և հագուստի (առօրյա, ծիսական, մարտական) տեսակը, որի արտեֆակտները դարաշրջանի համալիր վերակառուցման համար թանկարժեք նյութ են: ● Միջնադարյան Վրաստանի պատմության վերականգնման համար կարևոր են հունալեզու (բյուզանդական տարածքի), արաբական և հայկական աղբյուրները, սակայն ստեղծվում են նաև բնագիր վրացական տարեգրական աշխատություններ և ժողովածուներ, ինչպես նաև իրավունքի հուշարձաններ: ● Միջնադարյան աղբյուրների հավաստիության աստիճանը որոշվում է աղբյուրի տեսակով և ժանրային հատկանիշներով և դրանց ստեղծման վայրով (կրոնական նշանակության տարածք, աշխարհիկ իշխանության նստավայր, բարձրագույն ուսումնական հաստատություն):
-----------------------	---

<p>Հասարակություն</p>	<ul style="list-style-type: none"> ● Միջնադարյան մարդու աշխարհայացքը հիմնված էր աշխարհի նախախնամական ընկալման վրա, որը լիովին սահմանեց կրթության առաջնահերթությունները. կրթության կենտրոնների վերածվեցին վանքերը և մեդրեսեները, բայց քաղաքային կյանքը հանգեցրեց կրթություն ստանալու դիվերսիֆիկացման: ● Արևմտյան Եվրոպայում համալսարանների առաջացումը սկսվում է զարգացած միջնադարից և, չնայած այն հանգամանքին, որ Բյուզանդիայում, նրա ազդեցության գոտու երկրներում և արաբական պետությունում մինչ այդ գոյություն ուներ բարձրագույն ուսումնական հաստատության տեսակ, ժամանակակից համալսարանների նախակարապետը հենց արևմտյան տեսակի բարձրագույն կրթությունն է: ● Զարգացած միջնադարյան հասարակությունը (հիմնականում քրիստոնեական աշխարհի արևմտյան մասը) բնութագրվում է եռանդամ հասարակությամբ, որը ենթադրում է խիստ սահմանված սոցիալական հիերարխիա: Այս մոդելը ավելի քիչ է նման բյուզանդական հասարակությանը և լիովին անհամատեղելի է իսլամական աշխարհի հետ, թեև կաստայական պարփակվածության օրինակներ հանդիպում են Հեռավոր Ասիայում: ● Զարգացած միջնադարում վերջնականապես ձևավորվել է ֆեոդալիզմը՝ բարդ սոցիալ-տնտեսական և ռազմական համակարգը (որը նշանակում էր խոշոր հողատիրոջը քաղաքական իրավունքների շնորհում), որը տիպիկ դրսևորմամբ բնորոշ է քրիստոնեական Արևմտյան Եվրոպային: Արևելյան Եվրոպային, Մերձավոր Արևելքին և Հեռավոր Արևելքին այս համակարգը կա՛մ միայն մասամբ է բնորոշ, կա՛մ մեկ այլ սոցիալ-տնտեսական համակարգ են ստեղծում (որտեղ հողի սեփականատերը պետությունն է կամ նրա խորհրդանիշը դարձած տիրակալը):
------------------------------	--

	<ul style="list-style-type: none"> ● Միջնադարը ասպետների (ակրիտասների, լավ ճորտի...), ամրոցների ու բերդաքաղաքների, հերոսական էպոսների, տրուբադուրների դարաշրջան է: Չնայած գրականության մեջ կնոջ լիրիկական պատկերմանը, նրա իրավական կարգավիճակը և հասարակական կյանքում սոցիալական դերը զիջում էր տղամարդու դերին: ● Չարգացած միջնադարը ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում քաղաքային կյանքի վերելքով է բնութագրվում, սակայն, արևմտաեվրոպական քաղաքների կառավարիչներ/տիրապետողներ դարձան քաղաքացիները (վաճառական-արհեստավորների վերին շերտը), այն դեպքում, երբ Բյուզանդիայում քաղաքային ինքնակառավարման մարմինների դերը հասնում է նվազագույնի, իսկ իսլամական աշխարհում քաղաքը աչքի չէր ընկնում իր մունիցիպալ ինքնակառավարմամբ: ● Եռանդամ հասարակության երրորդ «անդամը» քաղաքի բնակչությունն է: Դասերն այն, ինչ ունեին ընդհանուր, անձնական ազատությունն է: ● Չարգացած միջնադարում կլիմայի փոփոխությունը (տաքացումը) բնակիչներին հնարավորություն տվեց հողագործական գործունեության մեջ որոշ նորարարություններ կատարել և մեծ հողահանդակներ օգտագործել: ● Քաղաքային կյանքի վերելքը հանգեցրեց փակ ինքնաբավ տնտեսության խախտման, աշխատանքի բաժանման/մասնագիտացման և դրամավարկային-ապրանքային հարաբերությունների ամրապնդման: ● Չարգացած միջնադարում քրիստոնեական աշխարհում առանձնացան արևմտաեվրոպական (11-12-րդ դարերի մտավոր վերելք) և բյուզանդական մշակութային տարածքներ (մակեդոնական վերածնունդ), որոնց օտարացման խորհրդանշական դրսևորում կարող ենք համարել Մեծ սխիզմը: ● Չարգացած միջնադարում քրիստոնեական աշխարհի այն հատվածում, որտեղ հասարակությունը դասային էր, տեղի է ունենում դասային-ներկայացուցչական մարմինների ձևավորում: ● Միջնադարյան տնտեսությունը հիփսվում է հողի մասնավոր սեփականատիրոջ և հողի վրա բարիք ստեղծողի անհավասար հարաբերությունների վրա, որի բնույթը քրիստոնեական աշխարհում դարձավ համընդհանուր, իսկ իսլամական աշխարհում մասնավոր սեփականատիրական իրավունքները շատ ավելի պայմանական բնույթ էին կրում: ● Լատինական Արևմուտքում միջնադարյան քաղաքակրթությունը նշանավորվել է հռոմեական-ռոմանիզացված հատվածի, ինչպես նաև գերմանական տարրի և քրիստոնեության սինթեզով, Բյուզանդիայում՝ հունախոս հելլենական-հելլենիստական, ինչպես նաև սլավոնական -արևելյան ժողովուրդների և քրիստոնեության սինթեզով: ● Չնայած թուրք-մոնղոլական քոչվոր տարրի գերակշռությանը (ինչը փոխեց Մերձավոր և Միջին Արևելքի ժողովրդագրական պատկերը) իսլամական տարածության մեջ Մերձավոր և Միջին Արևելքում պարսկական տարրը առավելություն է ձեռք բերել հասարակական կյանքի կառավարման, կենցաղային և մշակութային առումով:
--	---

<p>Իշխանություն</p>	<ul style="list-style-type: none"> ● Ձարգացած միջնադարյան Արևմուտքին բնորոշ և առանձնահատուկ են երկրբնեռությունը և աշխարհիկ ու հոգևոր իշխանության դիմակայությունը իշխանության համար, այն դեպքում, երբ Բյուզանդիայում երկիշխանության սկզբունքը ավելի ու ավելի է խախտվում, և նկատվում է կեսարոպապիզմի գերակշռումը: ● Ձարգացած Միջնադարում Բյուզանդիայի նման բյուրոկրատական ապարատի ձևավորման և կատարելագործման գործընթաց է ընթանում նաև Արևմտյան պետություններում, որն օգտագործվել է որպես իշխանության կենտրոնացված կառավարման լծակ, իսկ Արևելքում քոչվոր ժողովուրդների կողմից նվաճված պետություններում վարչական ապարատի ստեղծման ժամանակ այն սեզմենտն է առջխաղացում ունենում, որն ունի պետական զարգացման մեծ ավանդույթ: ● Ձարգացած միջնադարում իշխանության փոխանցման ձևաչափը որոշվում էր ժառանգական-արքայատոհմական սկզբունքով, սակայն այն ամենուր խիստ արտահայտված բնույթ չունեի, ոչ էլ մայրատի կարգն էր համընդհանուր: ● Միջնադարում իշխանություն հաստատելու հավակնություններ է հանդես բերում աճող հոգևոր իշխանությունը, ինչի համար ակտիվորեն օգտագործում է տարբեր տեսակի ռեսուրսներ (բարոյական, էթիկական, կրթական առավելություն...) ● Ձարգացած միջնադարում իսլամական տարածության մեջ գերագույն իշխանությունը կրողը՝ խալիֆայի ինստիտուտը, որը միավորում էր աշխարհիկ և կրոնական իշխանությունները, անկում ապրեց և կորցրեց իշխանությանը միանձնյա տիրապետման բնույթը:
<p>Պատմական իրադարձություն, գործընթաց</p>	<ul style="list-style-type: none"> ● Արևմտյան Եվրոպայում երկրորդ թագը և Հռոմեական կայսրությունը ժառանգելու հավակնությունը վերջնականապես անխուսափելի դարձրին միասնական քրիստոնեական տարածության քաղաքական, աշխարհայացքային-կրոնական տարանջատումը: ● Միջնադարը Պիրենեյներում և Մերձավոր Արևելքում խաչակրաց արշավանքների և ասիական մեծ կայսրությունների (թուրք-սելջուկներ, մոնղոլներ) դարաշրջան է: ● Բյուզանդական «Համագործակցությունը»/ Բյուզանդական «Իդեալը»՝ Արևելյան քրիստոնեության և բյուզանդականության ֆենոմենով տոգորված ժողովուրդների միավորում էր քրիստոնյաների հոգևոր առաջնորդը՝ ավտոկրատը կայսեր դրոշի ներքո: ● Միջնադարում կովկասյան տարածաշրջանը քաղաքակրթությունների (քոչվորական և բնիկ) բախման խաչմերուկ էր, Վրաստանի մշակութային սանդղակը սահմանվել է բյուզանդական աշխարհի հետ սերտ կապով, թեև XII դարը քաղաքական և մշակութային տեսակետից Վրաստանի հզորության դարաշրջանն է, ինչը նրան հնարավորություն տվեց ինքնուրույն դուրս գալ ասպարեզ: ● Միջնադարյան Արևմտյան Եվրոպայի տարածքը բնութագրվում է աշխարհիկ և կրոնական հակամարտությամբ, ինչը ձևավորեց այս տարածության քաղաքական զարգացման երկբնեռ զարգացման մոդել, որը բնորոշ չէր ոչ Բյուզանդիային, ոչ էլ առավել ևս՝ իսլամական Արևելքին: ● Արևելյան Հռոմեական կայսրությունում նախորդ պատմական ժամանակաշրջանում ստեղծված Հռոմեական իրավունքի կիրառումը Արևմտյան Եվրոպայի տարածքում ամուր հիմք ստեղծեց աշխարհիկ պետության գաղափարի վերածննդի համար:

Թեմա 2. Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ

Նպատակային հասկացություն	Աշակերտը պետք է ըմբռնի, որ.
Ժամանակ	<ul style="list-style-type: none"> ● Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակաշրջանում՝ բուն քրիստոնեական քաղաքակրթության և փասցած աշխարհի համեմատ նույնպես Արևմտյան Եվրոպայի տարածաշրջանն առանձնացավ որպես ծանրության կենտրոն առաջադեմ զարգացման ուղղությամբ: ● Ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակների ընդհանուր բնութագրերը (սոցիալ-տնտեսական, արժեքային, աշխարհայացքային) հիմնականում ձևավորվեցին որպես Արևմտյան Եվրոպայի և առհասարակ Արևմտյան աշխարհի բնութագրեր: Բյուզանդիայի անկումից հետո Վրաստանի պատմության պարբերականացումը շեղվեց դարաշրջանի քրիստոնեական աշխարհում ճանաչված նշագծերից: ● Պատմության պարբերականացումը ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում Արևմուտքում հայեցակարգային մակարդակում հեռացավ կրոնական հիմքերի վրա հիմնված սահմանումից, պարբերականացման նոր մոդելը ասոցացվում էր հումանիստների անվան հետ: ● Ժամացույցները ժամանակակից իմաստով, համապատասխանաբար՝ ժամանակի ավելի ռացիոնալ ըմբռնումը, ուշ միջնադարից՝ Վերածննդի դարաշրջանից են սկիզբ առնում: ● Միջնադարի և վաղ արդի ժամանակաշրջանի ուրվագծումը արևմտյան տեսանկյունից, թվագրվում է Բյուզանդիայի անկումով, Եվրոպայում Ռեֆորմացիայի սկզբով և նոր մայրցամաքի հայտնագործումով, որոնք քիչ թե շատ հստակ նշագծեր են քրիստոնեական աշխարհի համար, թեև դրա պայմանականության և մեկի կամ մյուսի առավելության մասին գիտնականների միջև վեճը չի դադարում: ● Քրիստոնեական աշխարհում հերթական օրացույցային բարեփոխման արդյունքում, առավելություն ստացավ Գրիգորյան օրացույցը, որպես ավելի ճշգրիտ, սակայն արևելյան քրիստոնեական աշխարհը կարևորագույն կրոնական տոները հաշվարկելիս փասց Հուլյան օրացույցի հետևորդ:

<p>Տարածություն</p>	<ul style="list-style-type: none"> ● Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում ընթանում էր կենտրոնացման գործընթաց, ինչը բացի գերմանական և իտալական տարածքների միավորումից, Եվրոպայում հանգեցրեց միասնական պետությունների ձևավորման գործընթացի, ինչն արտահայտվեց տարածքային և պետական սահմանների փոփոխություններով: ● Օսմանյան թուրքերի կողմից Բյուզանդիայի տապալումը Օսմանյան պետության համար առաջացրին դեռ Միջերկրական ծովում, Բալկաններում և Կենտրոնական Եվրոպայի ուղղությամբ ընդլայնման, այնուհետև երեք մայրցամաքներում տարածման հեռանկարներ: ● Օսմանցիների կողմից Մերձավոր Արևելքում, Կովկասում և Եվրոպայում տիրապետումը հանգեցրեց նախորդ ժամանակաշրջանի Մետաքսի ճանապարհի և Միջերկրական ծովի, որպես հիմնական առևտրի և հաղորդակցության տարածքի, աստիճանական անկման: ● Աշխարհագրական մեծ հայտնագործությունները հանգեցրին նոր մայրցամաքների/ ենթամայրցամաքների և ծովային ու օվկիանոսային ճանապարհների յուրացման, որոնք ունեի՜ն մեծ տնտեսական և ռազմավարական նշանակություն: ● Վաղ նոր ժամանակաշրջանի Կովկասը, որը քրիստոնեական և մուսուլմանական քաղաքակրթական տարածքների խաչմերուկում էր գտնվում, բոլոր կողմերից հայտնվեց մուսուլմանական պետությունների աղեղում և ծայր աստիճան սահմանափակվեցին Արևմտյան աշխարհի հետ շփման համար անհրաժեշտ ցամաքային և ծովային հաղորդակցական միջոցները: ● Վաղ նոր ժամանակաշրջանում «Մետաքսի ճանապարհի» դերի թուլացումը և առևտրային և հաղորդակցական տարածքները, ինչպես նաև մշակութային ծանրության կենտրոնի խաթարումը՝ ի դեմս Բյուզանդիայի, Վրաստանին թողեցին տարանցիկ ցանցով և նոր աշխարհագրական գիտելիքներով ձեռք բերված բարիքներից դուրս: ● Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում ճանապարհորդների, կոնկիստադորների և միսիոներների գործունեությունը հասել է աննախադեպ մասշտաբների:
<p>Աղբյուր</p>	<ul style="list-style-type: none"> ● Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում հանդիպում են վիմագրական, ազգագրական և հնագիտական աղբյուրների առաջին մշակման փորձեր, որոնք կապված են Վերածննդի գործիչների հետ: ● Գրավոր աղբյուրները բազմազան էին և նախորդ շրջանի տեսակներին ավելացան ճանապարհորդությունները, առևտուրը, ծովային և նաև դիվանագիտական առաքելությունների հաշվետվությունները, քաղաքական պարսավագրերը, որոնք ապահովում էին ինչպես ներքին հասանելիություն, այնպես էլ փոխեցին գոյություն ունեցող պատկերացումները տարբեր ժողովուրդների և աշխարհագրական տարածքների մասին: ● Հումանիստների կողմից ներմուծվեց պատմական տարբեր ոլորտների և գիտությունների ուսումնասիրության հիմքը, ինչն աղբյուրների տեսակների բազմազանության հետ մեկտեղ առաջարկեց նաև մշակման մեխանիզմներ և հնարավոր դարձրեց ուսումնասիրության դարաշրջանի ավելի համալիր վերակառուցում: ● Ուշ միջնադարյան և վաղ նոր ժամանակների աղբյուրների հավաստիության աստիճանը որոշում են աղբյուրի տեսակը և ժանրային առանձնահատկություններն ու դրանց ստեղծման վայրը, սակայն, ի տարբերություն նախորդ դարաշրջանի, ավելի ու ավելի առաջնային են դառնում աշխարհիկ տվյալները: ● Ուշ միջնադարյան և վաղ նոր ժամանակների Վրաստանի պատմության վերականգնման համար կարևոր են եվրոպական (դեսպանների, ճանապարհորդների կամ միսիոներների) և արևելյան (օսմանյան, իրանական) աղբյուրները, որովհետև այս դարաշրջանի վրացական վավերական աղբյուրներ գրեթե չկան: ● Յոհան Գուտենբերգի գյուտը զգալիորեն հանգեցրեց պատմողական աղբյուրների բազմազանության աճին, ինչպես նաև դրանց մատչելիության, իսկ հումանիստները զգալիորեն զարգացրին աղբյուրի մշակման մեթոդաբանությունը:

Հասարակություն

- Ուշ միջնադարից գանգվածային բնույթ ստացավ եվրոպական քաղաքների համալսարանական ցանցի ստեղծումը, ինչը ստեղծեց աշխարհիկ կրթություն ունեցող մարդկանց կրիտիկական գանգված, հետևաբար՝ գերիշխող դարձավ հումանիստական աշխարհայացքը:
- Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակաշրջանում աստիճանաբար փոխվեց մարդու աշխարհայացքը: Աշխարհում, չնայած աշխարհի նախախնամական տեսլականի փոփոխությանը, մեծ էր կրոնի դերը՝ հումանիստական գաղափարախոսությունը աշխարհի կենտրոնում դրեց մարդուն, որպես Աստծո ընտրյալ արարածի:
- Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակաշրջանում Եվրոպա մայրցամաքի արևմտյան մասում աստիճանաբար քայքայվում է նախորդ շրջանին բնորոշ դասական կառուցվածքը, խիստ հիերարխիկ սոցիալական մոդելը (դասային ցենզին հիմնականում փոխարինում է տնտեսական ցենզը), թեև ավելի քիչ նկատելի են սոցիալական կառուցվածքում փոփոխություններ Արևելյան Եվրոպայի և Կովկասի քրիստոնյա ժողովուրդների մեջ:
- Խիստ աստիճանակարգված դասային մոդելը, առավել ևս հողի նկատմամբ այս կամ այն դասի մասնավոր սեփականատիրական կախվածությունն ի սկզբանե բնորոշ չէր Մերձավոր և Միջին Արևելքի մեծ իսլամական պետություններին:
- Վերածննդի, Ռեֆորմացիայի և Աշխարհագրական մեծ հայտնագործությունների նվաճումները արմատապես փոխեցին եվրոպացի մարդու մտահորիզոնը, ժողովրդագրական իրավիճակը, աօրյան և սննդակարգը և տոգորեցին մյուսների (ժնացած աշխարհի բնակչության) նկատմամբ գերազանցության ոգով:
- Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակաշրջանում Եվրոպայի տարածաշրջանում որոշ տեղերում փլուզվում է ֆեոդալիզմը (բարդ սոցիալ-տնտեսական և ռազմական համակարգը, որը խոշոր հողատիրոջը զինում է քաղաքական իրավունքներով), իսկ որոշ տեղերում ամրապնդվում է և գյուղացին դառնում է հողից կախվածություն ունեցող, ինչը ստեղծում է սոցիալական վիճակի անհամաչափ պատկեր և տնտեսական զարգացման տարբեր հեռանկարներ:
- Ռեֆորմացիան, որպես համալիր երևույթ և բողոքական էթիկա, կտրուկ տարանջատեց պետությունները կրոնական, սոցիալ-տնտեսական և աշխարհայացքային զարգացման տեսանկյունից:
- Ուշ միջնադարից սկսած ապրելակերպը նկատելիորեն փոխվել է՝ հրազենի զարգացումը նվազեցրեց ամրաշինական կառույցների (ամրոցներ, աշտարակներ, քաղաքի պարիսպներ) կարիքը՝ աստիճանաբար դրանց տեղը զբաղեցրին պալատները:
- Չնայած այսպես կոչված Արևելյան մեծ վառոդային կայսրությունների գոյությանը, ռազմական ոլորտում տեխնոլոգիական նորարարությունները հիմնականում զարգացան Արևմուտքում, ինչին նպաստում էր տնտեսական գերակայությունը:
- Վերածնունդն ու Ռեֆորմացիան նպաստեցին ռացիոնալիզմի, անհատականության զարգացմանը և ստեղծագործական ոգով մարդկանց առաջին պլան մղմանը:
- Տպագրության գյուտը աներևակայելի դյուրին դարձրեց տեղեկատվության հասանելիությունը և բացառեց նրա՝ որպես հասարակական ազդեցության լծակ, որևէ սոցիալական խավի/խմբի ձեռքում որպես մենաշնորհ հայտնվելու հավանականությունը:
- Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակում անկում ապրեց ասպետությունը՝ ինչպես ռազմական, այնպես էլ սոցիալական առումով:
- Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակում հիմնական սեփականությունը դեռևս հողն էր, թեև ընդգծվեցին հողատիրության և հողօգտագործման փոփոխության միտումներ, ինչն արմատապես փոխում էր ինչպես հողատերերի, այնպես էլ նրա մշակների սոցիալական վիճակը, կապված էր ներքին և արտաքին շուկաների աճի հետ և նախադրյալներ էր ստեղծում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար:

	<ul style="list-style-type: none"> ● Գույքի և հողի նկատմամբ մասնավոր սեփականատիրական վերաբերմունքը բնորոշ էր քրիստոնեական աշխարհին, իսլամական աշխարհում մասնավոր սեփականատիրական իրավունքները շատ ավելի պայմանական բնույթ էին կրում: ● Ուշ միջնադարում Արևմտյան Եվրոպային բնորոշ երկբևեռությունը, հիմնականում փոխվում է հոգուտ աշխարհիկ իշխանության և, չնայած կրոնական շրջանակների ազդեցությանը, իշխանությունը կենտրոնանում է աշխարհիկ տիրակալի շուրջ:
--	--

<p>Իշխանություն</p>	<ul style="list-style-type: none"> ● Ուշ միջնադարում Արևելյան քրիստոնեական աշխարհի կենտրոնի՝ Բյուզանդիայի անկումից անխուսափելի էր, քանի որ մսխված էին այն բոլոր ներքին մեխանիզմները (պաշտոնեական և զինվորական վերնախավի համագործակցության ապահովումը, համայնքի համակարգը, արդյունաբերական կենտրոնները, միջնորդական առևտուրը...), ինչը նրան հնարավորություն կտար դիմադրել կամ Արևմտյան Եվրոպային, կամ օսմանցիներին: ● Քանի որ ուշ միջնադարից կաթոլիկ աշխարհի ընդերքում իշխանության բաշխման վերաբերյալ քննադատությունը անպատասխան էր ժառանգել, այն վերածվեց մեծ հոգևոր հեղափոխության՝ Ռեֆորմացիայի, այն առաջ քաշեց հստակ առաջնորդների և հասարակության մեջ հանգեցրեց սոցիալական, տնտեսական և մշակութային աշխարհայացքի փոփոխությունների: ● Ուշ միջնադարում միայն Անգլիայի խորհրդարանը կարողացավ դասային-ներկայացուցչական մարմիններից վերածվել գործուն օրենսդիր մարմնի, որը կարողանում էր կիսել իշխանությունը միապետի հետ: Վաղ նոր ժամանակներից կենտրոնացված պետություններն ու իշխանապետությունները կարողացան վերածվել ձգողականության կենտրոնի և նվազագույնի հասցրին պետական գործերին դասերի ներգրավվածության աստիճանը: ● Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում բյուրոկրատական ապարատի կատարելագործումն ու զարգացումը, միասնական բանակի ձևավորումը, բյուրոկրատական ապարատի աճը և ֆեոդալական վերնախավի անկումը թույլ տվեցին միապետներին իշխանությունը կենտրոնացնել իրենց ձեռքում: ● Ուշ միջնադարից Եվրոպայում ի հայտ եկան իշխանության տիրապետման երկու տիպի մոդելներ՝ միապետական և կայսերական, որոնք չկարողացան խուսափել միմյանց հետ առձակատու մից: ● Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում իշխանության փոխանցման ձևաչափը շարունակվեց ժառանգական-դինաստիական սկզբունքով, այն ընդունեց համընդհանուր բնույթ ոչ միայն Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում, այլ նույնիսկ Բյուզանդիայում և Օսմանյան կայսրությունում ու Իրանում: ● Վաղ նոր ժամանակներում կրոնական առաջնորդների կողմից իշխանությունը նշանակելու հավակնությունները սահմանափակվեցին, քանի որ աշխարհիկ իշխանությունը նրանց աստիճանաբար գրկեց իրենց ձեռքում եղած առավելությունները սահմանող գործոններից (բարոյական, էթիկական, կրթական առավելություն...) և պետության անունից իր տրամադրության տակ հայտնվեցին ավելի շատ ռեսուրսներ (ֆինանսներ, բյուրոկրատական ապարատ, գաղափարախոսություն, բանակ, հասարակական լայն աջակցություն, իշխանության աստվածաշնորհության գաղափար...): ● Ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակներում իսլամական մեծ պետությունները իշխանության կենտրոնացման ժամանակ հիմնվում էին կրոնական և ռազմական գործոնների վրա, սակայն օսմանցիները քոչվոր տարրին կարողացան դիմակայել, կիսելով կառավարման բյուզանդական ավանդույթները և ենթերիական կորպուս ստեղծելով, իսկ Սեֆյանները՝ պարսկական կառավարման ավանդույթների և դուլաֆների կորպուսի և այս կորպուսում վրացիների ու կովկասցիների ընդգրկմամբ: ● Վաղ նոր շրջանից սկսած՝ Եվրոպական պետությունների մեծ մասում կառավարումը գնալով ավելի բացարձակ ձևեր է ընդունում, թեև Եվրոպայի մայրցամաքային և կղզիական մասում այս գործընթացն տարբեր տեսակի արսոյությունով մոդելներ է ստեղծել, որոնք ունենին իշխանության տիրապետման տարբեր լծակներ և սոցիալական հենարան:
----------------------------	--

<p>Պատմական իրադարձություն, գործընթաց</p>	<ul style="list-style-type: none"> ● Խաչակրաց արշավանքներից, Բյուզանդիայի անկումից և մոնղոլների տիրապետությունից հետո Լևանտը զիջեց տնտեսական և մշակութային առաջատարությունը, և զարգացման վեկտորն ակնհայտորեն տեղափոխվեց դեպի Արևմուտք: ● Վերածնունդը, Ռեֆորմացիան, Հակառեֆորմացիան և Աշխարհագրական մեծ հայտնագործությունները արմատապես փոխեցին Եվրոպայի մտավոր, սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակը և այն դարձրին աշխարհի ամենազարգացած տարածաշրջանը: ● Աշխարհագրական մեծ հայտնագործությունները Եվրոպայի համար հիմք դրեցին նոր մայրցամաքներում և Ասիայի հեռավոր շրջաններում տնտեսական ներուժի օգտագործման և գաղութատիրական պետությունների ստեղծման: ● Եվրոպայի առաջադեմ տարածաշրջան դառնալը հանգեցրեց եվրոպական արժեքների, ձեռքբերումների և ազդեցությունների տարածմանը ինչպես Ասիայում, այնպես էլ նոր հայտնագործված մայրցամաքներում, սակայն, այս ազդեցությունը հիմնականում պարտադրված էր: ● Ուշ միջնադարը և վաղ նոր ժամանակը նշանավորվեց կենտրոնացման (ինչպես պետական, այնպես էլ իշխանական մակարդակներում) գործընթացով, ինչը եվրոպական մայրցամաքում հիմք դրեց միասնական, կենտրոնացված ազգային պետությունների ձևավորման գործընթացին, իսկ Ասիայում՝ կենտրոնացման գործընթացը նպաստեց այսպես կոչված վառողային կայսրությունների ձևավորմանը: ● Միասնական ազգային պետությունների կառուցումը պայմանավորված էր կենտրոնացված պետական ինստիտուտների, բանակի, բարեփոխված եկեղեցական հաստատությունների, միասնական ներքին շուկայի և ազգային լեզուների զարգացումով: ● Բյուզանդիայի անկումը և Օսմանյան պետության աճող տարածքային ընդլայնումը ժամանակավորապես վերածնեցին «խաչակրաց արշավանքի գաղափարը», թեև եկեղեցին այլևս ուժ չուներ ազդելու աշխարհիկ պետությունների տարբեր շահերի վրա և ապահովելու ընդհանուր ճակատ, թեպետ դարեր շարունակ հակաօսմանյան կռաւիցիաները փնտրում էին գլխավոր միջազգային հարց: ● Բյուզանդիայի անկումը չհանգրեց «Հավերժական Հռոմի» գաղափարը, և վաղ նոր ժամանակներում տեղի են ունենում այդ գաղափարի քաղաքական իրականացման փորձեր: ● Վառողի, հրազենի էվոլյուցիան և զանգվածային օգտագործումը արմատապես փոխեցին ոչ միայն պատերազմ վարելու տեսակները, այլև հանգեցրին քաղաքի ու կացարանի տեսակների և սոցիալական որոշակի շերտի անհետացման ու վերափոխման: ● Ռեֆորմացիայի համատարած տարածմանը հաջորդեց կաթոլիկ աշխարհի կողմից նոր կրոնական միաբանությունների հիմնադրում, որոնց գործունեությունը նախատեսում էր որակապես նորացված կրթական համակարգ և լայնածավալ միսիոներական քաղաքականություն, ինչն անդրադարձավ նաև Վրաստանի վրա: ● Եվրոպայում աբսոլյուտիզմի զարգացումը ստեղծեց երկու տեսլական՝ 1. «Պետությունը էս էմ» VS 2. «Թագավորը հնազանդվում է Աստծուն և օրենքին», վերջինիս քաղաքական գործիքավորումը գործընթացը հասցրեց սահմանադրական միապետության ստեղծման, իսկ աբսոլյուտիզմին դիմադրելը հիմք դրեց նոր հողերում նոր տեսակի պետության ստեղծման: ● Առևտրահողորդակացական ուղիները օվկիանոսներ տեղափոխելը և դրանով հարուցված համալիր փոփոխությունները շրջանցեցին Վրաստանը, և դրանով պայմանավորված երկիրը հետ փասց այս ժամանակաշրջանից, ինչը երկրի տարածքային ամբողջականության խախտման պայմաններում ծանր անդրադարձավ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտների վրա:
--	--

Թեմա 3 «Երկարատև 19-րդ դարը»

(Նոր ժամանակ)

Նպատակային հասկացություն	Աշակերտը պետք է ըմբռնի, որ.
Ժամանակ	<ul style="list-style-type: none"> • Նոր ժամանակը «նացած աշխարհի նկատմամբ Արևմտյան քաղաքակրթության (արժեքային համակարգ, սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգ) տիրապետության շրջանն է: • Նոր ժամանակը ռացիոնալիզմի կողմից կրոնական հայացքների նկատմամբ գերակայությունն է առաջ էր երելու, սոցիալական խառնաշփոթի, իրավունքների և ազատությունների նորովի ըմբռնման ժամանակաշրջան է: • Նոր ժամանակը քաղաքական կառավարման նոր համակարգերի և նոր տիպի պետությունների ձևավորման ժամանակաշրջան է, երբ բյուրոկրատական ապարատը լիովին ընդգրկվում է տիրակալի իշխանության վերահսկողության մեջ և ծառայում է պետության առավելագույն կենտրոնացմանը: • Նոր ժամանակում Եվրոպա մայրցամաքում օրացույցի հերթական բարեփոխման ևս մեկ փորձը կապվեց պետության արմատական փոխակերպման հետ, սակայն այն հնարավոր չեղավ օրինականացնել: • Նոր ժամանակի ստորին և վերին նշագծերը, ինչպես նախորդ ժամանակաշրջանում քիչ թե շատ ընդգծված են, սակայն դրա պայմանականության ու առավելության մասին գիտնականների միջև վեճը չի դադարում:
Տարածություն	<ul style="list-style-type: none"> • Նոր ժամանակը նոր մայրցամաքների, նոր գաղութների և նոր տարածությունների յուրացման ժամանակաշրջան է: • Նոր ժամանակում ծովային և օվկիանոսային երթուղիները բեռնաշրջանառության ավելի շարժունակության և ժամանակի տնտեսման շնորհիվ վերջնականապես առավելությունն է առաջ էր երելու ցամաքային ճանապարհների նկատմամբ: • Կապի և տրանսպորտային միջոցների զարգացումը հանգեցրեց երկաթուղային ցանցի ձևավորման, ինչն ապահովեց ոչ միայն յուրաքանչյուր երկրի տարբեր շրջանների, այլ նաև տարբեր տարածաշրջաններին կապակցում իրար հետ: • Հաղորդակցության և տրանսպորտային միջոցների կատարելագործումը, ինչպես նաև առևտրահաղորդակցական ցանցի ընդլայնումը հանգեցրին աշխարհի «փոքրացման» և Արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներին հնարավորություն տրվեց յուրացնել բոլոր մայրցամաքները: • Տարածական առումով տարբեր մայրցամաքների բնակչության կապին նպաստեց նաև փոստի և հեռագրության զարգացումը:

<p>Աղբյուր</p>	<ul style="list-style-type: none"> ● Նոր ժամանակներում գրավոր աղբյուրները բազմազանացվել են, քանի որ պատմությունը որպես գիտություն, նրա գիտական ապարատն ու մեթոդաբանությունը ամրապնդվեցին ամուր գիտական հիմքերով: ● Տարբեր պատմական ոլորտների և առարկաների դիվերսիֆիկացումը, ինչն աղբյուրների տեսակների բազմազանության հետ միասին առաջարկեց նաև մշակման մեխանիզմներ, հնարավոր դարձրեց հետազոտման դարաշրջանի ավելի համալիր վերակառուցքավորում: ● Նոր ժամանակվա Վրաստանի պատմության վերակառուցման համար կարևոր են օտարերկրյա (ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան) ճանապարհորդների, հետազոտողների և ականատեսների տեղեկանքները, չնայած նրան, որ կան նաև այս դարաշրջանի վրացական վավերական աղբյուրներ: ● Նոր ժամանակի աղբյուրների հուսալիության աստիճանը որոշվում է աղբյուրի տեսակով, նրա ժանրային հատկանիշներով և ստեղծման վայրով, սակայն, ի տարբերություն նախորդ դարաշրջանի, ավելի ու ավելի առաջնահերթություն են ստանում աշխարհիկ բնույթի տվյալները: ● Նոր ժամանակում տեխնոլոգիական առաջընթացը զգալիորեն հանգեցրեց պատմողական աղբյուրների բազմազանության (պարբերականներ, ֆոտո-ֆոնո նյութ...) ավելացման, ինչպես նաև դրանց հասանելիության, իսկ պատմական դպրոցները զգալիորեն զարգացրին աղբյուրի մշակման մեթոդաբանությունը:
<p>Հասարակություն</p>	<ul style="list-style-type: none"> ● Նոր ժամանակում բուրժուազիան այլ սոցիալական խմբերի նկատմամբ ձեռք բերեց լրիվ տնտեսական առավելություն և սկսվեց պայքարը քաղաքական իրավունքներ ձեռք բերելու համար: ● Նոր ժամանակվա մտածողներն ու փիլիսոփաները մարդու և անհատի ազատությունների, իրավունքների և պարտականությունների, կրոնական գաղափարների արմատական վերանայմամբ օրակարգ են բերել գոյություն ունեցող կառավարման և պետական կազմակերպման ձևերի փոփոխություններ, ինչը հանգեցնում էր հասարակական գործընթացներում տարբեր շահերի խմբերի ներգրավման: ● Ֆեոդալական հարաբերությունները և ֆեոդալական սոցիալական համակարգը Բրիտանիայում Էվոյուցիոն փոփոխությունների ճանապարհով էր վերափոխվում, իսկ մայրցամաքային Եվրոպայում սոցիալական կառուցվածքի փոփոխության անհրաժեշտ էին արմատական հեղափոխական փուլեր: ● «Արդյունաբերական հեղափոխությունը» և գիտատեխնիկական առաջընթացը փոխեցին Արևմտյան հասարակական կյանքը և գաղութների բնակչության մեջ ևս կատարվեցին արմատական փոփոխություններ: ● Նոր ժամանակը տարբեր սոցիալ-քաղաքական բնույթի գաղափարախոսությունների (ազգայնականություն, ժամանակագրություն, սոցիալիզմ, կապիտալիզմ, աբոլիցիոնիզմ, ֆեմինիզմ...) և դրանց համապատասխան ակտիվիզմի վերելքի ժամանակաշրջան է, որը սոցիալական գործընթացներին առանձնակի ինտենսիվություն էր հաղորդում: ● Տեխնոլոգիական առաջընթացը և դրան ուղեկցող սոցիալական և աշխարհայացքային արմատական փոփոխությունները հանգեցրել են այսպես կոչված «սպառողական հասարակության (կոնսումերիզմ) ձևավորման:

<p>Իշխանություն</p>	<ul style="list-style-type: none"> • Նոր ժամանակում Արևմտյան քաղաքակրթության տարածքում աշխարհիկ իշխանությունը լիովին հեռացրեց կրոնական իշխանությանը պետական կառավարման լծակներից: • Նոր ժամանակում բյուրոկրատական ապարատի, բանակի և սպառազինության, կրթության և գաղափարախոսության նկատմամբ պետության ղեկավարի վերահսկողությունը հանգեցրին բացարձակ վարչակարգերի տիրապետության: • Նոր ժամանակը մեծ հեղափոխությունների դարաշրջան է, բացարձակ իշխանությունը ճգնաժամ է ապրում, և իշխանությունը բաշխվում է հասարակական նոր շերտերի միջև: • Նոր ժամանակներում իշխանության պահպանման և ամրապնդման մեխանիզմներում մեծ դեր են ձեռք բերում տնտեսական գործոնները: • Նոր դարաշրջանում իշխանության համար պայքարն անցնում է կոնկրետ երկրի ներսում դիրքեր ձեռք բերելուց և ստանում է շատ ավելի գլոբալ մասշտաբ:
<p>Պատմական իրադարձություն, գործընթաց</p>	<ul style="list-style-type: none"> • Նապոլեոնյան պատերազմների և Վիեննայի կոնգրեսի արդյունքում փոխվեց Եվրոպայի քաղաքական քարտեզը: • Նոր ժամանակներում ազգայնականությունը դարձավ Արևմտյան պետությունների գերիշխող քաղաքական դոկտրինը, և ազգային պետությունների և կենտրոնացման գործընթացը հանգեցրին Գերմանիայի և Իտալիայի միավորման: • Նոր ժամանակներում Արևմտյան գաղութային կայսրությունները և գաղութատիրության համակարգն էին սահմանում Արևմտյան քաղաքակրթության գերիշխող դերը: • Նոր ժամանակը հեղափոխություններով պետական վերափոխումների, որպես ազգ ձևավորման և ազգ-պետությունների ավարտի ժամանակաշրջան է: • Նոր ժամանակներում աշխարհի վերաբաժանման գոյություն ունեցող մոդելից դժգոհությունը հանգեցրեց պետությունների վերախմբավորման հակադիր ճամբարների:

Ամփոփիչ (գարգացնող և որոշող) գնահատում

Ամփոփիչ գնահատումը պետք է չափի, թե որքան լավ է աշակերտը տիրապետում և / կամ օգտագործում նպատակային հասկացությունները: Հասկացությունների տիրապետման աստիճանը գնահատելու համար այսպես կոչված ՈԻԴԱԿ աստիճանակարգումը (տաքսոնոմիան) (դիտարկելի ռուտինական արդյունքների կառուցվածքի տաքսոնոմիա, անգլերեն - SOLO – Structure of Observed Learning Outcomes), որը հանդիսանում է հարթակ գնահատման չափանիշների մշակման համար: ՈԻԴԱԿ տաքսոնոմիան չափում է աշակերտների նվաճումներն ըստ 5 մակարդակների:

<p>SOLO 1. Նախակառուցվածքային կամ կապակցված մակարդակ Աշակերտն ընդհանրապես չի հասկանում հարցը, օգտագործում է չհամապատասխանող, ոչ պատշաճ տեղեկատվություն և/կամ ընդհանրապես շեղված է հարցից:</p>
<p>SOLO 2. Ունիկառուցվածքային կամ միակապ մակարդակ Աշակերտը կարող է քննարկել միայն մեկ ասպեկտ և հաստատել պարզ, ակնհայտ / հստակ կապեր: Աշակերտը կարող է օգտագործել տերմինաբանություն, բանավոր փոխանցել (մտաբերել), կատարել պարզ հրահանգներ/ալգորիթմներ, շրջասել, նույնականացնել, անվանել կամ հաշվել:</p>
<p>SOLO 3. Բազմակառուցվածքային կամ բազմակապ մակարդակ Աշակերտը կարող է առանձին քննարկել մի քանի ասպեկտ՝ իրարից առանձնացված, առանց միմյանց հետ կապի: Նա կարող է թվարկել, նկարագրել, դասակարգել, համադրել, օգտագործել մեթոդներ, կառուցվածք, կատարել ընթացակարգեր և այլն:</p>
<p>SOLO 4. Հարաբերական կամ ամբողջացված մակարդակ Աշակերտը կարող է հասկանալ կապը մի քանի ասպեկտների միջև, ինչպես նաև գիտի այն, թե ինչպես են այդ ասպեկտները համադրվում և ինչպես են ստեղծում ամբողջ, ամբողջականություն: Նրա մտածողությունը կառուցվածքավորված է, ուստի աշակերտն ունի կարողություն, որ համեմատի, կապակցի, վերլուծի, կիրառի տեսությունը, բացատրի խնդիրը՝ պատճառների և հետևանքների առումով:</p>
<p>SOLO 5. Ընդայնված վերացական մակարդակ Աշակերտը կարող է ընդհանրացնել կառուցվածքը տրվածից/առաջարկվողից դուրս, ընկալել կառուցվածքը բազմաթիվ տարբեր տեսանկյուններից/հեռանկարներից և գաղափարները տեղափոխել նոր ոլորտ: Նա կարող է ընդհանրացնել, վարկած արտահայտել, քննադատել կամ ձևակերպել տեսություն:</p>

Ամփոփիչ գնահատման համար կիրառվում են համալիր առաջադրանքներ, որոնք պահանջում են գործառնական համատեքստում նպատակային հասկացություններով սահմանված գիտելիքների ինտեգրված օգտագործում:

Ձեզ ենք ներկայացնում ըստ համալիր առաջադրանքի կոնկրետ նմուշի ստեղծված գարգացնող գնահատման խորագիր:

Ստորև բերված գնահատման խորագիրը կարող է օգտագործվել ինչպես աշակերտի ձեռքբերումները նպատակային հասկացությունների հետ կապված նկարագրելու, այնպես էլ գարգացնող մեկնաբանության համար:

Սա ուսուցչի աշխատանքային թերթիկն է, որի հիման վրա նա կոնկրետ հարցերի շրջանակներում կձևակերպի մեկնաբանություն՝ կապված տարբեր նպատակային հասկացությունների հետ: Այս մեկնաբանություններն ուսուցիչը, կապված տարբեր նպատակային հասկացությունների հետ, ուսանում-ուսուցման գործընթացում պետք է անի պարբերաբար:

Զարգացնող գնահատման խորագրի նկարագրություն.

Աղյուսակի առաջին հորիզոնական, տիտղոսային վանդակում տրված տեղեկությունը ընդգծում է այն, որ.

- Այս ձևով **բոլոր աշակերտները գնահատվում են անհատապես:**
- Աշակերտները գնահատվում են՝ **երկարաժամկետ նպատակների** կամ **առարկայական նպատակային հասկացությունների** համեմատ:
- Առարկայական հասկացության վրա աշխատանքը տեղի է ունենում **կոնկրետ (և ոչ ընդհանուր) առարկայական հարցի վրա** հիմնվելով:
- Առարկայական հարցի հետ կապված աշակերտի գիտելիքները ստուգվում են **համալիր առաջադրանքի փջոցով:**

Երկնագույն (մոխրագույն) հորիզոնական սյունակում տրված են նպատակային հասկացությունները (այստեղ ենթադրվում է այնքան ուղղահայաց սյունակ, որքան նպատակային հասկացություն կա կոնկրետ առարկայից), իսկ երկնագույն (մոխրագույն) ուղղահայաց սյունակում տրված են այս նպատակային հասկացությունների ըմբռնման մակարդակները (SOLO տաքսոնոմիայի համաձայն): Երկնագույն սյունակում տրված է ընդհանուր նկարագրություն, իսկ հասկացության և մակարդակի հատման տեղում այս նկարագրությունները կհստակեցվեն ստորև բերված օրինակների համաձայն:

Աշակերտի անուն, ազգանուն. _____
 Առարկան և նպատակային հասկացությունը. _____
 Հարցը. _____

Չափանիշ	Նպատակային հասկացություն 1		Նպատակային հասկացություն 2		Նպատակային հասկացություն 3	
Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Նկարագրություն		Մեկնաբանություն			
Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն
Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն /պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն
Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն	Նկարագրություն	Մեկնաբանություն

Ինչպե՞ս պետք է արվի մեկնաբանություն զարգացնող գնահատման համար:

Օրինակ՝ պատկերացնենք, որ աշակերտին սովորեցնում ենք Թամար թագուհու գործունեությունը և այդ հարցի հետ կապված տվել ենք հետևյալ համալիր առաջադրանքը.

Ծանոթացե՛ք Ղութլու-Արսլանի խմբավորման շարժման մասին անհայտ հեղինակի տեղեկություններին «Քարթլիի կյանքից», որտեղ իրադարձությունները նկարագրված են հոգուտ Թամար թագուհու: Պատկերացրե՛ք, որ Թամար թագուհու դարաշրջանում ապրող մատենագիր էք, որը բարեհաճ է տրամադրված թագուհու հակառակորդ Ղութլու Արսլանի նկատմամբ և աջակցում է «Իսանիի վրանի» հիմնամանր: Ստեղծե՛ք համառոտ «տարեգրություն», որտեղ Ղութլու Արսլանի խմբավորման շարժումը Թամար թագուհու անհայտ մատենագրից տարբեր մեկնաբանությամբ կներկայացնեք:

Աշխատության մեջ/աշխատության ներկայացման մեջ հստակ ցո՛ւյց տվեք.

1. Ի՞նչ գործոններով է պայմանավորված դարաշրջանի համաժամանակակից պատմաբանի վիտուժնավորությունը:
2. Ի՞նչ նրբերանգներով են տարբերվում Ղութլու-Արսլանի խմբավորման շարժման մասին ձեր և ձեր հակառակորդ պատմաբանի, օրինակ՝ Բասիլի սենեկապետի, տեսակետները միմյանցից: Ինչո՞ւ է պայմանավորված տարբեր մեկնաբանությունների առկայությունը:
3. Ի՞նչ այլ աղբյուրներ կան Թամար թագուհու դարաշրջանի մասին: Որքանո՞ւ է նրանք հուսալի:

Համալիր առաջադրանքն ուղղված է հասկանալու «Աղբյուր» նպատակային հասկացությունը և, համապատասխանաբար, դրա չափանիշները («Աշխատության մեջ/աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր» ենթավերնագրի տակ) կապված են «Աղբյուր» նպատակային հասկացության կայուն պատկերացումների հետ.

- Պատմաբանները անցյալի մասին տեղեկությունները վերցնում են աղբյուրներից:
- Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինո-ֆոտո-ֆոնո-փաստաթղթեր) վրա:
- Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես վստահելի:
- Աղբյուրներից ստացված տեղեկությունը միանշանակ չէ, հետևաբար դրանց մեկնաբանությունը պատմաբանների միջև վեճի առարկա է:

Իհարկե, տարբեր աշակերտներ այս առաջադրանքը կկատարեն տարբեր որակով: Համապատասխանաբար, մեր կողմից էլ նրանց ձեռքբերումների գնահատումն ու զարգացնող մեկնաբանությունը պետք է տարբեր լինի: Ստորև գնահատված է 5 աշակերտների համալիր առաջադրանք Թամար թագուհու մասին, որոնցից առաջինը նախակառուցվածքային մակարդակի հետ է կապված, երկրորդը՝ ունիկառուցվածքային մակարդակի, երրորդը՝ բազմակառուցվածքային, չորրորդը՝ հարաբերական, հինգերորդը՝ վերացական: Յուրաքանչյուր աշակերտի դեպքում լրացված է երկու վանդակ՝ մեկն արտացոլում է, թե ինչ է արել աշակերտը և ինչ եզրահանգում էս արել դրա հիման վրա (նկարագրության) և երկրորդում արտացոլված է, թե ինչ խորհուրդ էմ տվել աշակերտին (մեկնաբանություն):

Առաջին աշակերտի աշխատանքը. նախակառուցվածքային մակարդակ

Աշակերտը չի կարողացել հասկանալ առաջադրանքի էությունը և դրա հետ կապված հարցերը, հետևաբար, ուսուցչի մեկնաբանությունը նախակառուցվածքային մակարդակի տողում կհայտնվի «Աղբյուր» նպատակային հասկացության պոնակում:

Նպատակային հասկացություն	Աղբյուր	
Չափանիշ	Նկարագրություն Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:	Մեկնաբանություն Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)
Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Աշակերտը չկատարեց առաջադրանքը, չկարողացավ կռահել Թամար թագուհու հետ կապված առաջադրանքի պայմանը (ստեղծել ընդդիմադիր տարեգրություն)	Հիշի՛ր, թե ինչ ես իմացել Թամար թագուհու մասին: Գտի՛ր լրացուցիչ տեղեկություն, կամ մտածի՛ր, թե որտեղից կարող ես իմանալ ավելին: Մտաբերի՛ր դեպք, երբ միննույն պատմությունը երկու մարդ տարբեր կերպ են պատմում և արտահայտում են տարբեր դիրքորոշումներ:

Երկրորդ աշակերտի աշխատանքը. ունիկառուցվածքային մակարդակ

Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, սակայն դրա հետ կապված հարցերին արձագանքում է միայն հանգուցային հարցերի հետ կապված, հետևաբար, ուսուցչի մեկնաբանությունը ունիկառուցվածքային մակարդակի տողում կհայտնվի «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

Նպատակային հասկացություն	Աղբյուր	
Չափանիշ	Նկարագրություն Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:	Մեկնաբանություն Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)
Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:	Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, ստեղծեց «տարեգրության» նման մեկ պարբերությամբ պատմություն, սակայն, այս տեքստը ներառում է միայն մակերեսային գնահատողական բառեր (մասնավորապես, նշում է, որ «Թամարն այնքան էլ բարի չէ, ինչպես կարծում են մյուսները, որովհետև նա դաժանորեն վարվեց իր հակառակորդների հետ»: Կամ էլ. «Թամարի կողմնակից պատմաբանները ստում են և նրա վատ գործերի մասին չեն գրում»): Երևում է, որ աշակերտը ոչինչ չգիտի Թամարի դարաշրջանի հետ կապված փաստերի մասին:	Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքը, բայց երևում է, որ չես կարդացել ուսումնական նյութը: Խնդրում եմ, ուշադիր կարդա՛ և ճշգրտի՛ր, թե ինչում չես համաձայնում Թամարի պատմիչի հետ:

Երրորդ աշակերտի աշխատանքը. Բազմակառուցվածքային մակարդակ

Աշակերտն ունի բազմաթիվ գուգորություններ՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, սակայն նույն հարցի/գլխավոր գաղափարի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կարգավորված, հաջորդական տեսք: Համապատասխանաբար, ուսուցչի մեկնաբանությունը կհայտնվի բազմակառուցվածքային մակարդակի «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

Նպատակային հասկացություն	Աղբյուր	
Չափանիշ	Նկարագրություն Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:	Մեկնաբանություն Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)
<p>Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:</p>	<p>Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը և դրա հետ կապեց պարագրաֆում ներկայացված նյութը (մասնավորապես, նա նշեց, որ Թամարը վատ վարվեց, որովհետև զբաղեցրեց Դեմա Բատոնիշվիլին պատկանող գահը, անարդարացիորեն կալանավորեց Ղութու Արալանին): Սակայն, նա ուշադրությունը չի կենտրոնացնում առաջադրանքի գլխավոր գաղափարի վրա, չի բացահայտում Թամարի կողմնակից պատմիչի միտումնավորությունը: Առաջադրանքի ձևը նույնպես ունի բարելավման կարիք, մասնավորապես, աշակերտը մեզ պատմությունը չի փոխանցում այնպես, ինչպես դա հարիք է «տարեգրության», այլ տալիս է առանձին նախադասություններ՝ կապված հարցի հետ:</p>	<p>Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Կարդացել ես նաև պարագրաֆում տրված նյութը և կապել ես առաջադրանքի հետ, սակայն, խնդրում եմ առաջադրանքում հստակ ընդգծես, թե ինչու և չես համաձայնում Թամարի պատմիչի հետ և հստակ նշես, թե ինչու ես կարծում, որ մարդիկ չպիտի հավատան նրա պատմածին: Նաև նկատի ունեցիր, որ «տարեգրության» մեջ պատմությունը հետաքրքիր պատմության տեսքով պետք է փոխանցվի, որպեսզի ունկնդիրների համար ավելի հասկանալի լինի:</p>

Չորրորդ աշակերտի աշխատանքը. հարաբերական մակարդակ

Աշակերտը համակարգված և հետևողականորեն փոխանցում է նպատակային հասկացության հետ կապված պատմություններ: Փոխկապակցված կերպով դատողություն է անում նպատակային հասկացության էական բնութագրերի մասին: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշներով սահմանված նրբերանգները: Համապատասխանաբար, ուսուցչի մեկնաբանությունը կհայտնվի հարաբերական մակարդակի տողում «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

Նպատակային հասկացություն	Աղբյուր	
Չափանիշ	Նկարագրություն Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:	Մեկնաբանություն Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)
<p>Հարաբերական մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:</p>	<p>Աշակերտը հետաքրքիր և ստեղծագործաբար է փոխանցում Թամար թագուհու մասին տեղեկատվությունը: Նրա աշխատանքում ընդգծված են փաստեր, որոնք պայմանավորում են Թամարի պատմաբանի միտումնավորությունը (մասնավորապես, ասում է, որ պատմաբանը թագուհու մերձավորն է, նա թաքցնում է մի շարք փաստեր, օրինակ Գիորգի Երրորդի ճնշամիջոցները, որոնք նախորդում էին Թամարի գահակալմանը):</p>	<p>Դու հոյակապ ես հաղթահարել առաջադրանքի պայմանը: Քո աշխատանքում ընդգծված են չափանիշները. Ո՞ր գործոններն են պայմանավորում դարաշրջանի ժամանակակից պատմաբանի միտումնավորություն: Ի՞նչ նրբերանգներով են տարբերվում Ղությու Արսլանի խմբավորման շարժման մասին ձեր և ձեր հակառակորդ պատմաբանի կարծիքներն իրարից: Ի՞նչն է տարբեր մեկնաբանության առաջացման պատճառ:</p> <p>Մակայն, այնքան էլ լավ չի երևում շեշտադրումը «ուրիշ ի՞նչ աղբյուրներ գոյություն ունեն Թամար թագուհու դարաշրջանի մասին» չափանիշի վրա: Որքանո՞վ վստահելի են դրանք:</p> <p>Գուցե փորձեիր անվանել Թամարի դարաշրջանն արտացոլող ուրիշ աղբյուրներ, որոնք ավելի են խոսում քո պատմածի օգտին:</p> <p>Ուշադրությունը կենտրոնացրո՞ւ նաև փաստական սխալների վրա (օրինակ՝ իշխաններ և իշխանություններ այդ դարաշրջանում դեռևս գոյություն չունեին):</p> <p>Վերհիշի՞ր նաև, թե որ թագավորներն էին թագավորում Թամարի գահակալությունից առաջ:</p>

Հինգերորդ աշակերտի աշխատանքը. վերացական մակարդակ

Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով, ընդգծված օրինակների վրա հիմնվելով, փոխկապակցված կերպով դատողություն է անում թեմայի շրջանակներում բացահայտված մի քանի/բոլոր նպատակային հասկացությունների մասին: Համալիր առաջադրանքի միջոցով բացահայտված տվյալները կապում է անձնական փորձառության և այլ կենսական իրավիճակների հետ: Համապատասխանաբար, ուսուցչի մեկնաբանությունը կհայտնվի վերացական մակարդակի տողի «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

Նպատակային հասկացություն	Աղբյուր	
Չափանիշ	Նկարագրություն Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:	Մեկնաբանություն Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (գարգացնող գնահատում)
<p>Վերացական մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:</p>	<p>Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, ստեղծեց «տարեգրություն», որում Թամարի թագավորությունն արտացոլող պատմությունը փոխանցեց տարբերվող մեկնաբանությամբ (օրինակ, Ղութլու Արսլանի խմբավորման ելույթի դրդապատճառ անվանեց այն, որ այլևս չէին ցանկանում, որ թագուհու կողմից կրկնվեր այն դաժանությունը, որ տեղ ուներ Գիորգի թագավորի գահակալության ժամանակ): Թամար թագուհու պատմաբանի միուսավորությունը բացատրեց թագավորական արքունիքի հետ նրա մերձությամբ (օրինակ, ներկայացրել է այն փաստը, որ Թամարի մատենագիրը դիվանապետ Ճղոնդիդելին էր): Աշխատությունից երևում է, որ աշակերտը տիրապետում է Թամարի դարաշրջանի հետ կապված նյութին և դրանք ըմբռնել է նպատակային հասկացության համատեքստում, մասնավորապես, ցուցաբերում է 12-րդ դարի Վրաստանի և աշխարհի քաղաքական քարտեզների իմացություն (նպատակային հասկացություն «տարածություն»), երկրի սոցիալ-քաղաքական կազմակերպման իմացություն, օրինակ՝ համարժեքորեն է օգտագործում տերմինները՝ «դիվանապետ-Ճղոնդիդելի», «ոչ ազնվականների վերելք», «էրիսթավիություններ» (նպատակային հասկացություն «իշխանություն»), պատճառահետևանքային կապեր է հաստատում Թամարի թագավորության և նրա նախորդ շրջանի պատմական իրադարձությունների միջև (նպատակային հասկացություն «պատմական իրադարձություն/ գործընթաց»): Դարաշրջանի ոգին ավելի լավ ցուցաբերելու համար օգտագործվում են հնաբանություններ:</p>	<p>Դուք հիանալի աշխատանք ես կատարել: Քո աշխատությունից երևում է, որ խորը ըմբռնել ես.</p> <p>«Քարթլիի կյանքի», որպես հետաքրքիր աղբյուրի, կարևորությունը: Իշխանության համար պայքարի առանձնահատկությունները Թամարի դարաշրջանում:</p> <p>Համապատասխան դարաշրջանի Վրաստանի արտաքին և ներքին քաղաքականության համար հրատապ հարցեր:</p> <p>Ղութլու-Արսլանի խմբավորման ելույթի պատճառները և հետևանքները:</p> <p>Խնդրում եմ, հիշել օրինակներ պատմությունից, քո անձնական կյանքից, որոնք կապված են «տարեգրության» ընդգծված նրբությունների հետ:</p> <p>Արդյոք քեզ որևէ մեկի հիշեցնո՞ւմ է Թամարի պատմաբանի միտուսավորությունը: Ո՞ր պատմական իրադարձությունն է քեզ հիշեցնում Ղութլու-Արսլանի խմբավորման շարժումը: Ո՞րն է տարբերությունը Թամարի դարաշրջանի և նրա դարաշրջանին բնորոշ պատմական իրադարձությունների ու այլ պատմական դարաշրջանների միջև:</p>

Տիպիկ առաջադրանքներ ամփոփիչ գնահատման համար

Մենք առաջարկում ենք չափորոշչով նախատեսված տիպիկ ամփոփիչ առաջադրանքների ցանկ:
Աշակերտից և/կամ ուսուցչից է կախված, թե որ առաջադրանքը/առաջադրանքները կընտրի:

- Աղբյուրի վերլուծություն
- Տեսանյութերի և ֆիլմերի վերլուծություն
- Այցելություն թանգարան
- Էքսկուրսիա
- Հարցման/հետազոտության անցկացում
- Դերախաղ՝ պիեսի բեմադրում, որևէ բանի բեմականացում
- Գրական բովանդակության ստեղծագործական ապրանքի ստեղծում (առաջին դեմքով օրագիր, էսքիզ գրել):

ՈՒՍԱՆՈՒՄ-ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական գրականության մեջ ընդունված են դասավանդման մեթոդների տարբեր դասակարգումներ: Հիմնականում առանձնացվում է մեթոդների երկու խումբ.

- մեթոդներ, որոնք նպաստում են կոնկրետ նյութի յուրացմանը,
- մեթոդներ, որոնք ուղղված են ընդհանուր/փոխանցելի հմտությունների զարգացմանը:

Վերոհիշյալ բաժանումը որոշակի պայմանական բնույթ ունի, քանի որ մեթոդների մեծ մասը առարկայականի հետ աշակերտներին օգնում է նաև ընդհանուր կարողունակության զարգացման մեջ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ մի մեթոդ ընդհանրական չէ: Կարևոր է, որ ուսուցիչը վերլուծի և հասկանա յուրաքանչյուր մեթոդի կիրառման հնարավորությունները՝ կապված կոնկրետ առարկայի, տարիքային խմբի, որոշակի անհատական հատկանիշներ ունեցող աշակերտների հետ, և միայն դրանից հետո կատարի համապատասխան ընտրություն: «Մեթոդ» հասկացությունը նշանակում է նպատակին հասնելու ճանապարհ, միջոց: Ուսուցման մեթոդը ուսուցչի նպատակաուղղված գործողություններն են՝ աշակերտների մոտ համապատասխան կարողություններ զարգացնելու համար: Ուսուցման մեթոդի ընտրության համար կարևոր է, որ ուսուցիչը սահմանի դասի ուսուսական նպատակները և ակնկալվող արդյունքները, քանի որ հենց արդյունքից են կախված ուսուցման մեթոդները: Այսպիսով, կոնկրետ մեթոդ ընտրելիս պետք է նկատի ունենալ ընտրված մեթոդի համապատասխանությունը ակտիվությանը, աշակերտների հնարավորություններին և փորձին, կարևոր են նաև գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը, ակտիվության համար սահմանված ժամանակի համապատասխանությունը և այլն:

Ուշագրավ է, որ շատ դեպքերում ակտիվությունն ու մեթոդը նույնացնում են: Ակտիվությանը տրվում է հարց. «Ի՞նչ է անում ուսուցիչը»: Օրինակ, ուսուցիչը դասարանի հետ միասին կազմում է խմբային աշխատանքի կանոններ, իսկ այն, ինչին տրվում է «Ինչպե՞ս է անում ուսուցիչը» հարցը (այսինքն՝ ի՞նչ դիդակտիկ միջոցով է իրականացնում այս ակտիվությունը), դա մեթոդ է:

Որպեսզի աշակերտը արդյունավետ օգտագործի ուսուցման մեթոդները, նա պետք է տիրապետի սովորելու արդյունավետ ռազմավարությունների, որոնց մեջ նույնպես առանձնացնում են.

- 1. Ճանաչողական ռազմավարություններ:** Դրանց միջոցով աշակերտը ձեռք է բերում/ստանում է գիտելիք, վերամշակում, վերլուծում, քննադատաբար գնահատում, օգտագործում այլ իրավիճակում:
- 2. Մետաճանաչողական ռազմավարություններ** (մետաճանաչում – մտածել սեփական մտածողության մասին): Այն օգնում է աշակերտին ակտիվորեն ներգրավվել սեփական ուսուցման գործընթացի, կառավարման, մոնիթորինգի և գնահատման գործընթացի մեջ, զարգացնում է աշակերտի վերլուծելու ունակությունը և եզրակացություն է անում, թե ինչ է սովորել և ինչպես է պլանավորել իր ինքնազարգացումը:
- 3. Սոցիալական ռազմավարություն**, որը հիմնվում է սոցիալական ինտերակցիայի վրա և ուսուսական միջավայրում գիտելիքների կառուցքավորման համար առավելությունը շնորհում է համագործակցային ուսուցմանը (օրինակ՝ խմբային աշխատանք, քննարկում, փոխադարձ ուսուցում և այլն):
- 4. Ռեսուրսների վրա հիմնված ռազմավարություն** (մուլտիմեդիա, ցանցային ուսուցման միջոցներ, օրինակ, ինտերնետ, գրադարան և այլն):

1. Ճանաչողական դիագրամներ

Գրաֆիկական սխեմաների օգտագործումը ներկայացման ոչ լեզվական ձևերի թվում ամենալայնորեն տարածված մեթոդն է: Գրաֆիկական սխեման սովորաբար ենթադրում է ներկայացման երկու ձևերն էլ՝ լեզվական և ոչ լեզվական: Լեզվական են բառերն ու բառակապակցությունները: Ոչ լեզվական են տարբեր տեսակի խորհրդանշանները և սլաքները, որոնք արտահայտում են հարաբերությունները խորհրդանշանների միջև:

Ճանաչողական դիագրամներով, այսինքն՝ գրաֆիկական կազմակերպիչներով աշխատանքն աշակերտներին օգնում է ընկալել կարևոր տեղեկատվությունը: Աշակերտներին տրվում է տեքստ, գաղափար, հարցի վերահսկողության մեխանիզմ, որը նրանց օգնում է որոշել և տեսողականորեն ըմբռնել մասի և ամբողջի, հասկացության և մանրամասների փոխհարաբերությունը:

Ճանաչողական դիագրամների միջոցով աշակերտը.

- Մասերի է բաժանում տրված տեղեկատվությունը:
- Կազմակերպում է տեղեկատվությունը:
- Ճանաչում է ամբողջի և մանրամասների փոխհարաբերությունները:
- Վարժվում է քննադատական մտածողության:
- Ընտելանում է ինքնուրույն աշխատելուն:


Երբ և ինչպես են օգտագործվում ճանաչողական դիագրամները.

- Օգտագործվում են ինչպես նոր նյութին ծանոթանալիս և այն ներկայացնելիս, այնպես էլ նյութը յուրացնելուց հետո ամփոփիչ աշխատանք կատարելու ընթացքում:
- Օգտագործվում են ինչպես տեքստը կարդալու և մշակելու, այնպես էլ գրավոր աշխատանքը սկսելու ժամանակ:
- Օգտագործվում են ինչպես տնային, այնպես էլ դասարանական աշխատանք անցկացնելու ժամանակ:
- Օգտագործվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբերով աշխատելու ժամանակ:

Մեթոդները, որոնք կապված են նմանությունների և տարբերությունների հետ, կարելի է համարել սովորելու անկյունաքարը: Հետազոտություններում, որոնցում այս մեթոդի արդյունավետությունը հիմնավորված է փորձարարական աշխատանքի վերլուծության հիման վրա, ուշադրությունը կենտրոնացված է այն փաստի վրա, որ փաստերը, իրադարձությունները և այլն համեմատելիս՝ կողմնորոշումը ընդհանուր և տարբերվող հատկանիշների բացահայտմանը նպաստում է հարցերի առաջացմանը, համապատասխան փաստարկներով տարբերակների առաջացմանը, քննարկման իրավիճակի ստեղծմանը: Բացի այդ, այս կարգի առաջադրանքների վրա աշխատելիս, աշակերտները դրսևորում են իրենց ձեռք բերած գիտելիքները հասկանալու և տարբեր համատեքստում օգտագործելու հմտություններ ու կարողություններ: Հատկապես արդյունավետ է նմանության և տարբերության մեթոդի կիրառումը, երբ աշակերտները առանց ուսուցչի հրահանգների, միասին աշխատելու (խմբային) պայմաններում համապատասխան եզրակացություններ են անում, և դա նպաստում է նոր, երբեմն հակասական գաղափարների խթանմանը: Գիտելիքների ըմբռնման և կիրառման արդյունավետությունը զգալիորեն մեծացնում է աշակերտների կողմից գրաֆիկական սխեմաների և դիագրամների օգտագործման հաճախականությունը, նպաստում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների հայտնաբերման խթանմանը: Արդյունավետ համեմատության համար կարևոր է աշակերտների կողմից համեմատվելիք առարկաների, փաստերի, իրադարձությունների կարևոր հատկանիշների հստակ

սահմանումը, որն այնուհետև կդառնա նմանության ու տարբերության նույնականացման հիմք: Կարևոր է, որ ուսուցիչը համեմատության համար օգտագործի հստակ կառուցքավորված վարժություններ (ինչն են համեմատում և ըստ որ բնութագրերի), ինչն ուշագրավ է աշակերտների ջանքերը որոշակի տեսակի եզրակացությունների միտելու առումով: Այդպիսի առաջադրանքները միտված են աշակերտների կողմից մինևսին հատկանիշների միջև առկա նմանություններն ու տարբերությունները ճանաչելուն: Համեմատության և նմանություն-տարբերության նպատակով օգտագործվում են.

ՎԵՆՆԻ ԴԻԱԳՐԱՍ



Վեննի դիագրամն օգտագործվում է երկու թեմա կամ իրադարձություն, քննարկվող հարցեր, փաստեր, տարբեր արվեստագետների ստեղծագործություններ, արվեստի մեկ ոլորտի, ժանրի նմուշների ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ նշաններն ընդգծելու համար. շրջանագծերի հատման հատվածում գրվում է ընդհանուր նշանը, իսկ աջ և ձախ հատվածներում գրվում են տարբերակիչ նշանները:

Վեննի դիագրամի վրա աշխատելը նպաստում է, որ աշակերտն ավելի լավ հասկանա քննարկվող հարցը, ըմբռնի, զարգացնի դիտարկելիության, քննադատական ու վերլուծական մտածողության և ինքնուրույն աշխատելու հմտություններն ու կարողությունները:

Վեննի դիագրամի վրա կարող եք աշխատել ինչպես առանձին, այնպես էլ զույգերով և խմբային վարժություն կատարելիս:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑԱ

Այս գրաֆիկական սխեման օգտագործվում է այն դեպքում, երբ պետք է համեմատվեն երկուսից ավելի առարկաներ կամ իրադարձություններ, ստեղծագործություններ և այլն, ինչը նախատեսում է ավելի մանրամասն մոտեցում համեմատության օբյեկտների նկատմամբ և համեմատություն-տարբերությունից բացի նշվում են նաև յուրաքանչյուր օբյեկտի բնութագրերը:

Դիագրամ 2
Համեմատության մատրիցա
Մատրիցա

Բնութագրեր	Համեմատելու թեմաներ			
	# 1	# 2	# 3	
1				Նմանություններ
				Տարբերություններ
2				Նմանություններ
				Տարբերություններ
3				Նմանություններ
				Տարբերություններ
4				Նմանություններ
				Տարբերություններ

T-դիագրամ

Հետաքրքրություններ	Վտանգներ

Սխեման օգտագործվում է քննարկվելիք հարցերը (փաստեր, իրադարձություններ, գեղարվեստական ուղղություններ, ժամանակաշրջաններ, դարաշրջաններ, արվեստագետների գործեր, արվեստի նմուշներ և այլն) համեմատելու, հակադրելու, այսինքն՝ միայն տարբերակիչ նշանները նշելու համար: Համապատասխանաբար, սխեմայի յուրաքանչյուր սյունակում կգրանցվեն փաստեր, իրադարձություններ և այլ տարբեր նշաններ: Սխեմայի վրա աշխատանքը կհեշտացնի, որ աշակերտն ավելի լավ հասկանա քննարկվելիք հարցը, թափանցի դրա էության մեջ, զարգացնի դիտարկման, եզրակացություններ անելու, քննադատական մտածողության և ինքնուրույն աշխատելու կարողությունները: Սխեմայի վրա հնարավոր է աշխատել ինչպես անհատական, այնպես էլ զույգերով և խմբերով:

Երկկողմ գրառույթների օրագիր

Այս սխեմայի վրա աշխատանքը օգտագործվում է աշակերտի քննադատական մտածողության և փաստարկված դատողության, ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման համար: Տրված սխեմայի առաջին վանդակում («մեջբերում») մենք աշակերտներին կառաջարկենք գրի առնել մեջբերումը դասագրքից (այդ նպատակով հնարավոր է օգտագործել այլ տեսակի տեղեկություններ), ինչի հետ կապված էլ սեփական կարծիքները գրում է աղյուսակի երկրորդ մասում («մեկնաբանություն»):

Մեջբերում	Մեկնաբանություն

«Գիտեմ, սովորեցի, ուզում եմ իմանալ»:

Նոր թեմա սկսելիս աշակերտները գրառույթներ են անում տրված սխեմայի առաջին սյունակում: Թեման ավարտելիս՝ հիմնականում ամփոփիչ դասի ժամանակ լրացնում են երկրորդ և երրորդ սյունակները: Ուսուցչի համար կարևոր է վերլուծել գրառույթները, ինչը հստակ խոսում է աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքների յուրացման որակի, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրությունների մասին, որը երևում է երրորդ սյունակում կատարված գրառման մեջ:

Ինչ գիտեմ	Ինչ սովորեցի	Ինչ եմ ուզում իմանալ

«3, 2, 1»


Տվյալ սխեմայի վրա աշխատելը կարևոր է ինչպես ձեռք բերված գիտելիքների ցուցաբերման, սեփական վերաբերմունքի փոխանցման, այնպես էլ ինքնագնահատման կարողությունների դրսևորման համար:

Տվյալ սխեմայի վրա աշխատանքը նպատակահարմար է թեմատիկ ցիկլի եզրափակիչ դասի համար: Ցանկալի է, որ աշակերտները նախապես տեղեկացված լինեն, որ յուրաքանչյուր սյունակում միայն թեմաների կամ հարցերի թվարկումը բավարար չէ: Նրանք պետք է հիմնավորեն իրենց կարծիքները, ինչը կնպաստի ուսուսական նյութի վրա կենտրոնացման, քննադատական մտածողության և փաստարկված դատողության հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Գրի՛ր 3 թեմա/հարց, որոնցով հատկապես հետաքրքրվեցիր:	
2 թեմա/հարց, որոնց հետ կապված քեզ մոտ առաջացել է ավել տեղեկություններ ստանալու հետաքրքրություն:	
1 թեմա/հարց, որի մասին դատողություն կանեիր ընկերներիդ հետ:	


Ասոցիատիվ քարտեզ (այսպես կոչված՝ «Մարդոստայն»)

Ասոցիատիվ քարտեզն օգտագործվում է աշակերտների ուշադրության առավելագույն մոբիլիզացման և կենտրոնացման համար, մտածողության ակտիվացման, ձեռք բերված գիտելիքների բացահայտման-ամրապնդման, ամփոփման նպատակով: Գրատախտակի կամ թղթի կենտրոնում գրված է հանգուցային բառ/արտահայտություն, որը կարող է արտահայտել կոնկրետ տերմին, դարաշրջան, իրադարձություն, անձ և այլն: Տվյալ հանգուցային բառի շուրջ աշակերտները գրում են բառեր, արտահայտություններ, որոնք կհիշեն՝ կապված այս բառի/արտահայտության հետ: Դրանից հետո նրանք տրամաբանորեն կապում են այս բառերը, արտահայտություններն ինչպես իրար, այնպես էլ հանգուցային բառի հետ և արտացոլում են գծերով: Այս մեթոդը կարող է օգտագործվել ինչպես անհատական, այնպես էլ զույգերով և խմբային աշխատանքի ժամանակ:




Բացի այս ճանաչողական սխեմաներից, առաջարկում ենք ևս մի քանի գրաֆիկական սխեմաներ, որոնք համապատասխանում են տեղեկատվության տեսակավորման կոնկրետ պարադիգմների:

- **Նկարագրական պարադիգմներ:** Նկարագրական պարադիգմը կարող ենք օգտագործել կոնկրետ մարդկանց, վայրերի, առարկաների և իրադարձությունների մասին փաստեր ներկայացնելու համար: Պարտադիր չէ, որ նկարագրական պարադիգմերում ներառված տեղեկությունները դասավորված լինեն որևէ հաջորդականությամբ:



- **Ժամանակային հաջորդականության պարադիգմներ:** Ժամանակային հաջորդականության պարադիգմը նշանակում է իրադարձությունների դասավորում ըստ ժամանակագրական սկզբունքի: Նման սխեմաների լրացումը աշակերտներին կօգնի ժամանակագրությունը որոշելու և տեսնելու հարցում:


Իրադարձություն	Իրադարձություն	Իրադարձություն	Իրադարձություն	Իրադարձություն	Իրադարձություն	Իրադարձություն
----------------	----------------	----------------	----------------	----------------	----------------	----------------



Ժամացույց՝ իրադարձությունների հաջորդականություն

Գործընթացի/պատճառահետևանքայնության պարադիգմեր: Գործընթացի/պատճառահետևանքայնության պարադիգմը նշանակում է տեղեկատվության դասավորում. ա. Կառուցատիվ ցանցում, որը մեզ տանում է մինչև կոնկրետ արդյունք: բ. Գործողությունների միասնության մեջ, որը տրամաբանորեն ավարտվում է կոնկրետ արդյունքով:

ա.




բ.

Իրադարձություն 1 Մա տեղի է ունեցել, որովհետև

↳

↳


Արդյունք



Դրվագի պարադիգմեր: Դրվագի պարադիգմը հնարավորություն է տալիս որոշակի համակարգի մեջ բերել այնպիսի կոնկրետ տեղեկություններ, ինչպիսիք են.

ա. իրադարձության ժամանակը և վայրը, բ. կոնկրետ մարդիկ, գ. իրադարձության տևողությունը, դ. իրադարձությունների որոշակի հաջորդականություն, ե. կոնկրետ պատճառ և հետևանք:

Իրադարձության նկարագրություն



2. Մետաճանաչողական (մետակոգնիտային) ռազմավարություններ

Մետաճանաչողությունը բառացի նշանակում է ճանաչողություն (գիտելիք, ճանաչում) ճանաչողության մասին կամ գիտելիք գիտելիքի և ուսանման մասին: Մա ամենաբարձր կարգի մետաճանաչողությունն է, որը կիրառվում է ճանաչողական գործընթացները վերահսկելու և կարգավորելու համար, այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են տրամաբանական մտածողությունը, ըմբռնում-վերլուծումը, խնդիրների լուծումը, ուսանումը և այլն: Քանի որ մարդիկ տարբերվում են իրենց մետաճանաչողական գիտելիքներով և ունակություններով, նրանք տարբերվում են նաև ըստ ուսանման որակի և արագության:

Մետաճանաչումը ներառում է գիտելիքի երեք տեսակ.

(1) Դեկլարատիվ գիտելիք իր, որպես սովորողի մասին, այն գործոնների մասին, որոնք ազդում են քո ուսանման ու հիշողության և որոշակի առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ հմտությունների, ռազմավարությունների և ռեսուրսների վրա:

(2) Ընթացակարգային գիտելիք կամ ռազմավարություններ օգտագործելու իմացություն:

(3) Պայմանի վրա հիմնված գիտելիքներ առաջադրանքի կատարումն ապահովելու համար` նրա իմացություն, թե երբ և ինչու օգտագործել ռազմավարությունները և ընթացակարգերը:

Մետաճանաչողությունն այս դեկլարատիվ, ընթացակարգային և պայմանի վրա հիմնված գիտելիքների ռազմավարական օգտագործումն է նպատակներին հասնելու և խնդիրները հաղթահարելու համար:

Մետաճանաչողական գիտելիքներն օգտագործվում են մտածողության և ուսանման կարգավորման համար: Գոյություն ունեն երեք էական կարողություններ, որոնց միջոցով իրականացվում է այս գործընթացը: Դրանք են. պլանավորումը, մոնիթորինգը և գնահատումը:

Պլանավորումը ենթադրում է նրա որոշում, թե ինչ ժամանակ հատկացնել առաջադրանքին, ինչ ռազմավարություններ օգտագործել, ինչպես սկսել առաջադրանքի կատարումը, ինչ ռեսուրսներ պետք է օգտագործել, ինչ հաջորդականության հետևել, ինչի վրա շատ ժամանակ չկորցնել, ինչի վրա հատուկ ուշադրություն հրավիրել և այլն:

Մոնիթորինգը տվյալ պահի ընկալումն է, նրա գիտակցումը, թե «ինչ եմ անում»: Մոնիթորինգը ներառում է հարցեր. «Արդյոք սա իմաստ ունի»: Շատ չէ՞մ շտապում: Բավականաչափ սովորե՞լ եմ»:

Գնահատումը ներառում է մտածողության, ուսանման գործընթացների և արդյունքների մասին գնահատումներ անելը. «Արդյոք ավելի լավ չի՞ լինի փոխել ռազմավարությունը: Արդյոք օգնություն չիսնդրե՞մ: Հանձնվե՞մ: Այս աշխատանքն ավարտվա՞ծ է»:

Առանձնացվում են ռազմավարությունների հետևյալ տեսակները.

Ռազմավարության տեսակ	Օրինակ
Նյութը կրկնելու պարզ ռազմավարություններ	Փաստական տվյալների մի քանի անգամ կրկնություն
Նյութը կրկնելու բարդ ռազմավարություններ	Տեքստի կարևոր կետերի ընդգծում
Տեղեկությունների մշակման պարզ ռազմավարություններ	Զուգորդությունների ձևավորում
Տեղեկությունների մշակման բարդ ռազմավարություններ	Համանմանությունների ձևավորում, շրջատում, արդյունքների ամփոփում, կապակցում
Տեղեկությունների կազմակերպման պարզ ռազմավարություններ	Խմբավորում, դասակարգում
Տեղեկությունների կազմակերպման բարդ ռազմավարություններ	Հիմնական գաղափարի նույնականացում, ընդհանրացված հասկացություններ արտացոլող աղյուսակների մշակում:
Նյութի հասկանալը ստուգելու ռազմավարություններ	Հարցերի ինքնաստուգման համար, հիմնական թեզիսների, կետերի թվարկում, նպատակների նախանշում և այս ուղղությամբ սեփական առաջընթացին հետևել:
Աֆեկտիվ և մոտիվացիոն ռազմավարություններ	Ներքին մոտիվացիայի կիրառում, «Ես կարող եմ դա անել, ինձ ուղղակի ժամանակ է պետք, զգացումների կառավարման տեխնիկա, դրական տրամադրվածության մշակում»:

3. Սոցիալական ռազմավարություն. Ինչպես նշեցինք, նման ռազմավարությունները կառուցված են փոխադարձ համագործակցության վրա: Առաջարկում ենք մեթոդական հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ են խմբային աշխատանքի համար:

Խմբային աշխատանք

Խմբում աշխատանքի պլանավորում

- Խմբում աշխատելու համար անհրաժեշտ է, որ աշակերտները տեսնեն և լսեն միմյանց: Անհրաժեշտ է նյութը բաժանել խմբերին: Ուսումնական միջոցները պետք է հասանելի լինեն:
- Աշխատանքային թերթիկի վրա հրահանգները պետք է լինեն աշակերտին հասկանալի լեզվով և ճշգրիտ ձևակերպված, այնպես, որ դրանք հնարավոր լինի կատարել առանց ուսուցչի:
- Խմբում աշխատելիս պետք է մտածել ոչ միայն կրթական նպատակների իրագործման, այլև համագործակցության ունակության զարգացման վրա:

Համագործակցության հիմնական սկզբունքները

- Խմբի անդամները պետք է լսեն իրենց հասակակիցներին, յուրաքանչյուրը պետք է մասնակցի աշխատանքին, անհրաժեշտության դեպքում, նա պետք է օգնություն խնդրի և ստանա այն:
- Ուսուցիչը հետևում է, որ յուրաքանչյուր աշակերտ կատարի սահմանված դերը (կազմակերպչ-առաջնորդ, բանախոս, ընդհանրացնող, ժամանակը վերահսկող և այլն), բացի այդ, տարբեր առաջադրանքների ժամանակ դերերը պետք է փոխվեն:

Ինչպե՞ս բաժանել խմբերի:

- Խմբի օպտիմալ չափը՝ 4-5 աշակերտ: Մեծ ծավալով առաջադրանքի համար, որը բաժանված է մի քանի վարժությունների, հնարավոր է նաև ավելի մեծ խմբեր ստեղծել:
- Խմբերը պետք է լինեն շարունակաբար փոփոխական, բացառությամբ այն դեպքի, երբ խմբին տրված առաջադրանքը պահանջում է մի քանի օրվա համատեղ աշխատանք: Դասարանը բաժանելը անփոփոխ խմբերի կարող է խափանել նման աշխատանքի սկզբունքը, քանի որ բոլոր աշակերտները պետք է ակտիվ աշխատեն:

Ի՞նչ է անում ուսուցիչն այն ժամանակ, երբ աշակերտներն աշխատում են:

- Հետևե՛ք խմբերի աշխատանքին, բայց մի՛ դեկավարեք նրանց: Աշակերտներն աշխատում են ինքնուրույն՝ անձնական պատասխանատվության զգացումով: Կարող եք օգնել խմբերին՝ փոխանակեք տեղեկություններ աշխատանքային գործընթացին առնչվող հարցերի վերաբերյալ: Աշխատանքի ժամանակ աշխատե՛ք նոր գաղափարներ տրամադրել նրանց:
- Խնդրե՛ք աշակերտներին կիսվել իրենց կարծիքներով միմյանց հետ, լսել ուրիշներին և ստացված տեղեկությունների հիման վրա ինքնուրույն եզրակացություններ անել:
- Աշխատանքի ընթացքում արե՛ք մեկնաբանություններ: Տեղեկությունները աշակերտների ելույթների մասին պետք է կոնկրետ լինեն: Մի՛ խուսափեք հաճախակի, կոնկրետ և բաց մեկնաբանություններից: Դա պետք է անել ինչպես խմբային աշխատանքի, այնպես էլ ստացված արդյունքների ամփոփման ժամանակ:
- Եթե խմբերը դառնում են դժվար վերահսկելի, ընդհատե՛ք աշխատանքը և քննարկե՛ք այդ հարցը:
- Նշե՛ք, թե ինչպիսի վարքագիծն է առաջացնում խնդիրներ, որ աշակերտը չի կատարում իր դերը և բացատրե՛ք, որ բոլորը պատասխանատու են առաջադրանքը կատարելու համար: Յուրաքանչյուր խմբի 5 րոպեով նշանակե՛ք դիտորդ: Ավելի ուշ այս դիտորդները կարտահայտեն իրենց տպավորությունները: Խմբի գործունեությունը պետք է քննարկի ամբողջ դասարանը:

4. Ռեսուրսների վրա հիմնված ռազմավարություն: Բնական է առանց այս բաղադրիչի ակտիվ օգտագործման անհնար է հասնել ժամանակակից կրթության նպատակներին և խնդիրներին, պարզապես հետաքրքիր և ստեղծագործական դաս անցկացնել: Առաջարկում ենք մի քանի տեսակի ռեսուրսների օգտագործման համար անհրաժեշտ մեթոդաբանական հանձնարարականներ:

Աշխատանք գրավոր աղբյուրների վրա

Գրավոր աղբյուրները Աշակերտի գրքի հիմնական բաղադրիչներից են: Դրանց մշակումը նպաստում է աշակերտի հետազոտական-վերլուծական կարողության զարգացմանը և համապատասխանում է Ազգային ուսուսման պլանի հիմնական կրթական սկզբունքներին, քանի որ ներառում է գիտելիքի ինչպես դեկլարատիվ, այնպես էլ ընթացակարգային կարգերը:

Գրավոր աղբյուրը այն հիմնական ռեսուրսն է, որից ստացվում են պատմական գիտելիքները և դրանց մշակման արդյունքում հնարավոր է դառնում վերականգնել անցյալի պատկերը:

Պետք է նկատի ունենալ այն գործոնը, որ աղբյուրի վերլուծությունը ենթադրում է տեքստի լավ ըմբռնում, քանի որ պատասխանների մեծ մասը հենց տեքստի մեջ է: Աղբյուրի վրա աշխատանքը նկատի ունի պատասխանների որոնում այն հարցերին, որոնց նկատմամբ դրանք առաջանում են:

- Ո՞վ է հեղինակը: Ե՞րբ էր նա ապրում: Նա գրել է սեփական փորձից ելնելով, թե՞ որևէ տեղեկությունից էր օգտվում: Կարո՞ղ էր որևէ մեկը/ինչ-որ բան ազդել հեղինակի վրա տեքստը ստեղծելիս:

- Ի՞նչ գրվածքների հետ գործ ունենք: Օրինակ՝ տարեգրություն, պատմողական ակնարկ, գրական ստեղծագործություն, պետական փաստաթուղթ, ճամփորդական օրագիր, թե այլ:
- Որտե՞ղ և ե՞րբ են տեղի ունենում սկզբնաղբյուրում նկարագրված իրադարձությունները: Ինչի՞ մասին է այնտեղ խոսքը: Ինչպիսի եզրակացություն կարելի է անել:
- Ինչպիսի՞ն է հեղինակի շարադրանքի տոնայնությունը: Ի՞նչ նպատակ ունի հեղինակը պատմությունը պատմելով: Պարունակո՞ւմ է արդյոք տեքստը հեղինակային գնահատականներ: Դրսևորո՞ւմ է արդյոք կողմնակալություն: Ի՞նչ է ցանկանում ասել ընթերցողին:

Ի հավելումն այս ընդհանուր տեղեկատվության, յուրաքանչյուր աղբյուր տրամադրում է տեղեկություններ կոնկրետ դարաշրջանի, կոնկրետ թագավորի, պետական կամ եկեղեցական գործչի, որևէ կոնկրետ ճակատամարտի կամ թեկուզ մարդկանց առօրյա կյանքի մասին: Ուստի յուրաքանչյուր աղբյուր պահանջում է հարցերի առաջադրում տեքստի բովանդակության հիման վրա:

Աշխատանք նկարագարդման վրա

Նկարագարդման և դրա վերլուծության վրա աշխատանքը կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որը ծառայում է վերլուծական մտածողության զարգացմանը:

Նկարագարդումը ցանկացած տեսողական տիպի տպագիր նյութ է, օրինակ՝ ծաղրանկար, պաստառ, նկար, լուսանկար, ցուցապաստառ, փոստային նամականիշ և այլն:

Նկարագարդումը միշտ արժեքավոր աղբյուր է, քանի որ կարող է նրանում պատկերված լինել պատմական դեմք, ամսաթիվ, որևէ պատմական իրադարձություն/ գործընթաց: Աշակերտը պետք է ուշադիր դիտի նկարագարդման մեջ ներկայացված բոլոր մանրամասները. նկարագարդման ընդհանուր սյուժեն, տարբերվերը, գրության լեզուն և բովանդակությունը: Որպես սկզբնաղբյուր ևս նկարագարդումն ունի ընդհանուր, ընդհանրական հարցեր.

- Ե՞րբ է ստեղծվել նկարագարդումը:
- Պատմական ո՞ր ժամանակաշրջանն է նկարագրում նկարագարդումը:
- Ո՞վ է նկարագարդման հեղինակը, և ո՞րն է եղել այն ստեղծելու շարժառիթը:

Աշխատանք քարտեզի վրա

Քարտեզի վրա աշխատանքը նույնպես Աշակերտի գրքի և տետրի կարևոր բաղադրիչներից է և առաջին հերթին ծառայում է պատմական տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացմանը:

Առաջարկվող վարժությունները ներառում են աշխատանք պատմական և ժամանակակից քաղաքական քարտեզների վրա միաժամանակ, դրանց համեմատություն, հին պետությունների, կայսրությունների տեղում այսօր որ պետություններն են գտնվում:

Բացի այդ, պատմական քարտեզը բազմաթիվ տեղեկություններ է փոխանցում, դրա վրա նշված են սահմանների փոփոխությունները, միգրացիաները: Քարտեզի վրա աշխատանքը պահանջում է տեսական նյութի կապակցում գործնական աշխատանքի հետ:

Մինչ աշակերտները կսկսեն աշխատել քարտեզների վրա, անհրաժեշտ է քարտեզի լեզունը քննարկել:

ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱՆԵՐ

<p>Դասարան. Թեմայի անվանումը. Միջնադար Ժամերի ենթադրյալ քանակը. 28 Հիմնական ռեսուրս. Երաշխավորություն ստացած դասագիրք</p>		
Նպատակային հասկացություն	Հարց 1 Խաչակրաց արշավանքներ	Հարց 2 Եվրոպական և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում
Իշխանություն	<p>Ենթահարց. Հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև առկա քաղաքական հավասարակշռությունը Եվրոպայում: Պապերն ընդդեմ կայսրերի: Իսլամական հասարակության համար ընդունելի իշխանության միջոցներ: Պապի ազդեցությունը խաչակրաց արշավանքների վրա: Խաչակրաց արշավանքների ազդեցությունը եվրոպական միապետների իշխանության վրա:</p> <p>Ենթահասկացություն. կառավարման ձևը</p>	
Պատմական աղբյուր	<p>Ենթահարց. Տարբեր աղբյուրներ Հռոմի պապի և կայսեր միջև եղած կոնֆլիկտի մասին, աղբյուրներ խաչակրաց արշավանքների մասին, եվրոպական և արևելյան տեքստերի ըմբռնում:</p> <p>Ենթահարց. պատմողական աղբյուրներ, փաստաթղթեր, պատմական քարտեզներ, նկարազարդումներ:</p>	
Տարածություն	<p>Ենթահարց. Տարածությունը, որտեղ իրականացվել են խաչակրաց արշավանքները և նրա տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար:</p> <p>Ենթահասկացություն. պատմաաշխարհագրական տարածք:</p>	

Պատմական իրադարձություն		<p>Ենթահարց. Մոնղոլների նվաճումների պատճառներն ու հետևանքները: Օսմանյան պետության վերելքը և ռազմական հաջողությունները: Փոփոխություններ Արևմտյան աշխարհում XIII-XIV դարերում: Լենկ Թեմուրի կողմից Միավորված Մոնղոլական կայսրության վերականգնման փորձի հետևանքները:</p>
		<p>Ենթահասկացություն.</p> <ul style="list-style-type: none"> • Պատերազմ: • Պատմական անհատ:
Ժամանակ		<p>Ենթահարց. Քաղաքների վերածննդի դարաշրջանը Եվրոպայում: Մոնղոլական դարաշրջանը և դրա բնութագրերը: Օսմանցիների պետականության ձևավորման և վերելքի դարաշրջանը: Լենկ Թեմուրի դարաշրջանը և դրա բնութագրերը:</p> <p>Ենթահասկացություն.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմական դարաշրջան
Հասարակություն		<p>Ենթահարց. Եվրոպական քաղաքներում բնակվող հասարակության գլխավոր բնութագրերը: Մոնղոլական հասարակության հարմարվելը նոր տարածքում: Օսմանյան հասարակության գլխավոր բնութագրերը: Քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական փոփոխությունները XIII-XIV դարերի եվրոպական հասարակության մեջ: Լենկ Թեմուրի արշավանքների ազդեցությունը Արևելյան աշխարհի հասարակության վրա:</p> <p>Ենթահասկացություն.</p> <ul style="list-style-type: none"> • Առօրյա կյանքը

<p>Համալիր առաջադրանք</p>	<p>Համալիր առաջադրանք 1 Պատկերացրո՛ւ, որ դու XI դարի գիտնական ես: Գործունեությունն էս ծավալում Պապի պալատում և նրա խորհրդականն ես: Քեզ մոտ գաղափար է առաջացել խաչակրաց արշավանք սկսելու մասին: Պապին գրավոր զեկույց ներկայացրո՛ւ, որում ձևակերպված կլինի, թե երբ և ինչու պետք է սկսվեն խաչակրաց արշավանքները, որն է լինելու դրանց նպատակը, ինչ կբերի այն մի կողմից Պապի իշխանությանը, մյուս կողմից եվրոպական աշխարհին:</p>	<p>Համալիր առաջադրանք 2 Պատկերացրո՛ւ, որ XIV դարի վերջի Վենետիկի հանրապետության գաղտնի գործակալ ես Արևելքում: Քո նպատակն է Օսմանյան և Լենկ Թեմուրի կայսրություններում ուսումնասիրել տնտեսական և քաղաքական իրավիճակը: Ուղևորվում ես Արևելք և երկար ճանապարհորդության և վտանգավոր արկածների շնորհիվ ծանոթանում ես այս աշխարհին: Օրագիր ես վարում, որը պետք է դառնա այս դարաշրջանի աղբյուր, որում կարտացոլվես քո ամենօրյա տպավորությունները և նաև քո հրամանատարներին ուղարկվելիք տեղեկությունները: Քո ճանապարհորդության գրառույթները պետք է արտացոլեն տեղեկություններ Արևելյան աշխարհի, մոնղոլների, օսմանցիների և Լենկ Թեմուրի դարաշրջանում, թե ինչպես կտեսներ և կընկալեր այն եվրոպացի ականատեսը:</p>
<p>Ռեսուրսներ համալիր առաջադրանքը կատարելու համար</p>	<p>Դասագրքի պարագրաֆները: <ul style="list-style-type: none"> • Ինչպես վերակենդանացավ հռոմեական կայսերական գաղափարը Արևմուտքում: • Ինչո՞ւ էին իրար հակադրվում Հռոմի պապն ու կայսրը: • Ի՞նչ մարտահրավերների առջև է հայտնվել Բյուզանդիան XI դարում: • Ինչպե՞ս է ձևավորվել թուրք սելջուկների հզոր կայսրությունը Արևելքում: • Ինչո՞ւ սկսվեցին խաչակրաց արշավանքները: • Ինչպե՞ս փոխեց աշխարհը առաջին խաչակրաց արշավանքը: • Խաչակրաց արշավանքների հետևանքները: <p>Հեռուստադպրոց Խաչակրաց արշավանքներ https://youtu.be/94TcWn63dZQ</p> </p>	<p>Դասագրքի պարագրաֆները. <ul style="list-style-type: none"> • Ի՞նչ գործոններ են նպաստել Եվրոպայում քաղաքների առանձնահատուկ զարգացմանը: • Ինչպես փոխեցին մոնղոլների նվաճումներն Արևելյան աշխարհը: • Ի՞նչ գործոններ պայմանավորեցին Օսմանյան պետության վերելքը և նրանց ռազմական հաջողությունները: • Ի՞նչ էական փոփոխությունների է ենթարկվել Արևմտյան աշխարհը XIII-XIV դարերում: <p>Ինչպե՞ս փորձեց Լենկ Թեմուրը վերականգնել Միասնական Մոնղոլական կայսրությունը:</p> <p>Հեռուստադպրոց Մոնղոլները և Վրաստանը https://youtu.be/QU5p475txzs</p> </p>

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ

- Միջնադարը միաստվածային կրոնների՝ քրիստոնեության և իսլամի. մի կողմից դիմակայության, մյուս կողմից՝ փոխներգործության ժամանակաշրջան է:
- Միջնադարում պատմության պարբերականացումը և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում սահմանված էր կրոնական նշանով ինչպես հայեցակարգային մակարդակով, այնպես էլ հավատացյալների համար կրոնական տոների հաշվարկման ձևով:
- Միջնադարում, ինչպես նաև վաղ ժամանակաշրջաններում մարդկանց հողին ամրացված մասի համար ցերեկվա և գիշերվա հերթագայումը հիմնականում կապված էր տնտեսական գործունեության հետ, սակայն ժամանակի վերահսկողությունը եկեղեցու ձեռքում է:
- Ժամացույցներ ժամանակակից իմաստով միջնադարում գոյություն չունեին ո՛չ քրիստոնեական, ո՛չ էլ մահմեդական աշխարհում:
- Ջարգացած միջնադարում մասնատված քաղաքական միավորների խոշորացման միտումը փոխեց Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի քաղաքական քարտեզը:
- Քաղաքակրթության երեք մեծ կենտրոնների՝ Բյուզանդական կայսրության, մահմեդական Արևելքի և «լատինական» Արևմուտքի հատման տարածքը Լևանտն էր:
- Արաբական խալիֆայության փլուզումը Բյուզանդիային հնարավորություն տվեց տարածքային ընդլայնում իրականացնել Մերձավոր Արևելքի և Կովկասի ուղղությամբ:
- Մերձավոր Արևելքի և Արևելյան Եվրոպայի տարածքը միջնադարում բազմաթիվ (թուրք-սելջուկներ, պեչենեգներ, ղվչաղներ) քոչվոր ժողովուրդներ են խախտել, ինչը հանգեցրել է այս տարածքների սահմանների և պետությունների փոփոխության:
- Բյուզանդիայի համար մրցակիցներ հայտնվեցին առևտրառազմավարական տարածքների և երթևեկության ճանապարհների տիրապետման համար, որոնք կարողացան մասամբ գաղութացնել Լևանտի տարածքը:
- Միջնադարում «Մետաքսի ճանապարհը» միացնում էր Եվրոպան ու Ասիան: Այս խոշոր տարանցիկ ցանցի որոշ երթուղիներ և հատվածներ անցնում էին նաև Վրաստանով:
- Ջարգացած միջնադարում Մոնղոլական կայսրության ներքին երթևեկության ճանապարհային ցանցն ու անվտանգությունը հեռավոր ճանապարհորդությունների հետաքրքրություն ու հնարավորություն առաջացրին ինչպես քրիստոնեական, այնպես էլ մուսուլմանական աշխարհում և այլուր, ինչը հանգեցրեց քարտեզների և աշխարհագրական գիտելիքների կատարելագործման:
- Ջարգացած միջնադարում աղբյուրների հիմնական տեսակներն են գրավոր (օրենսդրական, տարեգրություն, անալներ, էպոսներ, նամակներ, կենսագրական...) վիմագրական, ազգագրական, հնագիտական (ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում), սակայն քրիստոնեական աշխարհի համար վաղ միջնադարում առանձնահատուկ նշանակություն ունեցող եկեղեցական գրականությանը և սրբագրությանը զուգահեռ մեծ նշանակություն են ձեռք բերում պատմական ժողովածուները և աշխարհիկ բնույթի էպոսը:
- Միջնադարում հատուկ դեր է ստանձնում զինանշանագիտությունը, որն ավելի բնորոշ է եվրոպական տարածքին:

- Միջնադարում միաստվածային կրոնները սահմանեցին սրբավայրի, ծիսական նպատակի, բնակատեղի և հագուստի (առօրյա, ծիսական, մարտական) տեսակը, որի արտեֆակտները դարաշրջանի համալիր վերակառուցման համար թանկարժեք նյութ են:
- Միջնադարյան աղբյուրների հավաստիության աստիճանը որոշվում է աղբյուրի տեսակով և ժանրային հատկանիշներով և դրանց ստեղծման վայրով (կրոնական նշանակության տարածք, աշխարհիկ իշխանության նստավայր, բարձրագույն ուսուսման հաստատություն):
- Միջնադարյան մարդու աշխարհայացքը հիմնված էր աշխարհի նախախնամական ընկալման վրա, որը լիովին սահմանեց կրթության առաջնահերթությունները. կրթության կենտրոնների վերածվեցին վանքերը և մեդրեսեները, բայց քաղաքային կյանքը հանգեցրեց կրթություն ստանալու դիվերսիֆիկացման:
- Արևմտյան Եվրոպայում համալսարանների առաջացումը սկսվում է զարգացած միջնադարից և, չնայած այն հանգամանքին, որ Բյուզանդիայում, նրա ազդեցության գոտու երկրներում և արաբական պետությունում մինչ այդ գոյություն ուներ բարձրագույն ուսուսման հաստատության տեսակ, ժամանակակից համալսարանների նախակարապետը հենց արևմտյան տեսակի բարձրագույն կրթությունն է:
- Չարգացած միջնադարյան հասարակությունը (հիմնականում քրիստոնեական աշխարհի արևմտյան մասը) բնութագրվում է եռանդամ հասարակությամբ, որը ենթադրում է խիստ սահմանված սոցիալական հիերարխիա: Այս մոդելը ավելի քիչ է նման բյուզանդական հասարակությանը և լիովին անհամատեղելի է իսլամական աշխարհի հետ, թեև կաստայական պարփակվածության օրինակներ հանդիպում են Հեռավոր Ասիայում:
- Չարգացած միջնադարում վերջնականապես ձևավորվել է ֆեոդալիզմը՝ բարդ սոցիալ-տնտեսական և ռազմական համակարգը (որը նշանակում էր խոշոր հողատիրոջը քաղաքական իրավունքների շնորհում), որը տիպիկ դրսևորմամբ բնորոշ է քրիստոնեական Արևմտյան Եվրոպային: Արևելյան Եվրոպային, Մերձավոր Արևելքին և Հեռավոր Արևելքին այս համակարգը կա՛մ միայն մասամբ է բնորոշ, կա՛մ մեկ այլ սոցիալ-տնտեսական համակարգ են ստեղծում (որտեղ հողի սեփականատերը պետությունն է կամ նրա խորհրդանիշը դարձած տիրակալը):
- Միջնադարը ասպետների (ակրիտասների, լավ ճորտի...), ամրոցների ու բերդաքաղաքների, հերոսական էպոսների, տրուբադուրների դարաշրջան է: Չնայած գրականության մեջ կնոջ լիրիկական պատկերմանը, նրա իրավական կարգավիճակը և հասարակական կյանքում սոցիալական դերը զիջում էր տղամարդու դերին:
- Չարգացած միջնադարը ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում քաղաքային կյանքի վերելքով է բնութագրվում, սակայն, արևմտաեվրոպական քաղաքների կառավարիչներ/տիրապետողներ դարձան քաղաքացիները (վաճառական-արհեստավորների վերին շերտը), այն դեպքում, երբ Բյուզանդիայում քաղաքային ինքնակառավարման մարմինների դերը հասնում է նվազագույնի, իսկ իսլամական աշխարհում քաղաքը աչքի չէր ընկնում իր մունիցիպալ ինքնակառավարմամբ:
- Եռանդամ հասարակության երրորդ «անդամը» քաղաքի բնակչությունն է: Դասերն այն, ինչ ունեին ընդհանուր, անձնական ազատությունն է:
- Չարգացած միջնադարում կլիմայի փոփոխությունը (տաքացումը) բնակիչներին հնարավորություն տվեց հողագործական գործունեության մեջ որոշ նորարարություններ կատարել և մեծ հողահանդակներ օգտագործել:

- Քաղաքային կյանքի վերելքը հանգեցրեց փակ ինքնաբավ տնտեսության խախտման, աշխատանքի բաժանման/մասնագիտացման և դրամավարկային-ապրանքային հարաբերությունների ամրապնդման:
- Ջարգացած միջնադարում քրիստոնեական աշխարհում առանձնացան արևմտավրոպական (11-12-րդ դարերի մտավոր վերելք) և բյուզանդական մշակութային տարածքներ (մակեդոնական վերածնունդ), որոնց օտարացման խորհրդանշական դրսևորում կարող ենք համարել Մեծ սխիզմը:
- Ջարգացած միջնադարում քրիստոնեական աշխարհի այն հատվածում, որտեղ հասարակությունը դասային էր, տեղի է ունենում դասային-ներկայացուցչական մարմինների ձևավորում:
- Միջնադարյան տնտեսությունը հիմնվում է հողի մասնավոր սեփականատիրոջ և հողի վրա բարիք ստեղծողի անհավասար հարաբերությունների վրա, որի բնույթը քրիստոնեական աշխարհում դարձավ համընդհանուր, իսկ իսլամական աշխարհում մասնավոր սեփականատիրական իրավունքները շատ ավելի պայմանական բնույթ էին կրում:
- Լատինական Արևմուտքում միջնադարյան քաղաքակրթությունը նշանավորվել է հռոմեական-ռոմանիզացված հատվածի, ինչպես նաև գերմանական տարրի և քրիստոնեության սինթեզով, Բյուզանդիայում՝ հունախոս հելլենական-հելլենիստական, ինչպես նաև սլավոնական-արևելյան ժողովուրդների և քրիստոնեության սինթեզով:
- Չնայած թուրք-մոնղոլական քոչվոր տարրի գերակշռությանը (ինչը փոխեց Մերձավոր և Միջին Արևելքի ժողովրդագրական պատկերը) իսլամական տարածության մեջ Մերձավոր և Միջին Արևելքում պարսկական տարրը առավելություն է ձեռք բերել հասարակական կյանքի կառավարման, կենցաղային և մշակութային առումով:
- Ջարգացած միջնադարյան Արևմուտքին բնորոշ և առանձնահատուկ են երկբևեռությունը և աշխարհիկ ու հոգևոր իշխանության դիմակայությունը իշխանության համար, այն դեպքում, երբ Բյուզանդիայում երկիշխանության սկզբունքը ավելի ու ավելի է խախտվում, և նկատվում է կեսարոպապիզմի գերակշռումը:
- Ջարգացած Միջնադարում Բյուզանդիայի նման բյուրոկրատական ապարատի ձևավորման և կատարելագործման գործընթաց է ընթանում նաև Արևմտյան պետություններում, որն օգտագործվել է որպես իշխանության կենտրոնացված կառավարման լծակ, իսկ Արևելքում քոչվոր ժողովուրդների կողմից նվաճված պետություններում վարչական ապարատի ստեղծման ժամանակ այն սեզմենտն է առաջխաղացում ունենում, որն ունի պետական զարգացման մեծ ավանդույթ:
- Ջարգացած միջնադարում իշխանության փոխանցման ձևաչափը որոշվում էր ժառանգական-արքայատոհմական սկզբունքով, սակայն այն ամենուր խիստ արտահայտված բնույթ չունեցավ, ոչ էլ մայրատի կարգն էր համընդհանուր:
- Միջնադարում իշխանություն հաստատելու հավակնություններ է հանդես բերում աճող հոգևոր իշխանությունը, ինչի համար ակտիվորեն օգտագործում է տարբեր տեսակի ռեսուրսներ (բարոյական, էթիկական, կրթական առավելություն...)
- Ջարգացած միջնադարում իսլամական տարածության մեջ գերագույն իշխանությունը կրողի՝ խալիֆայի ինստիտուտը, որը միավորում էր աշխարհիկ և կրոնական իշխանությունները, անկում ապրեց և կորցրեց իշխանությանը միանձնյա տիրապետման բնույթը:

- Արևմտյան Եվրոպայում երկրորդ թագը և Հռոմեական կայսրությունը ժառանգելու հավակնությունը վերջնականապես անխուսափելի դարձրին միասնական քրիստոնեական տարածության քաղաքական, աշխարհայացքային-կրոնական տարանջատումը:
- Միջնադարը Պիրենեյներում և Մերձավոր Արևելքում խաչակրաց արշավանքների և ասիական մեծ կայսրությունների (թուրք-սելջուկներ, մոնղոլներ) դարաշրջան է:
- Բյուզանդական «Համագործակցությունը»/ Բյուզանդական «իդեալը»՝ Արևելյան քրիստոնեության և բյուզանդականության ֆենոմենով տոգորված ժողովուրդներին միավորում էր քրիստոնյաների հոգևոր առաջնորդը՝ ավտոկրատը կայսեր դրոշի ներքո:
- Միջնադարյան Արևմտյան Եվրոպայի տարածքը բնութագրվում է աշխարհիկ և կրոնական հակամարտությամբ, ինչը ձևավորեց այս տարածության քաղաքական զարգացման երկբևեռ զարգացման մոդել, որը բնորոշ չէր ոչ Բյուզանդիային, ոչ էլ առավել ևս՝ իսլամական Արևելքին:
- Արևելյան Հռոմեական կայսրությունում նախորդ պատմական ժամանակաշրջանում ստեղծված Հռոմեական իրավունքի կիրառումը Արևմտյան Եվրոպայի տարածքում ամուր հիմք ստեղծեց աշխարհիկ պետության գաղափարի վերածննդի համար:

Համալիր առաջադրանք N1. Թեմատիկ մատրիցա

Թեմա. Միջնադար

Նպատակային հասկացություն. Իշխանություն. (Արդյունք 3,4,5,6,7,8): Ենթահասկացություն (ընդհանուր). միապետություն, պապականություն: **Ենթահասկացություն (մասնավոր).** Սրբազան Հռոմի կայսրը և Եվրոպայի այլ միապետներ: Տուրքիլբեկ, Ալֆ-Արալան, Մալիք Շահ Ուրբան II, Գրիգոր VII: **Ենթահարց.** Հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև առկա քաղաքական հավասարակշռությունը Եվրոպայում, Պապերն ընդդեմ կայսրերի, Իսլամական համայնքի համար ընդունելի իշխանության միջոցներ, Պապի ազդեցությունը խաչակրաց արշավանքների վրա, Խաչակրաց արշավանքների ազդեցությունը Եվրոպական միապետների իշխանության վրա:

Նպատակային հասկացություն՝ Տարածություն (միջավայր, տարածք) (Արդյունք 1,2,3,4,5,6): Ենթահասկացություն (ընդհանուր). պատմաաշխարհագրական տարածք: **Ենթահասկացություն (մասնավոր).** Լևանտի տարածաշրջան, Եվրոպա, Փոքր Ասիա: **Ենթաթեմա՝** Տարածք, որտեղ տեղի են ունեցել խաչակրաց արշավանքները և դրա տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը Եվրոպական աշխարհի համար:

Նպատակային հասկացություն. Պատմական աղբյուր (Արդյունք 1,2,4,5): Ենթահասկացություն (ընդհանուր). պատմողական աղբյուրներ, փաստաթղթեր, պատմական քարտեզներ, նկարագրողումներ: **Ենթահասկացություն (մասնավոր)՝** Վիդուկինդ, Մաքսոնների պատմությունը, X դ. Մագդեբուրգի արքեպիսկոպոս Ադալբերտի արձանագրությունը, X դ.: Ժակ Լը Գոֆֆ, Ժամանակակից ֆրանսիացի պատմաբան, ֆրանկների կայսր Լյուդվիգ II-ի պատասխան նամակը Բյուզանդիայի կայսր Վասիլ I-ին Մակեդոնյան դինաստիայից: 871 թվական, Հուստինիանոս Մեծ՝ Պրագմատիկ պատժամիջոցը, 554 թվական: Պապ Գրիգոր II-ի նամակը Լևոն III կայսրը, 727 թվական: Օտտոն I-ի երդումը Հովհաննես XII պապին, 961 թվական, Հռոմի պապ Լևոն VIII-ի հրամանագիրը: 963 թվական: Հռոմի պապի ընտրության հրամանագիրը 1059 թ., Գրիգոր VII-ի ներումը կայսր Հայնրիխին հունվարի 28, 1077 թ.: Հենրիխի երդումը Հռոմի պապին: 1077 թվականի հունվար: Կանոսա: Վորմսի կոնկորդատը: 1122 թվական: Հուստինիանոս կայսեր Քաղաքացիական

օրենսգրքի նախաբանը: VI դար: Հատված Լևոն III Իսավրացու նամակից: VIIIդ.: Կոստանդին VII Օիրանաձինի գրառումը: X դար: Օղուզական էպոսը «Գորգուտ պապի գիրքը»: IX-XII դդ. Աբու ալ-Ֆարաջ Իբն-Լիբրի: XIII դ. սիրիացի պատմաբան, Ալեքսանդր Բայիամներ՝ ժամանակակից ավստրիացի բյուզանդագետ, Իբն ալ-Ասիր: XII դ արաբ հեղինակը նկարագրում է 1049 թվականի իրադարձությունը, որտեղ թուրքերի երկու առաջնորդները հանդիպում են միմյանց: Միքայել Ատտալիատես՝ XI դարի բյուզանդացի պատմաբան: Պապ Ուրբան II-ի ելույթը 1095 թվականին, Կլերմոնի ժողովը, Ֆուլխերիոս Շարտրացին, Ֆրանկ ուխտավորների գործերը, XII դարի տարեգրություն, Ալեքսիոս Կոմենենոսի առաջարկը խաչակիրներին, Մատթեոս Եղեսիացի-Ուռհայեցի, XII դարի հայ պատմիչ, Անանուն լատին հեղինակի տարեգրություն, ֆրանկների և դեպի Երուսաղեմ շարժվող ուխտավորների գործեր, XII դ., Աննա Կոմենենոս, Ալեքսիադա, XII դարի բյուզանդական տարեգրություն, Ռայմոնդ Աժիլցի, XII դարի ֆրանսիական տարեգրություն, Իբն ալ-Ասիր, XII-XIII դարերի արաբ պատմիչ, Պիետրո Պերուջինո, Քրիստոսը Պետրոս առաքյալին է փոխանցում քրիստոնեության բանալին, Քարտեզներ՝ 843, Վերդենի պայմանագիր, Սրբազան Հռոմեական կայսրությունը 843 թվականին, 1000 թվականի դրությամբ, 1004 թվականի դրությամբ, 1097 թվականի դրությամբ, Բյուզանդիա 476 թվականից 1095 թվականը, սելջուկ-թուրքերի գաղթը: **Ենթահարց.** տարբեր աղբյուրներ Պապի և կայսեր միջև առկա հակամարտության մասին, աղբյուրներ խաչակրաց արշավանքների մասին: Եվրոպական և արևելյան տեքստերի ըմբռնում:

Հարցը. Խաչակրաց արշավանքները

Հիմնական հարց. Ինչպե՞ս ներկայացնեն Հռոմի պապի խորհրդականի գրավոր զեկույցի միջոցով Լևանտի տարածաշրջանի կրոնական և տնտեսական դերը և դրա վերահսկման կարևորությունը եվրոպացիների համար: Ինչպե՞ս էր արտացոլվում մասնակցությունը խաչակրաց արշավանքներին ինչպես Հռոմի պապի, այնպես էլ եվրոպացի միապետի իշխանության վրա:

Համալիր առաջադրանք.

Պատկերացրո՛ւ, որ XI դարում Հռոմի պապի արքունիքում աշխատող մի գիտնական էս, Պապի խորհրդականը: Քեզ մոտ գաղափար է ծնվել խաչակրաց արշավանքներ սկսելու մասին: Հռոմի պապին գրավոր զեկուցում ներկայացրո՛ւ, որում ձևակերպված կլինի, թե երբ և ինչու պետք է սկսվեն խաչակրաց արշավանքները, ինչը պետք է լինի արշավանքների նպատակը, և ինչ կտա այն մի կողմից՝ Պապի իշխանությանը, մյուս կողմից՝ եվրոպական աշխարհին:

<p>Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ</p> <p><u>Աշակերտը պետք է գիտակցի, որ:</u> Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)</p> <ul style="list-style-type: none"> • Աշխարհագրական միջավայրը և աշխարհագրական գիտելիքներն ազդում են մարդկային հասարակության զարգացման վրա: • Շփման հաճախականությունը հանգեցնում է մեծ/փոքր սոցիալ-մշակութային տարածքների ստեղծման: • Կոնկրետ պատմաաշխարհագրական տարածքներ ունեն որոշակի տնտեսական, ռազմավարական և մշակութային նշանակություն: • Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է: • Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական խմբերի միջև: • Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները: • Իշխանություն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը: 	<p>Գնահատման չափանիշ</p> <p><u>Աշակերտը կարող է:</u> Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել եվրոպացիների համար Լևանտի տարածաշրջանի նշանակությունը, գործոնները, որոնք պայմանավորում են այս կոնկրետ տարածքի նշանակությունը (կ.պ. 1,3): • Վերլուծել խաչակրաց արշավանքների դարաշրջանում առկա աշխարհագրական գիտելիքը (կ.պ. 1,3): <p>Իշխանություն.</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել խաչակրաց արշավանքների դարաշրջանի իշխանության խորհրդանշանները, կառավարման ձևերը և կառուցվածքները, դրանք համեմատել այլ պատմական դարաշրջանների հետ (կ.պ. 1,3) • Վերլուծել խաչակրաց արշավանքների դարաշրջանում իշխանության համար պայքարի առանձնահատկությունները: (կ.պ. 1,3,4) • Վերլուծել ով/ինչն էր քննարկվում խաչակրաց արշավանքների դարաշրջանում իշխանության աղբյուր: Ի՞նչն էր հանդիսանում իշխանության լեգիտիմության հիմք (կ.պ. 4) 	<p>Աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցոլյց տվեք.</p> <ul style="list-style-type: none"> • Դատողություն արեք, թե ինչպիսին էր Եվրոպայում քաղաքական հավասարակշռությունը հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև, և ինչ կտային խաչակրաց արշավանքներն ինչպես պատերիս, այնպես էլ Եվրոպայի քաղաքական առաջնորդներին: (Իշխանություն, կայ.պ.2,3, Տարածություն. 3, Աղբյուր, կայ.պ. 1): • Ի՞նչ դեր պետք է ունենա շումի պապը խաչակրաց արշավանքներում և ինչպե՞ս է դա արտացոլվում շումի պապի իշխանության վրա: (Իշխանություն. կայ.պ. 3, 4, Աղբյուր, կայ.պ.2): • Բնութագրե՞ք տարածությունը և աշխարհագրական միջավայրը, որտեղ պետք է իրականացվի խաչակրաց արշավանք, և այս տարածության տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար: (Տարածություն, կայ.պ. 1, 2, 3, Աղբյուր, կայ.պ. 1, 2)
---	--	--

<p>• Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/հասարակական խմբերի միջև:</p> <p>• Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է:</p> <p>Պատմական աղբյուր.</p> <p>• Պատմաբանները անցյալի մասին տեղեկատվությունը վերցնում են աղբյուրներից:</p> <p>• Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինոնկար-լուսանկար-ֆոնոփաստաթուղթ):</p> <p>• Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես հուսալի:</p> <p>• Աղբյուրներից ստացված տեղեկատվությունը ոչ միանշանակ է, ուստի և դրանց մեկնաբանությունը պատմաբանների շրջանում քննարկման առարկա է:</p>	<p>Պատմական աղբյուր.</p> <p>• Վերլուծել աղբյուրները, որոնց միջոցով գտնվում են տեղեկություններ խաչակրաց արշավանքների մասին: (կ.պ. 1)</p> <p>• Համեմատել և միմյանց հետ կապել տարբեր տեսակի աղբյուրները և ձեռք բերված տեղեկությունները: (կ.պ. 2)</p> <p>• Վերլուծել այն գործոնները, որոնք պայմանավորում են աղբյուրների հուսալիություն/կողմնակալություն: (կ.պ.3);</p> <p>• Համեմատել միևնույն աղբյուրի վերլուծության հիման վրա կատարված տարբեր մեկնաբանություններ, դատողություն անել դրանց ուժեղ և թույլ կողմերի մասին (կ.պ. 4):</p>	<p>• Նկարագրել քրիստոնեության և թյուրքական աշխարհի վիճակն այս դարաշրջանում և դատողություն անարեք, թե ինչ գործոններ կնպաստեն խաչակիրների հաջողությանը: (Իշխանություն, կայ.պ. 1,2,3, Աղբյուր, կայ.պ. 1,2):</p> <p>• Ինչ տնտեսական ու քաղաքական օգուտ կբերեն խաչակրաց արշավանքները քրիստոնեական տարածությանը: (Իշխանություն, կայ.պ. 2, 4, Տարածություն, կայ.պ. 2, 3, Աղբյուր, կայ.պ. 3,4):</p>
--	---	---

<p>Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)</p> <p>Փուլ I. Ծանոթանալ համալիր առաջադրանքի պայմանին</p> <p>Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.</p> <p>Ռեսուրս 1. Դասագիրք (Աշակերտի գիրք), Պատմություն: XI դասարան, «Սուլակաուրիի հրատարակչություն», պարագրաֆներ՝ §1-2, 3-4, 5-6, 7-8, 9-10, 11-12, 13-14:</p> <p>Ռեսուրս 2. Էլ. ռեսուրսներ</p> <ul style="list-style-type: none"> • Ինչպե՞ս գրենք զեկուցում: https://files.fm/f/r8qvfudw9 • Հռոմեական Սրբազան կայսրություն: Silk School https://youtube.com/watch?v=KiL7mPxTMko&si=EnSIkaIECMiOmarE • Ինչպե՞ս ձևավորվեց Հռոմեական Սրբազան կայսրությունը /անիմացիա https://youtube.com/watch?v=0PN9f1Sz3bc&si=EnSIkaIECMiOmarE • Պապական նահանգի ձևավորումը և պապականությունը: EL.GE https://youtube.com/watch?v=pmv_6pDN5io&si=EnSIkaIECMiOmarE • Հակամարտությունը եկեղեցու և պետության միջև: Silk School https://youtube.com/watch?v=iDZ-aFbS8OM&si=EnSIkaIECMiOmarE • Որքանո՞վ հզոր էր Պապը միջնադարում: Knowledgeia https://youtube.com/watch?v=MDU0S-e6sfw&si=EnSIkaIECMiOmarE • Թուրք-սելջուկները և Մերձավոր Արևելքը, Մանազկերտի ճակատամարտը: Silk School https://youtube.com/watch?v=rF5heRq-xT8&si=EnSIkaIECMiOmarE
--

- Բյուզանդիա-սելջուկյան պատերազմները: Մանազկերտի ճակատամարտը: Kings and Generals
<https://youtube.com/watch?v=rn85RHrShrI&si=EnSIkaIECMiOmarE>
- Պատմություն, VIII դասարան: Խաչակրաց արշավանքները: Հեռուստադպրոց
<https://youtube.com/watch?v=94TcWn63dZQ&si=EnSIkaIECMiOmarE>
- Խաչակրաց արշավանքները: Silk School
<https://youtube.com/watch?v=4E-1f4uSw3E&si=EnSIkaIECMiOmarE>
- Խաչակրաց արշավանքները: Captivating History
<https://www.youtube.com/watch?v=H2hqa3AX5kY>
- Խաչակրաց արշավանքները մուսուլմանական տեսակյունից: Kings and Generals
<https://youtube.com/watch?v=t8RZtYvW02g&si=EnSIkaIECMiOmarE>

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանը հասկանալուն.

Խաչակրաց պատերազմ

• Ի՞նչ գիտեք խաչակրաց պատերազմների մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):

- Ինչպե՞ս կարող ենք բացատրել, թե ինչ է նշանակում «խաչակրաց պատերազմ» տերմինը:
- Ի՞նչն է միավորում խաչակրաց պատերազմ անունով հայտնի պատմական իրադարձությունները:
- Ձեր կարծիքով, ո՞ր գործոններն են ավելի շատ առաջացրել խաչակրաց արշավանքները՝ տնտեսական, կրոնական, թե՛ քաղաքական: (Ռեսուրս 1)

Գրավոր զեկուցում

- Ի՞նչ է զեկուցումը:
- Ինչո՞ւ է գրվում զեկուցումը:
- Ի՞նչ տեղեկատվություն է տրամադրում ռեսուրսը զեկուցում ստեղծելու վերաբերյալ:
- Ի՞նչ հիմնական մասեր պետք է առանձնացնես զեկուցում գրելու համար:
- Ո՞րն է տարբերությունը զեկուցման և նամակի միջև:
- Ինչպե՞ս կարելի է զեկուցում գրել:
- Ինչպե՞ս կարող ենք զեկուցման միջոցով ներկայացնել մեր տեսակետները: (Ռեսուրս 2)

Համալիր առաջադրանք

- Ձեր խոսքերով ձևակերպե՛ք, թե ինչին է վերաբերում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ էք նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Հասկացություն. Իշխանություն

Ենթահասկացություն. միապետություն, պապականություն

Ենթահարց. Եվրոպայում կրոնական և աշխարհիկ ուժերի միջև առկա քաղաքական հավասարակշռությունը: Պապերն ընդդեմ կայսրերի, իսլամական հասարակության համար ընդունելի իշխանության միջոցներ, Պապի ազդեցությունը խաչակրաց պատերազմների վրա, Խաչակրաց արշավանքների ազդեցությունը եվրոպական միապետների իշխանության վրա:

Հասկացություն. Տարածություն

Ենթահասկացություն. Պատմաաշխարհագրական տարածք

Ենթահարցեր. Տարածքը, որտեղ տեղի են ունեցել խաչակրաց արշավանքները և դրա տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար:

Հասկացություն. Պատմական աղբյուր: Ենթահասկացություն. պատմողական աղբյուրներ, փաստաթղթեր, պատմական քարտեզներ, նկարագարդուժներ

Ենթահարց. Տարբեր աղբյուրներ Պապի և կայսեր միջև եղած հակամարտության մասին, աղբյուրներ խաչակրաց արշավանքների վերաբերյալ, եվրոպական և արևելյան տեքստերի ըմբռնում:

Քայլ 1

Բնութագրե՛ք տարածությունը և աշխարհագրական միջավայրը, որտեղ պետք է տեղի ունենա խաչակրաց արշավանքը և այդ տարածության տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար: (Տարածություն, կայ.պ.1,2,3, Աղբյուր, կայ.պ. 1,2), (Պարագրաֆներ 7-8, 9-10)

• Ինչի՞ վրա էր հիմնված Մակեդոնական դինաստիայի և նրա հետագա կայսրերի իշխանությունը: Ո՞ր հասարակական խմբերի վրա էր այն հիմնվում:

• Ի՞նչ գործոններ հանգեցրին Բյուզանդական կայսրության ճգնաժամին:

• Հիշե՛ք, թե թյուրքալեզու քոչվոր ցեղերի որ հարձակումներն են ձեռք հայտնի նախորդ դարերից:

• Նկարագրե՛ք այն աշխարհագրական տարածքը, որտեղ նրանք հաստատվել են և բացատրե՛ք պատճառները, թե ինչու նրանք կարող էին սկսել տեղափոխվել նոր տարածություն:

• Որո՞նք էին թուրք-սելջուկների մշակութային, աշխարհագրական և տնտեսական առանձնահատկությունները: Ինչպե՞ս էին արտացոլվում նրանց հարձակումները հարևան տարածքների վրա:

• Քննարկե՛ք, թե ինչ ազդեցություն է ունեցել թուրք-սելջուկյան հասարակության զարգացման վրա այն աշխարհագրական միջավայրը, որում ապրում էին սկզբում, և փոխվե՞լ են արդյոք նրանք այլ աշխարհագրական տարածքում հաստատվելուց հետո:

• Ի՞նչ չափանիշներով էին թուրք սելջուկներն ի սկզբանե ընտրել այն տարածքները, ուր արշավել են, ինչո՞վ է պայմանավորված նրանց մոտիվացիան քաղաքական, տնտեսական, թե մշակութային առումով:

• Ի՞նչ տարբեր հատկանիշների պատճառով էին թուրքերն անընդունելի բոլոր այն հասարակությունների համար, որոնց տարածքում նրանք հայտնվում էին:

• Հիշե՛ք պատմությունից փաստեր, երբ մշակութային տարածքն իր ազդեցության տակ է առել նվաճողին և վերափոխել նրա հասարակությունը:

• Քննարկե՛ք, թե ինչու սելջուկ սուլթանները պետականության ձևավորման գործընթացում որպես հենարան ընտրեցին ոչ թուրքական տարրերին:

• Ի՞նչ գործոններ խանգարեցին թուրքական տարրին դառնալ միասնական հասարակություն:

• Ինչպիսի՞ վտանգ էին ներկայացնում թուրք-սելջուկները Բյուզանդական կայսրության համար, ինչո՞ւ Բյուզանդիան չկարողացավ պատասխանել այդ սպառնալիքին:

• Թուրք-սելջուկյան հարձակումներն ի՞նչ վտանգ էին ներկայացնում Վրաստանի և Կովկասի համար:

- Դատողություն արեք և ամփոփե՛ք այն գործունեքը, որոնք հանգեցրին Բյուզանդական կայսրության կոլապսին 1071 թվականին:

- Գնահատե՛ք Մանազկերտի ճակատամարտի, որպես պատմական իրադարձության, պատճառներն ու հետևանքները: Ինչպե՞ս կարող է գնահատվել այս իրադարձությունը, որպես գլոբալ կամ տեղային նշանակություն ունեցող:

- Ի՞նչ քաղաքական, մշակութային և տնտեսական արդյունք բերեց Մանազկերտի ճակատամարտը Բյուզանդական կայսրությանը:

Քայլ 2

Դատողություն արա, թե ինչպիսին էր Եվրոպայում քաղաքական հավասարակշռությունը կրոնական և աշխարհիկ ուժերի միջև, և ինչ կտային խաչակրաց արշավանքներն ինչպես պապերին, այնպես էլ Եվրոպայի քաղաքական կառավարիչներին: (Իշխանություն, կայ.պ. 2,3, Տարածություն կայ.պ. 3, Աղբյուր, կայ.պ 2,3), (պարագրաֆներ 1-2)

- Համեմատե՛ք Գերմանիայի աշխարհագրական տարածքը ֆրանսիականի և իտալականի հետ տնտեսական, ռազմավարական և մշակութային առուժանքով:

- Դատողություն արեք, թե ինչ է նշանակում հոգևոր անձանց ներգրավվածությունը քաղաքական և ռազմական իրադարձություններում: Ինչպե՞ս է բաշխվում իշխանությունը:

- Համեմատե՛ք Կոնրադի և Հենրիխի քաղաքականությունը: Ըստ ձեզ, ո՞րն է ավելի ճիշտ՝ նախ չեզոքացնել ներքին հակառակորդներին, իսկ հետո կենտրոնանալ արտաքին սպառնալիքների վրա, թե՞ հակառակը:

- Դատողություն արեք, թե որ սոցիալական խմբերին էր Հենրիխը ապավինում իր իշխանությունն ամրապնդելու համար:

- Ո՞րն էր Օտտոնի լեգիտիմությունը: Ինչի՞ վրա էր հիմնված Օտտոնի իշխանությունը:

- Հիշե՛ք, թե որ տիրակալի գործողությունների նման էին Օտտոնի գործողությունները և գնահատի՛ր դրանք:

- Դատողություն արեք, թե ի՞նչն էր բաժանում և ի՞նչն էր միավորում Արևմտյան Եվրոպան և Բյուզանդական կայսրությունը:

- Գնահատի՛ր իշխանության տեսակը, որը տարածված էր Հռոմեական Սրբազան կայսրությունում և ուրվագծի՛ր դրա դրական և բացասական բնութագրերը:

- Դատողություն արեք, Հռոմեական Սրբազան կայսրության կառավարման մոդելի մասին: Որո՞նք էին կառավարման այս համակարգի ուժեղ և թույլ կողմերը:

Քայլ 3

Ի՞նչ դեր պետք է ունենա Պապը խաչակրաց արշավանքներում, և ինչպե՞ս է դա արտացոլվում պապական իշխանության վրա: (Իշխանություն, կայ.պ. 3, 4, Աղբյուր, կայ.պ.2), (պարագրաֆներ 3-4, 5-6)

- Վերհիշե՛ք նախորդ տարի ուսումնասիրված նյութից պատմական իրադարձությունները, որոնց գլխավոր մասնակիցն է եղել Հռոմի պապը:

• Դատողություն՝ անարեք, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել Հռոմի պապը Եվրոպայի քաղաքական կյանքի վրա:

• Բացի կրոնականից, Հռոմի պապը ի՞նչ իշխանություն ուներ եվրոպական աշխարհում:

• Ինչո՞ւ էր եվրոպական միապետների համար կարևոր Հռոմի պապերի աջակցություն ստանալը:

• Դատողություն՝ անարեք, թե ինչ գործոններ են հանգեցրել Պապի հեղինակության թուլացմանը:

• Դատողություն՝ անարեք, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ քաղաքական և կրոնական իշխանություններն իրար խառնելը:

• Կլունիական շարժումը, որպես իրադարձություն, ի՞նչ ազդեցություն ունեցավ այս դարաշրջանի կրոնական ոլորտի ներկայացուցիչների վրա:

• Հիշե՛ք, թե ինչ գործոնների վրա էր հիմնվում Պապի և կայսեր իշխանությունը, և ո՞վ կունենար այս առճակատման մեջ առավելություն:

• Դատողություն՝ անարեք, թե իշխանության համար պայքարում ինչ տիպի հակամարտություն է եղել կայսեր և Պապի միջև: Ի՞նչ լծակների վրա էր հիմնվում նրանց իշխանությունը:

• Դատողություն՝ անարեք, թե ինչու Պապը չեղարկեց Հենրիխի բանադրումը, եթե նա չէր հավատում նրա անկեղծ ապաշխարությանը:

• Դատողություն՝ անարեք կայսր Հենրիխի իշխանության առանձնահատկությունների մասին: Ինչո՞ւ է եղավ Հռոմի պապի կողմից նրա բանադրման ակտն այսքան կործանարար:

• Ինչ էք կարծում, Հռոմի Պապի ձեռքում գտնվող լծակը արդյունավե՞տ կլիներ եվրոպական բոլոր միապետների դեմ և ինչո՞ւ:

• Ինչո՞ւ Բյուզանդական կայսրությունում աշխարհիկ և եկեղեցական իշխանությունների միջև նման հակամարտությունն անհնար կլիներ:

• Դատողություն՝ անարեք, թե ինչպես էր տարբերվում կրոնական իշխանության մոդելը Արևմտյան Եվրոպայում և Բյուզանդիայում:

Քայլ 4.

Բնութագրե՛ք Բյուզանդիայի և թյուրքական աշխարհի վիճակը այս դարաշրջանում և դատողություն՝ անարեք, թե ինչ գործոններ կարող էին նպաստել խաչակրաց արշավանքների հաջողությանը: (Իշխանություն, կայ.պ. 1, 2, 3, Աղբյուր, կայ.պ. 1, 2), (պարագրաֆներ 9-10, 11-12)

• Վերլուծե՛ք, թե ինչու թյուրքական հասարակությունը չկարողացավ արագ հարմարվել նոր տարածությանը:

• Դատողություն՝ անարեք և հիմնավորե՛ք ձեր կարծիքը. սելջուկներին հաջողվե՞ց վերափոխել Արևելյան աշխարհը և միավորել այն նոր կայսրության մեջ, թե՞ Արևելյան աշխարհին հաջողվեց փոխել սելջուկներին և նրանց իր մշակութային ազդեցության տակ առնել:

• Ինչպե՞ս կարելի է գնահատել Ալեքսիոս Կոմսենոսի դարաշրջանը Բյուզանդական կայսրության պատմության մեջ:

• Դատողություն՝ անարեք, թե ինչ գործոններ հանգեցրին Ալեքսիոս Կոմսենոսի հաջող կառավարմանը:

• Դատողություն՝ անարեք, թե ինչպես են խաչակրաց արշավանքները ազդել պապական իշխանության վրա, ինչպես նաև պապականության, որպես ինստիտուտի, կարևորության մասին եվրոպական աշխարհի համար:

• Դատողություն՝ անարեք, թե իշխանության ինչ լծակների օգտագործմամբ էր կարողանում Հռոմի Պապը սկսել խաչակրաց արշավանքները և դրանք առաջնորդել:

- Հիշե՛ք, թե ինչ էք իմացել խաչակրաց արշավանքների մասին, և ի՞նչ պատճառներ հանգեցրին այս պատմական գործընթացի սկզբին:

- Որքանո՞վ էր կարևոր հավատքն ու կրոնական աշխարհայացքը այս դարաշրջանի մարդկանց համար, և կլինե՞ն արդյոք վերոնշյալ պատճառները բավարար Եվրոպայում խաչակրաց արշավանքներ սկսելու համար:

- Դատողությո՞ւն արեք, թե բացի հակամարտությունից և պատերազմից, ի՞նչ գործընթացներ կնպաստեին Լևանտի շրջանի նկատմամբ քրիստոնեական վերահսկողության հաստատմանը:

- Դատողությո՞ւն արեք, թե ինչ տնտեսական գործոններ հանգեցրին խաչակրաց արշավանքների մեկնարկին:

- Հիշեք Պապի և կայսրի միջև կոնֆլիկտի մանրամասները և դատողությո՞ւն արեք, թե ինչպես էր այս իրադարձությունն ազդում Պապի իշխանության ամրապնդման առումով:

- Գնահատե՛ք թվարկված բոլոր պատճառները միասին և դատողությո՞ւն արեք, թե որքանով խաչակրաց արշավանքները կարող են գնահատվել զուտ կրոնական, տնտեսական կամ քաղաքական տեսակետից:

Քայլ 5

Ինչ տնտեսական և քաղաքական օգուտ կբերեն խաչակրաց արշավանքները քրիստոնեական տարածությանը: (Իշխանություն, կայ.պ. 2, 4, Տարածություն. 2, Աղբյուր, կայ.պ.3,4), (պարագրաֆներ 11-12, 13-14)

- Ինչպե՞ս է բնութագրում արևմտաեվրոպական տարածքը և Բյուզանդիան եվրոպական սասպենսների կողմից Կոստանդնուպոլսով հիանալու փաստը: Ինչպե՞ս է բնութագրում այս երկու տարածքները տնտեսական և մշակութային առումով:

- Որքանո՞վ ընդունելի կլինեին Ալեքսիոս Կոմսենոսի առաջարկը խաչակիրներին, և նրանք ինչո՞ւ էին հարկադրված ընդունել կայսեր պայմանները:

- Ինչպե՞ս էին մտադիր խաչակիրներն ու Բյուզանդիան բաժանել նվաճված տարածքները: Որքանո՞վ է հնագույն ժառանգությունն ազդում միջնադարի պատմաքաղաքական հանգամանքների վրա:

- Դատողությո՞ւն արեք, թե ինչ գործոններ կխանգարեին Սուրբ Երկրում եղած խաչակրաց պետություններում եվրոպական ֆեոդալական համակարգի սահուն գործունեությանը:

- Ո՞րն էր այս տարածքի մշակութային, տնտեսական և ռազմավարական նշանակությունը ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական աշխարհի համար:

- Դատողությո՞ւն արեք, թե ինչ քաղաքական և տնտեսական հետևանքներ է ունեցել Առաջին խաչակրաց արշավանքը:

- Դատողությո՞ւն արեք, թե ինչպիսի տարածք էին հանդիսանում խաչակրաց պետությունները: Ուրվագծի՞ր այս տարածքի քաղաքական, մշակութային, աշխարհագրական և տնտեսական առանձնահատկությունները:

- Դատողությո՞ւն արեք, թե ինչ քաղաքական և մշակութային խնդիրների են բախվել խաչակիրները՝ այս տարածքում հաստատվելու ճանապարհին:

- Ինչո՞ւ էր այս տարածքը կարևոր մուսուլմանների համար, և ի՞նչ կտային խաչակիրների դեմ հաջող պատերազմները մահմեդական տիրակալին, իշխանության առումով իսլամական տարածության մեջ:

- Գնահատե՛ք Սալահ ադ Դինի կողմից Երուսաղեմի գրավման կրոնական և տնտեսական նշանակությունը մահմեդական աշխարհի և իր Սալահ ադ Դինի համար:
- Ի՞նչ տնտեսական, քաղաքական և գաղափարական նշանակություն ունեւ Երուսաղեմի անկումը, որպէս պատմական իրադարձություն, եվրոպական աշխարհի համար:
- Դատողությո՛ւն արեք, թե ինչ գործնական օգուտ կբերեր յուրաքանչյուր միապետի՝ խաչակրաց արշավանքներում հաջողության հասնելը և Լևանտի տարածաշրջանում ազդեցություն ձեռք բերելը:
- Ըստ ձեզ, ինչո՞ւ Ռիչարդը չկարողացավ գրավել Երուսաղեմը, և ինչո՞ւ Սալահ ադ Դինը համաձայնեց նրա հետ զինադադարի:
- Դատողությո՛ւն արեք, թե ինչու չհաջողվեց լայնածավալ խաչակրաց արշավանք կազմակերպել XIII դարի սկզբին:
- Գնահատե՛ք Վենետիկի դոժի գործողությունը՝ կապված խաչակիրների հետ, որո՞նք էին նրա գործողությունների դրդապատճառները:
- Դատողությո՛ւն արեք, թե ով է գլխավոր դերակատարումս ունեցել այս պատմական իրադարձության իրականացման գործում. Հռոմի՞ պապը, Վենետիկի՞ դոժը, թե՞ Բյուզանդիայի կայսրը:
- Դատողությո՛ւն արեք, թե այս տարածքի նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելն ի՞նչ հնարավորություն կտար Վենետիկի հանրապետությանը:
- Գնահատե՛ք խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավման քաղաքական, կրոնական և տնտեսական նշանակությունը, որպէս իրադարձություն:
- Հիշի՛ր, թե ինչ ընդհանուր և անհրաժեշտ բնութագրեր պետք է ունենային բոլոր այն իրադարձությունները, որոնք անվանում էին խաչակրաց, և կարելի՞ է այս պատմական իրադարձությունը համարել խաչակրաց արշավանք:
- Դատողությո՛ւն արեք, թե ինչ կարող է բերել Վրաստանի թագավորությանը մասնակցությունը խաչակրաց արշավանքին, թե ինչ շարժառիթ կարող էր ունենալ Վրաստանի միապետը, որ մասնակցեր այս իրադարձությանը:
- Ձեր կարծիքով, խաչակրաց արշավանքների ժամանակ եվրոպացիների հաճախակի պարտությունը որքանով էր պայմանավորված այս տարածության աշխարհագրական բնութագրերով:
- Ինչպե՞ս փոխեց եվրոպական և Արևելյան աշխարհը հաղորդակցության հաճախականությունն այս դարաշրջանում և միմյանց մոտենալը՝ անկախ ռազմական հակամարտություններից:

Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար

Նկարագրի՛ր, թե ինչպէս է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:

- Ինչպե՞ս ես պլանավորում/պլանավորել ես համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նախատեսում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Նախնական պլանն օգնե՞լ է քեզ աշխատանքային գործընթացում:
- Ի՞նչ մանրամասների վրա էիր կենտրոնացել զեկուցում պատրաստելու համար:
- Համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացն ընթացե՞լ է ըստ պլանի:
- Արդյոք անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:

- Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակը:
- Ինչո՞վ է ավարտված առաջադրանքի սկզբնական տարբերակը տարբերվում վերջնական տարբերակից:
 - Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայմանը:
 - Ի՞նչ արդյունք էք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:
 - Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը զեկուցում է:

Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել զեկուցումը: Ի՞նչ հարցի մասին ես արտահայտել քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:

- Ինչո՞ւ ես կատարել համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ էք դրել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
- Ո՞ւմ համար և ինչո՞ւ է քո ստացած արդյունքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ գիտելիք ուսուսմասիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Ի՞նչ կցանկանայիր իմանալ լրացուցիչ:
 - Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո կատարած եզրակացությունների ճշմարտացիությունը/ հետևողականությունը:
 - Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսուսման նյութը ավելի լավ հասկանալու համար / համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:

Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: Ի՞նչն օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

- Ո՞ւմ էիք հաշվետու աշխատանքային գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ):
- Ի՞նչ ընդհանուր նպատակ ունեիք դու և քո ուսուցիչը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:
 - Ձեր դասընկերների հետ ընդհանուր նպատակներ ունեի՞ք: Արդյոք ձեզ համար հետաքրքիր և հաճելի էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքը:
 - Ի՞նչ էք արել ինքնուրույն համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
 - Ի՞նչն է ձեզ մոտ ստացվել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:
 - Ո՞վ և ինչպե՞ս օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում: Ո՞ւմ հետ ես համագործակցել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: (Ի՞նչ օգնություն էք ցուցաբերել ձեր դասընկերներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն էք ստացել նրանցից:)
 - Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ էք կոնֆլիկտային իրավիճակների: Ինչպե՞ս լուծեցիք կոնֆլիկտը:
 - Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ էք անորոշ իրավիճակների: Ինչպե՞ս էք կողմնորոշվել անորոշությամբ պատած հարցերում:
 - Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ հանդիպե՞լ էք տարբեր կարծիքների: Որքանո՞վ կարողացաք համագործակցել տարբեր հայացքներ ունեցող մարդկանց հետ: Ի՞նչը կօգնի քեզ ավելի լավ հասկանալու քո դասընկերների և ուսուցչի ասելիքը:

• Վերլուծե՛ք, թե ինչ կանոններ/օրենքներ և ինչու էիք պահպանում համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: (Օրինակ, որքանով եք կարողացել տարակարծությունների դեպքում կողմնորոշված լինել հիմնախնդրին, այլ ոչ թե՝ շփման մեջ գտնվող մարդկանց: Ինչո՞վ և ինչպե՞ս էիք արտահայտում հարգանք մարդկանց հանդեպ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս):

• Հասկանո՞ւմ եք ընտրված հարցի նկատմամբ նախկինում ձևավորված (դրական կամ բացասական) վերաբերմունքը: Ի՞նչն է պայմանավորում այսպիսի վերաբերմունքի ձևավորում:

• Ինչպե՞ս ուսուցչի և այլ աշակերտների հետ երկխոսությունն օգնեց ձեզ կատարել համալիր առաջադրանքը:

• Ինչպե՞ս կարող են ձեր հարցերն օգնել ձեր դասընկերներին ավելի լավ ձևակերպել իրենց ասելիքը:

• Ի՞նչ գործոններ նախատեսեցիք/պետք է նախատեսեք, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդիրներին լինի հասկանալի և ընդունելի (օրինակ՝ գործառնական խոսքի ակտերի ճիշտ ընտրություն (պատմել, նկարագրել, պատճառաբանել), զգայուն նրբություններ վեր հանել, ժեստեր, դիմախաղ, ոչ խոսքային ազդանշաններ օգտագործել):

• Դուք օգտագործե՞լ եք տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ինչպե՞ս է ձեզ օգնել տեխնոլոգիայի օգտագործումը:

• Ի՞նչ կանեիք այլ կերպ, եթե հիմա սկսեիք աշխատել առաջադրանքի վրա:

• Ըստ քեզ՝ ինչո՞վ է քո առաջադրանքը նման և ինչո՞վ է տարբերվում քո դասընկերների աշխատանքներից: Ինչպե՞ս կցուցաբերես այս տարբերությունները հարցերի տեսքով:

• Գնահատե՛ք, թե որքանով է ստացվել ձեզ մոտ այն, ինչ հանձնարարել էր ուսուցիչը:

Ամփոփիչ առաջադրանք 1. Պատմություն

Աշակերտի անունը և ազգանունը, դպրոց, դասարան -----

Խաչակրաց արշավանքներ -----

1. Ե՞րբ էին ընթանում խաչակրաց արշավանքները: Անվանե՛ք երեք պատմական իրադարձություն, որոնք նախորդում և հաջորդում էին խաչակրաց արշավանքներին:

Երեք իրադարձություն, որոնք նախորդել են խաչակրաց արշավանքներին	Ամիս, ամսաթիվ, տարեթիվ/ Ժամանակաշրջան	Երեք իրադարձություն, որոնք հաջորդել են խաչակրաց արշավանքներին

2. Անվանե՛ք երեք աշխարհագրական օբյեկտ/վայր (Լևանտի տարածաշրջանում, Փոքր Ասիայում), որոնց ծանոթացել եք խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանն ուսուսմասիբելիս:

Աշխարհագրական օբյեկտի/ վայրի անվանումը	Ինչով էր այս օբյեկտը/վայրը կարևոր	Աշխարհագրական գործոններ, որոնց պատճառով եվրոպացի միապետները մասնակցում էին խաչակրաց արշավանքներին

3. Որտեղի՞ց ունենք տեղեկություններ խաչակրաց արշավանքների մասին: Որքանո՞վ վստահելի են այս աղբյուրները:

Աղբյուրի տեսակի անվանումը	Ով է ստեղծել	Ինչի մասին է պատմում	Երբ և ինչու է ստեղծվել	Որքանով վստահելի է

4. Ինչպե՞ս են արտացոլվել խաչակրաց արշավանքները աշխարհիկ և հոգևոր քաղաքական առաջնորդների իշխանության վրա:

	Համառոտ նկարագրություն	Իշխանության լծակները	Համեմատություն այլ դարաշրջանի հետ
Կայսրերի			
Պապի			
Սուլթանի			

5. Ինչպիսի՞ն էր խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի հասարակությունը:

Խաչակրաց արշավանքների մասնակիցները	Ինքնության արտահայտման միջոցներ	Նպատակներ, մոտիվացիա	Խնդիրներ/մարտահրավերներ	Փոփոխություններ հասարակությունում	Այլ պատմական ժամանակաշրջանի հետ համեմատություն

6. Անվանե՛ք խաչակրաց արշավանքների հետ կապված ձեր կարծիքով ամենակարևոր փաստը/պատմական իրադարձությունը/գործընթացը:

Փաստեր/պատմական իրադարձություն/գործընթաց	Պատճառ	Հետևանք	Նշանակությունը Վրաստանի պատմության համար	Նշանակությունը համաշխարհային պատմության համար	Անալոգիա (ամրապնդում փաստերով)

Գնահատման աղյուսակ որոշող գնահատման համար N1

Դասարան՝ XI Թեմա՝ Միջնադար Հիմնական հարց՝ Խաչակրաց արշավանքները Աշակերտ		
Նպատակային հասկացության հետ կապված գնահատման չափանիշներ Աշակերտը կարող է.	Առավելագույն միավորը	Մեկնաբանություն
Աղբյուր/մեկնաբանություն Խաչակրաց արշավանքների դարաշրջանի Եվրոպական և արևելյան տարբեր տիպի աղբյուրների օգտագործմամբ՝ որոշել խաչակրաց արշավանքներ անունով հայտնի իրադարձությունները, դրանց ընդհանուր բնութագրերը և վերլուծել այս արշավանքներով հարուցված փոփոխությունները, դատողություն անել նշված աղբյուրների հուսալիության աստիճանի մասին, քննադատաբար գնահատել եվրոպական և արևելյան աղբյուրները և դրանց նկատմամբ արտահայտել սեփական դիրքորոշումը:	1	

<p>Ժամանակ Դատողություն անել խաչակրաց արշավանքների, որպես այս լայնածավալ պատմական իրադարձության հետ նույնացված դարաշրջանի մասին, ընդգծել դրա, որպես պատմական դարաշրջանի, նշանակությունը և առանձնահատկությունները՝ վերլուծելով այն գործոնները, որոնք խաչակրաց արշավանքների դարաշրջանը ներկայացրին, որպես երկու աշխարհների առճակատման և միաձուլման դարաշրջան:</p>	1	
<p>Տարածություն Ըմբռնել Լևանտի տարածաշրջանի կրոնական և տնտեսական դերը և այս տարածքի վերահսկման և պահպանման նշանակությունը եվրոպացիների համար: Առանձնացնել «Մուրբ Երկրի» այն բնութագրերը, որոնց պատճառով եվրոպական միապետները մասնակցում էին խաչակրաց արշավանքներին: Խաչակրաց արշավանքների մասին դատողություն անել իս` օգտագործել պատմաաշխարհագրական ճիշտ տերմիններ:</p>		
<p>Հասարակություն Ընդգծել խաչակրաց արշավանքների դարաշրջանի սոցիալական ինքնության արտահայտման կարևորագույն միջոցները, դատողություն անել խաչակիրների մտածողության ու աշխարհայացքի, այն քաղաքական ու մշակութային խնդիրների մասին, որոնց բախվեցին նրանք: Չնայած ռազմական հակամարտություններին, փոփոխություններին՝ քննադատաբար գնահատել Արևմտյան և Արևելյան հասարակության մեջ իրականացված փոփոխությունները և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակության հետ:</p>	1	
<p>Իշխանություն Դատողություն անել խաչակրաց արշավանքների վրա Պապի ազդեցության մասին և գնահատել եվրոպական աշխարհի համար պապականության, որպես ինստիտուտի նշանակությունը, հասկանալ իշխանության այն լծակները, որոնց միջոցով Հռոմի պապը կարողանում էր սկսել խաչակրաց արշավանքները և առաջնորդել դրանք: Ընդգծել խաչակրաց պետություններին բնորոշ իշխանության տեսակը: Գնահատել խաչակրաց արշավանքներում եվրոպացի և արևելյան միապետների մասնակցությունը և այս արշավանքների ազդեցությունը նրանց իշխանության վրա:</p>		

<p>Պատմական իրադարձություն/գործընթաց Խմբավորել խաչակրաց արշավանքները սկսելու քաղաքական, տնտեսական և կրոնական պատճառները, առանձնացնել և գնահատել ամենակարևոր պատճառները և դրդապատճառները, դատողություն անել եվրոպական աշխարհի համար Երուսաղեմի անկման տնտեսական և քաղաքական, ինչպես նաև գաղափարական նշանակության մասին, խաչակրաց արշավանքներից որևէ մեկը կապել Վրաստանի թագավորության հետ և արտահայտել սեփական դիրքորոշումը վրաց միապետի ենթադրյալ մասնակցության հետ կապված դրդապատճառների մասին, քննադատաբար գնահատել քաղաքական, տնտեսական, կրոնական և մշակութային հետևանքները, անվանել խաչակրաց արշավանքների նմանատիպ իրադարձություն և փաստերով ամրապնդել դրանց միջև գուգորդությունը:</p>		
--	--	--

Համալիր առաջադրանք N2

Թեմա՝ Միջնադար

Նպատակային հասկացություն. Պատմական իրադարձություն (Արդյունք 3,4,5,6): **Ենթահասկացություն** (ընդհանուր)՝ պատերազմ, պատմական անհատ: **Ենթահասկացություն (մասնավոր)**՝ Մոնղոլական նվաճումների պատճառները և հետևանքները: Օսմանյան արշավանքները, Լենկ Թեմուրի արշավանքները, Չինգիզ Խան, Էդուարդ I, Լենկ Թեմուր: **Ենթահարց**՝ Մոնղոլական նվաճումների պատճառներն ու հետևանքները: Օսմանյան պետության վերելքն ու ռազմական հաջողությունները: Փոփոխությունները Արևմտյան աշխարհում XIII-XIV դարերում: Լենկ Թեմուրի կողմից Միասնական Մոնղոլական կայսրությունը վերականգնելու փորձի արդյունքները:

Նպատակային հասկացություն՝ Ժամանակ (Արդյունք 1,2,3,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր)**՝ պատմական դարաշրջան: **Ենթահասկացություն (մասնավոր)**՝ Միջնադար: **Ենթահարց**՝ Քաղաքների վերածնունդը Եվրոպայում, Մոնղոլական դարաշրջանը և դրա բնութագրերը, Օսմանյան պետության կազմավորման և վերելքի դարաշրջանը, Լենկ Թեմուրի դարաշրջանը և դրա բնութագրերը:

Նպատակային հասկացություն՝ Հասարակություն (Արդյունք 1,2,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր)**՝ առօրյա կյանք: **Ենթահասկացություն (մասնավոր)**՝ եվրոպական հասարակություն, մոնղոլական հասարակություն, օսմանյան հասարակություն: **Ենթահարց**՝ Եվրոպական քաղաքներում ապրող հասարակության բնութագրերը, Մոնղոլական հասարակության հարմարվելը նոր տարածքում, Օսմանյան հասարակության հիփսական առանձնահատկությունները, Քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական փոփոխությունները XIII-XIV դարերի եվրոպական հասարակության մեջ, Լենկ Թեմուրի արշավանքների ազդեցությունը Արևելյան աշխարհի հասարակության վրա:

Հարցը՝ Եվրոպական և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում

Հանգուցային հարց. Ինչպես ցույց տամ Վենետիկի հանրապետության գաղտնի գործակալի օրագրում եվրոպական և արևելյան աշխարհում զարգացած պատմական իրադարձությունները և փոփոխությունները:

Համալիր առաջադրանք: Պատկերացրո՛ւ, որ XIV դարի վերջի Վենետիկի հանրապետության գաղտնի գործակալ ես Արևելքում: Քո նպատակն է ուսու՜մասիբել Օսմանյան և Լենկ Թեմուրի կայսրությունների տնտեսական ու քաղաքական իրավիճակը: Ճանապարհորդում ես դեպի Արևելք և երկար ճանապարհորդության և վտանգավոր արկածների արդյունքում ծանոթանում ես այդ աշխարհին: **Օրագիր** ես վարում, որը պետք է դառնա այս դարաշրջանի սկզբնաղբյուրը: Նրանում արտացոլվում են քո ամենօրյա տպավորությունները և նաև քո հրամանատարներին ուղարկելու համար հատկացված տեղեկություններ: Ճամփորդական գրառու՜մերը պետք է արտացոլեն տեղեկանքներ Արևելյան աշխարհի մասին մոնղոլների, օսմանցիների և Լենկ Թեմուրի դարաշրջանում՝ ինչպես դա կտեսներ ու կընկալեր եվրոպացի ականատեսը:

<p>Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ</p> <p><u>Աշակերտը պետք է գիտակցի, որ:</u></p> <p>Պատմական իրադարձություն.</p> <ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր պատմական իրադարձություն ունի իր սեփական պատճառը/ պատճառները և հետևանքը/ հետևանքները: • Պատմաբանները հաճախ բանավիճում են պատմական իրադարձությունների պատճառների և հետևանքների շուրջ: • Որոշ պատմական իրադարձություններ ունեն տեղական, իսկ որոշները՝ համաշխարհային նշանակություն: • Պատմական փաստերն ու իրադարձությունները կարելի է տիպաբանորեն խմբավորել ըստ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային չափանիշների: <p>Ժամանակ.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմությունը ժամանակի մեջ ընթացող փոփոխականությունն ուսումնասիրող ոլորտ է: • Մարդկության անցած ճանապարհը բաժանված է տարբեր պատմական դարաշրջանների և ժամանակաշրջանների: • Տարբեր ժողովուրդներ ունեին ժամանակի հաշվառման տարբեր համակարգեր: 	<p>Գնահատման չափանիշ</p> <p>Պատմական իրադարձություն.</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել XIII-XIV դարերում եվրոպական և արևելյան աշխարհում ընթացող պատմական իրադարձությունների պատճառները, հետևանքները և նշանակությունը (կայ.պ.1, 3): • Դատողություն անել պատճառների մասին, որոնք հնարավոր է հանգեցնեն XIII-XIV դարերում եվրոպական և արևելյան աշխարհում ընթացող պատմական իրադարձությունների պատճառների, հետևանքների և նշանակության տարբեր կերպ գնահատման (կայ.պ.2): • Ընդգծել XIII-XIV դարերի եվրոպական և արևելյան աշխարհում ընթացող պատմական իրադարձության/ գործընթացի էական բնութագրերը: Համեմատել այլ նմանատիպ պատմական իրադարձությունների հետ (կայ.պ. 4): <p>Ժամանակ.</p> <ul style="list-style-type: none"> • Ընդգծել տարբեր պատմական ժամանակաշրջանների բնութագրերը և համեմատել այլ դարաշրջանների հետ (կայ.պ. 1, 2): • Նշել, թե ինչպես էին ընկալում իրենց դարաշրջանը XIII-XIV դարերի եվրոպական և արևելյան աշխարհում ապրող մարդիկ (կայ.պ. 3): 	<p>Աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցո'յց տվեք.</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրի՛ր եվրոպական քաղաքները և դրանցում ապրող հասարակությունը, համեմատի՛ր Արևելքի քաղաքների հետ: (Հասարակություն կ.պ. 1, 2, Ժամանակ, կ.պ.1,2,3) • Ինչպես փոխվեց Արևելյան տարածությունը մոնղոլներից մինչև Լենկ Թեմուր, և ինչով է տարբերվում Լենկ Թեմուրի կայսրությունը Մոնղոլական կայսրությունից: (Հասարակություն, կ.պ.1,3, Ժամանակ, կ.պ.1, Պատմական իրադարձություն, կ.պ. 1, 3,4) • Եվրոպացու աչքով նկարագրի՛ր կարևոր պատմական իրադարձությունները, որոնց համամասնակից ես դարձել Օսմանյան կայսրությունում և Լենկ Թեմուրի կայսրության հողերում գտնվելու ընթացքում և նկարագրի՛ր այս իրադարձությունները : (Պատմական իրադարձություն, կ.պ. 1,2,3,4, Ժամանակ, կ.պ.1,2,3) • Ինչ կարևոր ռեսուրսներ կան Արևելքում, որոնք կարող են պիտանի լինել եվրոպական հասարակությանը, և ինչպես կփոխվի եվրոպական աշխարհը Արևելյան աշխարհին մերձենալով: Կան արդյոք եվրոպական աշխարհի նմանատիպ փոփոխություններ Արևելքում, ընդգծի՛ր այս դարաշրջանում տեղի ունեցող փոփոխությունները: (Հասարակություն կ.պ. 1, 2, 3, Ժամանակ կ.պ. 1,2)
---	---	---

<p>Հասարակություն.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ: • Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի: • Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծ հասարակության մաս են կազմում: • Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ: 	<p>Հասարակություն.</p> <ul style="list-style-type: none"> • Նշել եվրոպական, մոնղոլական, օսմանյան հասարակության ինքնության միջոցները: Որոշել յուրաքանչյուր խմբի անդամների ընդհանուր շահերն ու մտահոգությունները (կայ.պ. 1, 3): • Վերլուծել, թե որ սոցիալական շերտերից էր բաղկացած ֆեոդալական հասարակությունը (կայ.պ. 3): • Վերլուծել, թե ինչպիսի վերաբերմունք ունեին եվրոպական և արևելյան աշխարհի հասարակության անդամներն այլ հասարակական խմբերի նատմամբ (կայ.պ. 4) 	
--	--	--

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I. Ծանոթացնել համալիր առաջադրանքի պայմանը

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

Ռեսուրս 1. Դասագիրք (Աշակերտի գիրք), Պատմություն: XI դասարան, «Սուլակաուրիի հրատարակչություն», պարագրաֆներ՝ **§§15-16, 17-18, 19-20, 21-22, 23-24**

Ռեսուրս 2. Էլ. ռեսուրսներ

- Ինչպես եմ լրացնում օրագիր | 6 գաղափար

<https://youtu.be/5h08vvM81wY>

- Քաղաքները միջնադարում: Silk School

<https://youtube.com/watch?v=4a5TyltzQeo&si=EnSIkaIECMiOmarE>

- Միջնադարյան եվրոպական քաղաքակրթության ձևավորումը: Silk School

<https://youtube.com/watch?v=j2tZXsDlq2Q&si=EnSIkaIECMiOmarE>

- Քաղաքների պայքարը ազատության համար միջնադարյան Եվրոպայում: Silk School
<https://youtube.com/watch?v=kpI7-GCuhmQ&si=EnSIkaIECMiOmarE>
- Խոշորագույն եվրոպական քաղաքների պատմությունը (7500 BC – 2020): Եվրոպայի 11 խոշորագույն քաղաքները: Gozhda
<https://youtube.com/watch?v=FJi5LcWpznw&si=EnSIkaIECMiOmarE>
- Միջնադարյան քաղաքները Եվրոպայում: Let's Travel!
<https://youtube.com/watch?v=t3trcEZOB4k&si=EnSIkaIECMiOmarE>
- Պատմություն, XI դասարան: Մոնղոլները և Վրաստանը: Հեռուստադպրոց
<https://youtube.com/watch?v=QU5p475txzs&si=EnSIkaIECMiOmarE>
- Մոնղոլներ: Մոնղոլների նվաճումները: Մոնղոլական կայսրությունը եվրոպական ճանապարհորդների աչքով: Silk School
<https://youtube.com/watch?v=Yem3pCI5RWg&si=EnSIkaIECMiOmarE>
- Մոնղոլների կողմից Վրաստանի զավթումը: Silk School
<https://youtube.com/watch?v=eZPA8tc0crI&si=EnSIkaIECMiOmarE>
- Քարտեզներով պատմած մոնղոլների պատմություն: Vide Supra
<https://youtube.com/watch?v=FVYUMm5MH9s&si=EnSIkaIECMiOmarE&t=25>
- Լենկ Թեմուր: Եվրոպան և Վրաստանը: Փողկաստ, դրվագ 54
<https://youtube.com/watch?v=G6nGmsCNvI0&si=EnSIkaIECMiOmarE>
- Օսմանյան պետության առաջացումը: Silk School
<https://youtube.com/watch?v=9O15Xx5zgNA&si=EnSIkaIECMiOmarE>
- Անկարայի ճակատամարտը: 1402 թվական: Kings and Generals
<https://youtube.com/watch?v=Nc4MCFrPiUg&si=EnSIkaIECMiOmarE>

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը.

Եվրոպական և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում

- Ի՞նչ գիտեք եվրոպական միջնադարյան քաղաքների մասին: Անվանե՛ք տեղեկության աղբյուրը: (դասագիրք, գեղարվեստական գրականություն, խաղարկային կամ վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր)
- Ի՞նչ էք հիշում մոնղոլների և օսմանցիների մասին նախորդ դասարաններում ուսումնասիրված տեղեկություններից:
- Ձեր կարծիքով, ի՞նչն է միավորում/տարբերում XIII-XIV դարերի եվրոպական և արևելյան աշխարհները:

• Ձեր կարծիքով, ո՞ր գործոններն են ամենաշատը պայմանավորել Լենկ Թեմուրի արշավանքները՝ տնտեսական, կրոնական, թե քաղաքական:

Օրագիր

- Ի՞նչ է օրագիրը:
- Ո՞րն է օրագիր գրելու նպատակը:
- Օրագիր գրելու փորձ ունե՞ք:
- Կարդացե՞լ էք օրագրի տեսքով գրված գրական ստեղծագործություն:
- Ինչպե՞ս դա ազդեց ձեզ վրա:
- Ինչպե՞ս ստեղծել օրագիր:

Համալիր առաջադրանք

• Ձեր խոսքերով ձևակերպեք՝ ինչի՞ն կվերաբերի այսօրվա առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասերի ընթացքում:

- Մեկ այլ ժամանակ կատարե՞լ էք նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Հասկացություն. Պատմական իրադարձություն

Ենթահասկացություն. պատերազմ, պատմական անհատ

Ենթահարց. Ինչպես մոնղոլական նվաճումները փոխեցին աշխարհը: Գործոններ, որոնք հանգեցրին Օսմանյան պետության վերելքին և ռազմական հաջողություններին: Փոփոխություններ Արևմտյան աշխարհում XIII–XIV դարերում՝ Լենկ Թեմուրի կողմից Միասնական Մոնղոլական կայսրության վերականգնման փորձ:

Հասկացություն. Ժամանակ

Ենթահասկացություն. Պատմական դարաշրջան

Ենթահարցեր. Քաղաքներ, Վերածննդի դարաշրջանը Եվրոպայում: Մոնղոլական դարաշրջանը և դրա բնութագրերը: Օսմանյան պետության ձևավորման և վերելքի դարաշրջան: Լենկ Թեմուրի դարաշրջանը և դրա բնութագրերը:

Հասկացություն. Հասարակություն

Ենթահասկացություն. Առօրյա կյանք

Ենթահարց. Եվրոպական քաղաքներում ապրող հասարակության առանձնահատկությունները: Մոնղոլական հասարակության հարմարվելը նոր տարածությանը: Օսմանյան հասարակության հիմնական բնութագրերը: Քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական փոփոխությունները XIII–XIV դարերի Եվրոպական հասարակության մեջ: Լենկ Թեմուրի արշավանքների ազդեցությունը արևելյան աշխարհի հասարակության վրա:

Քայլ 1 (Պար.15-16)

Նկարագրե՛ք Եվրոպայի քաղաքները և դրանցում ապրող հասարակությունը և համեմատե՛ք դրանք Արևելքի քաղաքների հետ: (Հասարակություն, կ.պ.1,2, Ժամանակ, կ.պ.1.2.3)

- Հիշե՛ք, թե ինչպես է Հռոմի անկումն ազդել Եվրոպական քաղաքների վրա:
- Հիշե՛ք նախորդ նյութը և դատողություն՝ ան արեք, թե ինչպես է քաղաքային կյանքի զարգացումն ազդում հասարակության վրա:
- Հիշե՛ք, թե միջնադարի Եվրոպական տարածքում ինչպիսի հասարակական նշանակության ունեին քաղաքները:
 - Բնութագրե՛ք այն աշխարհագրական տարածությունը, որը նպաստել է քաղաքների զարգացմանը:
 - Համեմատե՛ք արևելյան քաղաքների մասին աղբյուրներում նկարագրված տեղեկությունները և դատողություն՝ ան արեք, թե թվարկված բոլոր քաղաքներն ինչ ընդհանուր բնութագրեր ունեին:
 - Հիշե՛ք, թե որն էր քաղաքի հիմնական նպատակը:
 - Հիշե՛ք, թե ինչպես էր քաղաքը փոխում հասարակական կյանքը:
 - Հիշե՛ք, թե որ քաղաքական իրավիճակը կնպաստեր քաղաքների զարգացմանը:
 - Հիշե՛ք, թե ինչու էր ֆեոդալական հարաբերությունների և կենտրոնական իշխանության թուլությունը նպաստող գործոն քաղաքների զարգացման համար:
 - Համեմատի՛ր Աղբյուր 3-ում և Աղբյուր 5-ում պահպանված տեղեկությունները արևելյան և արևմտյան քաղաքների բնութագրերի մասին և հիշի՛ր, թե ինչ ընդհանուր բնութագրեր ունեին արևելյան և արևմտյան քաղաքները: Նաև համեմատե՛ք դրանք:
 - Հիշե՛ք, թե ինչպես էին աշխարհագրական առանձնահատկություններն ազդում քաղաքների զարգացման վրա:
 - Հիշե՛ք, թե որ աշխարհագրական տարածքներում են զարգացել քաղաքները և ինչու:
 - Հիշե՛ք, թե ինչու է քաղաքային կյանքը նպաստել բուրժուական դասի ձևավորմանը:
 - Հիշե՛ք, թե որոնք էին քաղաքի բնակչության հիմնական խմբերը: Որո՞նք էին նրանց շահերը, մտահոգությունները և ինքնությունը:

Քայլ 2. §17-18, 19-20, 21-22, 23-24

1. Ինչպե՞ս է արևելյան տարածությունը փոխվել մոնղոլներից մինչև Լենկ Թեմուր, և ինչո՞վ է Լենկ Թեմուրի կայսրությունը տարբերվում Մոնղոլական կայսրությունից: (Հասարակություն, կ.պ.1.3, Ժամանակ, կ.պ.1, Պատմական իրադարձություն, կ.պ.1,3,4)

2. Նշե՛ք կարևոր պատմական իրադարձություններ, որոնց համամասնակից եք դարձել Օսմանյան և Լենկ Թեմուր կայսրության հողերում գտնվելու ընթացքում և նկարագրե՛ք այդ իրադարձությունները Եվրոպացու աչքերով: (Պատմական իրադարձություն, կ.պ. 1,2,3,4, Ժամանակ, կ.պ. 1,2,3,

3. Որո՞նք են Արևելքի այն կարևոր ռեսուրսները, որոնք կարող են օգտակար լինել եվրոպական հասարակությանը, և ինչպես կփոխվի եվրոպական հասարակությունը մոտենալով Արևելյան աշխարհին: Կա՞ն արդյոք եվրոպական աշխարհի նմանատիպ փոփոխություններ Արևելքում և ընդգծե՛ք այս դարաշրջանում ընթացող փոփոխությունները: (Հասարակություն, կ.պ.1,2,3, Ժամանակ, կ.պ.1,2)

- Հիշի՛ր, թե եվրասիական տափաստաններից որ ժողովուրդներն են քեզ արդեն հայտնի պատմության ավելի վաղ դարաշրջաններից:

- Հիշի՛ր, թե ինչպիսի կյանք է բնորոշ տափաստանների բնակիչներին: Ինչպիսի՞ հասարակություն են ստեղծում նրանք:

- Դատողություն՝ ան արա, թե ինչ հմտություններ էր առաջացնում ու զարգացնում տափաստանային միջավայրը և տարածքը: Արդյոք դրանք օգտակա՞ր կլինեին հետագա նվաճումների ժամանակ:

- Դատողություն՝ ան արա, թե ինչու էր քոչվոր ժողովուրդների համար դժվար միավորվելը:

- Գնահատե՛ք Չինգիզ խանի մոտեցումները կառավարման համակարգի վերաբերյալ և նշե՛ք նրա ուժեղ և թույլ կողմերը:

- Դատողություն՝ ան արա, թե ինչը կարող էր լինել Չինգիզ խանի կողմից կառավարման համակարգում ներդրված նորամուծությունների պատճառը և ինչու:

- Գնահատե՛ք Չինգիզ խանին որպես կառավարիչ և դատողություն՝ ան արեք, թե որն էր նրա իշխանության հիմնական աղբյուրը և լեգիտիմացման միջոցը:

- Համեմատե՛ք Չինգիզ խանին ձեզ ծանոթ այլ արևելյան տիրակալների հետ և դատողություն՝ ան արեք՝ իշխանության ո՞ր հատկանիշներն էին նրան տարբերում մյուս բոլոր տիրակալներից:

- Դատողություն՝ ան արեք, թե ինչը կարող էր լինել մոնղոլների մոտիվացիան լքելու իրենց տարածությունը և կայացնելու նոր տարածքներ նվաճելու որոշում:

- Գնահատե՛ք մոնղոլների ռազմական հաջողության պատճառները և դատողություն՝ ան արեք թե արդյոք կային դրանց դեմ պայքարելու ուղիներ:

- Դատողություն՝ ան արեք, թե որո՞նք էին մոնղոլական նվաճումները սկսվելու պատմական պատճառները:

Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար

Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:

- Ինչպե՞ս ես պլանավորում/պլանավորել ես համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նախատեսում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:

- Նախնական պլանն օգնե՞լ է քեզ աշխատանքային գործընթացում:

- Ի՞նչ մանրամասների վրա էիր կենտրոնացել զեկուցում պատրաստելու համար:

- Համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացն ընթացե՞լ է ըստ պլանի:

- Արդյոք անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:

- Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակը:

- Ինչո՞վ է ավարտված առաջադրանքի սկզբնական տարբերակը տարբերվում վերջնական տարբերակից:

- Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայմանը:

- Ի՞նչ արդյունք էք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:

- Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը զեկուցում է:

Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել զեկուցումը: Ի՞նչ հարցի մասին ես արտահայտել քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:

- Ինչո՞ւ ես կատարել համալիր առաջադրանքը:

- Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ էք դրել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:

- Ո՞ւմ համար և ինչո՞ւ է քո ստացած արդյունքը օգտակար և հետաքրքիր:

- Ի՞նչ գիտեիր ուսումնասիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Ի՞նչ կցանկանայիր իմանալ լրացուցիչ:

- Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո կատարած եզրակացությունների ճշմարտացիությունը/հետևողականությունը:

• Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսուցանական նյութը ավելի լավ հասկանալու համար / համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:

Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: Ի՞նչն օգնեց ձեզ համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

• Ո՞ւմ էիք հաշվետու աշխատանքային գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ):

• Ի՞նչ ընդհանուր նպատակ ունեիք դու և քո ուսուցիչը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:

• Ձեր դասընկերների հետ ընդհանուր նպատակներ ունեի՞ք: Արդյոք ձեզ համար հետաքրքիր և հաճելի էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքը:

• Ի՞նչ էք արել ինքնուրույն համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:

• Ի՞նչն է ձեզ մոտ ստացվել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

• Ո՞վ և ինչպե՞ս օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում: Ո՞ւմ հետ ես համագործակցել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: (Ի՞նչ օգնություն եք ցուցաբերել ձեր դասընկերներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն եք ստացել նրանցից):

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս բախվե՞լ էք կոնֆլիկտային իրավիճակների: Ինչպե՞ս էիք լուծեցիք կոնֆլիկտը:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս բախվե՞լ էք անորոշ իրավիճակների: Ինչպե՞ս էք կողմնորոշվել անորոշությանը պատճառ հարցերում:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս հանդիպե՞լ էք տարբեր կարծիքների: Որքանո՞վ կարողացաք համագործակցել տարբեր հայացքներ ունեցող մարդկանց հետ: Ի՞նչը կօգնի քեզ ավելի լավ հասկանալու քո դասընկերների և ուսուցչի ասելիքը:

• Վերլուծե՛ք, թե ինչ կանոններ/օրենքներ և ինչու էիք պահպանում համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: (Օրինակ, որքանով էք կարողացել տարակարծությունների դեպքում կողմնորոշված լինել հիմնախնդրին, այլ ոչ թե՝ շփման մեջ գտնվող մարդկանց: Ինչո՞վ և ինչպե՞ս էիք արտահայտում հարգանք մարդկանց հանդեպ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս):

• Հասկանո՞ւմ եք ընտրված հարցի նկատմամբ նախկինում ձևավորված (դրական կամ բացասական) վերաբերմունքը: Ի՞նչն է պայմանավորում այսպիսի վերաբերմունքի ձևավորում:

• Ինչպե՞ս ուսուցչի և այլ աշակերտների հետ երկխոսությունն օգնեց ձեզ կատարել համալիր առաջադրանքը:

• Ինչպե՞ս կարող են ձեր հարցերն օգնել ձեր դասընկերներին ավելի լավ ձևակերպել իրենց ասելիքը:

• Ի՞նչ գործոններ նախատեսեցիք/պետք է նախատեսեք, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդիրներին լինի հասկանալի և ընդունելի (օրինակ՝ գործառնական խոսքի ակտերի ճիշտ ընտրություն (պատմել, նկարագրել, պատճառաբանել), զգայուն նրբություններ վեր հանել, ժեստեր, դիմախոսող, ոչ խոսքային ազդանշաններ օգտագործել):

• Դուք օգտագործե՞լ էք տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ինչպե՞ս է ձեզ օգնել տեխնոլոգիայի օգտագործումը:

- Ի՞նչ կանեիք այլ կերպ, եթե հիմա սկսեիք աշխատել առաջադրանքի վրա:
- Ըստ քեզ՝ ինչո՞վ է քո առաջադրանքը նման և ինչո՞վ է տարբերվում քո դասընկերների աշխատանքներից: Ինչպե՞ս կցուցաբերես այս տարբերությունները հարցերի տեսքով:
- Գնահատե՛ք, թե որքանով է ստացվել ձեզ մոտ այն, ինչ հանձնարարել էր ուսուցիչը:

Ամփոփիչ առաջադրանք N4 (նմուշ)

Ամփոփիչ առաջադրանք 3. Պատմություն

Աշակերտի անունը և ազգանունը, դպրոց, դասարան -----

Քաղաքացիական պատերազմը Անգլիայում թագավորի և խորհրդարանի միջև -----

1. Ե՞րբ էր ընթանում Քաղաքացիական պատերազմը Անգլիայում թագավորի և խորհրդարանի միջև: Անվանե՛ք երեք պատմական իրադարձություն, որոնք նախորդում և հաջորդում էին Անգլիայում թագավորի և խորհրդարանի միջև քաղաքացիական պատերազմին:

Երեք իրադարձություն, որոնք նախորդել են Անգլիայում քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանին	Ամիս, ամսաթիվ, տարեթիվ/ Ժամանակաշրջան	Երեք իրադարձություն, որոնք հաջորդել են Անգլիայում քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանին

2. Անվանե՛ք երեք աշխարհագրական օբյեկտ/վայր (Եվրոպայում), որոնց ծանոթացել էք Անգլիայում քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանն ուսուճասիրելիս:

Աշխարհագրական օբյեկտի/ վայրի անվանումը	Ինչով էր այս օբյեկտը/ վայրը կարևոր	Թագավորի կողմնակից	Խորհրդարանի կողմնակից

3. Որտեղի՞ց ունենք տեղեկություններ քաղաքացիական պատերազմի մասին: Որքանո՞վ վստահելի են այս աղբյուրները:

Աղբյուրի տեսակի անվանումը	Ով է ստեղծել	Ինչի մասին է պատմում	Երբ և ինչու է ստեղծվել	Որքանով վստահելի է

4. Ինչպե՞ս է քաղաքացիական պատերազմը թագավորի և խորհրդարանի միջև արտացոլվել Անգլիայի կառավարման ձևի վրա:

	Բնութագրիչներ	Ում էին ընկալում որպես իշխանության աղբյուր	Իշխանության համար պայքարի ձևեր	Համեմատություն այլ դարաշրջանների հետ
Միապետություն (Ստյուարտների արքայատոհմի կառավարում)				
Խորհրդարան				

5. Ինչպիսի՞ն էր Անգլիայում քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանի հասարակությունը:

Հասարակական խավ/խումբ	Նրանց շահերը խորհրդարանում պաշտպանում էր ...	Կրոնական/քաղաքական/տնտեսական բնութագրերը	Թագավորի աջակից/դրդապատճառը	Համեմատություն այլ պատմական ժամանակաշրջանի հասարակության հետ

6. Անվանե՛ք Անգլիայում թագավորի և խորհրդարանի միջև ընթացող քաղաքացիական պատերազմի հետ կապված, ըստ ձեզ ամենակարևոր փաստը/պատմական իրադարձությունը/գործընթացը:

Պատմական իրադարձություն	Պատճառ	Հետևանք	Նշանակությունը համաշխարհային պատմության համար	Նմանատիպ իրադարձություն (փաստերով ամրապնդում)

Գնահատման աղյուսակ որոշող գնահատման համար N4

<p>Դասարան՝ XI Թեմա՝ Ուշ փջնադար և վաղ նոր ժամանակ Հիմնական հարց՝ Քաղաքացիական պատերազմը Անգլիայում Աշակերտ</p>		
<p>Գնահատման չափանիշներ Աշակերտը կարող է.</p>	<p>Առավելագույն միավորը</p>	<p>Մեկնաբանություն</p>
<p>Աղբյուր/մեկնաբանություն Դասողասել Անգլիայի քաղաքացիական պատերազմի վերաբերյալ տրված աղբյուրները և, դրանց վրա հիմնվելով, ուրվագծել երկու իրարամերժ դիրքորոշում՝ կապված թագավորի ու խորհրդարանի դիմակայության հետ: Աղբյուրների մասին դատողություն անելիս՝ որոշել դրանց կողմնակալության և հուսալիության աստիճանը, քննադատաբար գնահատել և արտահայտել սեփական դիրքորոշումը դրանց նկատմամբ:</p>	<p>1</p>	
<p>Ժամանակ Ուրվագծել Անգլիայի քաղաքացիական պատերազմը, որպես պատմական մեծ փոփոխությունների դարաշրջան, և ընդգծել նրա բնութագրերը: Վերլուծել Անգլիայի քաղաքացիական պատերազմի պատճառ հանդիսացող գործոնները, որպես հեղափոխական փոփոխությունների պատմական դարաշրջանի կարևոր մաս:</p>	<p>1</p>	
<p>Տարածություն Ուրվագծել Անգլիայի այն տարածքային արեալը, որտեղ տեղի է ունեցել քաղաքացիական պատերազմը: Առանձնացնել այս պատմական իրադարձության ընթացքում Անգլիայի տարածքների այդ հատվածները, որոնք աջակցում էին թագավորին կամ խորհրդարանին: Անգլիայի քաղաքացիական պատերազմի մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական տերմիններ:</p>		
<p>Հասարակություն Բնութագրել Անգլիայի քաղաքացիական պատերազմին մասնակցող հասարակությունը, ուրվագծել սոցիալական շերտերը, դատողություն անել նրանց կրոնական, քաղաքական և տնտեսական բնութագրերի մասին, առանձնացնել հասարակության այն խմբերը, որոնցով կազմված էր Անգլիայի խորհրդարանը: XVII դարի Անգլիական հասարակությունը համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակության հետ:</p>	<p>1</p>	

<p>Իշխանություն Ուրվագծել Ստյուարտների դինաստիայի և անգլիական խորհրդարանի կառավարման առանձնահատկությունները, վերլուծել Անգլիայի քաղաքացիական պատերազմում ներգրավված կողմերի իշխանության աղբյուրի վերաբերյալ տեսակետները և դատողություն անել իշխանության համար պայքարի ձևերի մասին, համեմատել այլ դարաշրջանի կառավարման ձևերի հետ:</p>		
<p>Պատմական իրադարձություն/գործընթաց Դատողություն անել քաղաքացիական պատերազմի պատճառների ու հետևանքների մասին և ընդգծել դրա, որպես պատմական իրադարձության, քաղաքական նշանակությունը, գնահատել թագավորի և խորհրդարանի միջև իշխանության համար պայքարի նշանակությունը, անվանել Անգլիայի քաղաքացիական պատերազմի նման իրադարձություն և ամրապնդել փաստարկներով:</p>		

<p>Դասարան` XI Թեմայի անվանումը` «Երկարատև XIX դարը» Ժամերի մոտավոր քանակը` 25 Հիմնական ռեսուրս` երաշխավորություն ստացած դասագիրք</p>			
<p>Նպատակային հասկացություն</p>	<p>Հարց 1 Փոփոխությունների դարաշրջան</p>	<p>Հարց 2 Եվրոպայի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական բնութագրերը XIX դարի I կեսին</p>	<p>Հարց 3 Աշխարհը XIX դարի II կեսին</p>
<p>Իշխանություն</p>	<p>Ինչպես է փոխվում «Իշխանություն» հասկացությունը XVIII դարում, Ամերիկյան արժեքները իշխանության մասին, Հեղափոխության միջոցով փոփոխված կառավարումը Ֆրանսիայում: Նապոլեոնի կողմից ստեղծված նոր կառավարումը: Ենթահասկացություն. կառավարման ձևը</p>		

<p>Հասարակություն</p>	<p>Ենթահարց. Ֆրանսիական հասարակությունը XVIII դարում: Ամերիկյան հասարակության քաղաքական դիրքորոշումները, շահերն ու ինքնության միջոցները: Ֆրանսիական հասարակական տրամադրությունները, դիրքորոշումները, շահերը հեղափոխության ընթացքում: Մերիտոկրատական և մրցունակ հասարակությունը Ֆրանսիայում:</p> <p>Ենթահասկացություն. առօրյա կյանք</p>		<p>Ենթահարց. Կոնֆլիկտներ հասարակության և պետության միջև: Պառակտված հասարակության միավորումը մեկ պետության մեջ: Ամերիկյան հասարակություն շահերը, մտահոգությունները, քաղաքական-տնտեսական բնութագրերը: Փոփոխությունները ճապոնական և չինական հասարակության մեջ XIX դարի երկրորդ կեսին:</p> <p>Ենթահասկացություն. առօրյա կյանք</p>
<p>Ժամանակ</p>	<p>Ենթահարց. Լուսավորիչների դարաշրջան, Ֆրանսիական օրացույց, Նապոլեոնյան դարաշրջան:</p> <p>Ենթահարց. Երկարատև XIX դարը</p>		

<p>Պատմական իրադարձություն/ գործընթաց</p>		<p>Ենթահարց. Արդյունաբերական հեղափոխություն, Վիեննայի կոնգրեսը և փոփոխված Եվրոպան, Քաղաքական իրադարձություններ 1815-1850 թվականների Եվրոպայում, Ռուսական կայսրություն հզորացումը, Ղրիմի պատերազմի պատճառներն ու հետևանքները:</p> <p>Ենթահասկացություն. պատերազմ, հեղափոխություն, պատմական դեմք, ապստամբություն</p>	<p>Ենթահարց. Միացյալ Իտալիայի ստեղծումը, Գերմանիայի միավորումը, Ամերիկյան քաղաքացիական պատերազմի պատճառներն ու հետևանքները, Չինաստանն ու Ճապոնիան XIX դարում:</p> <p>Ենթահասկացություն. պատերազմ, պատմական դեմք, բարեփոխումներ:</p>
<p>Տարածություն</p>		<p>Ենթահարց. Տարածք, որն ընդգրկել է արդյունաբերական հեղափոխությունը, քաղաքական և տնտեսական առումով կայուն եվրոպական տարածք, ռուսական կայսերական տարածք, Ղրիմի պատերազմի տարածական բնութագրերը:</p> <p>Ենթահասկացություն. պատմաաշխարհագրական տարածք</p>	

<p>Պատմական աղբյուր</p>			<p>Ենթահարց. Հասարակությունում տարածված նոր տեսակի աղբյուրներ, աղբյուրների հուսալիության աստիճանի որոշում:</p> <p>Ենթահասկացություն. պատմողական աղբյուրներ, փաստաթղթեր, պատմական քարտեզներ, նկարագրողույթներ:</p>
<p>Համալիր առաջադրանք</p>	<p>Համալիր առաջադրանք 1 Պատկերացրո՛ւ, որ դու գիտաշխատող ես և պետք է գիտական ամսագրի համար հոդված գրես XVII-XVIII դարերի Արևմտյան աշխարհի կառավարման ձևերի մասին:</p>	<p>Համալիր առաջադրանք 2 Պատկերացրո՛ւ, որ XIX դարի 50-ականների վերջին ամերիկյան ընկերության կառավարիչ ես և ցանկանում ես ընդլայնել քո բիզնեսը Եվրոպայում: Դրա համար ուսումնասիրում ես եվրոպական շուկան՝ Եվրոպայի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական բնութագրերը: Ընկերության բաժնետերերին պետք է ներկայացնես հաշվետվություն, ըստ որի նրանք պետք է որոշում կայացնեն՝ Եվրոպայի որ պետությունում է նախընտրելի քո բիզնեսի ընդլայնումը:</p>	<p>Համալիր առաջադրանք 3 Պատկերացրո՛ւ, որ հետազոտող ես, որն ուսումնասիրում է XIX դարի երկրորդ կեսի հասարակությունը՝ նրա ինքնությունը, շահերը, մտահոգությունները: Գրի՛ր հոդված, որում կվերլուծես XIX դարի երկրորդ կեսի հասարակությունն այն ժամանակաշրջանի աշխարհում:</p>

<p>Ռեսուրսներ համալիր առաջադրանքը կատարելու համար</p>	<p>Դասագրքի պարագրաֆները. Ինչպե՞ս փոխեցին լուսավորիչները Արևմտյան աշխարհը: Ինչպե՞ս ստեղծվեց Ամերիկայի Միացյալ Նահանգները: Ինչպե՞ս հեղափոխությունը փոխեց Տրանսիան: Ինչպե՞ս փոխեց Նապոլեոնը Եվրոպայի պատմությունը:</p> <p>Հեռուստադպրոց. Տրանսիական հեղափոխությունը https://youtu.be/LYqvzycH_FE</p>	<p>Դասագրքի պարագրաֆները. Ինչպե՞ս փոխեց աշխարհը արդյունաբերական հեղափոխությունը: Ինչո՞ւ է XIX դարը համարվում Բրիտանական կայսրության փառքի ժամանակաշրջան: Ինչպե՞ս Ռուսաստանը դարձավ Արևելքի ամենակարևոր քաղաքական ուժը: Ինչպե՞ս փոխեցին 1848 թվականը և Ղրիմի պատերազմը եվրոպական իրականությունը: Հեռուստադպրոց. Ղրիմի պատերազմը և Արևելյան հարցը https://youtu.be/jtE3FUC16I8</p>	<p>Դասագրքի պարագրաֆները. Ինչո՞ւ ռոմանտիկ ազգայնականությունը հանգեցրեց փասնական Իտալիայի ստեղծման: Ինչո՞ւ սկսվեց քաղաքացիական պատերազմը Ամերիկայում: Ինչպե՞ս են զարգացել Ճապոնիան և Չինաստանը XIX դարում: Ինչպե՞ս փոխեց Գերմանիայի միավորումը Եվրոպան: Հեռուստադպրոց. Իտալիայի միավորումը https://youtu.be/Zv8CRnxD3lw Գերմանիայի միավորումը https://youtu.be/43pX-ucUdglE Ամերիկայի քաղաքացիական պատերազմը https://youtu.be/Cgk3rx-CbWzk</p>
--	---	--	---

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ

- Նոր ժամանակը փասցած աշխարհի նկատմամբ Արևմտյան քաղաքակրթության (արժեքային համակարգ, սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգ) տիրապետության շրջանն է:
- Նոր ժամանակը ռացիոնալիզմի կողմից կրոնական հայացքների նկատմամբ գերակայություն ձևեք բերելու, սոցիալական խառնաշփոթի, իրավունքների և ազատությունների նորովի ըմբռնման ժամանակաշրջան է:
- Նոր ժամանակը քաղաքական կառավարման նոր համակարգերի և նոր տիպի պետությունների ձևավորման ժամանակաշրջան է, երբ բյուրոկրատական ապարատը լիովին ընդգրկվում է տիրակալի իշխանության վերահսկողության մեջ և ծառայում է պետության առավելագույն կենտրոնացմանը:

• Նոր ժամանակում Եվրոպա մայրցամաքում օրացույցի հերթական բարեփոխման ևս մեկ փորձը կապվեց պետության արմատական փոխակերպման հետ, սակայն այն հնարավոր չեղավ օրինականացնել:

• Նոր ժամանակի ստորին և վերին նշագծերը, ինչպես նախորդ ժամանակաշրջանում քիչ թե շատ ընդգծված են, սակայն դրա պայմանականության ու առավելության մասին գիտնականների միջև վեճը չի դադարում:

• Նոր ժամանակը նոր մայրցամաքների, նոր գաղութների և նոր տարածությունների յուրացման ժամանակաշրջան է:

• Նոր ժամանակում ծովային և օվկիանոսային երթուղիները բեռնաշրջանառության ավելի շարժունակության և ժամանակի տնտեսման շնորհիվ վերջնականապես առավելություն ձեռք բերեցին ցամաքային ճանապարհների նկատմամբ:

• Կապի և տրանսպորտային միջոցների զարգացումը հանգեցրեց երկաթուղային ցանցի ձևավորման, ինչն ապահովեց ոչ միայն յուրաքանչյուր երկրի տարբեր շրջանների, այլ նաև տարբեր տարածաշրջաններին կապակցում իրար հետ:

• Հաղորդակցության և տրանսպորտային միջոցների կատարելագործումը, ինչպես նաև առևտրահաղորդակցական ցանցի ընդլայնումը հանգեցրին աշխարհի «փոքրացման» և Արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներին հնարավորություն տրվեց յուրացնել բոլոր մայրցամաքները:

• Տարածական առումով տարբեր մայրցամաքների բնակչության կապին նպաստեց նաև փոստի և հեռագրության զարգացումը:

• Նոր ժամանակներում գրավոր աղբյուրները բազմազանացվել են, քանի որ պատմությունը որպես գիտություն, նրա գիտական ապարատն ու մեթոդաբանությունը ամրապնդվեցին ամուր գիտական հիմքերով:

• Տարբեր պատմական ոլորտների և առարկաների դիվերսիֆիկացումը, ինչն աղբյուրների տեսակների բազմազանության հետ միասին առաջարկեց նաև մշակման մեխանիզմներ, հնարավոր դարձրեց հետազոտման դարաշրջանի ավելի համալիր վերակառուցավորում:

• Նոր ժամանակի աղբյուրների հուսալիության աստիճանը որոշվում է աղբյուրի տեսակով, նրա ժանրային հատկանիշներով և ստեղծման վայրով, սակայն, ի տարբերություն նախորդ դարաշրջանի, ավելի ու ավելի առաջնահերթություն են ստանում աշխարհիկ բնույթի տվյալները:

• Նոր ժամանակում տեխնոլոգիական առաջընթացը զգալիորեն հանգեցրեց պատմողական աղբյուրների բազմազանության (պարբերականներ, ֆոտո-ֆոնո նյութ...) ավելացման, ինչպես նաև դրանց հասանելիության, իսկ պատմական դպրոցները զգալիորեն զարգացրին աղբյուրի մշակման մեթոդաբանությունը:

• Նոր ժամանակում բուրժուազիան այլ սոցիալական խմբերի նկատմամբ ձեռք բերեց լրիվ տնտեսական առավելություն և սկսվեց պայքարը քաղաքական իրավունքներ ձեռք բերելու համար:

• Նոր ժամանակվա մտածողներն ու փիլիսոփաները մարդու և անհատի ազատությունների, իրավունքների և պարտականությունների, կրոնական գաղափարների արմատական վերանայմամբ օրակարգ են բերել գոյություն ունեցող կառավարման և պետական կազմակերպման ձևերի փոփոխություններ, ինչը հանգեցնում էր հասարակական գործընթացներում տարբեր շահերի խմբերի ներգրավման:

• Ֆեոդալական հարաբերությունները և ֆեոդալական սոցիալական համակարգը Բրիտանիայում էվոլյուցիոն փոփոխությունների ճանապարհով էր վերափոխվում, իսկ մայրցամաքային Եվրոպայում սոցիալական կառուցվածքի փոփոխությանն անհրաժեշտ էին արմատական հեղափոխական փուլեր:

• «Արդյունաբերական հեղափոխությունը» և գիտատեխնիկական առաջընթացը փոխեցին Արևմտյան հասարակական կյանքը և գաղութների բնակչության մեջ ևս կատարվեցին արմատական փոփոխություններ:

• Նոր ժամանակը տարբեր սոցիալ-քաղաքական բնույթի գաղափարախոսությունների (ազգայնականություն, ռոմանտիզմ, սոցիալիզմ, կապիտալիզմ, աբոլիցիոնիզմ, ֆեմինիզմ...) և դրանց համապատասխան ակտիվիզմի վերելքի ժամանակաշրջան է, որը սոցիալական գործընթացներին առանձնակի ինտենսիվություն էր հաղորդում:

• Տեխնոլոգիական առաջընթացը և դրան ուղեկցող սոցիալական և աշխարհայացքային արմատական փոփոխությունները հանգեցրել են այսպես կոչված «սպառողական հասարակության (կոնսումերիզմ)» ձևավորման:

• Նոր ժամանակում Արևմտյան քաղաքակրթության տարածքում աշխարհիկ իշխանությունը լիովին հեռացրեց կրոնական իշխանությանը պետական կառավարման լծակներից:

• Նոր ժամանակում բյուրոկրատական ապարատի, բանակի և սպառազինության, կրթության և գաղափարախոսության նկատմամբ պետության ղեկավարի վերահսկողությունը հանգեցրին բացարձակ վարչակարգերի տիրապետության:

• Նոր ժամանակը մեծ հեղափոխությունների դարաշրջան է, բացարձակ իշխանությունը ճգնաժամ է ապրում, և իշխանությունը բաշխվում է հասարակական նոր շերտերի միջև:

• Նոր ժամանակներում իշխանության պահպանման և ամրապնդման մեխանիզմներում մեծ դեր են ձեռք բերում տնտեսական գործոնները:

• Նոր դարաշրջանում իշխանության համար պայքարն անցնում է կոնկրետ երկրի ներսում դիրքեր ձեռք բերելուց և ստանում է շատ ավելի գլոբալ մասշտաբ:

• Նապոլեոնյան պատերազմների և Վիեննայի կոնգրեսի արդյունքում փոխվեց Եվրոպայի քաղաքական քարտեզը:

• Նոր ժամանակներում ազգայնականությունը դարձավ Արևմտյան պետությունների գերիշխող քաղաքական դոկտրինը, և ազգային պետությունների և կենտրոնացման գործընթացը հանգեցրին Գերմանիայի և Իտալիայի միավորման:

• Նոր ժամանակներում Արևմտյան գաղութային կայսրությունները և գաղութատիրության համակարգն էին սահմանում Արևմտյան քաղաքակրթության գերիշխող դերը:

• Նոր ժամանակը հեղափոխություններով պետական վերափոխումների, որպես ազգ ձևավորման և ազգ-պետությունների ավարտի ժամանակաշրջան է:

• Նոր ժամանակներում աշխարհի վերաբաժանման գոյություն ունեցող մոդելից դժգոհությունը հանգեցրեց պետությունների վերախմբավորման հակադիր ճամբարների:

Համալիր առաջադրանք N4. Թեմատիկ մատրիցա

Թեմա՝ Երկարատև XIX դարը

Նպատակային հասկացություն. Իշխանություն (Արդյունք 3,4,5,6,7,8): **Ենթահասկացություն (ընդհանուր).** կառավարման ձև: **Ենթահասկացություն (մասնավոր).** բացարձակ միապետություն, սահմանադրական միապետություն, հանրապետություն: **Ենթահարց.** Ինչպես է փոխվում «իշխանության» ըմբռնումը XVIII դարում, Ամերիկյան արժեքները իշխանության մասին, Հեղափոխությանը փոխված կառավարումը Ֆրանսիայում, Նապոլեոնի ստեղծած նոր կառավարումը:

Նպատակային հասկացություն. Հասարակություն (Արդյունք 1,2,3,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր).** առօրյա կյանք: **Ենթահասկացություն (մասնավոր).** սոցիալական շերտեր, «եռանդամ բաժանում», փոփոխություններ ֆրանսիական հասարակության մեջ, Ամերիկայի հասարակությունը հեղափոխությունից առաջ և հետո:

Ենթահարց. Ֆրանսիական հասարակությունը XVIII դարում, Ամերիկյան հասարակության քաղաքական դիրքորոշումները, շահերը և ինքնության միջոցները, Ֆրանսիական հասարակության տրամադրությունները, դիրքորոշումները, շահերը հեղափոխության ժամանակ, Մերիտոկրատ և մրցունակ հասարակությունը Ֆրանսիայում:

Նպատակային հասկացություն. Ժամանակ (Արդյունք 1,2,3,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր).** Պատմական դարաշրջան, **Ենթահասկացություն (մասնավոր).** «Երկարատև XIX դարը», Նապոլեոնյան դարաշրջանը: **Ենթահարց.** Լուսավորիչների դարաշրջանը, Ֆրանսիական օրացույցը, Նապոլեոնյան դարաշրջանը:

Հարցը՝ Փոփոխությունների դարաշրջան

Հանգուցային հարց. Ինչպես արտացոլվեմ գիտական ամսագրի համար գրված հոդվածում փոփոխությունները XVII-XVIII դարերի Արևմտյան աշխարհի կառավարման ձևերում:

Համալիր առաջադրանք. Պատկերացրո՛ւ, որ դու գիտաշխատող ես և պետք է գիտական ամսագրի համար հոդված գրես XVII-XVIII դարերի Արևմտյան աշխարհի կառավարման ձևերի մասին:

<p>Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ: Իշխանություն.</p> <ul style="list-style-type: none"> • Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է: • Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական խմբերի միջև: Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները: • Իշխանությունն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը: • Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/հասարակական խմբերի միջև: • Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է: 	<p>Գնահատման չափանիշ Իշխանություն.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել «Երկարատև XIX դարի» դարաշրջանի իշխանության խորհրդանիշները, կառավարման ձևերը և կառույցները, դրանք համեմատել պատմական այլ ժամանակաշրջանների հետ (կ.պ., 3, 4): • Վերլուծել «Երկարատև XIX դարի» դարաշրջանում իշխանության համար պայքարի առանձնահատկությունները (կ.պ. 2) • Վերլուծել, թե ով/ինչն է քննարկվել «Երկարատև XIX դարի» դարաշրջանում որպես ուժի աղբյուր: Ինչն էր հանդիսանում իշխանության լեգիտիմության հիմքը (կ.պ. 4, 5): <p>Հասարակություն:</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել ֆրանսական և ամերիկյան հասարակության ինքնության միջոցները, ընդգծել յուրաքանչյուր խմբի անդամների ընդհանուր շահերն ու մտահոգությունները (կ.պ. 1, 3): • Վերլուծել, թե որ սոցիալական շերտերից էր կազմված XVII–XVIII դարերի եվրոպական և ամերիկյան հասարակությունը (կ.պ.3): 	<p>Աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցոյց տվեք.</p> <ul style="list-style-type: none"> • Ինչպես էր ընթանում իշխանության համար պայքարը Արևմտյան աշխարհում (Եվրոպա, Ամերիկա). որոնք էին կառավարման համակարգերի մասին հիմնական գաղափարները, ինչպես էր բաշխվում իշխանությունը, ինչ միջոցներով էին պահպանում այն: (Իշխանություն 1, 2, 3) • Ինչպես փոխվեց կառավարման մոդելը հեղափոխություններից հետո Ամերիկայում և Ֆրանսիայում: Ինչպես էր բաշխվում իշխանությունը: (Իշխանություն 2, 3, 4, 5) • Ինչպես է փոխվել հեղափոխությունների արդյունքում հասարակությունը Ֆրանսիայում և Ամերիկայում, ինչ խմբերի է այն բաժանվել, ինչ քաղաքական դիրքորոշում ուներ, որոնք էին այդ խմբերի շահերը և ինքնության միջոցները: (Հասարակություն 1, 2) • Ինչպես փոխեց Նապոլեոնի կառավարման մոդելը ֆրանսիական/եվրոպական հասարակությունը: Որն էր հակամարտության հիմնական պատճառը Նապոլեոնի և եվրոպական միապետությունների միջև: (Իշխանություն 1, 2 3, 4, Հասարակություն մ. 3)
--	---	--

<p>Հասարակություն.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ: • Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի: • Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծհասարակության մաս են կազմում: • Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ: <p>Ժամանակ.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմությունը ժամանակի մեջ ընթացող փոփոխականությունն ուսումնասիրող ոլորտ է: • Մարդկության անցած ճանապարհը բաժանված է տարբեր պատմական դարաշրջանների և ժամանակաշրջանների: • Տարբեր ժողովուրդներ ունեին ժամանակի հաշվառման տարբեր համակարգեր: 	<ul style="list-style-type: none"> • Վերլուծել, թե ինչպիսի վերաբերմունք ունեին եվրոպական և ամերիկյան աշխարհի հասարակության անդամներն այլ հասարակական խմբերի նկատմամբ (կ.պ. 4) <p>Ժամանակ.</p> <ul style="list-style-type: none"> • Տարբեր պատմական ժամանակաշրջանների բնութագրերը ընդգծել և համեմատել այլ դարաշրջանների հետ (կ.պ. 1, 2): • Ինչպես էին ընկալում իրենց դարաշրջանը XVII-XVIII դարերում եվրոպական և ամերիկյան աշխարհում ապրող մարդիկ (կ.պ. 3): 	<ul style="list-style-type: none"> • Ինչու են ֆրանսիական և ամերիկյան հեղափոխությունները համարվում նրանց պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբ: (Ժամանակ 1, 2, 3)
--	---	---

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I. Ծանոթանալ համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

Ռեսուրս 1. Դասագիրք (Աշակերտի գիրք), Պատմություն: XI դասարան, «Սուլակաուրիի հրատարակչություն», պարագրաֆներ՝ §60-61, 62-63-64, 65-66, 67-68:

Ռեսուրս 2. Էլ. ռեսուրսներ

Ինչպե՞ս գրենք լավ հոդված:

<https://files.fm/f/u458bfhbm>

• Հոդվածի բնորոշ հատկանիշների աշխատանքային թերթիկ

<https://files.fm/f/upz33dxnx>

• Լուսավորականություն: Silk School

https://youtube.com/watch?v=5_qMFH9jIW8&si=EnSIkaIECMiOmarE

• Լուսավորականներն ու ֆիզիկրասները: Silk School

<https://youtube.com/watch?v=9uorQ6X0qQc&si=EnSIkaIECMiOmarE>

• 1789 թվականի Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Silk School

<https://youtube.com/watch?v=RQ8O2UdZSok&si=EnSIkaIECMiOmarE>

• Պատմություն: Դիմորդի ժամ: Ֆրանսիական հեղափոխություն: Հեռուստադպրոց

https://youtube.com/watch?v=LYqvzyCH_FE&si=EnSIkaIECMiOmarE

• Պատմություն, XI դասարան: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, 10 հունիսի, 2020: Հեռուստադպրոց

<https://youtube.com/watch?v=qLQtGHoMXMA&si=EnSIkaIECMiOmarE>

• Պայքար ԱՄՆ անկախության համար: Silk School

https://youtube.com/watch?v=P_UeGReqBg&si=EnSIkaIECMiOmarE

• Նապոլեոնյան պատերազմները: Silk School

<https://youtube.com/watch?v=cUV87bwAbY0&si=EnSIkaIECMiOmarE>

• Պատմություն: Դիմորդի ժամ: Նապոլեոնյան կայսրության վերելքը: Հեռուստադպրոց

<https://youtube.com/watch?v=CKqxxbFAZPs&si=EnSIkaIECMiOmarE>

• Նապոլեոնի դարաշրջանը 1: Silk School

<https://youtube.com/watch?v=e9Du86ME-L4&si=EnSIkaIECMiOmarE>

• Նապոլեոնի դարաշրջանը 2: Silk School

<https://youtube.com/watch?v=rpUB5m5komU&si=EnSIkaIECMiOmarE>

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը.

Լուսավորականություն

- Ըստ ձեզ, ինչպե՞ս կարելի է սահմանել լուսավորականությունը:
- Ի՞նչ էք հիշում Մոնտեսորի, Լոկի, Վոլտերի, Ժան-ժակ Ռուսոյի մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):
- Ի՞նչ էք հիշում կառավարման ձևերի մասին:
- Ձեր կարծիքով, որո՞նք էին լուսավորականության առանձնահատկությունները:

Ֆրանսիական հեղափոխությունը

- Հիշե՛ք, թե ինչ գիտեք Ֆրանսիայի Անկախության օրվա, օրհներգի, դրոշի մասին:
- Նախորդ դասարաններում ուսուցասիրված նյութերից հիշո՞ւմ էք, թե ինչպես փոխվեց կառավարման ձևը Ֆրանսիայում:
- Հիշե՛ք, թե ինչպես կարելի է սահմանել հեղափոխությունը:
- Ի՞նչ էք հիշում Նապոլեոնի մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):

Ամերիկյան հեղափոխությունը

- Հիշե՛ք, թե ինչ գիտեք Ամերիկայի գաղութացման գործընթացի մասին:
- Ի՞նչ գիտեք ԱՄՆ-ի ստեղծման մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):
- Լսե՛լ էք որևէ բան ամերիկյան հեղափոխության մասին:

Հողված

- Ի՞նչ է հողվածը:
- Ո՞րն է հողվածը գրելու նպատակը:
- Ի՞նչ տեղեկատվություն է տրամադրում ռեսուրսը հողված ստեղծելու մասին:
- Ընդգծե՛ք հողվածի առանձնահատկությունները:
- Ո՞րն է տարբերությունը զեկույցի և հողվածի միջև:
- Ինչպե՞ս կարող ենք հողվածի միջոցով ներկայացնել մեր տեսակետները: (Ռեսուրս 2)

Համալիր առաջադրանք

Ձեր խոսքերով ձևակերպե՛ք, թե ինչին է վերաբերում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասերի ընթացքում:

Մեկ այլ ժամանակ կատարե՛լ էք նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Հասկացություն. II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Հասկացություն. Իշխանություն

Ենթահասկացություն. կառավարման ձև

Ենթահարց. Ինչպես է փոխվում «իշխանության» ըմբռնումը XVIII դարում: Ամերիկյան արժեքները իշխանության մասին: Հեղափոխությամբ փոփոխված կառավարությունը Ֆրանսիայում: Նապոլեոնի ստեղծած նոր կառավարությունը:

Հասկացություն. Իշխանություն

Ենթահասկացություն. Հասարակություն

Ենթահարց. Ֆրանսիական հասարակությունը XVIII դարում, Ամերիկյան հասարակության քաղաքական դիրքորոշումները, շահերը և ինքնության միջոցները, Ֆրանսիական հասարակության տրամադրությունները, դիրքորոշումները, շահերը հեղափոխության ժամանակ և մրցունակ հասարակությունը Ֆրանսիայում:

Նպատակային հասկացություն. Ժամանակ

Ենթահասկացություն (ընդհանուր). Պատմական դարաշրջան:

Ենթահասկացություն (մասնավոր). Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ, Նապոլեոնյան դարաշրջան:

Ենթահարց. Լուսավորիչների դարաշրջան, Ֆրանսիական օրացույց, Նապոլեոնյան դարաշրջան:

Քայլ 1 (§ 60-62, 67-68)

Ինչպե՞ս էր Արևմտյան աշխարհում ընթանում պայքարը իշխանության համար (Եվրոպա, Ամերիկա): Ի՞նչ հիմնական գաղափարներ գոյություն ունեին կառավարման համակարգերի մասին, ինչպես էր բաշխվում իշխանությունը, ի՞նչ միջոցներով էին այն պահպանում: (Իշխանություն 1, 2,3), պարագրաֆներ՝ Լուսավորականները, Ֆրանսիական հեղափոխությունը (առաջին ենթագլուխ), Ամերիկյան հեղափոխություն

• Հիշե՛ք նախորդ պատմական դարաշրջանները և դատողություն՝ ան արեք, թե լուսավորականների գաղափարներն ու արժեքները որ ժամանակաշրջանների փորձի հետ էին կապվում:

• Դատողություն՝ ան արեք, թե որքանով է ժամանակակից Արևմտյան քաղաքակրթությունը հիմնված լուսավորականության կողմից դրված հիմքերի վրա:

• Հիշե՛ք նախորդ նյութը և դատողություն՝ ան արեք, թե ինչ ինքնության միջոցներ ունեւ եվրոպական հասարակությունը նախորդ դարաշրջաններում: Որո՞նք էին նրանց հետաքրքրությունները, համոզմունքները և արժեքները: Ինչպե՞ս էր կազմակերպված նրանց քաղաքական և հասարակական կյանքը:

• Դատողություն՝ ան արեք, թե ինչու էր եկեղեցին թերահավատորեն վերաբերվում գիտական հայտնագործություններին:

• Դատողություն՝ ան արեք, թե ինչու էին գիտնականների և եկեղեցու աշխարհի մասին ընկալումը տարբեր:

• Դատողություն արեք, թե ինչ գործոններ են նպաստել ինքնակառավարման մշակույթի զարգացմանը:

• Հիշե՛ք անցած նյութը և, հիմնվելով նախորդ պատմական դարաշրջանների վրա, դատողություն արեք, թե ինչու է միջին խավը նպաստում ժողովրդավարության և հանրապետական կարգերի հաստատմանը:

• Դատողություն արեք, թե կառավարման որ մոդելը կարող էր առավել ընդունելի լինել ամերիկյան հասարակության համար: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

• Դատողություն արեք, թե ինչու են լուսավորիչների գաղափարները հանրահայտ Ամերիկայում: Ի՞նչ գործոններ էին նպաստում դրան:

• Դատողություն արեք, թե ինչու են Անգլիայի հետ հարաբերությունները տնտեսապես փասակար ամերիկացիների համար:

• Դատողություն արեք Ամերիկայի և Անգլիայի միջև հակամարտության պատճառների մասին:

• Ամերիկյան արժեքներն ու իշխանության մասին տեսլականները որքանով էին համապատասխանում իշխանության կազմակերպման և կառավարման եվրոպական ավանդույթին: Դատողություն արեք նմանությունների ու տարբերությունների մասին:

• Դատողություն արեք, թե ինչպես է ժամանակակից աշխարհը կապված Ամերիկյան հեղափոխության հիմնական արժեքների հետ:

• Դատողություն արեք, թե ինչ գործոններ են նպաստել Ամերիկյան հեղափոխության հաջողությանը:

• Դատողություն արեք, թե կառավարման ինչպիսի մոդել պետք է հաստատելին ամերիկյան նահանգները: Որքանով կարող էին նրանք անկախ գոյություն ունենալ:

• Դատողություն արեք, թե ինչ սկզբունքների, արժեքների և գաղափարների վրա էր հիմնված Ամերիկայի հանրապետությունը:

• Քննարկե՛ք, թե ինչու էին պետությունները ցանկանում պահպանել ինքնակառավարումը և իրենց իրավունքները:

• Դատողություն արեք, թե որքանով է ժամանակակից ԱՄՆ-ը պահպանել իր հիմնադրման քաղաքական սկզբունքները և կառավարման մոդելն ու արժեքները:

• Դատողություն արեք, թե ինչու են դասային համակարգը և բացարձակ միապետությունը բացասաբար ազդում պետության կյանքի բոլոր ասպեկտների վրա, այդ թվում՝ տնտեսության:

Քայլ 3 (§65-66)

Ինչպե՞ս փոխվեց հասարակությունը Ֆրանսիայում և Ամերիկայում հեղափոխությունների արդյունքում: Ի՞նչ խմբերի էր բաժանվում այն, ինչ քաղաքական դիրքորոշում ուներ, որո՞նք էին այդ խմբերի շահերն ու ինքնության միջոցները: (Հասարակություն 1, 2), պարագրաֆներ՝ Ֆրանսիական հեղափոխություն, Ամերիկյան հեղափոխություն:

• Դատողություն արեք, թե ինչու են մարդիկ Եվրոպայից մեկնում Ամերիկա: Հասարակության ո՞ր հատվածներն են ամենաշատը մեկնել:

• Դատողություն արեք, թե հասարակության այս կոնտինգենտի միգրացիան Ամերիկա ինչպե՞ս պետք է արտացոլվի Ամերիկայի կառավարման ձևի վրա:

• Դատողություն անարժեք, թե ինչ գործոններ են առաջացրել ամերիկյան հասարակության տարբեր բնույթը:

• Դատողություն անարժեք, թե ինչ փոքր խմբերի էր բաժանվում ամերիկյան հասարակությունը:

• Դատողություն անարժեք, թե որոնք էին ամերիկյան հասարակության հիմնական ինքնության միջոցները, շահերն ու մտահոգությունները, և ինչպես կրթությանը նրանց քաղաքական ու տնտեսական շահերը:

• Հիշե՛ք նախորդ նյութը և, հիմնվելով նախորդ պատմական դարաշրջանների վրա, դատողություն անարժեք, թե ինչու է միջին խավը նպաստում ժողովրդավարության և հանրապետական կարգերի ձևավորմանը:

• Դատողություն անարժեք, թե ինչպիսին էր կրոնի նկատմամբ ամերիկացիների վերաբերմունքը: Ինչո՞վ էր տարբերվում կրոնի նկատմամբ ամերիկյան հասարակության մտեցումը եվրոպականից:

• Դատողություն անարժեք, թե ինչու և ինչպես նպաստեցին պատերազմներն ընդհանուր ամերիկյան ինքնության ձևավորմանը:

• Հիշի՛ր անցած նյութը և գտի՛ր պատմական գուգահեռներ. որքանո՞վ կարող է պատերազմը ծառայել հասարակության համախմբմանը:

• Դատողություն անարժեք, թե ինչպես է իշխանությունը բաշխվում բացարձակ միապետության մեջ: Ըստ ձեզ, որքանո՞վ է արդար կառավարման այս մոդելը: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

• Դատողություն անարժեք, թե ինչու էին բարեփոխումներն անհրաժեշտ Ֆրանսիայում: Հիշի՛ր այլ պետությունների օրինակ և համեմատի՛ր Ֆրանսիայի իրականության հետ:

• Դատողություն անարժեք, ըստ աղբյուրի և այլ տեղեկությունների, թե ինչպես էր Լյուդովիկոս XV-ն ընկալում իր իշխանությունը:

• Դատողություն անարժեք, թե ինչու էին կաթոլիկ եկեղեցին և բացարձակ միապետությունը դաշնակիցներ:

• Դատողություն անարժեք, թե ինչպես է իշխանությունը բաշխվել Ֆրանսիայում: Որքանո՞վ էր արդար դասային համակարգը:

• Դատողություն անարժեք, թե ինչու Լյուդովիկոս XVI-ը հարկադրված եղավ բարեփոխումներ իրականացնել:

• Դատողություն անարժեք, թե որքանով արդարացի էր բաշխված Ազգային ժողովի աշխատանքը: Որքանո՞վ էր այն արտացոլում երկրի հասարակական և քաղաքական կյանքը:

• Դատողություն անարժեք, թե ինչով էր Ֆրանսիայի Ազգային ժողովը տարբերվում Անգլիայի խորհրդարանից:

• Դատողություն անարժեք Ֆրանսիական հեղափոխության պատճառների ու հետևանքների մասին:

• Դատողություն անարժեք, թե ինչու էր Ֆրանսիայի հեղափոխությունն ուղեկցվում քաղաքական քառսով և բռնությամբ:

• Դատողություն անարժեք, թե ինչպես էին բաշխվում Ֆրանսիայի հասարակության մեջ տրամադրությունները: Որո՞նք էին հիմնական խմբերը:

- Դատողություն անարեք, թե ինչու արտաքին գործոնը նպաստեց թագավորի մահապատժին:
- Դատողություն անարեք, թե ինչու այն ժամանակվա եվրոպական պետությունները չաջակցեցին Հանրապետությանը:
- Դատողություն անարեք Ռոբեսպիերի կառավարման ժամանակաշրջանի մասին: Որո՞նք էին դրա դրական և բացասական հետևանքները:
- Դատողություն անարեք, թե ինչպես Դիրեկտորիայի կառավարումը փոխեց ֆրանսիական կառավարումը: Ինչպե՞ս է բաշխվում իշխանությունը:

Քայլ 4 (§60-61, 62-63-64, 65-66, 67-68)

Ինչպես Նապոլեոնը փոխեց կառավարման մոդելը և ֆրանսիական/եվրոպական հասարակությունը: Ո՞րն էր հակամարտության հիմնական պատճառը Նապոլեոնի և եվրոպական միապետությունների միջև: (Իշխանություն 1, 2 3, 4, Հասարակություն 3), պարագրաֆ՝ Նապոլեոն:

- Հիշե՛ք նախորդ պարագրաֆը և դատողություն անարեք, թե ինչու հեղափոխությունից հետո հնարավոր չէրավ հաստատել կայուն կառավարում:
- Դատողություն անարեք, թե ինչպես էր իշխանությունը բաշխվում Դիրեկտորիայի կառավարման ժամանակ: Իշխանության այլ ոչ պաշտոնական կենտրոններ գոյություն ունեին:
- Դատողություն անարեք, թե ինչու Նապոլեոնը պետք է լիներ Հանրապետության կողմում: Ո՞ր սոցիալական և հասարակական գործոններն էին պայմանավորում դա: Հիշի՛ր՝ հեղափոխությունը ո՞ր սոցիալական և հասարակական խմբերում է ունեցել ամենամեծ աջակցությունը:
- Դատողություն անարեք, թե ինչու է կրճատվել Դիրեկտորիայի աջակցությունը:
- Դատողություն անարեք, թե որքանով կարող էր Նապոլեոնն ունենալ կարիերային առաջխաղացում միապետական համակարգում:
- Դատողություն անարեք, թե որքանով լեգիտիմ և օրինական էր Նապոլեոնի կողմից Դիրեկտորիայի կառավարման տապալումը:
- Դատողություն անարեք, թե ինչ պատճառներ են հանգեցրել Դիրեկտորիայի կառավարման ավատին:
- Դատողություն անարեք, թե ինչ գործոններ են նպաստել Նապոլեոնին, որ պետական հեղաշրջում իրականացներ: Ինչի՞ վրա էր հիմնված նրա իշխանությունը:
- Դատողություն անարեք, թե Նապոլեոնը կառավարման ինչպիսի մոդել է ստեղծել: Ինչպե՞ս է բաշխվել իշխանությունը:
- Դատողություն անարեք, թե ինչու նա չցանկացավ պաշտոնապես վերացնել հանրապետությունը:
- Դատողություն անարեք, թե ինչու է նա վայելում ժողովրդի աջակցությունը:
- Դատողություն անարեք, թե ինչու, չնայած փաստացի միանձնյա կառավարմանը, նա համարվում էր հեղափոխության շարունակող և հեղափոխության արժեքների խորհրդանիշ:
- Դատողություն անարեք Նապոլեոնի բարեփոխումների մասին: Ո՞ր ճանապարհով գնաց նա: Ինչպե՞ս կարելի է գնահատել նրա ստեղծած քաղաքական ու հասարակական համակարգը:
- Հիշե՛ք, թե ինչպես էին ապրում բացարձակ միապետները և համեմատե՛ք նրանց ապրելակերպը Նապոլեոնի ապրելակերպի և կառավարման ոճի հետ:

• Դատողություն արեք, թե որոնք էին Մարենգոյի ճակատամարտում հաղթանակի հիմնական արդյունքները:

• Դատողություն արեք, թե որքան կարևոր էր Մարենգոյի ճակատամարտը Նապոլեոնի և Ֆրանսիայի համար: Ի՞նչ կլինեք նրա պարտվելու դեպքում:

• Դատողություն արեք, թե ինչու եվրոպացի միապետները չէին սիրում Նապոլեոնին: Ինչո՞ւ էր նրա կառավարումը կտրականապես անընդունելի:

• Դատողություն արեք, թե ինչու էր Նապոլեոնը ցանկանում ինքը ևս ստեղծել դինաստիական իշխանություն: Ինչո՞ւ նա ստացավ կայսեր կարգավիճակ: Ի՞նչ տարբերություն կա կայսեր և կոնսուլի միջև:

• Դատողություն արեք, թե ինչու էր խաղաղության հաստատումը Եվրոպայում անհասանելի: Որո՞նք էին Ֆրանսիայի և այլ խոշոր եվրոպական պետությունների միջև պատերազմների պատճառները:

• Դատողություն արեք, թե ինչ մոտիվացիա ունեին Անգլիան, Ավստրիական կայսրությունը և Ռուսաստանը Ֆրանսիայի դեմ պատերազմելու համար:

• Դատողություն արեք, թե ինչու էին զինադադարի պայմաններն ավելի խիստ Պրուսիայի, քան Ռուսաստանի համար:

• Դատողություն արեք մայրցամաքային շրջափակման մասին: Որո՞նք էին դրա պատճառները, որո՞նք կարող էին լինել դրա հնարավոր հետևանքները:

• Դատողություն արեք, թե ինչու Իսպանիան դարձավ մեծ խնդիր Նապոլեոնի համար: Ո՞րն էր տարբերությունը իսպանական արշավի և Նապոլեոնի մյուս պատերազմների միջև:

• Դատողություն արեք, պարտիզանական պատերազմին ուղեկցող մարտահրավերների մասին:

• Դատողություն արեք, թե ինչու Նապոլեոնը կարողացավ հաղթել եվրոպական կոալիցիաներին:

• Դատողություն արեք, թե ինչու էր ֆրանսիական բանակը մարմնավորում հեղափոխության արժեքները:

• Դատողություն արեք, թե ինչ առավելություն ունեն մերիտոկրատական և մրցունակ հասարակությունը դասային և տոհմական հասարակության նկատմամբ:

• Դատողություն արեք, ըստ աղբյուրի, ինչ անձնական ազդեցություն է ունեցել Նապոլեոնը ճակատամարտի ընթացքի վրա:

• Դատողություն արեք, ինչու էր Ռուսաստանի դեմ արշավելը սխալ:

• Դատողություն արեք, թե աշխարհագրական և մշակութային ինչ առանձնահատուկ բնութագրեր ունեին այս երկիրը:

• Դատողություն արեք, թե ինչու են լոգիստիկական և մատակարարումը կարևոր գործոններ պատերազմի ժամանակ:

• Դատողություն արեք Նապոլեոնի պարտության պատճառների մասին:

• Դատողություն արեք, թե ինչու Նապոլեոնը որոշեց հրաժարական տալ: Ինչպիսի՞ն հնարավորություններ կարող էր ունենալ նա պայքարը շարունակելու դեպքում:

• Դատողություն և արեք, թե ինչ էր նշանակում այն փաստը, որ Նապոլեոնը կարողացավ միայնակ, անզեն վերադառնալ իշխանության:

• Դատողություն և արեք այն պատճառների մասին, թե ինչու էր Նապոլեոնը վայելում հանրային աջակցություն:

• Ծանոթացե՛ք Նապոլեոնի մարշալների հակիրճ կենսագրություններին: Դատողություն և արեք, թե նրանց համար որքանով հնարավոր կլինե՞ր կարիերայի նման առաջընթացը հեղափոխությունից առաջ, միապետության դարաշրջանում:

• Դատողություն և արեք, թե ինչու էին Նապոլեոնի մարշալները մարմնավորում մերիտոկրատիայի առավելությունը: Ի՞նչ չափանիշներով էր ընտրում Նապոլեոնը մարշալներին:

Քայլ 5 (§45-46, 47-48)

Ինչու են Ֆրանսիական և Ամերիկյան հեղափոխությունները համարվում իրենց պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբ: (Ժամանակ, 1, 2, 3), պարագրաֆ Ֆրանսիական հեղափոխությունը, Ամերիկյան հեղափոխությունը

• Դատողություն և արեք, թե ինչպես փոխվեց ֆրանսիական հասարակությունը հեղափոխության արդյունքում: Քննարկի՛ր հեղափոխության քաղաքական, տնտեսական և հասարակական հետևանքները:

• Դատողություն և արեք, թե որքան կարևոր է, որ կառավարման մոդելն արտացոլի իր բնակչության տարբեր խմբերի շահերը:

• Հիշե՛ք նախորդ նյութը և համեմատե՛ք Ֆրանսիայի և Ամերիկայի հասարակությունը, քաղաքական գործընթացները այս երկու երկրներում: Դատողություն և արեք նմանությունների և տարբերությունների մասին:

• Դատողություն և արեք, թե ինչու է Ֆրանսիական հեղափոխությունը համաշխարհային պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկը:

• Դատողություն և արեք Ֆրանսիական հեղափոխության արդյունքների մասին: Ընդգծի՛ր դրական և բացասական գործոնները:

• Դատողություն և արեք Ֆրանսիական հեղափոխության հիմնական փուլերի մասին: Առանձնացրո՛ւ այս փուլերը և քննարկի՛ր, թե ինչպես է փոխվել իշխանությունը և կառավարման համակարգն այս փուլերում:

• Դատողություն և արեք Եվրոպայում Աուստերլիցի մոտ տարած հաղթանակի հետևանքների մասին:

• Դատողություն և արեք, թե ինչպես փոխեց Եվրոպայի քարտեզը Նապոլեոնի հաղթանակը Աուստերլիցի մոտ:

• Դատողություն և արեք, թե ինչու էր Նապոլեոնը քաղաքական և մշակութային խորհրդանիշ:

• Դատողություն և արեք, թե որքանով էր նրա՝ որպես հեղափոխության խորհրդանիշի ընկալումը հիմնված պատմական իրականության վրա:

• Դատողություն և արեք, թե ինչու էր կարևոր Ամերիկյան հեղափոխությունը:

• Դատողություն և արեք, թե ինչ սկզբունքներ և արժեքներ է հաստատել Ամերիկյան հեղափոխությունը:

Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար

Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:

- Ինչպե՞ս ես պլանավորում/պլանավորել ես համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նախատեսում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Նախնական պլանն օգնե՞լ է քեզ աշխատանքային գործընթացում:
- Ի՞նչ մանրամասների վրա էիր կենտրոնացել հոդված պատրաստելու համար:
- Համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացն ընթացե՞լ է ըստ պլանի:
- Արդյոք անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակը:
- Ինչո՞վ է ավարտված առաջադրանքի սկզբնական տարբերակը տարբերվում վերջնական տարբերակից:
- Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայմանը:
- Ի՞նչ արդյունք էք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:
- Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը հոդված է:

Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել հոդվածը: Ի՞նչ հարցի մասին ես արտահայտել քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:

- Ինչո՞ւ ես կատարել համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ էք դրել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
- Ո՞ւմ համար և ինչո՞ւ է քո ստացած արդյունքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ գիտելիք ուսումնասիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Ի՞նչ կցանկանայիր իմանալ լրացուցիչ:
- Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո կատարած եզրակացությունների ճշմարտացիությունը/հետևողականությունը:
- Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար / համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:

Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: Ի՞նչն օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

- Ո՞ւմ էիր հաշվետու աշխատանքային գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ):

• Ի՞նչ ընդհանուր նպատակ ունեիք դու և քո ուսուցիչը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:

• Ձեր դասընկերների հետ ընդհանուր նպատակներ ունեի՞ք: Արդյոք ձեզ համար հետաքրքիր և հաճելի էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքը:

• Ի՞նչ էք արել ինքնուրույն համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:

• Ի՞նչն է ձեզ մոտ ստացվել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

• Ո՞վ և ինչպե՞ս օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում: Ո՞ւմ հետ ես համագործակցել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: (Ի՞նչ օգնություն էք ցուցաբերել ձեր դասընկերներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն էք ստացել նրանցից:)

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ էք կոնֆլիկտային իրավիճակների: Ինչպե՞ս լուծեցիք կոնֆլիկտը:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ էք անորոշ իրավիճակների: Ինչպե՞ս էք կողմնորոշվել անորոշությամբ պատած հարցերում:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ հանդիպե՞լ էք տարբեր կարծիքների: Որքանո՞վ կարողացաք համագործակցել տարբեր հայացքներ ունեցող մարդկանց հետ: Ի՞նչը կօգնի քեզ ավելի լավ հասկանալու քո դասընկերների և ուսուցչի ասելիքը:

• Վերլուծե՛ք, թե ինչ կանոններ/օրենքներ և ինչու էիք պահպանում համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: (Օրինակ, որքանով էք կարողացել տարակարծությունների դեպքում կողմնորոշված լինել հիմնախնդրին, այլ ոչ թե՛ շփման մեջ գտնվող մարդկանց: Ինչո՞վ և ինչպե՞ս էիք արտահայտում հարգանք մարդկանց հանդեպ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս):

• Հասկանո՞ւմ էք ընտրված հարցի նկատմամբ նախկինում ձևավորված (դրական կամ բացասական) վերաբերմունքը: Ի՞նչն է պայմանավորում այսպիսի վերաբերմունքի ձևավորում:

• Ինչպե՞ս ուսուցչի և այլ աշակերտների հետ երկխոսությունն օգնեց ձեզ կատարել համալիր առաջադրանքը:

• Ինչպե՞ս կարող են ձեր հարցերն օգնել ձեր դասընկերներին ավելի լավ ձևակերպել իրենց ասելիքը:

• Ի՞նչ գործոններ նախատեսեցիք/պետք է նախատեսեք, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդիրներին լինի հասկանալի և ընդունելի (օրինակ՝ գործառնական խոսքի ակտերի ճիշտ ընտրություն (պատմել, նկարագրել, պատճառաբանել), զգայուն նրբություններ վեր հանել, ժեստեր, դիմախաղ, ոչ խոսքային ազդանշաններ օգտագործել):

• Դուք օգտագործե՞լ էք տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ինչպե՞ս է ձեզ օգնել տեխնոլոգիայի օգտագործումը:

• Ի՞նչ կանեիք այլ կերպ, եթե հիմա սկսեիք աշխատել առաջադրանքի վրա:

• Ըստ քեզ՝ ինչո՞վ է քո առաջադրանքը նման և ինչո՞վ է տարբերվում քո դասընկերների աշխատանքներից: Ինչպե՞ս կցուցաբերես այս տարբերությունները հարցերի տեսքով:

• Գնահատե՛ք, թե որքանով է ստացվել ձեզ մոտ այն, ինչ հանձնարարել էր ուսուցիչը:

Ամփոփիչ առաջադրանք 1. Պատմություն

Աշակերտի անունը և ազգանունը, դպրոց, դասարան -----

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը -----

1. Ե՞րբ էր ընթանում Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Անվանե՛ք երեք պատմական իրադարձություն, որոնք նախորդում և հաջորդում էին Ֆրանսիական մեծ հեղափոխությանը:

Երեք իրադարձություն, որոնք նախորդել են Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանին	Ամիս, ամսաթիվ, տարեթիվ/ ժամանակաշրջան	Երեք իրադարձություն, որոնք հաջորդել են Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանին

2. Անվանե՛ք երեք աշխարհագրական օբյեկտ/վայր (Եվրոպայում), որոնց մասին սովորել եք Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանն ուսուցասիրելիս:

Աշխարհագրական օբյեկտի/ վայրի անվանումը	Ինչով էր այս օբյեկտը/վայրը կարևոր	Անվանված վայրի/օբյեկտի աշխարհագրական, տնտեսական և քաղաքական բնութագրերը

3. Որտեղի՞ց ունենք տեղեկություններ Ֆրանսիական մեծ հեղափոխության մասին: Որքանո՞վ վստահելի են այս աղբյուրները:

Աղբյուրի տեսակի անվանումը	Ով է ստեղծել	Ինչի մասին է պատմում	Երբ և ինչու է ստեղծվել	Որքանով վստահելի է

4. Ինչպե՞ս էին փոխվում կառավարման ձևերը Ֆրանսիայում հեղափոխության ընթացքում:

	Ինչպես էր բաշխվում իշխանությունը	Ինչպես է բնակչությունն արտահայտում տարբեր խմբերի շահերը	Համեմատություն այլ դարաշրջանի կառավարման ձևերի հետ
Բացարձակ միապետություն			
Սահմանադրական միապետություն			
Հանրապետություն			

5. Ինչպիսի՞ն էր Ֆրանսիայի հասարակությունը:

Սոցիալական խավ/խումբ	Հին կարգի ժամանակ		Առաջին հանրապետության ժամանակ		Համեմատություն այլ պատմական ժամանակաշրջանի հետ
	Քաղաքական բնութագրեր	Տնտեսական բնութագրեր	Քաղաքական բնութագրեր	Տնտեսական բնութագրեր	

6. Անվանե՛ք Ֆրանսիական հեղափոխության հետ կապված, ըստ ձեզ, ամենակարևոր փաստը/պատմական իրադարձությունը/գործընթացը:

Պատմական իրադարձություն	Պատճառ	Հետևանքներ	Քաղաքական, տնտեսական և հասարակական նշանակությունը համաշխարհային պատմության համար	Նմանատիպ պատմական իրադարձություն (փաստերով ամրապնդում)

Գնահատման աղյուսակ որոշող գնահատման համար N3

Դասարան՝ XI Թեմա՝ Երկարատև XIX դարը Հիմնական հարց՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը Աշակերտ		
Նպատակային հասկացության հետ կապված գնահատման չափանիշներ Աշակերտը կարող է.	Առավելագույն միավորը	Մեկնաբանություն
Աղբյուր/մեկնաբանություն Ուրվագծել Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որպես եվրոպական պատմության նոր ելակետ և տարբերակել դրա բնութագրերը, վերլուծել այն գործոնները, որոնք Ֆրանսիական մեծ հեղափոխությունը ներկայացնում են որպես կառավարման համակարգում փոփոխությունների կարևոր դարաշրջան:	1	

<p>Ժամանակ</p> <p>Ֆրանսիական մեծ հեղափոխության և դրանց մասին տրված աղբյուրները դասակարգել և, դրանց վրա հիմնվելով, վերլուծել Ֆրանսիայում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական կարևոր իրադարձությունները, դատողություն անել աղբյուրների մասին, որոշել դրանց կողմնակալության և հուսալիության աստիճանը, քննադատաբար գնահատել ու դրանց նկատմամբ սեփական դիրքորոշումն արտահայտել:</p>	1	
<p>Տարածություն</p> <p>Ֆրանսիայի այն տարածքային արեալն ուրվագծել, որտեղ տեղի է ունեցել հեղափոխությունը, դատողություն անել այն աշխարհագրական, տնտեսական և քաղաքական բնութագրերի մասին, որոնք հանգեցրել են հեղափոխության, Ֆրանսիական մեծ հեղափոխության մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ աշխարհագրական տերմիններ:</p>		
<p>Հասարակություն</p> <p>Բնութագրել Ֆրանսիական հեղափոխության մասնակից հասարակությունը, ուրվագծել սոցիալական շերտերը, դատողություն անել նրանց քաղաքական և տնտեսական բնութագրերի մասին «հին ռեժիմի» և Առաջին հանրապետության ժամանակ, համեմատել հեղափոխությանը մասնակցող ֆրանսիական հասարակությունն այլ պատմական ժամանակաշրջանի հասարակության հետ:</p>	1	
<p>Իշխանություն</p> <p>Դատողություն անել իշխանության վերաբաշխման մասին ֆրանսիական միապետության, սահմանադրական միապետության և հանրապետության ժամանակ, վերլուծել դրանց բնութագրերը, համեմատել այլ դարաշրջանի կառավարման ձևերի հետ:</p>		
<p>Պատմական իրադարձություն/գործընթաց</p> <p>Դատողություն անել Ֆրանսիական մեծ հեղափոխության պատճառների և քաղաքական, տնտեսական և սոցիալական հետևանքների մասին, ուրվագծել նրա, որպես պատմական իրադարձության քաղաքական, տնտեսական և պատմական նշանակության մասին, անվանել Ֆրանսիական մեծ հեղափոխության նման իրադարձություն և փաստերով ամրապնդել:</p>		

Համալիր առաջադրանք N6. Թեմատիկ մատրիցա

Թեմա՝ Երկարատև XIX դարը

Նպատակային հասկացություն. Պատմական իրադարձություն (Արդյունք 3,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր).** պատերազմ, պատմական անհատ, ապստամբություն: **Ենթահասկացություն (մասնավոր).** Արդյունաբերական հեղափոխությունը Բրիտանիայում, Ղրիմի պատերազմը, Կովկասյան պատերազմները, Դեկաբրիստների ապստամբությունը: **Ենթահարց.** Արդյունաբերական հեղափոխությունը, Վիեննայի կոնգրեսը և փոփոխված Եվրոպան, Քաղաքական իրադարձությունները 1815-1850 թվականների Եվրոպայում, Ռուսական կայսրության հզորացումը, Ղրիմի պատերազմի պատճառներն ու հետևանքները:

Նպատակային հասկացություն. Տարածություն (միջավայր, տարածք) Արդյունք 1,2,3,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր)**՝ պատմաաշխարհագրական տարածք: **Ենթահասկացություն (մասնավոր)**՝ Եվրոպա, Փոքր Ասիա, Կովկաս, Մեծ Բրիտանիա, Հարավային Ամերիկա: **Ենթահարց՝** արդյունաբերական հեղափոխությամբ ընդգրկված տարածք, քաղաքականապես և տնտեսապես կայուն Եվրոպական տարածք, Ռուսական կայսրության տարածք, Ղրիմի պատերազմի տարածական բնութագրերը:

Հարցը՝ Եվրոպայի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական բնութագրերը XIX դարի առաջին կեսին:

Հանգուցային հարց. Ամերիկյան ընկերության կառավարչի հաշվետվության միջոցով ինչպես ցուցաբերեմ XIX դարի 50-ականների վերջի Եվրոպայի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական բնութագրերը:

Պատկերացրո՛ւ, որ XIX դարի 50-ականների վերջին ամերիկյան ընկերության կառավարիչ ես և ցանկանում ես ընդլայնել քո բիզնեսը Եվրոպայում: Դրա համար ուսումնասիրում ես Եվրոպական շուկան՝ Եվրոպայի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական բնութագրերը: Ընկերության բաժնետերերին պետք է ներկայացնես հաշվետվություն, ըստ որի նրանք պետք է որոշում կայացնեն՝ Եվրոպայի որ պետությունում է նախընտրելի քո բիզնեսի ընդլայնումը:

<p>Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ.</p> <p>Պատմական իրադարձություն.</p> <ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր պատմական իրադարձություն ունի իր սեփական պատճառը/ պատճառները և հետևանքը/հետևանքները: • Պատմաբանները հաճախ բանավիճում են պատմական իրադարձությունների պատճառների և հետևանքների շուրջ: • Որոշ պատմական իրադարձություններ ունեն տեղական, իսկ որոշները՝ համաշխարհային նշանակություն: • Պատմական փաստերն ու իրադարձությունները կարելի է տիպաբանորեն խմբավորել ըստ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային չափանիշների: <p>Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)</p> <ul style="list-style-type: none"> • Աշխարհագրական միջավայրը և աշխարհագրական գիտելիքներն ազդում են մարդկային հասարակության զարգացման վրա: • Շփման հաճախականությունը հանգեցնում է մեծ/փոքր սոցիալ-մշակութային տարածքների ստեղծման: 	<p>Գնահատման չափանիշ</p> <p>Պատմական իրադարձություն.</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել XIX դարի I կեսում ընթացող պատմական իրադարձությունների պատճառները, հետևանքները և նշանակությունը (կ.պ. 1, 3): • Դատողություն անել այն պատճառների մասին, որոնք հնարավոր է հանգեցնում են XIX դարի եվրոպական ու Արևելյան աշխարհում ընթացող պատմական իրադարձությունների պատճառների, հետևանքների և նշանակության տարբեր կերպ գնահատման (կ.պ. 2): • Ընդգծել XIX դարի I կեսին եվրոպական և Արևելյան աշխարհում ընթացող համաշխարհային պատմական իրադարձությունների/ գործընթացի էական բնութագրերը, համեմատել դրանք այլ նման պատմական իրադարձությունների հետ (կ.պ 4): <p>Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել բրիտանացիների, ռուսների և օսմանցիների համար Բալկանյան տարածաշրջանի վերահսկողության կարևորությունը, գործոնները, որոնք պայմանավորում են այս կոնկրետ տարածքի կարևորությունը (կ.պ. 1, 3): • Վերլուծել «երկարատև XIX դարի» դարաշրջանում առկա աշխարհագրական գիտելիքները (կ.պ.2): 	<p>Աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցո'ւյց տվեք.</p> <ul style="list-style-type: none"> • Համառոտ ներածություն: Ինչպես փոխեց արդյունաբերական հեղափոխությունը համաշխարհային տնտեսությունն ու հասարակությունը: (Պատմական իրադարձություն/ գործընթաց 1.4, Տարածություն 1,3) • Որքանով կայուն է Եվրոպան քո դարաշրջանում քաղաքականապես և տնտեսապես: Ինչն է Եվրոպայում ստեղծում երկարաժամկետ կայունություն: (Պատմական իրադարձություն/ գործընթաց, 1, Տարածություն 3) • Ինչու է Բրիտանիան քաղաքական և տնտեսական առումով ամենագրավիչ երկիրը: Համեմատի՛ր Արևմտյան Եվրոպայի այլ պետությունների հետ (օրինակ՝ Ֆրանսիա և այլն): (Պատմական իրադարձություն/ գործընթաց 1, 3, Տարածություն, Ուս.գ. 1-3) • Ինչ ռիսկեր կարող են ուղեկցել քո բիզնեսի՝ Ռուսաստանում, Իրանում և Օսմանյան կայսրությունում ընդլայնմանը: Նկարագրի՛ր այս պետությունների քաղաքական և տնտեսական իրավիճակը: (Պատմական իրադարձություն/ գործընթաց 1, 4, Տարածություն 1, 2, 3)
--	--	--

<ul style="list-style-type: none"> • Կոնկրետ պատմաաշխարհագրական տարածքներ ունեն որոշակի տնտեսական, ռազմավարական և մշակութային նշանակություն: • Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է: • Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական խմբերի միջև: Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները: • Իշխանություն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը: • Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/հասարակական խմբերի միջև: • Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է: 		
---	--	--

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I. Ծանոթանալ համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

Ռեսուրս 1. Դասագիրք (Աշակերտի գիրք), Պատմություն: XI դասարան, «Սուլակաուրիի հրատարակչություն», վեցերորդ գլուխ. պարագրաֆներ՝ §52-53, 54-55, 56-57, 58-59

Ռեսուրս 2. Էլ. ռեսուրսներ

• Ինչպես գրենք հաշվետվություն (զեկույց)

<https://files.fm/f/fqk43zwey>

• Արդյունաբերական հեղափոխություն: Simple History

<https://youtube.com/watch?v=xLhNP0qp38Q&si=EnSIkaIECMiOmarE>

• Արդյունաբերական հեղափոխություն: Happy Learning English

https://youtube.com/watch?v=Xh_Lk7kDrUI&si=EnSIkaIECMiOmarE

• Ինչպես ազդեց Արդյունաբերական հեղափոխությունը հասարակության վրա: Captivating History

<https://youtube.com/watch?v=EX4OZ-lhdY0&si=EnSIkaIECMiOmarE>

• Վիեննայի կոնգրեսը: Silk School

<https://youtube.com/watch?v=hJ7LXr8VQcg&si=EnSIkaIECMiOmarE>

• Վիեննայի կոնգրեսը (քարտեզներ): The Map as History

<https://youtube.com/watch?v=cmaPv9GVf9c&si=EnSIkaIECMiOmarE>

• Բրիտանական քաղաքականությունը 1815-1850 թվականներին: Muddling Through History

<https://youtube.com/watch?v=dCpDkLA2C8o&si=EnSIkaIECMiOmarE>

• Պատմություն: Դիմորդի ժամ: Ղրիմի պատերազմը և Արևելյան հարցը: Հեռուստադպրոց

<https://youtube.com/watch?v=jtE3FUC16I8&si=EnSIkaIECMiOmarE>

• Ռուս-թուրքական 1853-1856 և 1877-1878 թվականների պատերազմները և Վրաստանը: Silk School

<https://youtube.com/watch?v=Azhoo1YMEEQ&si=EnSIkaIECMiOmarE>

• Ռուսաստանի պատմությունը (քարտեզներով): EmperorTigerstar

<https://youtube.com/watch?v=uCIp3CF33ms&si=EnSIkaIECMiOmarE>

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանը հասկանալուն.

Արդյունաբերական հեղափոխություն

• Ինչպե՞ս կսահմանեք «հեղափոխություն» տերմինը:

• Ի՞նչ գիտեք հեղափոխությունների տեսակների մասին:

- Ինչպե՞ս կսահմանեք «արդյունաբերական հեղափոխություն» տերմինը:
- Ի՞նչ եք հիշում առաջին շոգեգնացի և առաջին երկաթուղու մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):
- Ձեր կարծիքով, ի՞նչ պատճառներ բերեցին արդյունաբերական հեղափոխության մեկնարկին:

Եվրոպան 1815-1850 թվականներին

- Ի՞նչ եք հիշում Վիեննայի Կոնգրեսի որոշումների մասին նախորդ դասարաններում ստացած գիտելիքներից:
- Եթե հիշում եք, ո՞ր դարաշրջանն է կոչվում «Վիկտորյանական դարաշրջան»:
- Ձեր կարծիքով, ո՞ր գործոններն են նպաստել Վիկտորյանական դարաշրջանում Բրիտանիայի վերելքին:
- Ըստ քեզ, Բրիտանիան ինչու ժսաց անմրցակից Վիկտորյանական դարաշրջանում:

Ռուսաստանը Արևելքի ամենահզոր պետություն: Ղրիմի պատերազմը

- Նախորդ դասարաններում ուսումնասիրված նյութից հիշե՛ք, թե ինչպես ընդլայնվեց Ռուսաստանը տարածքային առումով:
- Ի՞նչ նշանակություն ունեւր Կովկասը Ռուսաստանի համար: Ինչո՞ւ էր նրա համար կարևոր Վրաստանի տարածքը:
- Ի՞նչ եք լսել Ռուսաստանում ճորտատիրության մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):
- Լսե՛լ եք Ղրիմի կամ Կովկասյան պատերազմների մասին:

Ժամանակային գիծ

- Ի՞նչ է հաշվետվությունը/գեկույցը:
- Ո՞րն է հաշվետվության/գեկույցի նպատակը:
- Ի՞նչ տեղեկատվություն է տրամադրում ռեսուրսը հաշվետվություն/գեկույց ստեղծելու վերաբերյալ:
- Ընդգծե՛ք հաշվետվության/գեկույցի բնութագրիչները:
- Ինչպե՞ս կարող ենք հաշվետվության/գեկույցի միջոցով ներկայացնել մեր տեսակետները: (Ռեսուրս 2)

Համալիր առաջադրանք

- Ձեր խոսքերով ձևակերպե՛ք, թե ինչին է վերաբերում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասերի ընթացքում:
- Մեկ այլ ժամանակ կատարե՛լ եք նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Նպատակային հասկացություն՝ Պատմական իրադարձություն

Ենթահասկացություն (ընդհանուր)՝ պատերազմ, հեղափոխություն, պատմական անհատ, ապստամբություն:

Ենթահարց՝ Արդյունաբերական հեղափոխություն, Վիեննայի կոնգրեսը և փոփոխված Եվրոպան, Քաղաքական իրադարձությունները 1815-1850 թվականների Եվրոպայում, Ռուսական կայսրության հզորացումը, Ղրիմի պատերազմի պատճառներն ու հետևանքները:

Նպատակային հասկացություն՝ Տարածություն (միջավայր, տարածք):

Ենթահասկացություն (ընդհանուր)՝ պատմաաշխարհագրական տարածք:

Ենթահարց՝ Տարածք, որն ընդգրկել էր արդյունաբերական հեղափոխությունը, քաղաքականապես և տնտեսապես կայուն եվրոպական տարածք, Ռուսական կայսերական տարածք, Ղրիմի պատերազմի տարածական բնութագրերը:

Քայլ 1 (§ 52-53)

Համառոտ ներածություն. Ինչպես արդյունաբերական հեղափոխությունը փոխեց համաշխարհային տնտեսությունը և հասարակությունը: (Պատմական իրադարձություն/գործընթաց 1-4, Տարածություն 1-3)

• Հիշե՛ք անցած նյութը և դատողություն արեք մարդկության պատմության այլ մեծ հասարակական հեղափոխությունների մասին (օրինակ՝ Նեոլիթյան հեղափոխություն): Ինչպե՞ս է այս տիպի հեղափոխությունը փոխում հասարակության կյանքը:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու հանգեցրին գիտական հետազոտությունները և ձեռքբերումները արդյունաբերական հեղափոխության:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչպես փոխեց արդյունաբերական հեղափոխությունը հասարակության կյանքը՝ որքան գլոբալ նշանակություն ուներ այն:

• Դատողությո՛ւն արեք, թե որոնք էին արդյունաբերական հեղափոխության հիմնական պատճառները և դրա հետևանքները:

• Արդյունաբերական հեղափոխության օրինակով դատողությո՛ւն արեք, թե ինչու է տնտեսության զարգացմանն ու աճին անպայման հաջորդում տրանսպորտի զարգացում:

• Հիշե՛ք նախորդ պատմական դարաշրջանների տնտեսական և սոցիալական կյանքը (օրինակ՝ միջնադար), և դատողությո՛ւն արեք, թե ինչպես է այն փոխվել:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու է քաղաքական իրականությունը սահմանում ինդուստրացման աստիճանը:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու էր Գերմանիայի (և ոչ միայն) համար կարևոր արդյունաբերական կենտրոնները ծովին միացնելը:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու երկաթուղին դարձավ պետության զարգացման խորհրդանիշ:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչպես են անդրադարձել տարբեր տարածքների աշխարհագրական, քաղաքական և տնտեսական բնութագրերը արդյունաբերակացման վրա:

- Դատողություն արեք, թե ինչու էր ուրբանիզացումը արդյունաբերական հեղափոխության հիմնական արդյունքներից մեկը:

- Դատողություն արեք, թե ինչպես արդյունաբերական հեղափոխությունը փոխեց իր դարաշրջանի տարածությունն ու հասարակությունը:

- Դատողություն արեք, թե արդյունաբերական հեղափոխության արդյունքում ինչպես են ձևավորվել նոր հասարակական խմբեր, որոնք են նրանց շահերը, ինքնությունն ու մտահոգությունը:

- Դատողություն արեք արդյունաբերական հեղափոխության դրական և բացասական հետևանքների մասին:

- Դատողություն արեք, թե ինչպես է արդյունաբերական հեղափոխությունն ազդել քաղաքական մշակույթի վրա:

Քայլ 2 (§52-53, 54-55)

Որքանով է Եվրոպան քաղաքականապես և տնտեսապես կայուն քո դարաշրջանում: Ի՞նչն է Եվրոպան դարձնում երկարաժամկետ կայուն: (Պատմական իրադարձություն/գործընթաց 1, Տարածություն 3)

- Դատողություն արեք, թե որն էր Վիեննայի կոնգրեսի հիմնական նպատակը: Ինչո՞ւ է այն հրավիրվել:

- Դատողություն արեք, թե ինչու Վիեննայի կոնգրեսը որոշեց Ֆրանսիային առաջարկել ընդունելի խաղաղության պայմաններ:

- Դատողություն արեք, թե ինչու վերականգնված Բուրբոնների միապետությունը ստիպված եղավ ընդունել հեղափոխության արդյունքում առաջացած փոփոխությունները:

- Դատողություն արեք, թե որ տարածքներն էին վիճարկվել Վիեննայի կոնգրեսում: Ինչո՞ւ: Դատողություն արեք դրանց աշխարհագրական և քաղաքական նշանակության մասին:

- Դատողություն արեք, թե որոնք էին Վիեննայի կոնգրեսի հիմնական արդյունքները:

- Դատողություն արեք, թե ինչու էր կարևոր կուսակցական քաղաքական մշակույթի զարգացումը ներքին կայունության համար:

- Հիշե՛ք նախորդ նյութը: Դատողություն արեք, թե ինչ իրադարձություններ և գործոններ են նպաստել ամբողջ աշխարհում ազատագրական շարժումների, անկախության համար պայքարի ու ապստամբությունների ակտիվացմանը:

- Դատողություն արեք, թե ինչու էին ռուսական և բրիտանական շահերը հատվել Արևելքում:

- Դատողություն արեք, թե ինչու Անգլիան և Ռուսաստանը տարբեր շահեր ունեին՝ կապված օսմանցիների հետ:

Քայլ 3 (§54-55)

Ինչու է Բրիտանիան քաղաքական և տնտեսապես ամենագրավիչ պետությունը: Համեմատի՛ր արևմտաեվրոպական այլ պետությունների հետ (օրինակ՝ Ֆրանսիայի և այլն):

- Դատողություն արեք, տեքստիլ արդյունաբերության օրինակով՝ ինչպե՞ս փոխվեցին արտադրությունն ու տնտեսությունը:

- Դատողություն անարժեք է, թե ինչու և արդյունաբերական հեղափոխությունը սկսվեց Անգլիայում:
- Հիշե՛ք անցած նյութը և դատողություն անարժեք է, թե ինչու էր կապված Նապոլեոնի մայրցամաքային շրջափակման քաղաքականությունը Անգլիայում արդյունաբերական հեղափոխության սկզբի հետ:
- Դատողություն անարժեք է, թե ինչու Բրիտանիան այլևս մրցակից չուներ Եվրոպայում:
- Դատողություն անարժեք է, թե ինչի վրա էր հիմնված Բրիտանիայի հզորությունը: Թվարկի՛ր քաղաքական, աշխարհագրական և տնտեսական պատճառները:
- Դատողություն անարժեք է, թե ինչպես է բրիտանական արտաքին քաղաքականությունը տարբերվում մյուս խոշոր գաղութատիրական տերություններից:
- Դատողություն անարժեք է, թե որն էր Բրիտանիայի գլխավոր նպատակը գաղութատիրական քաղաքականության մեջ:
- Դատողություն անարժեք է, թե ինչպես է Բրիտանիայի քաղաքական մշակույթը տարբերվում Ֆրանսիայի մշակույթից: Հիշե՛ք անցած նյութը:
- Դատողություն անարժեք է, թե ինչպես են աշխարհագրական, քաղաքական և տնտեսական գործոնները սահմանում Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը:
- Դատողություն անարժեք է վրոպական քաղաքականության մեջ Բրիտանիայի արտաքին քաղաքականության ռազմավարության մասին:
- Դատողություն անարժեք է, թե ինչու է Բրիտանիան աջակցել ապստամբած Հարավային Ամերիկայի պետություններին և Հունաստանին:

Քայլ 4 (§ 56-57, 58-59)

Ի՞նչ ռիսկեր կարող է ունենալ քո բիզնեսը Ռուսաստանում, Իրանում և Օսմանյան կայսրությունում ընդլայնելու դեպքում: Այս պետությունների քաղաքական և տնտեսական իրավիճակը: (Պատմական իրադարձություն/գործընթաց 1, 4, Տարածություն 1, 2, 3)

- Հիշե՛ք անցած նյութը: Դատողություն անարժեք է Ռուսաստանի աշխարհագրական, քաղաքական և տնտեսական բնութագրերի մասին:
- Դատողություն անարժեք է, թե որոնք էին Ռուսաստանի ռազմավարական քաղաքական նպատակները: Ո՞ր աշխարհագրական տարածքներն էր ընդգրկում այն:
- Դատողություն անարժեք է, թե ինչ ուղղություններով էր ընդլայնվում Ռուսաստանը: Ովքե՞ր էին նրա հիմնական մրցակիցները, և որտե՞ղ (որ տարածաշրջաններում) էին հատվում նրանց շահերը:
- Դատողություն անարժեք է, թե ինչ նշանակություն ունեւր Կովկասը Ռուսաստանի համար: Ինչո՞ւ էր Վրաստանի տարածքը կարևոր Ռուսաստանի համար:
- Դատողություն անարժեք է, թե ինչ հիմնական խմբերի էր բաժանված ռուսական հասարակությունը: Որո՞նք էին նրանց հիմնական բնութագրերը, ինքնությունը և այլն:
- Հիշե՛ք նախորդ նյութը: Համեմատե՛ք ռուսական հասարակությունը եվրոպական և ամերիկյան հասարակության հետ: Ի՞նչ հիմնական տարբերություններ ես տեսնում:
- Դատողություն անարժեք է, թե ինչու էր ճորտատիրությունը հնացած և բացասական պրակտիկա: Ինչո՞ւ և անհնար կլինեւր ճորտատիրության պայմաններում բարեփոխուեւր իրականացնել և զարգացնել երկիրը:

• Դատողություն արեք Ռուսաստանի քաղաքական և սոցիալական կառուցվածքի մասին: Ի՞նչ հիմնական խնդիրներ եք տեսնում դրանում: Ինչպե՞ս են որոշվում պետության առաջնահերթություններն ըստ բյուջեի:

• Դատողություն արեք, թե ինչու Ռուսաստանին հաջողվեց հեշտությամբ նվաճել Արևմտյան Վրաստանի թագավորություն-իշխանությունները:

• Դատողություն արեք Ռուսաստանի համար Արևմտյան Վրաստանի ռազմավարական նշանակության մասին:

• Դատողություն արեք, թե ինչու Իրանն ու Օսմանյան կայսրությունն անցան ճգնաժամի ճանապարհով:

• Դատողություն արեք, թե ինչ վտանգների էր բախվել Օսմանյան կայսրությունը: Ինչո՞ւ XIX դարում նվաճված ժողովուրդների և տարածքների պահպանումը դարձավ ավելի դժվար:

• Դատողություն արեք, թե ինչու Ալեքսանդրը հրաժարվեց բարեփոխումներից: Որքան դժվար կարող էր լինել դրանց իրականացումը Ռուսաստանի համար՝ ելնելով քաղաքական և սոցիալական իրավիճակից:

• Դատողություն արեք, թե որն էր «Սրբազան դաշինքի» ստեղծման նպատակը: Ի՞նչն էր միավորում այս պետություններին:

• Դատողություն արեք, թե ինչ ազդեցություն ունեցավ Դեկաբրիստների ապստամբությունը Նիկոլայի վրա:

• Դատողություն արեք Նիկոլայ II-ի քաղաքականության մասին: Ինչո՞ւ նա գնաց ռեակցիոն ճանապարհով:

• Դատողություն արեք Ֆրանսիական հեղափոխության մասին: Ի՞նչ է մեզ ասում 1830 թվականի հեղափոխությունը, որքա՞ն էր հեռացել ֆրանսիական հասարակությունը հեղափոխության ձեռքբերումներից Բուրբոնների վերադարձի ժամանակաշրջանում: Ի՞նչ է մեզ ասում այս հեղափոխությունը ֆրանսիական հասարակության մասին:

• Դատողություն արեք դեկաբրիստների մասին: Ռուսական հասարակության ո՞ր խմբին էին նրանք պատկանում, որո՞նք էին նրանց շահերն ու մտահոգությունները:

• Դատողություն արեք, թե ինչու էր Կոստանդնուպոլիսի/Ստամբուլի տիրապետումը կարևոր Ռուսաստանի համար: Դատողություն արեք այս քաղաքի ռազմավարական, աշխարհագրական, քաղաքական և գաղափարական նշանակության մասին:

• Դատողություն արեք Նիկոլայի ներքին քաղաքականության մասին: Ինչի՞ վրա էր հիմնված նրա իշխանությունը:

• Համեմատի՛ր Նիկոլայի ժամանակաշրջանի Ռուսաստանը արևմտաեվրոպական պետությունների և հասարակության հետ: Դատողություն արեք, թե որքանով են դրանք տարբերվում իրարից:

• Հիշե՛ք այս ժամանակաշրջանի հիմնական իրադարձություններն ու փոփոխությունները: Դատողություն արեք որքանով տրամաբանորեն է զարգանում Ռուսաստանը գլոբալ փոփոխությունների դարաշրջանում:

• Դատողություն արեք, թե ինչ շահեր ունեին օսմանյան հարցում Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և Ավստրիական կայսրությունը:

• Հիշե՛ք անցած նյութը: Օսմանյան կայսրությունն ինչո՞ւ ուներ բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտություն:

• Դատողությո՞ւն արե՞ք Օսմանյան կայսրության աշխարհագրական առանձնահատկությունների մասին: Ռազմավարական ո՞ր տարածքներն էր վերահսկում նա:

• Ծանոթացի՛ր աղբյուրին և ըստ դրա դատողությո՞ւն արա՞ ի՞նչ խնդիրների է բախվում Ֆրանսիան: Ի՞նչն է Նապոլեոնը համարում ամենակարևոր մարտահրավեր:

• Դատողությո՞ւն արե՞ք Ղրիմի պատերազմի մասին: Որքանո՞վ գլոբալ էր այս իրադարձությունն այն ժամանակվա աշխարհի համար: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

• Դատողությո՞ւն արե՞ք Ղրիմի պատերազմի տարածական բնութագրերի մասին: Ո՞ր աշխարհագրական տարածքներում է այն տեղի ունեցել, որո՞նք են եղել այս տարածքներից յուրաքանչյուրում կողմերի ռազմավարական շահերը:

• Դատողությո՞ւն արե՞ք, թե ինչպես են արտացոլվել արդյունաբերական հեղափոխությունը և այս ժամանակաշրջանի համաաշխարհային հասարակական-տնտեսական փոփոխությունները ռազմական արվեստի վրա:

• Դատողությո՞ւն արե՞ք Ղրիմի պատերազմում Ռուսաստանի պարտության պատճառների մասին: Պատճառները բաժանե՛ք քաղաքական, տնտեսական և հասարակական տեսանկյունից:

• Դատողությո՞ւն արե՞ք, թե Ղրիմի պատերազմի հետևանքներն ինչպես են ազդել Ռուսաստանի վրա:

• Դատողությո՞ւն արե՞ք, թե ինչու դարձավ արմատական քաղաքական-տնտեսական բարեփոխումների ու փոփոխությունների իրականացումը այս ժամանակահատվածում զարգացման և առաջընթացի հիմնական պայման:

Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար

Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:

• Ինչպե՞ս ես պլանավորում/պլանավորել ես համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նախատեսում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:

• Նախնական պլանն օգնե՞լ է քեզ աշխատանքային գործընթացում:

• Ի՞նչ մանրամասների վրա էիր կենտրոնացել բաժնետերերին ներկայացնելու հաշվետվություն պատրաստելու համար:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացն ընթացե՞լ է ըստ պլանի:

• Արդյոք անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:

• Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակը:

- Ինչն՞վ է ավարտված առաջադրանքի սկզբնական տարբերակը տարբերվում վերջնական տարբերակից:

- Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայմանը:

- Ի՞նչ արդյունք էք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:

- Ինչն՞ է ես կարծում, որ քո ստացած արդյունքը բաժնետերերին ներկայացնելու հաշվետվություն է:

Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել զեկուցումը: Ի՞նչ հարցի մասին ես արտահայտել քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:

- Ինչն՞ է ես կատարել համալիր առաջադրանքը:

- Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ էք դրել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:

- Ո՞ւմ համար և ինչն՞ է քո ստացած արդյունքը օգտակար և հետաքրքիր:

- Ի՞նչ գիտելիք ուսումնասիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Ի՞նչ կցանկանայիր իմանալ լրացուցիչ:

- Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո կատարած եզրակացությունների ճշմարտացիությունը/հետևողականությունը:

- Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար / համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:

Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: Ի՞նչն օգնեց ձեզ համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

- Ո՞ւմ էիք հաշվետու աշխատանքային գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ):

- Ի՞նչ ընդհանուր նպատակ ունեիք դու և քո ուսուցիչը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:

- Ձեր դասընկերների հետ ընդհանուր նպատակներ ունեի՞ք: Արդյոք ձեզ համար հետաքրքիր և հաճելի էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքը:

- Ի՞նչ էք արել ինքնուրույն համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:

- Ի՞նչն է ձեզ մոտ ստացվել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

- Ո՞վ և ինչպե՞ս օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում: Ո՞ւմ հետ ես համագործակցել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: (Ի՞նչ օգնություն էք ցուցաբերել ձեր դասընկերներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն էք ստացել նրանցից):

- Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս բխվե՞լ էք կոնֆլիկտային իրավիճակների: Ինչպե՞ս լուծեցիք կոնֆլիկտը:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս բախվե՞լ էք անորոշ իրավիճակների: Ինչպե՞ս եք կողմնորոշվել անորոշությամբ պատած հարցերում:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս հանդիպե՞լ էք տարբեր կարծիքների: Որքանո՞վ կարողացաք համագործակցել տարբեր հայացքներ ունեցող մարդկանց հետ: Ի՞նչը կօգնի քեզ ավելի լավ հասկանալու քո դասընկերների և ուսուցչի ասելիքը:

• Վերլուծե՛ք, թե ինչ կանոններ/օրենքներ և ինչու էիք պահպանում համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: (Օրինակ, որքանով էք կարողացել տարակարծությունների դեպքում կողմնորոշված լինել հիմնախնդրին, այլ ոչ թե՝ շփման մեջ գտնվող մարդկանց: Ինչո՞վ և ինչպե՞ս էիք արտահայտում հարգանք մարդկանց հանդեպ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս):

• Հասկանո՞ւմ եք ընտրված հարցի նկատմամբ նախկինում ձևավորված (դրական կամ բացասական) վերաբերմունքը: Ի՞նչն է պայմանավորում այսպիսի վերաբերմունքի ձևավորում:

• Ինչպե՞ս ուսուցչի և այլ աշակերտների հետ երկխոսությունն օգնեց ձեզ կատարել համալիր առաջադրանքը:

• Ինչպե՞ս կարող եմ ձեր հարցերն օգնել ձեր դասընկերներին ավելի լավ ձևակերպել իրենց ասելիքը:

• Ի՞նչ գործոններ նախատեսեցիք/պետք է նախատեսեք, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդիրներին լինի հասկանալի և ընդունելի (օրինակ՝ գործառնական խոսքի ակտերի ճիշտ ընտրություն (պատմել, նկարագրել, պատճառաբանել), զգայուն նրբություններ վեր հանել, ժեստեր, դիմախաղ, ոչ խոսքային ազդանշաններ օգտագործել):

• Դուք օգտագործե՞լ եք տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ինչպե՞ս է ձեզ օգնել տեխնոլոգիայի օգտագործումը:

• Ի՞նչ կանեիք այլ կերպ, եթե հիմա սկսեիք աշխատել առաջադրանքի վրա:

• Ըստ քեզ՝ ինչո՞վ է քո առաջադրանքը նման և ինչո՞վ է տարբերվում քո դասընկերների աշխատանքներից: Ինչպե՞ս կցուցաբերես այս տարբերությունները հարցերի տեսքով:

• Գնահատե՛ք, թե որքանով է ստացվել ձեզ մոտ այն, ինչ հանձնարարել էր ուսուցիչը:

Ամփոփիչ առաջադրանք N6 (Նմուշ)

Ամփոփիչ առաջադրանք 6. Պատմություն

Աշակերտի անունը և ազգանունը, դպրոց, դասարան -----

Արդյունաբերական հեղափոխություն -----

1. Ե՞րբ էր ընթանում արդյունաբերական հեղափոխությունը: Անվանե՛ք երեք պատմական իրադարձություն, որոնք նախորդում և հաջորդում էին արդյունաբերական հեղափոխությանը:

Երեք իրադարձություն, որոնք նախորդել են արդյունաբերական հեղափոխությանը	Ամիս, ամսաթիվ, տարեթիվ/ Ժամանակաշրջան	Երեք իրադարձություն, որոնք հաջորդել են արդյունաբերական հեղափոխությանը

2. Անվանե՛ք երեք աշխարհագրական օբյեկտ/վայր (Եվրոպայում, Ամերիկայում, Ասիայում), որոնց ծանոթացել եք արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանն ուսուճասիրելիս:

Աշխարհագրական օբյեկտի/ վայրի անվանումը	Ինչով էր այս օբյեկտը/վայրը կարևոր	Ինչպիսին էր արդյունաբերականացման աստիճանը

3. Որտեղի՞ց ունենք տեղեկություններ արդյունաբերական հեղափոխության մասին: Որքանո՞վ վստահելի են այս աղբյուրները:

Աղբյուրի տեսակի անվանումը	Ով է ստեղծել	Ինչի մասին է պատմում	Երբ և ինչու է ստեղծվել	Որքանով վստահելի է

4. Ինչպե՞ս արտացոլվեց արդյունաբերական հեղափոխությունը քաղաքական կյանքի գործընթացների վրա

Քաղաքական շահեր ունեցող նոր խմբեր	Համառոտ նկարագրություն	Գնահատել քաղաքական իրականության կախվածությունը արդյունաբերականացման աստիճանից	Համեմատություն այլ դարաշրջանների հետ

5. Ինչպե՞ս արդյունաբերական հեղափոխությունը փոխեց հասարակությանը:

Արդյունաբերական հեղափոխության արդյունքում ձևավորված նոր հասարակական խմբեր	Նրանց շահերը, ինքնությունը և մտահոգությունը	Փոփոխությունները ամենօրյա կյանքում	Փոփոխությունները տնտեսության մեջ	Համեմատություն մեկ այլ դարաշրջանի հասարակության հետ

Անվանե՛ք արդյունաբերական հեղափոխության հետ կապված երեք, ըստ ձեզ, ամենակարևոր փաստ/պատմական իրադարձություն, գործընթաց:

Պատմական իրադարձություն	Պատճառ	Հետևանք		Նշանակությունը Վրաստանի պատմության համար	Նշանակությունը համաշխարհային պատմության համար	Համանման իրադարձություն (փաստերով ամրապնդում)
		Դրական	Բացասական			

Գնահատման աղյուսակ որոշող գնահատման համար N1

<p>Դասարան՝ XI Թեմա՝ Երկարատև XIX դարը Հիմնական հարց՝ Արդյունաբերական հեղափոխություն Աշակերտ</p>		
<p>Նպատակային հասկացության հետ կապված գնահատման չափանիշներ Աշակերտը կարող է.</p>	<p>Առավելագույն միավորը</p>	<p>Մեկնաբանություն</p>
<p>Աղբյուր/մեկնաբանություն Դասակարգել արդյունաբերական հեղափոխության մասին տրված աղբյուրները և դրանց հիման վրա ուրվագծել համաշխարհային տնտեսական և հասարակական փոփոխությունները: Աղբյուրների մասին դատողություն անելիս որոշել դրանց կողմնակալության և հուսալիության աստիճանը, քննադատաբար գնահատել և արտահայտել սեփական դիրքորոշումը դրանց նկատմամբ:</p>	<p>1</p>	
<p>Ժամանակ Ուրվագծել արդյունաբերական հեղափոխությունը, որպես տնտեսական առումով նոր դարաշրջանի սկիզբ, և տարբերակել դրա բնութագրերը, վերլուծել այն գործոնները, որոնք արդյունաբերական հեղափոխությունը ներկայացրին որպես աշխարհում ընթացող փոփոխությունների պատմական դարաշրջանի կարևոր մաս:</p>	<p>1</p>	
<p>Տարածություն Ուրվագծել Եվրոպայի և Ամերիկայի այն տարածքը, որտեղ տեղի է ունեցել արդյունաբերական հեղափոխությունը, դատողություն անել այս պատմական իրադարձության ընթացքում աշխարհի տարբեր մասերում արդյունաբերականացման աստիճանի մասին՝ օգտագործելով ճիշտ պատմաաշխարհագրական տերմիններ:</p>		
<p>Հասարակություն Տարանջատել արդյունաբերական հեղափոխության արդյունքում ձևավորված հասարակական նոր խմբերը, դատողություն անել նրանց շահերի, ինքնության և մտահոգությունների մասին: Վերլուծել արդյունաբերական հեղափոխության արդյունքում հասարակական կյանքի բոլոր ուղղություններով տեղի ունեցած փոփոխությունները, համեմատել արդյունաբերական հեղափոխության արդյունքում ձևավորված նոր տիպի հասարակությունը մեկ այլ պատմական ժամանակաշրջանի հասարակության հետ:</p>	<p>1</p>	

<p>Իշխանություն Ուրվագծել արդյունաբերական հեղափոխության արդյունքում առաջացած նոր քաղաքական խմբերի բնութագրերը, վերլուծել քաղաքական իրականության կախվածությունը արդյունաբերականացման աստիճանից և համեմատել այն այլ դարաշրջանների հետ:</p>		
<p>Պատմական իրադարձություն/գործընթաց Դատողություն անել արդյունաբերական հեղափոխության պատճառների մասին և վերլուծել դրա դրական և բացասական կողմերը, որոշել Վրաստանի համար արդյունաբերական հեղափոխության գլոբալ նշանակությունը և գնահատել այն, անվանել արդյունաբերական հեղափոխության նման իրադարձություն և հիմնավորել:</p>		

Համալիր առաջադրանք N7. Թեմատիկ մատրիցա

Թեման՝ «Երկարատև XIX դար»

Նպատակային հասկացություն՝ Պատմական իրադարձություն (Արդյունք 3,4,5,6):
Ենթահասկացություն (ընդհանուր)՝ պատերազմ, պատմական անհատ, բարեփոխումներ:
Ենթահասկացություն (մասնավոր)՝ Իտալական ազգայնականություն, Գերմանական ազգայնականություն, Առաջին իտալական ազատագրական պատերազմը, Երկրորդ իտալական ազատագրական պատերազմը, Կամիլո Կավուր, Ջուզեպպե Գարիբալդի, Օտտո ֆոն Բիսմարկ, Ավստրո-պրուսական պատերազմը, Ֆրանս-պրուսական պատերազմը, Դեմոկրատները, հանրապետականները Ամերիկայում, Ամերիկյան քաղաքացիական պատերազմը, Աբրահամ Լինքոլն, Ափիոնային պատերազմներ, Մայձիի բարեփոխումները: **Ենթահարց՝** Միասնական Իտալիայի ստեղծումը, Գերմանիայի միավորումը, Ամերիկայի քաղաքացիական պատերազմի պատճառներն ու հետևանքները, Չինաստանը և Ճապոնիան XIX դարում:

Նպատակային հասկացություն՝ Հասարակություն (Արդյունք 1,2,3,4,5,6): **Ենթահասկացություն (ընդհանուր)՝** առօրյա կյանք: **Ենթահասկացություն (մասնավոր)՝** իտալական հասարակություն, գերմանական հասարակություն, ամերիկյան հասարակություն, չինական հասարակություն, Ճապոնական հասարակություն: **Ենթահարց՝** Կոնֆլիկտներ հասարակության և պետության միջև, Պառակտված հասարակության միավորումը մեկ պետության մեջ, Ամերիկյան հանրության շահերը, մտահոգությունները, քաղաքական-տնտեսական բնութագրերը, Փոփոխություններ Ճապոնական և չինական հասարակության մեջ XIX դարի II երկրորդ կեսին:

Նպատակային հասկացություն՝ Պատմական աղբյուր (Արդյունք 1,2,4,5), **Ենթահասկացություն (ընդհանուր)՝** պատմողական աղբյուրներ, փաստաթղթեր, պատմական քարտեզներ, նկարազարդումներ: **Ենթահասկացություն (ընդհանուր)՝** Յոհան Գոտլիբ Ֆիխտե, գերմանացի փիլիսոփա, դիմումը գերմանացի ժողովրդին, 1806 թ., Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը՝ ավստրիացի դիվանագետների վերաբերմունքի մասին Գերմանիայի վերամիավորման հարցի նկատմամբ: Քաղվածք անձնական նամակագրությունից, Բիսմարկը Ֆրանսիայի հետ զինադադարի մասին, անձնական նամակագրություն, Մոնրոյի դոկտրինը, հատված, Չինական կայսրի 1820

թվականի էղիկտը, Իտալիայի միավորման քարտեզ, Գերմանիայի միավորման քարտեզ, Ամերիկայի տարածքային ընդլայնման քարտեզ, Ափիոնային պատերազմի քարտեզ, տարբեր նկարազարդումներ և համապատասխան ծաղրանկարներ: **Ենթահարց՝** հասարակության մեջ տարածված աղբյուրների նոր տեսակներ, աղբյուրների հուսալիության որոշում:

Հարցը՝ Աշխարհը XIX դարի II կեսում

Հանգուցային հարց. Հոդվածի միջոցով ինչպե՞ս ներկայացնեմ աշխարհի հասարակությունը, նրանց շահերը, ինքնությունը և վարքագծի կանոնները XIX դարի II կեսում այնպես, որ ցույց տամ «Երկարատև XIX դարի» դարաշրջանային բնութագրերը:

Համալիր առաջադրանք.

Պատկերացրո՛ւ, որ հետազոտող ես, որն ուսումնասիրում է XIX դարի երկրորդ կեսի հասարակությունը՝ նրա ինքնությունը, շահերը, մտահոգությունները: Գրի՛ր հոդված, որում կվերլուծես XIX դարի երկրորդ կեսի հասարակությունն այն ժամանակաշրջանի աշխարհում:

<p>Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ</p> <p>Աշակերտը պետք է գիտակցի, որ.</p> <p>Պատմական իրադարձություն.</p> <ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր պատմական իրադարձություն ունի իր սեփական պատճառը/ պատճառները և հետևանքը/ հետևանքները: • Պատմաբանները հաճախ բանավիճում են պատմական իրադարձությունների պատճառների և հետևանքների շուրջ: • Որոշ պատմական իրադարձություններ ունեն տեղական, իսկ որոշները՝ համաշխարհային նշանակություն: • Պատմական փաստերն ու իրադարձությունները կարելի է տիպաբանորեն խմբավորել ըստ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային չափանիշների: 	<p>Գնահատման չափանիշ</p> <p>Պատմական իրադարձություն.</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել XIX դարի II կեսում ընթացող պատմական իրադարձությունների պատճառները, հետևանքները և նշանակությունը (կ.պ. 1, 3): • Դատողություն անել այն պատճառների մասին, որոնք հնարավոր է պայմանավորում են XIX դարում աշխարհում ընթացող պատմական իրադարձությունների պատճառների, հետևանքների և նշանակության տարբեր կերպ գնահատում (կ.պ. 2): • Ընդգծել XIX դարի II կեսում աշխարհում ընթացող համաշխարհային պատմական իրադարձությունների/ գործընթացների էական բնութագրերը, համեմատել նմանատիպ այլ պատմական իրադարձության հետ (կ.պ. 4): 	<p>Աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցո՛յց տվեք.</p> <ul style="list-style-type: none"> • Ինչ գործոններ հանգեցրին ազգային պետությունների (Իտալիա, Գերմանիա և այլն) ձևավորմանը. ինչպես է փոխվում այս ժամանակաշրջանի հասարակությունը՝ նրա շահերը, ինքնությունը, մտահոգությունները և վարքագծի կանոնները: Ինչն է առաջացնում հակամարտություն հասարակության և պետության միջև: Ինչպես է տեղի ունենում մասնատված հասարակության համախմբումը մեկ պետության մեջ: (Հասարակություն 1, 2, Պատմական իրադարձություն 1, 4) • Ինչ նշանով է բաժանված ամերիկյան հասարակությունը քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում: Տարանջատի՛ր նրանց շահերը, մտահոգությունները, քաղաքական և տնտեսական բնութագրերը: (Հասարակություն 1, 2)
---	--	--

<p>Հասարակություն.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ: • Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի: • Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծ հասարակության մաս են կազմում: • Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ: <p>Պատմական աղբյուր.</p> <ul style="list-style-type: none"> • Պատմաբանները անցյալի մասին տեղեկատվությունը վերցնում են աղբյուրներից: • Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինոնկար-լուսանկար-ֆոնոփաստաթուղթ): • Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես հուսալի: • Աղբյուրներից ստացված տեղեկատվությունը ոչ միանշանակ է, ուստի և դրանց մեկնաբանությունը պատմաբանների շրջանում քննարկման առարկա է: 	<p>Հասարակություն.</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել իտալական, գերմանական, ամերիկյան, չինական, ճապոնական հասարակությունների ինքնության միջոցները, բացահայտել յուրաքանչյուր խմբի անդամների ընդհանուր շահերն ու մտահոգությունները (կ.պ. 1, 3): • Վերլուծել, թե ինչ սոցիալական շերտերից էր կազմված է XIX դարի աշխարհի հասարակությունը (կ.պ. 3): • Վերլուծել, թե ինչպիսի վերաբերմունք ունեին եվրոպական, ամերիկյան և Արևելյան աշխարհի միության անդամներն այլ հասարակական խմբերի նկատմամբ (կ.պ. 4): <p>Պատմական աղբյուր</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել աղբյուրները, որոնց միջոցով կարելի է կարևոր տեղեկություններ գտնել՝ կապված XIX դարի պատմական իրադարձությունների և գործընթացների հետ (կ.պ. 1): • Համեմատել և իրար հետ կապել տարբեր տեսակի աղբյուրները և ստացված տեղեկությունները (կ.պ. 2): • Վերլուծել այն գործոնները, որոնք պայմանավորում են աղբյուրների հուսալիություն/կողմնակալություն (կ.պ. 3): • Համեմատել նույն աղբյուրի կատարված վերլուծության հիման վրա արված տարբեր մեկնաբանությունները, դատողություն անել դրանց ուժեղ և թույլ կողմերի մասին (կ.պ. 4): 	<ul style="list-style-type: none"> • Ինչպե՞ս են փոխվում Ճապոնիա և Չինաստան պետություններն ու հասարակությունը XIX դարի երկրորդ կեսին: (Հասարակություն 1,3) • Ինչպիսի՞ աղբյուրներ կան այս դարաշրջանի իրադարձությունների մասին: Որքա՞ն համոզիչ են դրանք: (Աղբյուր 1, 4)
--	--	--

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

Փուլ I. Ծանոթանալ համալիր առաջադրանքի պայմանին

Ռեսուրսներ/քննարկվելիք քեյսեր.

Ռեսուրս 1. Դասագիրք (Աշակերտի գիրք), Պատմություն: XI դասարան, «Սուլակաուրիի հրատարակչություն»: Պարագրաֆներ՝ §25-26, 27-28, 29-30-31, 32-33, 34-35

Ռեսուրս 2. Էլ. ռեսուրսներ

• Ինչպե՞ս գրել լավ հոդված

<https://files.fm/f/u458bfhbm>

• Հոդվածի բնութագրերի աշխատանքային թերթիկ

• Պատմական աղբյուրներ: Silk School

<https://youtube.com/watch?v=t6IqvF7dz4&si=EnSIkaIECMiOmarE>

• Պատմություն: Դիմորդի ժամ: Իտալիայի միավորումը: Հեռուստադպրոց

<https://youtube.com/watch?v=Zv8CRnxD3lw&si=EnSIkaIECMiOmarE>

• Իտալիայի միավորումը: Silk School

<https://youtube.com/watch?v=b-Hz3NeQXW4&si=EnSIkaIECMiOmarE>

• Գերմանիայի միավորումը և հակասությունները Եվրոպայում 19-րդ դարում: Silk School

https://youtube.com/watch?v=1PaZ_0MCnAY&si=EnSIkaIECMiOmarE

• Իտալիայի միավորումը: Փողկաստ

• https://youtube.com/watch?v=4BkEEmc3_U8&si=EnSIkaIECMiOmarE

• Պատմություն: Դիմորդի ժամ: Գերմանիայի միավորումը: Հեռուստադպրոց

<https://youtube.com/watch?v=43pXucUdglE&si=EnSIkaIECMiOmarE>

• Պատմություն: Դիմորդի ժամ: Ամերիկայի քաղաքացիական պատերազմը: Հեռուստադպրոց

<https://youtube.com/watch?v=Cgk3rxCbWzk&si=EnSIkaIECMiOmarE>

• Ամերիկայի քաղաքացիական պատերազմը: <https://youtube.com/watch?v=CGqtxykUiwo&si=EnSIkaIECMiOmarE>

• Քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում: Silk School

<https://youtube.com/watch?v=SgZDR8uBrj8&si=EnSIkaIECMiOmarE>

• Ճապոնիա և Չինաստան պետությունները և հասարակությունը XIX դարի երկրորդ կեսին: GH-CHistory

<https://youtube.com/watch?v=5R5oZzC65JM&si=EnSIkaIECMiOmarE>

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը.

Իտալիայի միավորումը, Գերմանիայի միավորումը

- Ինչպե՞ս էք սահմանում «ազգայնականություն» տերմինը:
- Ի՞նչ գիտեք Իտալիայի միավորման մասին:
- Ինչպե՞ս էք սահմանում «Ռիսորջիմենտո» տերմինը:
- Ի՞նչ էք իմացել Ջուզեպպե Գարիբալդիի մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):
- Ձեր կարծիքով, որո՞նք էին Իտալիայի միավորման, Գերմանիայի միավորման պատճառները:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը

- Ի՞նչ էք իմացել ստրկության մասին:
- Կարդացե՛լ էք «Քեոի Թոմի խրճիթը» երկը: Փոխանցե՛ք ձեր զգացմունքները վեպում պատմված պատմության մասին:
- Եթե իմացել էք, ե՞րբ է վերացվել ստրկությունը Ամերիկայում:
- Ի՞նչ էք իմացել հյուսիսային և հարավային նահանգների միջև քաղաքացիական պատերազմի մասին:

Չինաստան, Ճապոնիա

- Լսե՛լ էք որևէ բան Չինաստանի պատմությունից:
- Ի՞նչ գիտեք Չինական Մեծ պարսպի մասին:
- Ի՞նչ էք լսել Ափիոնային պատերազմների մասին: Նշե՛ք տեղեկության աղբյուրը (դասագիրք, գեղարվեստական գրականություն, գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր, համակարգչային խաղեր):
- Երբևէ լսե՛լ էք սամուրայների մասին:

Ժամանակային գիծ

- Ի՞նչ է հոդվածը:
- Ո՞րն է հոդվածը գրելու նպատակը:
- Ի՞նչ տեղեկատվություն է տրամադրում ռեսուրսը հոդված ստեղծելու մասին:
- Ընդգծե՛ք հոդվածի առանձնահատկությունները:
- Ո՞րն է տարբերությունը զեկույցի և հոդվածի միջև:
- Ինչպե՞ս կարող ենք հոդվածի միջոցով ներկայացնել մեր տեսակետները: (Ռեսուրս 2)

Համալիր առաջադրանք

Ձեր խոսքերով ձևակերպե՛ք, թե ինչին է վերաբերում այսօր տրված առաջադրանքը, որի վրա պետք է աշխատեք մի քանի դասերի ընթացքում:

Մեկ այլ ժամանակ կատարե՛լ եք նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Նպատակային հասկացություն՝ Պատմական իրադարձություն:

Ենթահասկացություն (ընդհանուր)՝ ազգայնականություն, պատերազմ, պատմական անհատ, բարեփոխումներ, քաղաքական կուսակցություններ:

Ենթահարց՝ Միասնական Իտալիայի ստեղծումը, Գերմանիայի միավորումը, Ամերիկայի քաղաքացիական պատերազմի պատճառներն ու հետևանքները, Չինաստանը և Ճապոնիան XIX դարում:

Նպատակային հասկացություն՝ Հասարակություն:

Ենթահասկացություն (ընդհանուր)՝ առօրյա կյանք:

Ենթահարց՝ Հակամարտություններ հասարակության և պետության միջև, Պառակտված հասարակության միավորումը մեկ պետության մեջ, Ամերիկայի հասարակության շահերը, մտահոգությունները, քաղաքական-տնտեսական բնութագրերը, Փոփոխություններ ճապոնական և չինական հասարակության մեջ XIX դարի երկրորդ կեսին:

Նպատակային հասկացություն՝ Պատմական աղբյուր:

Ենթահասկացություն (ընդհանուր)՝ պատմողական աղբյուրներ, փաստաթղթեր, պատմական քարտեզներ, նկարազարդումներ:

Ենթահարց՝ Հասարակության մեջ տարածված աղբյուրների նոր տեսակներ, աղբյուրների հուսալիության աստիճանի որոշում:

Քայլ 1

Ինչ գործոններ հանգեցրին ազգային պետությունների (Իտալիա, Գերմանիա և այլն) ձևավորման: Ինչպես է փոխվում այս ժամանակահատվածի հասարակությունը՝ նրանց շահերը, ինքնությունը, մտահոգությունները և վարքագծի կանոնները: Ինչն է առաջացնում հակամարտություն հասարակության և պետության միջև: Ինչպես է բաժանված հասարակությունը միավորվում մեկ պետության մեջ: (Հասարակություն 1, 2), Պատմական իրադարձություն 1-4)

• Հիշեցե՛ք նախորդ նյութը և դատողություն՝ արեք XIX դարում Եվրոպայի վրա ազդած համաշխարհային իրադարձությունների մասին:

• Դատողություն՝ արեք, թե ինչ պատճառներ են հանգեցրել լայնածավալ ապստամբությունների և հեղափոխությունների ամբողջ Եվրոպայում:

• Դատողություն՝ արեք, թե ինչպես է փոխվում XIX դարի հասարակությունը: Ինչ գործոններ են առաջացնում այդ փոփոխությունները: Այս գործոնները բաժանի՛ր քաղաքական, տնտեսական և հասարակական տեսանկյունից:

- Դատողություն ան արեք, թե ինչպես է փոխվում պետության հայեցակարգն ու ըմբռնումը XIX դարում:
- Դատողություն ան արեք, թե որքանով են այս դարաշրջանի իրադարձությունները գլոբալ՝ սահմանափակված էին միայն մեկ կոնկրետ տարածությամբ, թե՞ ընդգրկում են այն ժամանակվա աշխարհի զգալի մասը:
- Շլեզվիգի և Հոլշտեյնի օրինակով քննարկե՛ք, թե որքանով էր տարբերվում բնակչության և իշխող վերնախավերի ըմբռնումը պետության մասին:
- Դատողություն ան արեք, թե ինչ տեսակի աղբյուրներ են հայտնվում այս ժամանակաշրջանի հասարակական մշակույթում: Ինչպե՞ս են այդ աղբյուրները պայմանավորում ազգային ինքնության ձևավորում:
- Դատողություն ան արեք ազգայնականության ֆրանսիական և գերմանական ըմբռնումների տարբերության մասին:
- Դատողություն ան արեք, թե ազգայնականության որ մոդելի վրա է հիմնված ժամանակակից Արևմտյան աշխարհը:
- Դատողություն ան արեք, թե ինչու էր գերմանական ազգայնականությունը համարվում իր դարաշրջանում առաջադեմ երևույթ: Ի՞նչ գործոններ են նպաստել այս ընկալմանը:
- Դատողություն ան արեք, թե ինչ ռիսկեր կարող է ունենալ մշակութային ազգայնականությունը:
- Դատողություն ան արեք, թե ինչու էր Իտալիայի միավորումը բարդ խնդիր: Գնահատի՛ր Իտալիայի քաղաքական իրավիճակը:
- Դատողություն ան արեք Իտալիայի միավորմանը խոչընդոտող պայմանների մասին: Ո՞ր մեծ տերություններն ունեին շահեր Իտալիայում:
- Դատողություն ան արեք, թե ինչպիսի աղբյուրներ էին օգտագործում Իտալիայի միավորման կողմնակիցները՝ իրենց տեսլականները հասարակությանը հասցնելու համար:
- Դատողություն ան արեք, թե ինչ մեթոդներով կարող էին պայքարել Իտալիայի ազատության կողմնակիցները:
- Դատողություն ան արեք, թե ինչպես է Սարդինիա-Պիեմոնտ թագավորությանը հաջողվել դաշնակիցներ գտնել:
- Դատողություն ան արեք, թե ինչու Ավստրիական կայսրությունը մասց առանց դաշնակիցների: Ի՞նչ շահեր ունեին մեծ տերությունները՝ կապված Իտալիայի և Ավստրիայի հետ:
- Դատողություն ան արեք, թե որքանով Սարդինիա-Պիեմոնտ թագավորությունը կարող է մրցել Ավստրիական կայսրության հետ առանց դաշնակիցների:
- Դատողություն ան արեք, թե ինչ հետաքրքրություն ուներ Ֆրանսիան Իտալիայի հարցում:
- Դատողություն ան արեք, թե ինչ գործոններ հանգեցրին Իտալիայի միավորմանը:
- Դատողություն ան արեք, թե ինչու են տարբերվում Գարիբալդիի և Կավուրի պատկերացումները Իտալիայի ապագայի վերաբերյալ:
- Քարտեզի հիման վրա քննարկե՛ք, թե ինչպես է բաժանվում գերմանական ժողովուրդներով բնակեցված տարածքը:

- Դատողություն արեք, թե որն էր նրանց ինքնության հիմնական միջոցը: Ի՞նչ գործոններ էին բաժանում և միավորում տարբեր քաղաքական միավորների բաժանված գերմանական աշխարհը:
- Դատողություն արեք, թե ինչ գործոններ խանգարեցին միասնական Գերմանիայի ստեղծմանը:
- Վերհիշե՛ք նախորդ նյութը և դատողություն արեք, թե ինչու չէր հաջողվում միասնական պետություն ստեղծել մինչև ազգային շարժումներ սկսվելը, միապետական համակարգի պայմաններում:
- Դատողություն արեք փոքր և մեծ գերմանական լուծումների մասին՝ Գերմանիայի միավորման ո՞ր ճանապարհն էր համարում ավելի իրատեսական: Ինչո՞ւ: Հիմնավորի՛ր թո պատասխանը:
- Ադրյուրի հիման վրա դատողություն արեք, թե ինչպես է Բիսմարկն ընկալում Միասնական Գերմանիայի գաղափարը:
- Դատողություն արեք իրական քաղաքականության մասին: Ի՞նչն է այն տարբերում գաղափարական քաղաքականությունից: Հիշե՛ք օրինակներ ժամանակակից աշխարհում:
- Ադրյուրի հիման վրա դատողություն արեք, թե ինչպես է գնահատում Բիսմարկն Ավստրիայի քաղաքականությունը:
- Դատողություն արեք, թե որ պատճառներն են հանգեցրել Պրուսիայի համար Գերմանիան միավորելու բարենպաստ պահի ստեղծման:
- Դատողություն արեք, թե որն էր Ավստրիայի հետ պատերազմի հիմնական արդյունքը:
- Դատողություն արեք, թե ինչ շահեր ուներ Ֆրանսիան՝ կապված Գերմանիայի հետ:
- Կազմակերպե՛ք փոքրիկ քննարկում. Ըստ քեզ, որքանո՞վ էր ճիշտ Նապոլեոն III-ը, երբ չներգրավվեց պատերազմի մեջ:
- Դատողություն արեք, թե որ գործոնները հանգեցրին Պրուսիայի հաղթանակին Ավստրիական կայսրության և Ֆրանսիայի դեմ պատերազմներում:
- Վերլուծե՛ք ադրյուրը. ինչո՞ւ է Բիսմարկը համարում, որ Ֆրանսիայի հետ նոր հակամարտությունն անխուսափելի է: Ըստ ձեզ՝ որքանո՞վ է համոզիչ նրա փաստարկը:
- Դատողություն արեք, թե ինչպես է փոխվել Եվրոպան Գերմանիայի ստեղծմամբ: Հիշե՛ք անցած նյութը և դատողություն արեք այլ մեծ պետությունների շահերի մասին այս տարածաշրջանում:
- Դատողություն արեք, թե ինչպես է Գերմանիայի ստեղծումը ազդել Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի վրա:
- Վերլուծե՛ք ադրյուրը՝ ինչո՞ւ էր Գերմանիայում դժվար իրավիճակ: Բացատրի՛ր աշխարհագրական, քաղաքական և պատմական առանձնահատկությունները:
- Դատողություն արեք թե ինչու էին Գերմանիային անհրաժեշտ դաշնակիցներ: Հիշե՛ք անցած նյութը և քարտեզի հիման վրա դատողություն արեք, թե որ Եվրոպական պետությունները կարող էին լինել Գերմանիայի պոտենցիալ դաշնակիցներ: Ինչո՞ւ: Հիմնավորի՛ր թո պատասխանը:

Քայլ 2

Ինչի՞ հիման վրա է ամերիկյան հասարակությունը բաժանված Քաղաքացիական պատերազմի ժամանակ: Ընդգծի՛ր նրանց շահերը, մտահոգությունները, քաղաքական-տնտեսական բնութագրերը: (Հասարակություն 1, 2)

• Դատողություն արեք, թե ինչն է ստեղծում քաղաքական դիմակայություն ֆեդերալիստների և հանրապետականների միջև: Դատողություն արեք այս հակասության պատճառների մասին:

• Դատողություն արեք, թե հասարակության որ խմբերի վրա էր հիմնվում այս երկու կուսակցությունների դիրքորոշումը: Որքանո՞վ էին նրանք արտահայտում հասարակական դիրքորոշումը, նրանց շահերը, մտահոգությունները և ինքնությունը:

• Դատողություն արեք, թե որքան լավ են տարբեր հարցերի շուրջ կուսակցական քննարկումները ժողովրդավարության համար: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

• Հիշե՛ք անցած նյութը և պատմական համատեքստը: Դատողություն արեք, թե ինչու էին նահանգների և դաշնային կառավարության միջև հարաբերությունները Ամերիկայի համար ամենադժվար քաղաքական խնդիրը:

• Դատողություն արեք, թե ինչպես էր բաշխվում իշխանությունը ամերիկյան քաղաքական համակարգի ներսում: Որքանո՞վ էր այս համակարգը ժողովրդավարական:

• Դատողություն արեք, թե ինչու են քաղաքական և հանրային քննարկումները և փոխզիջումների մշակույթը նպաստում ժողովրդավարական պետության և հասարակության ստեղծմանը:

• Դատողություն արեք, թե որքան կարևոր է իշխանության/կառավարության փոփոխությունը ժողովրդավարական պետության համար:

• Հիշե՛ք անցած նյութը և դատողություն արեք, թե ինչպես է տարբերվում նույն ժամանակաշրջանի եվրոպական և ամերիկյան քաղաքական մշակույթը:

• Հիշե՛ք նախորդ նյութը և դատողություն արեք, թե ինչու և ինչպես են ամերիկացիները կարողացել արագ ընդլայնվել մայրցամաքում:

• Դատողություն արեք, թե ինչու են մայրցամաքում ստեղծվել բարենպաստ պայմաններ ամերիկյան նահանգների հաջորդ, արագ ընդլայնման համար:

• Դատողություն արեք, թե որոնք էին Անգլիայի հետ Երկրորդ անկախության պատերազմի հիմնական արդյունքները:

• Դատողություն արեք, թե որքան կարևոր էր այս պատերազմը ընդհանուր ամերիկյան ինքնության ձևավորման համար: Ինչո՞ւ: Բացատրի՛ր քո դիրքորոշումը:

• Դատողություն արեք Մոնրոյի դոկտրինի մասին: Ինչպե՞ս է այն բաժանում այդ դարաշրջանի աշխարհը: Որքանո՞վ ճիշտ է նրա դիրքորոշումը: Հիմնավորի՛ր քո պատասխանը:

• Դատողություն արեք Ամերիկայի դեպի արևմուտք էքսպանսիայի դրական և բացասական հետևանքների մասին:

• Դատողություն արեք հյուսիսային և հարավային նահանգների միջև հակամարտության պատճառների մասին: Այս պատճառները բաժանե՞ք տնտեսական, քաղաքական, իրավական գործոնների:

• Փոքրիկ քննարկում անցկացրե՛ք և դատողությո՛ւն արեք, թե ինչպես և որքանով էր հնարավոր կարգավորել այս հակամարտությունը:

• Դատողությո՛ւն արեք ստրկության և դրա բացասական հետևանքների մասին: Փոքրիկ քննարկում կազմակերպե՛ք. Ի՞նչ ճանապարհ է անցել մարդկությունը այս հարցը վերաիմաստավորելու համար:

• Դատողությո՛ւն արեք, թե որքանով են միմյանց հետ կապված նոր տարածքների արագ յուրացումն ու ստրկության փորձը: Ինչո՞ւ ստրկությունն ավելի վաղ չեղարկվեց Եվրոպայում, քան Ամերիկայում: Դատողությո՛ւն արեք տնտեսական և քաղաքական գործոնների մասին:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչ գործոններ հանգեցրին հյուսիսային նահանգների հաղթանակին քաղաքացիական պատերազմում:

• Դատողությո՛ւն արեք, թե որոնք են արդյունաբերական հասարակության առավելությունները: Ինչպե՞ս է արդյունաբերականացումն ազդում պատերազմական գործողությունների վրա:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու է Աբրահամ Լինքոլնը համարվում Ամերիկայի նշանավոր նախագահներից մեկը:

• Դատողությո՛ւն արեք, թե որքան կարևոր էր վերակառուցման քաղաքականությունը: Ինչո՞ւ: Որքանո՞վ է դա նպաստել ժողովրդավարական պետության և հասարակության կառուցմանը:

• Դատողությո՛ւն արեք, թե որոնք էին Ամերիկայի քաղաքացիական պատերազմի հիմնական արդյունքները:

Քայլ 3

Ինչպե՞ս են փոխվում Ճապոնիայի և Չինաստանի պետությունն ու հասարակությունը XIX դարի երկրորդ կեսին: (Հասարակություն 1-3)

• Դատողությո՛ւն արեք, թե XVII-XVIII դարերում որ գործոնները հանգեցրին Ցին դինաստիայի կառավարման ժամանակ Չինաստանի հզորացման: Ընդգծի՛ր քաղաքական և տնտեսական պատճառները:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչ կարող էր բերել Չինաստանին երկրի աստիճանական փակումը և եվրոպական երկրների հետ քաղաքական-տնտեսական հարաբերությունների սահմանափակումը:

• Դատողությո՛ւն արեք Չինաստանի տնտեսության բնութագրերի մասին: Ինչպիսի՞ տնտեսությունն ուներ Չինաստանը, և ինչպե՞ս են դրա վրա ազդել կլիմայական և աշխարհագրական գործոնները:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչ վտանգ էր հանդիսանում Չինաստանի երկրագործական տնտեսության համար բնակչության արագ աճը: Հիշե՛ք անցած նյութը՝ ինչպես լուծեցին այս խնդիրը եվրոպական պետությունները:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչ վտանգ էր ստեղծում չինական տնտեսության և հասարակության համար ափիոնը:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու Չինաստանը Բրիտանիայի հետ ուներ դրական առևտրային հաշվեկշիռ (այսինքն՝ նա ավելի շատ արտահանում էր, քան ներմուծում):

• Դատողությո՛ւն արեք, թե ինչու Չինաստանը չէր կարող պատերազմել զարգացած եվրոպական տերությունների հետ:

• Դատողությո՛ւն արեք, թե ինչպես կարող էր Չինաստանը լուծել իր խնդիրները: Հիշե՛ք անցած նյութը և այլ պետությունների փորձն այս դարաշրջանում:

• Դատողություն ան արեք, թե ինչու Չինաստանի պարտությունը եվրոպական տերությունների հետ հանգեցրեց ավելի մեծ սոցիալական և քաղաքական փակվածության:

• Քննարկե՛ք, թե ինչու էր սյոգունների կառավարումը առաջին փուլում հաջող: Ինչի՞ վրա էր այն հիմնվում:

• Համեմատե՛ք Ճապոնիայի կառավարման ու տնտեսական համակարգը եվրոպական երկրների հետ: Դատողություն ան արեք նմանությունների ու տարբերությունների մասին: Որքանո՞վ էին Հեռավոր Արևելքն ու Եվրոպան գնում զարգացման նմանատիպ ճանապարհով:

• Դատողություն ան արեք, թե ինչ պատճառներ են հանգեցրել Ճապոնիայի մեկուսացմանը: Ի՞նչ հետևանքներ կարող է դա բերել Ճապոնիային:

• Դատողություն ան արեք, թե ինչու էր Ճապոնիան ետ փում Արևմտյան երկրներից: Դատողություն ան արեք քաղաքական, տնտեսական և հասարակական պատճառների մասին:

• Վերհիշե՛ք նախորդ նյութը և համեմատե՛ք Ճապոնիան այս ժամանակաշրջանի Եվրոպայի և Ամերիկայի հետ: Դատողություն ան արեք նմանությունների ու տարբերությունների մասին:

• Դատողություն ան արեք Ճապոնիայի բարեփոխումների մասին: Ինչպիսի՞ բարեփոխումներ են իրականացվել, և ի՞նչ արդյունքներ են ունեցել դրանք:

• Դատողություն ան արեք, թե ինչու բարեփոխումները հանգեցրին Ճապոնիայի արագ վերելքին: Համեմատի՛ր Ճապոնիայի և Չինաստանի արձագանքները ճգնաժամին:

• Դատողություն ան արեք, թե ինչու հզորացումից հետո Ճապոնիայում աճեցին ազգայնական տրամադրությունները:

• Դատողություն ան արեք, թե ինչ էր նշանակում Ճապոնիայի համար Բրիտանիայի հետ դաշինք ձևակերպելը:

Քայլ 4

Ինչպիսի աղբյուրներ կան այս դարաշրջանի իրադարձությունների մասին: Որքանո՞վ համոզիչ են դրանք: (Աղբյուր 1-4)

• Դատողություն ան արեք աղբյուրների այն տեսակների մասին, որոնք հայտնվում են XIX դարի եվրոպական հասարակական մշակույթում:

• Ինչպե՞ս են այս աղբյուրները որոշում ազգային ինքնության ձևավորումը:

• Գնահատում. որքանո՞վ լավ էր այն գործում:

• Համեմատի՛ր մեկ այլ դարաշրջանի հետ:

• Դատողություն ան արեք ձեր նշած աղբյուրների հավաստիության աստիճանի մասին:

• Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով է ստեղծվել այս ծաղրանկարը:

• Քաղաքական գործչի ո՞ր հատկանիշն է ծաղրված ծաղրանկարում: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը՝ հիմնվելով ծաղրանկարում տրված տեղեկությունների վրա:

• Ձեր կարծիքով, ի՞նչ հանգամանքներ բերեցին այս գաղափարը ծաղրելու անհրաժեշտության: Պատասխանն այնպայման հիմնավորե՛ք միայն ըստ ծաղրանկարում տրված տեղեկության:

• Որքանո՞վ են հավաստի ծաղրանկարում տրված տեղեկությունները, ինչո՞ւ էք այդպես կարծում: Հիմնավորի՛ր:

- Այս ծաղրանկարի ուսուսմասսիությունն ինչպե՞ս կօգնի պատմաբանին:

Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից սրված հարցերը՝ կոնկրետ աշակերտի հետ անհատական աշխատանք վարելու համար

Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:

- Ինչպե՞ս ես պլանավորում/պլանավորել ես համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նախատեսում աշխատանքային գործընթացը պլանավորելիս:
- Նախնական պլանն օգնե՞լ է քեզ աշխատանքային գործընթացում:
- Ի՞նչ մանրամասների վրա էիր կենտրոնացել հողված պատրաստելու համար:
- Համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացն ընթացե՞լ է ըստ պլանի:
- Արդյոք անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակը:
- Ինչո՞վ է ավարտված առաջադրանքի սկզբնական տարբերակը տարբերվում վերջնական տարբերակից:
- Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայմանը:
- Ի՞նչ արդյունք էք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:
- Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը հողված է:

Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել հողվածը: Ի՞նչ հարցի մասին ես արտահայտել քո գիտելիքը համալիր առաջադրանքի միջոցով:

- Ինչո՞ւ ես կատարել համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ էք դրել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
- Ո՞ւմ համար և ինչո՞ւ է քո ստացած արդյունքը օգտակար և հետաքրքիր:
- Ի՞նչ գիտելիք ուսուսմասսիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Ի՞նչ կցանկանայիր իմանալ լրացուցիչ:
- Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո կատարած եզրակացությունների ճշմարտացիությունը/հետևողականությունը:
- Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսուսմական նյութը ավելի լավ հասկանալու համար / համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:

Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: Ի՞նչն օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

- Ո՞ւմ էիք հաշվետու աշխատանքային գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ):

• Ի՞նչ ընդհանուր նպատակ ունեիք դու և քո ուսուցիչը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:

• Ձեր դասընկերների հետ ընդհանուր նպատակներ ունեի՞ք: Արդյոք ձեզ համար հետաքրքիր և հաճելի էր համալիր առաջադրանքի վրա աշխատանքը:

• Ի՞նչ էք արել ինքնուրույն համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:

• Ի՞նչն է ձեզ մոտ ստացվել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:

• Ո՞վ և ինչպե՞ս օգնեց համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում: Ո՞ւմ հետ ես համագործակցել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: (Ի՞նչ օգնություն եք կցուցաբերել ձեր դասընկերներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն եք ստացել նրանցից):

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ էք կոնֆլիկտային իրավիճակների: Ինչպե՞ս ու լուծեցիք կոնֆլիկտը:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ բախվե՞լ էք անորոշ իրավիճակների: Ինչպե՞ս եք կողմնորոշվել անորոշությամբ պատած հարցերում:

• Համալիր առաջադրանքի վրա աշխատելիս՝ հանդիպե՞լ էք տարբեր կարծիքների: Որքանո՞վ կարողացաք համագործակցել տարբեր հայացքներ ունեցող մարդկանց հետ: Ի՞նչը կօգնի քեզ ավելի լավ հասկանալու քո դասընկերների և ուսուցչի ասելիքը:

• Վերլուծե՛ք, թե ինչ կանոններ/օրենքներ և ինչու էիք պահպանում համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: (Օրինակ, որքանով էք կարողացել տարակարծությունների դեպքում կողմնորոշված լինել հիփոսախնդրին, այլ ոչ թե՝ շփման մեջ գտնվող մարդկանց: Ինչո՞վ և ինչպե՞ս էիք արտահայտում հարգանք մարդկանց հանդեպ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս):

• Հասկանո՞ւմ եք ընտրված հարցի նկատմամբ նախկինում ձևավորված (դրական կամ բացասական) վերաբերմունքը: Ի՞նչն է պայմանավորում այսպիսի վերաբերմունքի ձևավորում:

• Ինչպե՞ս ուսուցչի և այլ աշակերտների հետ երկխոսությունն օգնեց ձեզ կատարել համալիր առաջադրանքը:

• Ինչպե՞ս կարող են ձեր հարցերն օգնել ձեր դասընկերներին ավելի լավ ձևակերպել իրենց ասելիքը:

• Ի՞նչ գործոններ նախատեսեցիք/պետք է նախատեսեք, որպեսզի ձեր համալիր առաջադրանքի շնորհանդեսը ունկնդիրներին լինի հասկանալի և ընդունելի (օրինակ՝ գործառնական խոսքի ակտերի ճիշտ ընտրություն (պատմել, նկարագրել, պատճառաբանել), զգայուն նրբություններ վեր հանել, ժեստեր, դիմախոսող, ոչ խոսքային ազդանշաններ օգտագործել):

• Դուք օգտագործե՞լ էք տեխնոլոգիաներ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ինչպե՞ս է ձեզ օգնել տեխնոլոգիայի օգտագործումը:

• Ի՞նչ կանեիք այլ կերպ, եթե հիմա սկսեիք աշխատել առաջադրանքի վրա:

• Ըստ քեզ՝ ինչո՞վ է քո առաջադրանքը նման և ինչո՞վ է տարբերվում քո դասընկերների աշխատանքներից: Ինչպե՞ս կցուցաբերես այս տարբերությունները հարցերի տեսքով:

• Գնահատե՛ք, թե որքանով է ստացվել ձեզ մոտ այն, ինչ հանձնարարել էր ուսուցիչը:

Ամփոփիչ առաջադրանք 1. Պատմություն

Աշակերտի անունը և ազգանունը, դպրոց, դասարան -----

Գերմանիայի միավորումը -----

1. Ե՞րբ է միավորվել Գերմանիան: Անվանե՛ք երեք պատմական իրադարձություն, որոնք նախորդում և հաջորդում էին Գերմանիայի միավորմանը:

Երեք իրադարձություն, որոնք նախորդել են Գերմանիայի միավորմանը	Ամիս, ամսաթիվ, տարեթիվ/ ժամանակաշրջան	Երեք իրադարձություն, որոնք հաջորդել են Գերմանիայի միավորմանը

2. Անվանե՛ք երեք աշխարհագրական օբյեկտ/վայր (Եվրոպայում), որոնց մասին սովորել եք Գերմանիայի միավորումն ուսուցասիրելիս:

Աշխարհագրական օբյեկտի/ վայրի անվանումը մինչև Գերմանիայի միավորումը	Ինչով էր այս վայրը կարևոր	Անվանված վայրի/օբյեկտի աշխարհագրական, տնտեսական և քաղաքական բնութագրերը

3. Որտեղի՞ց ունենք տեղեկություններ Գերմանիայի միավորման, մայրացամաքային Եվրոպայում նրա, որպես հզորագույն պետություն ձևավորման և նոր մեծ դաշինքների ստեղծման մասին: Որքանո՞վ վստահելի են այս աղբյուրները:

Աղբյուրի տեսակի անվանումը	Ով է ստեղծել	Ինչի մասին է պատմում	Երբ և ինչու է ստեղծվել	Որքանով վստահելի է

4. Իշխանության ինչպիսի՞ մոդելով էին կառավարվում գերմանական քաղաքական միավորները, այնուհետև՝ Գերմանական կայսրությունը:

	Իշխանության մոդելը	Համառոտ նկարագրություն	Գնահատում՝ որքանով լավ էր գործում	Համեմատություն այլ դարաշրջանի հետ
Տարբեր գերմանական քաղաքական միավորներ				
Գերմանական կայսրություն				

5. Ինչպիսի՞ն էր Գերմանականա հասարակությունը մինչև միավորվելը

Սոցիալական խավ/խումբ	Ինքնության միջոցներ	Գործոններ, որոնք բաժանում էին գերմանական հասարակությունը	Գործոններ, որոնք միավորում էին գերմանական հասարակությունը	Համեմատություն այլ պատմական ժամանակաշրջանի հետ
----------------------	---------------------	--	---	--

6. Անվանե՛ք Գերմանիայի միավորման հետ կապված, ըստ ձեզ, ամենակարևոր փաստը/պատմական իրադարձությունը/գործընթացը:

Պատմական իրադարձություն	Պատճառ	Հետևանքներ	Գործոններ, որոնք խանգարում էին Գերմանիայի միավորմանը	Նշանակությունը համաշխարհային պատմության համար	Նմանատիպ իրադարձություն (ամրապնդում փաստերով)

Գնահատման աղյուսակ որոշող գնահատման համար N7

<p>Դասարան՝ XI Թեմա՝ Երկարատև XIX դարը Հիմնական հարց՝ Գերմանիայի միավորումը</p> <p>Աշակերտ</p>		
<p>Նպատակային հասկացության հետ կապված գնահատման չափանիշներ</p> <p>Աշակերտը կարող է.</p>	<p>Առավելագույն միավորը</p>	<p>Մեկնաբանություն</p>
<p>Աղբյուր/մեկնաբանություն</p> <p>Դասակարգել Գերմանիայի միավորման վերաբերյալ տրված աղբյուրները և դրանց հիման վրա դատողություն անել Գերմանիայի միավորման և մայրցամաքային Եվրոպայում որպես ամենաուժեղ պետություն ձևավորման, ինչպես նաև՝ եվրոպական մեծ կոալիցիաների ստեղծման մասին, որոնք Եվրոպան կանգնեցրին մեծ պատերազմի վտանգի առաջ: Աղբյուրները քննարկելիս՝ որոշել նրանց կողմնակալության և հուսալիության աստիճանը, քննադատաբար գնահատել և դրանց վերաբերյալ արտահայտել սեփական դիրքորոշումը:</p>	<p>1</p>	

<p>Ժամանակ</p> <p>Ուրվագծել Գերմանիայի միավորման, որպես Եվրոպայում մեծ փոփոխություններ սկսվելու, դարաշրջան և տարբերակել նրա բնութագրերը, վերլուծել այն գործոնները, որոնք Գերմանիայի միավորումը ներկայացրին որպես պատմական դարաշրջանի կարևոր մաս:</p>	1	
<p>Տարածություն</p> <p>Ուրվագծել Գերմանիայի այն տարածքային արեալը, որը մինչև Գերմանիայի միավորումը բնակեցված էր գերմանացի ժողովրդով, վերլուծել այս տարածքների աշխարհագրական, քաղաքական և պատմական բնութագրերը, Գերմանիայի միավորման մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ աշխարհագրական տերմիններ:</p>		
<p>Հասարակություն</p> <p>Բնութագրել միավորմանը մասնակցող գերմանական հասարակությունը, դատողություն անել նրանց ինքնության միջոցների վերաբերյալ, ընդգծել այն գործոնները, որոնք բաժանում էին և նաև միավորում տարբեր քաղաքական միավորների բաժանված գերմանական հասարակությունը, համեմատել մեկ այլ պատմական ժամանակաշրջանի հասարակության հետ:</p>	1	
<p>Իշխանություն</p> <p>Դատողություն անել գերմանական տարբեր քաղաքական միավորներում և Գերմանական կայսրությունում իշխանության մոդելի մասին և գնահատել այն, համեմատել այլ դարաշրջանների կառավարման ձևերի հետ:</p>		
<p>Պատմական իրադարձություն/գործընթաց</p> <p>Դատողություն անել Միացյալ Գերմանիայի ստեղծման պատճառների և հետևանքների մասին և ընդգծել նրա, որպես պատմական իրադարձության, քաղաքական նշանակությունը, վերլուծել այն գործոնները, որոնք խանգարում էին Գերմանիայի միավորմանը, գնահատել Դանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի հետ պատերազմների հետևանքները, գնահատել Գերմանիայի ստեղծման հետևանքով Եվրոպայում առաջացած փոփոխությունները, անվանել Միացյալ Գերմանիայի ստեղծմանը նման մի իրադարձություն և ամրապնդել փաստերով:</p>		

Գնահատման աղյուսակ զարգացնող գնահատման համար (նմուշ)

Համալիր առաջադրանք N1

Պատկերացրո՛ւ, որ XI դարում Հռոմի պապի արքունիքում աշխատող մի գիտնական ես, Պապի խորհրդականը: Քեզ մոտ գաղափար է ծնվել խաչակրաց արշավանքներ սկսելու մասին: Հռոմի պապին գրավոր զեկուցում ներկայացրո՛ւ, որում ձևակերպված կլինի, թե երբ և ինչու պետք է սկսվեն խաչակրաց արշավանքները, ինչը պետք է լինի արշավանքների նպատակը, և ինչ կտա այն մի կողմից՝ Պապի իշխանությանը, մյուս կողմից՝ եվրոպական աշխարհին:

Աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցո՛լյց տվեք.

- Դատողություն՝ ան արեք, թե ինչպիսին էր Եվրոպայում քաղաքական հավասարակշռությունը հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև, և ինչ կտային խաչակրաց արշավանքներն ինչպես պապերին, այնպես էլ Եվրոպայի քաղաքական առաջնորդներին: (Իշխանություն, կայ.պ.2,3, Տարածություն. 3, Աղբյուր, կայ.պ. 1):

- Ի՞նչ դեր պետք է ունենա Հռոմի պապը խաչակրաց արշավանքներում, և ինչպե՞ս է դա արտացոլվում Հռոմի պապի իշխանության վրա: (Իշխանություն. կայ.պ. 3, 4, Աղբյուր, կայ.պ.2):

- Բնութագրե՛ք տարածությունը և աշխարհագրական միջավայրը, որտեղ պետք է իրականավի խաչակրաց արշավանք, և այս տարածության տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար: (Տարածություն, կայ.պ. 1, 2, 3, Աղբյուր, կայ.պ. 1, 2)

- Նկարագրե՛ք Բյուզանդիայի և թյուրքական աշխարհի վիճակն այս դարաշրջանում և դատողություն՝ ան արեք, թե ինչ գործոններ կնպաստեն խաչակիրների հաջողությանը: (Իշխանություն, կայ.պ. 1,2,3, Աղբյուր, կայ.պ.1,2):

- Ինչ տնտեսական ու քաղաքական օգուտ կբերեն խաչակրաց արշավանքները քրիստոնեական տարածությանը: (Իշխանություն, կայ.պ. 2, 4, Տարածություն, կայ.պ. 2, 3, Աղբյուր, կայ.պ. 3,4):

Նպատակային հասկացություն Ենթահարց.	Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ	
<p>1. Նպատակային հասկացություն. Տարածություն. Տարածություն, որտեղ տեղի են ունեցել խաչակրաց արշավանքները և դրա տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար:</p>	<p>1. Աշխարհագրական միջավայրը և աշխարհագրական գիտելիքներն ազդում են մարդկային հասարակության զարգացման վրա: 2. Շփման հաճախականությունը հանգեցնում է մեծ/փոքր սոցիալ-մշակութային տարածքների ստեղծման: 3. Կոնկրետ պատմաաշխարհագրական տարածքներ ունեն որոշակի տնտեսական, ռազմավարական և մշակութային նշանակություն:</p>	<p>• Բնութագրել եվրոպացիների համար Լևանտի տարածաշրջանի նշանակությունը, գործոնները, որոնք պայմանավորում են այս կոնկրետ տարածքի նշանակությունը (կ.պ. 1,3): • Վերլուծել խաչակրաց արշավանքների դարաշրջանում առկա աշխարհագրական գիտելիքը (կ.պ. 1,3):</p>

Ուսուցչի մեկնաբանությունը

Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբե- րությունները:	Բազմակառու- ցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ գույքորդություն /պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքավորված գույքորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:

Ճշգրտում. Դու քեզ պետք է պատկերացնեիր Հռոմի պապի խորհրդական: Պապին գրավոր ներկայացնելու համար պատրաստեիր զեկույց: Քո գրավոր զեկույցում պետք է ներկայացնեիր և դատողություն անեիր այն տարածքի մասին, որտեղ տեղի էին ունեցել խաչակրաց արշավանքները, ուշադրությունդ պետք է կենտրոնացնեիր նրա վրա, թե ինչ կրոնական և տնտեսական կարևորություն ունեւր Լևանտի տարածաշրջանը, և ինչու էր եվրոպացիների համար կարևոր այս տարածքի վերահսկողությունը:

<p>Խրախուսանք: Դու հիանալի հաղթահարեցիր առաջադրանքը: Քո կողմից ստեղծված զեկույցից հստակ երևում է, որ մանրակրկիտ և խորապես հասկացել ես հարցը, մշակել չափանիշները և առանձնացրել այն տարածքի քաղաքական, տնտեսական, կրոնական և հասարակական բնութագրերը, որտեղ իրականացվել են խաչակրաց արշավանքները: Հետաքրքիր է, քո պատմածը եվրոպացիների համար նշված տարածքի պահպանման և վերահսկողության կարևորության մասին: Հետաքրքիր են քո փաստարկները կապված նրա հետ, թե ինչու էր Անատոլիական տարածքի կորուստը կործանարար Բյուզանդական կայսրության համար: Աշխատությանդ ինքնատիպություն են ավելացնում խնդրի վերաբերյալ քո գնահատականները: Աշխատանքդ զարգացած է տրամաբանորեն, օգտագործում ես ճիշտ տերմիններ, զեկույցում քո ուսուսումնասիրած նյութն ընդհանրացված է և կապված նման պատմական գործընթացի հետ կապված տարածության հետ:</p>	<p>Խրախուսանք: Դու հիանալի հաղթահարեցիր առաջադրանքը: Քո կողմից ստեղծված Հռոմի պապին ներկայացվելիք զեկույցից հստակ երևում է, որ մանրակրկիտ և խորապես հասկացել ես հարցը: Ձեկույցում մշակված են առաջադրանքում տրված չափանիշները: Դատողություն ես անում և համեմատում աշխարհագրական տարածությունները: Վերլուծում ես Լևանտի տարածաշրջանի տնտեսական, մշակութային և կրոնական կարևորությունը եվրոպական աշխարհի համար: Խորհուրդ. Որպեսզի խորությամբ պատկերացնես, ավելի լավ կլինի տարածությունը, որտեղ իրականացվել են խաչակրաց արշավանքները, համեմատես մեկ այլ պատմական իրադարձության հետ և համապատասխանաբար դատողություն անես նշված իրադարձությանը բնորոշ տարածքի տնտեսական, մշակութային և կրոնական նշանակության մասին եվրոպական աշխարհի համար:</p>	<p>Խրախուսանք: Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Կարողացել ես դասագրքում տրված համապատասխան պարագրաֆները և կապել ես առաջադրանքի հետ, ինչը երևաց քո կողմից գրված զեկույցի մեջ: Խորհուրդ. Քո աշխատանքը ինքնատիպություն ձեռք կբերեր, եթե հստակ ցույց տայիր առաջադրանքում տրված չափանիշները: Օրինակ բնութագրե՛ք տարածքն ու աշխարհագրական միջավայրը, որտեղ պետք է իրականացվի խաչակրաց արշավանք և այդ տարածաշրջանի տնտեսական, մշակութային և կրոնական կարևորությունը եվրոպական աշխարհի համար: Ուշադրություն դարձրու, որ զեկույցում տեղեկությունները փոխանցես տրամաբանորեն և ճիշտ, գնահատես խաչակիրների հետաքրքրությունը «Սուրբ Երկրի» նկատմամբ:</p>	<p>Խրախուսանք: Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Նաև գրել ես Հռոմի պապին ներկայացվելիք զեկույցը: Խորհուրդ. Քո կողմից ներկայացված զեկույցի մեջ երևում է, որ չես կարողացել դասագրքում տրված ուսուսումնական նյութը: Խնդրում եմ, օգտվես դասագրքից, և կոնկրետացնես այն տարածքը, որտեղ իրականացվել են խաչակրաց արշավանքները, դատողություն անես և իրար հետ կապակցես տեղեկություններ, որոնք կօգնեն ըմբռնել հարցը: Օրինակ՝ ինչու են եվրոպացի միապետները հետաքրքրվում «Սուրբ Երկրով», աշխարհագրական ինչ շահ ունեին նրանք այս տարածքը գրավելու համար:</p>	<p>Խրախուսանք: Դու անպայման կկարողանաս կատարել այս առաջադրանքը: Խորհուրդ. Որպեսզի կատարես առաջադրանքը, նախ հիշի՛ր թե ինչպես է գրվում զեկույցը, լսի՛ր հեռուստադարձից դասը «Խաչակրաց արշավանքները»: Առանձին նշի՛ր խաչակրաց արշավանքների մասնակից պետություններում եղած իշխանության ձևերը, լեզվատիմացման միջոցները: Քեզ արդեն ծանոթ տեղեկությունները համեմատի՛ր դասագրքում տրված նյութի հետ: Մտածի՛ր, թե ուրիշ որտեղից կարող ես ավելի շատ տեղեկություններ իմանալ, թե ինչպես էին անդրադառնում խաչակրաց արշավանքներն ու դրանց արդյունքները Պապի իշխանության վրա:</p>
---	---	--	--	---

<p>2. Նպատակային հասկացություն. Իշխանություն</p> <p>Ենթահարց. 1. Հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև առկա քաղաքական հավասարակշռությունը Եվրոպայում: 2. Պապերն ընդդեմ կայսրերի: 3. Բավարական համայնքի համար ընդունելի իշխանության միջոցներ: 4. Պապի ազդեցությունը խաչակրաց արշավանքների վրա, Խաչակրաց արշավանքների ազդեցությունը եվրոպական միապետների իշխանության վրա:</p>	<p>1. Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է: 2. Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական խմբերի միջև: Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները: 3. Իշխանություն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը: 4. Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/հասարակական խմբերի միջև: 5. Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է:</p>	<ul style="list-style-type: none"> • Բնութագրել խաչակրաց արշավանքների դարաշրջանի իշխանության խորհրդանշանները, կառավարման ձևերը և կառուցվածքները, դրանք համեմատել այլ պատմական դարաշրջանների հետ (կ.պ. 1,3) • Վերլուծել խաչակրաց արշավանքների դարաշրջանում իշխանության համար պայքարի առանձնահատկությունները: (կ.պ. 1,3,4) • Վերլուծել ով/ինչն էր քննարկվում խաչակրաց արշավանքների դարաշրջանում իշխանության աղբյուր: Ի՞նչն էր հանդիսանում իշխանության լեգիտիմության հիմք (կ.պ. 4)
---	--	--

Ուսուցչի մեկնաբանությունը

<p>Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:</p>	<p>Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:</p>	<p>Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ գույգորդություն /պատկերացում/ կապված քննարկվելիք հարցի հետ:</p>	<p>Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված գույգորդություն/ պատկերացում/ կապված քննարկվելիք հարցի հետ:</p>	<p>Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:</p>
---	--	---	---	--

Ճշգրտում. Դու քեզ պետք է պատկերացնեիր Հռոմի պապի խորհրդական: Պապին գրավոր ներկայացնելու համար պատրաստեիր զեկույց: Քո գրավոր զեկույցում պետք է ներկայացնեիր և դատողություն անեիր Եվրոպայի կրոնական և աշխարհիկ ուժերի միջև քաղաքական հավասարակշռության մասին և ըմբռնեիր, թե ինչ կտային խաչակրաց արշավանքներն ինչպես Հռոմի պապերին, այնպես էլ Եվրոպայի քաղաքական առաջնորդներին, պետք է վերլուծեիր Հռոմի պապի դերը խաչակրաց արշավանքներում և մտորեիր, թե ինչպես է դա ազդում Պապի իշխանության վրա:

<p>Իրախուսանք: Դու հիանալի հաղթանակներցիր առաջադրանքը: Քու կողմից ստեղծված զեկույցից հստակ երևում է, որ մանրակրկիտ և խորապես հասկացել ես հարցը, մշակել չափանիշներն ու վերլուծել Պապի ազդեցությունը</p> <p>Խաչակրաց արշավանքների վրա և քննարկել ես, թե ինչպես էր այդ իրադարձությունն արտացոլվում իշխանության վրա: Քու</p> <p>զեկույցում առանձնացրել ես և քննադատաբար գնահատել, թե իշխանության ինչ տեսակ էր բնորոշ խաչակրաց պետություններին, և նրանք ինչու չկարողացան ձևավորել եվրոպական մոդել: Հետաքրքիր են քո փաստարկները</p> <p>կապված նրա հետ, թե ինչի վրա էր հիմնվում Պապի և կայսրերի իշխանությունը, որոնք էին նրանց</p> <p>Իշխանության պահպանման համար անհրաժեշտ միջոցները: Աշխատության ինքնատիպություն են շնորհում խնդրի շուրջ արտահայտված քո յուրօրինակ գնահատումները</p> <p>գերմանական պետություններին բնորոշ իշխանության տեսակի մասին, հետաքրքիր է նաև քո դիրքորոշումը և դատողությունը Բյուզանդական կայսրության կառավարման համակարգում առկա խնդիրների վերաբերյալ,</p>	<p>Իրախուսանք: Դու հիանալի հաղթանակներցիր առաջադրանքը: Քու կողմից ստեղծված զեկույցում լավ երևում է, որ հարցը հիմնավոր ըմբռնել ես: Զեկույցում մշակված են առաջադրանքում սովորած չափանիշները: Դատողություն ես անում և համեմատում</p> <p>խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի իշխանության խորհրդանիշները, կառավարման ձևերը և կառուցվածքները, ընդգծում ես իշխանության համար պայքարի առանձնահատկությունները և ուշադրությունը կենտրոնացնում</p> <p>Իշխանության լեգիտիմացման հիմքերի վրա:</p> <p>Խորհուրդ: Որպեսզի հարցն ավելի լավ պատկերացնես, ավելի լավ կլինի զեկույցում դատողություն անես</p> <p>Եվրոպայում հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև քաղաքական հավասարակշռության մասին և գնահատես,</p>	<p>Իրախուսանք: Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Կարողացել ես դասագրքում սովորած համապատասխան պարագրաֆները և կապել ես առաջադրանքի հետ, ինչը երևաց քո կողմից գրված զեկույցի մեջ:</p> <p>Խորհուրդ: Քու աշխատանքը ինքնատիպություն ձևառք կբերեր, եթե հստակ ցույց տայիր առաջադրանքում սովորած չափանիշները: Օրինակ դատողություն արեք, թե ինչպիսին էր Եվրոպայում հոգևոր և աշխարհիկ ուժերի միջև քաղաքական հավասարակշռությունը, և ինչ կտային խաչակրաց արշավանքներն ինչպես պայերին, այնպես էլ Եվրոպայի քաղաքական առաջնություններին,</p> <p>Ինչ դեր ուներ Հռոմի պապը խաչակրաց արշավանքներում, և դա ինչպես է արտացոլվում Պապի իշխանության վրա: Ուշադրություն և աշխարհիկ ուժերի միջև քաղաքական հավասարակշռության մասին և գնահատես,</p>	<p>Իրախուսանք: Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Ես Հռոմի պապին և խորապես հասկացել ես Հռոմի պապի ներկայացվելիք զեկույցը:</p> <p>Խորհուրդ: Քու կողմից ներկայացված զեկույցի մեջ երևում է, որ չես կարողացել դասագրքում սովորած ուսումնական նյութը: Խնդրում եմ, օգտվես դասագրքից և կոնկրետացնես Հռոմի պապի դերը խաչակրաց արշավանքներում, դատողություն անես և համեմատես խաչակրաց արշավանքների ֆեոդալիզմի հարաբերակցությունը</p> <p>խաչակրաց արշավանքների դարաշրջանի իշխանության խորհրդանիշները, վերլուծես այս դարաշրջանին բնորոշ կառավարման ձևերը: Դատողություն արա և իրար հետ կապակցի՝ քո այն տեղեկությունները, որոնք կօգնեն ըմբռնել հարցը:</p>	<p>Իրախուսանք: Դու անպայման կկարողանաս կատարել այս առաջադրանքը: Խորհուրդ: Որպեսզի կատարես առաջադրանքը, նախ՝ հիշի՛ր թե ինչպես է գրվում զեկույցը, լսի՛ր հեռուստադրոցի դասը՝ «Խաչակրաց արշավանքները»: Առանձին նշի՛ր այն պետությունները, որոնք մասնակցում էին խաչակրաց արշավանքներին և այն պետությունները որոնց տարածքները գրավելու համար կռվում էին</p> <p>խաչակիրները: Քեզ արդեն ծանոթ տեղեկությունները համեմատի՛ր դասագրքում սրված նյութի հետ: Մտածի՛ր, թե ուրիշ որտեղից կարող ես տեղեկություններ իմանալ այն տարածքների մասին, որտեղ ընթանում էին խաչակրաց պատերազմները</p>
--	--	---	---	--

<p>ողջունելի է հարցի վերաբերյալ քո գնահատականների ներկայացումը ինչպես քաջվոր թյուրքական, այնպես էլ նրանց կողմից նվաճված իսլամական հասարակության իշխանության միջոցների մասին և դրա կապելը ուսումնասիրվելիք հարցի հետ: Աշխատությունը զարգացած է տրամաբանորեն, օգտագործում էս ճիշտ տերմիններ, գեկուցում քո ուսումնասիրած նյութն ընդհանրացված է և համեմատած այլ դարաշրջանում գոյություն ունեցած մոդելի և իշխանության միջոցների հետ:</p>	<p>Թե ինչ կտային խաչակրաց արշավանքները ինչպես պատերիս, այնպես էլ Եվրոպայի քաղաքական առաջնորդներին, վերլուծես Հռոմի պապի դերը խաչակրաց արշավանքներում և մտածես, թե դա ինչպես կարտացոլվի Պապի իշխանության վրա:</p>		
---	--	--	--

Նպատակային հասկացություն Ենթահարց.	Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներ	
<p>Պատմական աղբյուր. 1. Ինչ են Եվրոպական և Արևելյան պատմական տարբեր աղբյուրները պատմում Պապի և կայսեր միջև գոյություն ունեցող հակամարտության և խաչակրաց արշավանքների մասին:</p>	<ul style="list-style-type: none"> • Պատմաբանները անցյալի մասին տեղեկատվությունը վերցնում են աղբյուրներից: • Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինոնկար-լուսանկար-ֆոնոփաստաթուղթ): • Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես հուսալի: • Աղբյուրներից ստացված տեղեկատվությունը ոչ միանշանակ է, ուստի և դրանց մեկնաբանությունը պատմաբանների շրջանում քննարկման առարկա է: 	<ul style="list-style-type: none"> • Վերլուծել աղբյուրները, որոնց միջոցով գտնվում են տեղեկություններ խաչակրաց արշավանքների մասին: (կ.պ. 1) • Համեմատել և միմյանց հետ կապել տարբեր տեսակի աղբյուրները և ձեռք բերված տեղեկությունները: (կ.պ. 2) • Վերլուծել այն գործոնները, որոնք պայմանավորում են աղբյուրների հուսալիություն/կողմնակալություն: (կ.պ.3); • Համեմատել միևնույն աղբյուրի վերլուծության հիման վրա կատարված տարբեր մեկնաբանություններ, դատողություն անել դրանց ուժեղ և թույլ կողմերի մասին (կ.պ. 4):

Ուսուցչի մեկնաբանությունը

Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնույթագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:	Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբե- րությունները:	Բազմակառու- ցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ գույքորոշություն /պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Ունի կառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքավորված գույքորոշություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ:	Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:
---	--	--	--	--

Ճշգրտում. Դու քեզ պետք է պատկերացնեիր Հռոմի պապի խորհրդական: Պատրաստեիր Պապին գրավոր ներկայացնելու համար զեկույց: Քո գրավոր զեկույցում պետք ներկայացնեիր և դատողություն անելի Եվրոպայի կրոնական և աշխարհիկ ուժերի միջև քաղաքական հավասարակշռության մասին և ըմբռնելի, թե ինչ կտային խաչակրաց արշավանքներն ինչպես Հռոմի պապերին, այնպես էլ Եվրոպայի քաղաքական առաջնորդներին, պետք է վերլուծելի Հռոմի պապի դերը խաչակրաց արշավանքներում և մտորելի, թե ինչպես է դա ազդում Պապի իշխանության վրա:

<p>Խրախուսանք: Դու հիանալի հաղթահարեցիր առաջադրանքը: Քո կողմից ստեղծված գեկույցից հստակ երևում է, որ մանրակրկիտ և խորապես հասկացել ես հարցը, մշակել չափանիշները և վերլուծել Պապի ազդեցությունը Խաչակրաց արշավանքների վրա, քննարկել ես, թե ինչ են պատմում եվրոպական և արևելյան աղբյուրները Պապի և կայսեր միջև միջև եղած հակամարտության և արշավանքների մասին, վերլուծել ես պատմողական աղբյուրները, փաստաթղթերը, պատմական քարտեզները, նկարագրությունները, մանավորապես՝ Վիդուլինդ, Մաքսանների պատմությունը, X դ. Մագրեբորգի արքեպիսկոպոս Աղալբերտի արձանագրությունը, X դ.: Ժակ Լը Գոֆֆ, ժամանակակից ֆրանսիացի պատմաբան, ֆրանկների կայսր Լյուդվիգ II-ի պատասխան նամակը Բյուզանդիայի կայսր Վասիլ I-ին Մակեդոնյան դինաստիայից: 871 թվական, Հուստինիանոս Մեծ՝ Պրագմատիկ պատժամիջոցը, 554 թվական: Պապ Գրիգոր II-ի նամակը Լևոն III կայսերը, 727 թվական: Օտտոն I-ի երդումը Հովհաննես XII պապին, 961 թվական, Հռոմ պապ Լևոն VIII-ի հրամանագիրը: 963 թվական: Հռոմի պապի ընտրության հրամանագիրը 1059 թ., Գրիգոր VII-ի ներումը կայսր Հայնրիխին հունվարի 28, 1077 թ.: Հենրիխի երդումը Հռոմի պապին: 1077 թվականի հունվար: Կանոսա: Վորմսի կոնկորդատը: 1122 թվական: Հուստինիանոս կայսեր ֆալաքացիական օրենսգրքի նախաբանը: VI դար: Հատված Լևոն III Բսավրացու նամակից: VIII դ.: Կոստանտին VII Օրիասանդիի գրառումը: X դար: Օղուզական Էպոսը «Գորգուս պապի գիրքը»: IX-XII դդ. Աբու ալ-Ֆարաջ Իբն-Լիքի:</p>	<p>Խրախուսանք: Դու հիանալի հաղթահարեցիր առաջադրանքը: Քո կողմից ստեղծված Հռոմի պապին առաջադրանքը և արևելյան աղբյուրները Պապի և կայսեր միջև եղած հիմնավոր ըմբռնել ես: Ջեկույցում մշակված են առաջադրանքում տրված չափանիշները: Համեմատում ես խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանին բնորոշ տարբեր տեսակի եվրոպական և արևելյան աղբյուրների տեսակներն ու ժամերը:</p>	<p>Խրախուսանք: Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Կարողացել ես դասագրքում տրված համապատասխան պարագրաֆները և կապել ես առաջադրանքի հետ, ինչը երևաց քո կողմից գրված գեկույցի մեջ: Խորհուրդ: Քո աշխատանքը ինքնատիպություն ձևեր կերեր, եթե հստակ ցույց տայիր առաջադրանքում տրված չափանիշները, որոնք իրարից տարբերակում են տարբեր տեսակի եվրոպական և արևելյան աղբյուրները, կկապելիր դրանցից ստացված վստահեվի տեղեկությունները խաչակրաց արշավանքների հետ և կարտահայտելիր</p>	<p>Խրախուսանք: Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Նաև գրել ես Հռոմի պապին ներկայացվելիք գեկույցը: Խորհուրդ: Քո կողմից ներկայացված գեկույցի մեջ երևում է, որ չես կարողացել դասագրքում տրված ուսումնական նյութը: Խնդրում եմ, օգտվես դասագրքից, ուշադիր ծանոթանաս խաչակրաց արշավանքների իստեղծված պատմական աղբյուրները, դրանք դասավորի՛ր ըստ ժանրերի և համեմատի՛ր դրանցից ստացած տեղեկությունները, այնուհետև արտահատի՛ր քո կարծիքը, թե կապված դրանց հուսալիության հետ:</p>	<p>Խրախուսանք: Դու անսպասան կկարողանաս կատարել այս առաջադրանքը: Խորհուրդ: Որպեսզի կատարես առաջադրանքը, նայի՛ն հիշի՛ր թե ինչպես է գրվում գեկույցը, լսի՛ր հեռուստաաղբյուրի դասը «Նաչակրաց արշավանքները»: Առանձին նշի՛ր խաչակրաց արշավանքներին մասնակից պետություններում ստեղծված պատմական աղբյուրները, դրանք դասավորի՛ր ըստ ժանրերի և համեմատի՛ր դրանցից ստացած տեղեկությունները, այնուհետև արտահատի՛ր քո կարծիքը, թե կապված է վստահեալ աղբյուրներից ստացված տեղեկություններին,</p>
--	--	--	--	---

<p>XIII դ. սիրիացի պատմաբան, Ալեքսանդր Բայխաներ՝ ժամանակակից ավատորհացի բյուզանդագետ, Իբն ալ-Ասիր: XII դ արաբ հեղինակը նկարագրում է 1049 թվականի իրարարձությունը, որտեղ թուրքերի երկու առաջնորդները հանդիպում են միմյանց: Միքայել Աստալիատես՝ XI դարի բյուզանդացի պատմաբան: Պապ Ուրբան II-ի ելույթը 1095 թվականին, Կլերմոնի ժողովը, Ֆուլխերիոս Շարտրացին, Ֆրանկ ուխտավորների գործերը, XII դարի տարեգրություն, Ալեքսիոս Կոմենենոսի առաջարկը խաչակիրներին, Մատթեոս Եղեվիացի-Ուռնայեցի, XII դարի հայ պատմիչ: Ռոռշի ը օվյալ աղբյուրների տեսակները և որոշի ը այն մտեցումը, որը պայմանավորում է օվյալ աղբյուրների վստահելիությունը, ինչպես նաև՝ ուշադրություն դարձրու նրան, որ նման տեսակի աղբյուրների հուսալիությունը պայմանավորում են հենց աղբյուրի տեսակն ու ժանրային առանձնահատկությունը:</p> <p>Աշխատությունը զարգացած է տրամաբանորեն, օգտագործում են ճիշտ տերմիններ, զեկույցում քո ուսուսնասալիրած նյութն ընդհանրացված է և համեմատած այլ դարաշրջանում գոյություն ունեցած մոդելի և իշխանության միջոցների հետ:</p>	<p>Խորհուրդ. Ռրպեսզի հարցն ավելի խորքային պատկերացնես ավելի լավ կլինի զեկույցում դատողություն անես այն բնութագրերի մասին, որոնք պայմանավորում են քո կողմից անվանված աղբյուրների հուսալիությունը:</p>	<p>քո դիքորոշումը օվյալ աղբյուրների նկատմամբ: Ուշադրություն դարձրու, որ զեկույցում տեղեկությունները տրամաբանորեն և ճիշտ փոխանցես:</p>	<p>թե՛ ոչ: Քո դիքորոշումն ամրապնդի ը թեկույզ մեկ փաստարկով:</p>
--	---	---	---

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ԹԵՄԱ 1. ՄԻՋՆԱԴԱՐ

ԳԼՈՒԽ 1. Հոռմի գաղափարը միջնադարում և խաչակրաց արշավանքների դարաշրջանը

§1-2. Ինչ մարտահրավերների առջև հայտնվեց Բյուզանդական կայսրությանը Մակեդոնական դինաստիայից հետո

Նշված պարագրաֆի մշակման առաջին փուլում առավել կարևոր է նախնական գիտելիքների ակտիվացումը: Խնդրենք աշակերտներին հիշել, թե ինչ իրադարձություններով է բնութագրվել Բյուզանդիայի պատմության մեջ Մակեդոնական դինաստիան ներկայացնող կայսրերի դարաշրջանը, և ինչպիսին էր կայսրության ռազմական, քաղաքական և տնտեսական վիճակը XI դարի սկզբում: Նշված հիմքը ստեղծելուց հետո կարող ենք սկսել պարագրաֆում ներկայացված նյութերի ուսումնասիրությունն ու մշակումը:

Որպեսզի պարագրաֆում ներկայացված երկարաժամկետ նպատակը (նպատակային հասկացություն. ժամանակ) պատշաճ կերպով մշակվի, կարևոր է առանձնացնել նշված դարաշրջանի կարևոր առանձնահատկությունները: Առավելապես պետք է կարևորել այն քաղաքական իրավիճակը, որ ստեղծվել էր գահի շուրջ անմիջապես Կոստանդնուպոլսում՝ Մակեդոնական դինաստիայի տիրապետությունից հետո: Մենք պետք է աշակերտներին հստակ ներկայացնենք, թե կայսրության մայրաքաղաքում որ քաղաքական խմբերն էին (բյուրոկրատները և բանակը) դիմակայում միմյանց, և այդ դիմակայությունը ինչ ազդեցություն էր ունենում կայսրության ներքին և արտաքին քաղաքականության վարման վրա:

Խմբավորեք տվյալ դարաշրջանում կայսրության առջև ծառայած ներքին և արտաքին մարտահրավերները, որոնք դասագրքում ներկայացված են գծապատկերի տեսքով և աշակերտներին առաջարկեք ակտիվություն. դատողություն անեն թե ինչպես կարող էին կայսրերը հաղթահարել այս մարտահրավերները: Բյուզանդական կայսրության առջև ծառայած մարտահրավերները հստակ ուրվագծելու նպատակով XI դարի երկրորդ կեսին կարևոր է կենտրոնանալ երկու հիմնական իրադարձությունների՝ Մեծ սխիզմի և Մանազկերտի ճակատամարտի վրա: Ինչ վերաբերում է Մեծ սխիզմին, ապա այստեղ մեզ անհրաժեշտ կլինի ակտիվացնել աշակերտների նախնական գիտելիքները, քանի որ նախորդ դասարանում աշակերտներն արդեն մշակել են այս հարցը և կարևոր է հիշեն այս իրադարձության պատճառներն ու հետևանքները: Նաև ընդգծեն այն փաստը, թե ինչ ազդեցություն է ունեցել այս իրադարձությունը Արևմտյան քրիստոնեական աշխարհի հետ Բյուզանդիայի հարաբերությունների վրա:

Ամենից շատ ժամանակ պետք է հատկացնել Անատոլիայում թուրքերի ակտիվացմանը և Մանազկերտի ճակատամարտից հետո ստեղծված իրավիճակի քննարկմանն ու վերլուծությանը:

Ընդգծել ք այս պատմական իրադարձության ազդեցությունը ժամանակակից աշխարհի վրա: Պետք է նաև լավ դասակարգել թուրքերի հարձակումները՝ ինչպիսի վտանգ էին դրանք հանդիսանում բյուզանդական հասարակության համար, և ինչպիսին էր կայսերական իշխանությունների արձագանքը թուրքական սպառնալիքին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Մանազկերտի ճակատամարտին, Բացի այն, որ այս ճակատամարտի արդյունքը որոշեց այս տարածաշրջանի հետագա ճակատագիրը, այն բացահայտեց Բյուզանդական կայսրությունում առկա բոլոր խնդիրները, իրենց ողջ սրությամբ: Խնդրեք աշակերտներին լավ վերլուծել, թե ինչպիսին էր Բյուզանդական կայսրության քաղաքականությունը թուրքական խնդրի նկատմամբ, և որքան թանկ նստեց նրանց վրա այս քաղաքականությունը:

Եզրափակիչ մասում խնդրենք աշակերտներին գնահատել Ալեքսիոս Կոմնենոս կայսեր ջանքերը՝ լուծելու կայսրության առջև ծառայած խնդիրները, և հստակ սահմանենք նրա ռազմական քաղաքականության ուղղությունները: Կարևոր է, որ պարագրաֆի վերջում հող նախապատրաստենք նոր պատմական իրադարձության մասին խոսել սկսելու համար, և Բյուզանդական կայսրության և Մերձավոր Արևելքի պատմական իրականության լավ ցուցադրմամբ աշակերտների համար գիտելիքների հիմք ստեղծենք, որպեսզի տեսականորեն պատրաստված լինեն խաչակրաց արշավանքների սկզբի համար:

§3-4. Ինչպե՞ս ձևավորվեց արևելքում հզոր Թյուրք-սելջուկյան կայսրությունը:

Աշակերտները թյուրք-սելջուկների և նրանց անատոլիական նվաճումների մասին տեղեկություններին արդեն ծանոթացել են նախորդ պարագրաֆում, որտեղ XI դարի՝ Բյուզանդական կայսրության առջև ծառայած մարտահրավերների մասին էր խոսքը: Այս պարագրաֆի շրջանակներում ուսուցչի նպատակն է մշակել երեք երկարաժամկետ նպատակ (տարածություն, իշխանություն, հասարակություն), ինչը բոլորովին էլ բարդ խնդիր չէ՝ ելնելով պարագրաֆում քննարկված հարցերի բնույթից: Հիմք ընդունելով պարագրաֆում ներկայացված աղբյուրները և գծապատկերները, ինչպես նաև հիմնական տեքստը՝ հեշտությամբ կարելի է հասնել երեք երկարաժամկետ նպատակներին:

Որպեսզի թյուրք-սելջուկյան նվաճումների և նրանց հասարակության վերաբերյալ ճիշտ պատկերացում ստեղծվի աշակերտների մոտ, կարևոր է հստակ ընդգծել նրանց տարաբնակեցման տարածքի հիմնական հատկանիշները: Հետևաբար, և նրանց նվաճումների բնույթը ամբողջությամբ պայմանավորված էր նրանց կենսակերպով և հասարակության կարիքների բավարարմամբ: Կարևոր է հիշեցնել աշակերտներին, թե որ քոչվորական ապրելակերպ ունեցող ժողովուրդների մասին ունեին մինչ այդ տեղեկություններ և հիշել կարևոր մանրամասներ, թե ինչ էր բնորոշ քոչվորական հասարակություններին:

Ամենակարևորը կլինի աշակերտներին խնդրել համեմատել այն տարածքը, որտեղ սկզբում բնակվում էին թյուրքերը և այն տարածքը, որտեղ նրանց հաջողվել է հաստատվել XI դարում կատարած արշավանքներից ու նվաճումներից հետո: Նաև համեմատեն թյուրքական հասարակությունը և իրանական, սիրիական, հայկական և անատոլիական հասարակությունները, դրանց բնութագրերը: Նմանատիպ համեմատական բնույթի ակտիվությունը կնպաստի ինչպես տարածության, այնպես էլ հասարակության բնութագրերի առաջաբանը և այն պատմական

իրադարձության կարևոր առանձնահատկությունների ընդգծմանը, որ իրենից ներկայացնում էին թուրք-սելջուկյան նվաճումները: Պարագրաֆում ներկայացված աղբյուրների վրա հիմնվելով՝ պետք է հստակ ընդգծվի, թե որն էր թուրք-սելջուկյան արշավանքների նպատակը և ինչ բնույթի էին դրանք:

Ինչ վերաբերում է իշխանությանը, ապա պետք է առանձնացնել, թե ինչ հատկանիշներ պետք է ունենա քաղաքական առաջնորդը՝ թուրքական ավանդական տեսանկյունից: Ինչպես նաև՝ իշխանության ինչ գաղափարներ ու միջոցներ են համատեղել սելջուկյան սուլթանները, նրանից հետո, երբ հավակնություն ունեցան գերիշխել Մերձավոր Արևելքում: Կարևոր է, որ պարագրաֆում ներկայացված աղբյուրների վրա հիմնվելով՝ աշակերտները պետք է վերլուծեն, թե ինչպիսի քաղաքական միավոր էր սելջուկյան հսկայական կայսրությունը, և ինչ նշանակություն ունեին տեղական պարսիկ, սիրիական տարրերը և թուրք քոչվորները կայսրության ներսում: Պարագրաֆում ընդգծված է սելջուկ սուլթանների կառավարման դինամիկան և կայսրության զարգացումը: Պարագրաֆի վերջում պետք է շեշտը դնել հետևյալ հարցերի վրա. ինչն էր Սելջուկյան կայսրությունում հանդիսանում հասարակության ինքնության միջոցը, և ինչու չկարողացավ Սելջուկյան կայսրությունում հաստատվել ուժեղ կենտրոնական իշխանություն:

§5-6. Ինչո՞ւ հակադրվեցին հոգևոր և աշխարհիկ իշխանությունները XI-XII դարերում:

Նշված պարագրաֆի վրա աշխատանքը սկսելիս՝ կարևոր է ակտիվացնել աշակերտների ունեցած գիտելիքները: Աշակերտներին հիշեցնենք, թե ինչ նշանակություն ուներ Հռոմի պապը քրիստոնեական աշխարհում: Կարևոր է ընդգծել Հռոմի պապի և Հռոմի կայսեր կարևորությունը և նրանց միջև իշխանության բաշխման սկզբունքը: Պարագրաֆում ներկայացված տեղեկատվությունը դասավորված է այնպես, որ արտացոլվում է դարերի ընթացքում Պապի դերի ու աշխարհիկ իշխանության հետ հարաբերությունների միտումների փոփոխությունը: Կարևոր է աշակերտները լավ տեսնեն, թե ինչպես են քաղաքական իրավիճակի փոփոխության հետ փոխվում Հռոմի պապի և բյուզանդական կայսրերի, ապա՝ Ֆրանկ միապետերի հարաբերությունները: Կարևոր է ճիշտ ցույց տալ իրադարձությունների հաջորդականությունը, թե ինչպես է հեռացել Հռոմի պապը բյուզանդական կայսրերից, և ինչ հանգամանքներում են նրանք ընտրել որպես նոր քաղաքական հենասյուներ ֆրանկ միապետներին: Աշակերտների հետ քննարկեք, թե ինչու է Հռոմի պապերի ազդեցությունը և հեղինակությունը նվազել եվրոպական աշխարհում նրանից հետո, երբ նրանք հայտնվեցին սկզբում ֆրանկ, այնուհետև՝ գերմանական կայսրերի ազդեցության տակ: Քննարկեք «Աղբյուր 7»-ի շրջանակներում առաջարկված տեղեկությունները և խնդրեք աշակերտներին վերլուծել, թե ինչու տվյալ փաստաթուղթն անընդունելի կլիներ կայսրերի համար:

Որպեսզի աշակերտները ըմբռնեն «ինվեստիտուրայի համար պայքարի» անունով հայտնի պատմական իրադարձությունը, կարևոր է նրանց խնդրել, որ այս իրադարձությունը գնահատեն երկու դիրքերից: Աշակերտներին առաջարկեք ակտիվություն, թող քննարկեն, թե ինչու էր կարևոր Պապի և կայսեր համար եպիսկոպոսներ նշանակելու իրավունք ունենալը: Աշակերտները պետք է արձանագրեն իրենց կարծիքը, թե ով իրավունք ուներ եպիսկոպոսներ նշանակելու: Մեծ նշանակություն ունի վերջին ենթապարագրաֆի քննարկումը, աշակերտները պետք է շատ

ուշադիր ծանոթանան այն հատվածին, որտեղ քննարկված է, թե ինչու էր միայն եվրոպական աշխարհին բնորոշ կրոնական և աշխարհիկ իշխանությունների այդպիսի զանգվածային դիմակայությունը: Դրա քննարկումն աշակերտների մոտ ճիշտ պատկերացում կստեղծի այս պատմական իրադարձության կարևորության մասին, ինչպես նաև Պապի և կայսրի իշխանությունը հասկանալու և օրինականացնելու միջոցների առումով:

§7-8. Ինչպես վերածնվեց Հռոմի գաղափարը Արևմտյան Եվրոպայում Ֆրանկական կայսրության փլուզումից հետո

Նշված պարագրաֆը մշակելիս՝ կարևոր է ուշադրությունը կենտրոնացնել մի քանի ասպեկտների վրա, որպեսզի պարագրաֆում առաջ քաշված նյութերը ճիշտ վերլուծվեն աշակերտների կողմից: Առաջին հերթին պետք է աշակերտներին հիշեցնել, թե ինչպես է փլուզվել Ֆրանկական կայսրությունը և քանի մասի է այն բաժանվել: Դրանից հետո պետք է ուրվագծվի գերմանական տարածքի աշխարհագրական առանձնահատկությունը և խնդրենք աշակերտներին վերլուծել, թե ինչպես են տարբերվում միմյանցից՝ աշխարհագրական, տնտեսական, մշակութային առումով Ֆրանկական կայսրության փլուզման արդյունքում ձևավորված պետությունները:

Կարևոր է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել այն քաղաքական իրավիճակի վրա, որում հայտնվել է գերմանական տարածությունը X դարում: Դիտարկենք Հենրիխ Թոչնորսի և Օտտոն I-ի կառավարման առանձնահատկությունները: Հատուկ ուշադրություն դարձրեք Օտտոն I-ի գահակալությանն ու նրա գաղափարին Հռոմեական կայսրության վերականգնման առումով: Համեմատեք Օտտոն I-ի գահակալության շրջանը Կարլոս Մեծի գործունեության հետ և քննարկեք, թե ինչու էր Օտտոնների քաղաքականության մեջ առաջատար Իտալիան գրավելու գաղափարը:

Կարևոր է ընդգծել գերմանական տարածության առանձնահատկությունների ազդեցությունը հասարակության զարգացման վրա: Եզրափակիչ մասում պետք է հստակ սահմանվեն Սրբազան Հռոմեական կայսրության քաղաքական տարբեր մոդելների բնութագրերը: Ինչպես էր ընտրվում միապետը, և ինչով էր տարբերվում կառավարման գերմանական մոդելը ֆրանսիական ու անգլիական միապետություններից: Քննարկեք Չեխիայի թագավոր Կարլոս IV-ի ընդունած «Ոսկե բուլլան» և կազմակերպեք քննարկում, թե ինչ խնդրի լուծման համար է միապետը դիմել այս քայլին:

§9-10. Ինչու սկսվեցին խաչակրաց պատերազմները:

Այս պարագրաֆը կարևոր է շատ առումներով: Այստեղ մանրամասն քննարկվում է երկու խնդիր: Առաջին. պատմական որ իրադարձություններն են միավորված «խաչակրաց» տերմինի շուրջ և երկրորդ՝ ինչ պատճառներ հանգեցրին XI դարի վերջին դասական խաչակրաց արշավանքներ սկսվելուն: Նշված պարագրաֆում տեղեկություններն այնպես են դասավորված, որ աշակերտները նախ պետք է կարողանան այն մշակել մաս-մաս, այնուհետև՝ միասնական համատեքստում կարողանան հասկանալ:

Կոնկրետ այս դեպքում մանկավարժի նպատակն է աշակերտներին հասցնել երկու երկարաժամկետ նպատակների: Կոնկրետ՝ պատմական իրադարձության և հզորության մասին: Երկու նպատակային հասկացությունները հեշտությամբ կարելի է մշակել դեռ պարագրաֆի առաջին մասում, որտեղ խմբավորված և թվարկված են բոլոր այն իրադարձությունները, որոնք հայտնի են խաչակրաց արշավանքներ անունով, ներկայացված են այս իրադարձությունների ժամանակագրական և տարածական բնութագրերը:

Խնդրենք աշակերտներին առանձին-առանձին դիտարկել թվարկված իրադարձությունները և ընդգծել դրանցից յուրաքանչյուրի տարբերակիչ առանձնահատկությունները: Դրանից հետո քննարկեք վերջին մասը, որտեղ խոսքը այս իրադարձությունների ընթացքում Հռոմի պապի համախմբող դերի մասին է: Այս դեպքում մի կողմից ընդգծվում են միջնադարից կարևորագույն համաշխարհային նշանակության իրադարձության բնութագրերը, ինչպես նաև աշակերտները կատանան տեղեկություններ, թե ինչ կարևորություն ունենա Հռոմի պապը, և այն մասին, թե ինչպես է նա օգտագործել խաչակրաց արշավանքների գաղափարը՝ սեփական իշխանությունն ամրապնդելու նպատակով:

Պարագրաֆի երկրորդ մասում ներկայացված են այն պատճառները, որոնք հանգեցրին խաչակրաց արշավանքների սկզբին XI դարի վերջին: Կարևոր է աշակերտներին հստակ բացատրել, որ թվարկված պատճառներից բոլորը միասին են հանգեցրել այս իրադարձության և ոչ թե առանձին-առանձին: Քննարկենք նաև դրանցից յուրաքանչյուրը և առանձնահատուկ ուշադրություն դարձնենք XI դարի վերջի, որպես դարաշրջանի մանրակրկիտ քննարկմանը, ինչը պատասխան կտա աշակերտների այն հարցին, թե ինչու սկսվեց այս պատմական գործընթացը կոնկրետ նշված դարաշրջանում և ոչ թե՝ ավելի վաղ կամ ավելի ուշ: Վերջում աշակերտներին խնդրենք խմբավորել թվարկված պատճառները, թե որոնք էին տեսական բնույթի և որոնք՝ քաղաքական ու տնտեսական բնույթի, հետո քննարկեն, թե, ըստ նրանց, որ պատճառն էր ամենակարևորը:

§11-12. Ինչպես փոխեցին Առաջին խաչակրաց արշավանքները Եվրոպան և Արևելքը

Ներկայացված պարագրաֆը նախորդ պարագրաֆի շարունակությունն է: Նախորդ դեպքում ներկայացված էին պատճառները, իսկ այստեղ խոսքը Առաջին խաչակրաց արշավանքի ընթացքի և այն փոփոխությունների մասին է, որ այս արշավանքն առաջացրել է Մերձավոր Արևելքում: Այս դեպքում ուսուցչի հիմնական նպատակն է ընդգծել երկու նպատակային հասկացություններ և դրանք մշակել դասի գործընթացում կազմակերպված ակտիվությունների արդյունքում. Աղբյուր և Տարածություն:

Մակայն, ելնելով պարագրաֆում նկարագրված տեղեկությունների և իրադարձությունների բնույթից, դրանց մշակման ընթացքում ինքնաբերաբար ուրվագծվում են այլ երկարաժամկետ նպատակներ ևս:

Առաջին հերթին կարևոր է աշակերտներին առաջարկել խաչակիրների և Բյուզանդիայի կայսեր միջև ընթացող գործընթացների երկկողմ գնահատում, ինչը կհեշտացնի համապատասխան տեղում բերված աղբյուրներին ծանոթանալը: Կարևոր է աշակերտներին լավ ցույց տալ խաչակիրների և բյուզանդացիների մոտիվացիան և քննարկել այն հակասությունները, որ

առաջացել են նրանց միջև, արշավանքի որոշակի փուլում:

Պատմական կարևոր իրադարձություն են Նիկիայի մոտ կայացած ճակատամարտերը, որոնց մասին պարագրաֆում բավական ընդարձակ տեղեկություն է ներկայացված: Այս դեպքում կարևոր է բյուզանդացիների կողմից քաղաքի գրավումը, ինչպես են գնահատում եվրոպական և բյուզանդական աղբյուրները, խնդրենք աշակերտներին համեմատել այս աղբյուրները և ընդգծել փոխադարձաբար իրար հակասող մանրամասները և դուրս գրել վստահելի տեղեկությունը:

Շատ կարևոր է աշակերտներին առաջարկենք նաև երկու դրվագների վերաբերյալ առկա աղբյուրների քննադատաբար քննարկում: Առաջինը կվերաբերի Անտիոքի դրվագին, որտեղ խոսքը հրաշքի երևույթի մասին է: Խնդրենք աշակերտներին քննադատաբար դիտարկել «Աղբյուր-7»-ի շրջանակներում ներկայացված տեղեկությունները և արտահայտել իրենց կարծիքը դրա հավաստիության և մեկնաբանության մասին: Դրան հաջորդում է ամենակարևորագույն իրադարձությունը՝ խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավումը և այստեղ ևս ներկայացված են եվրոպական ու մուսուլմանական աղբյուրները, որոնք նկարագրում են այս իրադարձությունը: Աշակերտները պետք է ուշադիր ծանոթանան Աղբյուր 8-ում ներկայացված այս երկու հատվածներին, որոնք մինևույն իրադարձության մասին տեղեկություններ են հաղորդում և համեմատեն դրանք: Ինչպես նաև՝ այս աղբյուրների վերլուծության հիման վրա ընդգծեն այս իրադարձության նշանակությունը և ընկալումը՝ երկու տարբեր դիրքորոշումներից:

Մեծ նշանակություն ունի տվյալ պարագրաֆի վերջին մասը, որտեղ խոսվում է այն փոփոխությունների մասին, որոնք ապրեց Արևելյան միջերկրածովյան տարածքը Առաջին խաչակրաց արշավանքից հետո: Այստեղ առանձնապես պետք է ընդգծվի այս տարածքի կարևորությունը բազմաթիվ առումներով: Աշակերտները պետք է լավ հասկանան, թե ինչ կրոնական, տնտեսական և քաղաքական նշանակություն ունեն նշված տարածքի նկատմամբ վերահսկողության ձեռք բերումը եվրոպացիների համար: Քննարկեք նաև խաչակրաց պետությունների կառուցվածքը և այստեղ նույնպես ընդգծեք աշխարհագրական տարածության կարևորությունը՝ այն փաստը հիմնավորելիս, թե ինչու խաչակրաց արշավանքների ժամանակ խաչակրաց պետություններում չկարողացան ձևավորվել Եվրոպայի նման տնտեսական և ռազմական համակարգեր :

§13-14. Ինչ կարևոր իրադարձություններով է բնութագրվում խաչակիրների դարաշրջանը

Այս պարագրաֆը նախորդ երկուսի ուղիղ շարունակությունն է ինչպես ժամանակագրական, այնպես էլ տեսական առումով: Այս դեպքում ուսուցիչը կանգնած է հետևյալ խնդրի առաջ. պարագրաֆում ներկայացված տեղեկատվության քննարկման հիման վրա՝ աշակերտների հետ միասին մշակել նպատակային հասկացությունները. Տարածություն և Պատմական իրադարձություն: Սակայն, ինչպես հաճախ, այս պարագրաֆում ներկայացված տեղեկությունների վերլուծությունը հեշտությամբ հնարավորություն կտա մշակել այլ երկարաժամկետ նպատակների ուրվագծերը:

Ինչ վերաբերում է պատմական իրադարձությանը, պարագրաֆում ժամանակագրական սկզբունքով են դասավորված խաչակիրների դարաշրջանում իրականացված արշավանքների ժամանակը, պատճառները և հետևանքները: Ուսուցիչն աշակերտների հետ կարող է գնահատել

դրանք ըստ հաջորդականության: Թեպետ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել երկու իրադարձությունների՝ Սալահ ադ Դինի կողմից Երուսաղեմի գրավմանը և նաև խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի ասպատակությանը 1204 թվականի գարնանը:

Առաջին դեպքում կարևոր է առանձնացնել Սալահ ադ Դինի, որպես պատմական դեմքի, բնութագրերը: Նաև խնդրենք աշակերտներին համեմատել եվրոպական և եգիպտական աղբյուրն այն մասին, թե ինչպես է Սալահ ադ Դինին հաջողվել գրավել սուլթանի գահը:

Այս դեպքում ուրվագծվում են մեկ այլ նպատակային հասկացության՝ Իշխանության ուրվագծերը, երբ ուսուցիչը աշակերտների հետ քննարկում է այն փաստը, թե ինչպես է Եգիպտոսի կառավարիչը փորձում իր իշխանությունն ամրապնդել խաչակիրների դեմ պատերազմի փրօցով:

Խնդրեք աշակերտներին գնահատել Սալահ ադ Դինի կողմից Երուսաղեմի գրավման նշանակությունը ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական աշխարհի համար: Դրանից հետո քննարկեն Երրորդ խաչակրաց արշավանքի, որպես իրադարձության, բնութագրերը, որտեղ մի շարք հետաքրքիր և կարևոր դրվագների կհանդիպեն:

Անկասկած, նշված պարագրաֆում ամենակարևորն է վերլուծել 1202-1204 թվականներին Բյուզանդական կայսրության շուրջ տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Այստեղ ուսուցիչն աշակերտների հետ պետք է քննարկի, թե որն էր խաչակիրների սկզբնական նպատակը, և ինչ հանգամանքներում փոխվեցին նրանց նպատակները: Ո՞րն էր այս իրադարձության մեջ Հռոմի պապի, բյուզանդական կայսրերի և Վենետիկի դոժի դերը: Ի վերջո, աշակերտներին խնդրենք անհատական վերլուծությունների հիման վրա անվանել այս իրադարձության գլխավոր հակահերոսին և դատողություն անել, թե ինչ հետևանքով ավարտվեցին այս իրադարձությունները: Վերջում կարևոր է, որ ուսուցիչը կարողանա աշակերտների հետ միասին ամփոփել նշված գործընթացը, թե ինչպես ավարտվեց դասական խաչակրաց արշավանքների դարաշրջանը և ինչպես փոխեց այն եվրոպական և արևելյան տարածությունը: Խաչակրաց արշավանքների արդյունքը անչափ մեծ ազդեցություն է ունեցել եվրոպական աշխարհի հետագա զարգացման վրա, և հետևյալ պարագրաֆների մշակման ընթացքում մենք ստիպված կլինենք բազմիցս վերադառնալ այս իրադարձություններին:

ԳԼՈՒԽ 2. ԵՎՐՈՊԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ XIII-XIV ԴԱՐԵՐՈՒՄ

§15-16. Որ գործոններն են նպաստել Եվրոպայում քաղաքների առանձնահատուկ զարգացմանը

Ներկայացված պարագրաֆը և դրանում նկարագրված տեղեկությունները շատ կարևոր են բազմաթիվ առումներով, հատկապես նրա համար, որ բացատրվի եվրոպական աշխարհի առանձնահատուկ տնտեսական և մշակութային զարգացումը, որով նա առաջ է անցել աշխարհի մնացած մասում բնակվող հասարակություններից: Պարագրաֆում ներկայացված են եվրոպական քաղաքների զարգացման առանձնահատկությունները: Ուսուցչի նպատակն է մշակել երկու նպատակային հասկացություն. Հասարակություն և Տարածություն: Սակայն այս անգամ ևս պարագրաֆում ներկայացված տեղեկությունները չեն սահմանափակվում միայն երկու երկարաժամկետ նպատակի մշակման համար անհրաժեշտ տեղեկություններով:

Այստեղ հավասարապես կարևոր է պարագրաֆի յուրաքանչյուր տողը, և կարևոր կլինի, որ աշակերտներն ուսուցչի օգնությամբ հասկանան ներկայացված աղբյուրները, սխեմաները կամ հիմնական տեքստում ընդգծված հարցերը: Առաջին հերթին պետք է հիշեցնել աշակերտներին, թե ինչ իրավիճակ էր Եվրոպայում Հռոմեական կայսրության անկումից հետո, ինչին հաջորդեց եվրոպական քաղաքների անկումն ու դատարկվելը: Դրանից հետո վերհիշենք, թե ինչ տնտեսական բնութագրեր ուներ Եվրոպայում ձևավորված ֆեոդալական (ավատատիրական) համակարգը: Աշակերտները պետք է լավ առանձնացնեն և խմբավորեն այն իրադարձությունները, որոնք հանգեցրել են Եվրոպայում քաղաքների վերածնունդը, դրանք կլինեն արտաքին կամ ներքին գործոններ:

Ամենակարևորն այն է, որ աշակերտները, հիմնվելով ներկայացված աղբյուրների վրա, տեսնեն արևելյան քաղաքների ընդհանուր բնութագրերը և համեմատեն եվրոպական քաղաքների հետ, բացահայտեն, թե ինչն է նրանց տարբերում եվրոպական քաղաքներից: Ինչպես նաև սխեմայում ներկայացված տեղեկությունների հիման վրա աշակերտները վերլուծեն, թե ինչ հանրային նշանակություն ունեին եվրոպական քաղաքները, որ ներքին ու արտաքին գործոններ են նպաստել դրանց վերելքին:

Ամենակարևորն է, որ աշակերտները հասկանան քաղաքների զարգացման գործում աշխարհագրական տարածքի դերն ու նշանակությունը, ծանոթանան պարագրաֆում ներկայացված տեղեկությանը, թե Եվրոպայի որ մասում են վերելք ապրել քաղաքները հատկապես, և ինչ ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկություններ ունեին այս երկու աշխարհագրական տարածքները:

Պարագրաֆի վերջում ներկայացված է ամենակարևոր տեղեկությունն այ մասին, թե ինչն էլ էր քաղաքներում ապրող հասարակությունը տարբերվում ֆեոդալական հասարակության հանրությունից: Այստեղ կարևոր է, որ աշակերտը լավ հասկանա, թե ովքեր են և ինչպիսին են բյուրգերները, և ինչպիսին է նրանց աշխարհայացքն ու ապրելակերպը: Բյուրգերների խավը ավելի ու ավելի մեծ դեր է խաղում Եվրոպայի պատմության մեջ հետագա դարերում, և աշակերտները նրանց բազմիցս կհանդիպեն, ուստի ի սկզբանե լավ պետք է ճանաչեն նրանց:

§17-18. Ինչպես մոնղոլական նվաճումները փոխեցին Արևելյան աշխարհը

Ներկայացված երկար պարագրաֆում քննարկված է համաաշխարհային պատմության կարևորագույն դրվագը ժողովրդի մասին, որը կարողացավ ստեղծել ամենամեծ կայսրությունը: Այս պարագրաֆը շատ առուժսերով է հետաքրքիր և կարևոր: Պարագրաֆում ներկայացված տեղեկությունների մշակման և ըմբռնման արդյունքում ուսուցչի նպատակն է աշակերտները հասնեն երեք երկարաժամկետ նպատակի (Իշխանություն, Տարածություն և Պատմական իրադարձություն), բայց ոչ էլ այս նպատակային հասկացությունները պետք է քննարկվեն առանց ժամանակահատվածի նպատակային հասկացությունների քննարկման:

Նախ պետք է դիմել նախապես ունեցած գիտելիքների ակտիվացմանը և աշակերտներին հիշեցնել, թե ինչ աշխարհագրական բնութագրեր էին բնորոշ Կենտրոնական Ասիայի տարածքին, և գործունեության ինչ ճյուղեր էին բնորոշ այս տարածքում ապրող բնակիչներին: Դրանից հետո աշակերտներին խնդրեք ծանոթանալ մոնղոլների մասին տեղեկություններին և համեմատել

նրանց մինչ այժմ իրենց հայտնի քոչվոր կենսակերպի հետևող ժողովուրդների հետ: Պետք է հստակ ընդգծվի աշխարհագրական տարածության ազդեցությունը մոնղոլական հասարակության վրա, ինչպես նաև այն, թե ինչպիսին էր մոնղոլների կենսակերպը: Հատկապես պետք է ընդգծվի Թեմուչինի պատկերը, նրա կենսագրական տեղեկությունների վրա հիմնվելով, աշակերտները գնահատեն նրա աշխարհայացքը և նաև համեմատեն իրենց ծանոթ արևելյան միապետների հետ: Իշխանության նպատակային հասկացության ուրվագծերը լավ են ընդգծվում այն հատվածի քննարկման ժամանակ, թե ինչի վրա էր հիմնվում Թեմուչինի (հետագայում Չինգիզ խան) իշխանությունը, և ինչ նոր մոդել ու ավանդույթ է նա հաստատել Արևելյան աշխարհում:

Ուսուցիչը աշակերտների հետ միասին պետք է ընդգծի այն պատճառները, որոնք առաջացրել են մոնղոլական նվաճումների սկիզբը և նաև այն գործոնները, թե ինչպես հաջողվեց մոնղոլներին հաջողությամբ ասպատակել հսկայական տարածքները: Պետք է ընդգծել, թե ինչ ռազմական առավելություն ունեի մոնղոլները մյուս ժողովուրդների համեմատ: Աշակերտները նաև լավ պետք է հասկանան, թե ինչ չափի տարածք էր հայտնվել մոնղոլների տիրապետության տակ: Այստեղ ամենակարևոր նրբությունն այն է, թե ինչ ազդեցություն են ունեցել նվաճած երկրները և ժողովուրդները մոնղոլների վրա, և ինչն է տարբերում միմյանցից Չինգիզ խանի կայսրության փլուզման արդյունքում առաջացած պետություններին:

Պարագրաֆի վերջում կարևոր է, որ ուսուցիչը և աշակերտները լավ ամփոփեն պարագրաֆում ներկայացված տեղեկությունները: Կոնկրետ՝ ընդգծեն, թե ինչ ընդհանուր և տարբերակիչ բնութագրեր ունեին Մոնղոլական կայսրության շրջանակներում միավորված տարածքը, այստեղ ապրող ժողովուրդները, և ինչ ազդեցություն են ունեցել նրանք մոնղոլական հասարակության վրա: Բացի այդ, ինչ ազդեցություն են ունեցել մոնղոլները եվրոպական և Արևելյան աշխարհի վրա, և ինչպես են նրանք փոխել պատմության զարգացումը:

§19-20. Ինչպե՞ս վերելք ապրեց Օսմանյան պետությունը

Նախքան նշված պարագրաֆի շրջանակներում ներկայացված տեղեկատվությանը ծանոթանալը կարևոր է ակտիվացնել նախապես ունեցած գիտելիքները: Խնդրենք աշակերտներին հիշել, թե ինչպես այն փոխվել իրավիճակը Փոքր Ասիա թերակղզում Մանազկերտի ճակատամարտից հետո: Հիշեն նաև, թե որոնք էին թյուրքական տարածության և հասարակության առանձնահատկությունները սելջուկյան դարաշրջանում, և ինչպես է այն փոխվել մոնղոլների հայտնվելուց հետո: Համապատասխան տեսական հիմքի ակտիվացումից հետո աշակերտները սկսեն նշված պարագրաֆում առաջարկված տեղեկությունները քննարկել, որոնք վերաբերում են Օսմանյան սուլթանության վերելքին և ռազմական հաջողություններին: Այս դեպքում հիմնականում կարևոր է մշակել երկու նպատակային հասկացություններ՝ Հասարակություն և Իշխանություն, ինչն առաջարկվող նյութի հիման վրա իրականում դժվար խնդիր չէ: Օսմանյան պետության առանձնահատկությունները ավելի լավ հասկանալու համար կարևոր է առանձնացնել այն գործոնները, թե լեգիտիմացման ինչ միջոցներ ընտրեցին օսմանյան սուլթաններն իրենց իշխանությունն ամրապնդելու համար, օսմանյան պետությունը համեմատել Սելջուկյան կայսրության հետ և լավ առանձնացնել այս երկու ուժերի միջև եղած տարբերությունները: Աշակերտները պետք է լավ հասկանան, որ Օսմանյան պետությունը հիմնվում էր. մի կողմից՝

իշխանության ավանդական թյուրքական մոդելի վրա, մյուս կողմից՝ եվրոպականին նման վարչական համակարգի, ինչով հիանալի սինթեզ էր ստեղծվում:

Աշակերտներին լավ պետք է ցույց տանք այս դարաշրջանում Բյուզանդական կայսրության վիճակը, ինչպես նաև դատողություն անենք այն գործոնների մասին, թե ինչու չկարողացավ Բյուզանդական կայսրությունը հաղթահարել օսմանյան վտանգը:

Պետք է ընդգծել նաև Բալկանյան տարածքի կարևորությունը և աշակերտներին խնդրել վերլուծել, թե ինչ նշանակություն ունեւ օսմանցիների կողմից Բալկանյան տարածքների գրավումը եվրոպական աշխարհի և Օսմանյան կայսրության համար:

Պարագրաֆի վերջում աշակերտները պետք է պատասխանեն հետևյալ կարևոր հարցին, թե ինչով էին պայմանավորված օսմանցիների ռազմական հաջողությունները, և ինչպես էր հաջողվում օսմանցիներին նվաճել նոր տարածքներ և պահպանել դրանք: Այստեղ պետք է քննարկել օսմանցիների քաղաքականության բնութագրերը նվաճված ժողովուրդների նկատմամբ, ինչը մեզ մոտ հստակ պատկերացում կստեղծի այն մասին, թե ինչպես են կարողանում տարբեր ազգությունների և կրոնների ներկայացուցիչները լիարժեք ինտեգրվել օսմանյան հասարակությանը:

§21-22. Ինչպե՞ս փոխվեց XIII-XIV դարերի Եվրոպան

Այս պարագրաֆի նպատակն է աշակերտներին տեղեկացնել, թե ինչ փոփոխություններ են կատարվել XIII–XIV դարերում եվրոպական աշխարհում: Ուսուցչի նպատակն է առաջարկված պարագրաֆի մշակման շրջանակներում աշակերտներին ծանոթացնել դարաշրջանը և դրա առանձնահատկությունները, ինչպես նաև՝ տնտեսական, քաղաքական և ռազմական տիպի փոփոխությունները:

Առաջին հերթին պետք է աշակերտներին հիշեցնել, թե ինչ տնտեսական օգուտ են տվել եվրոպական աշխարհին խաչակրաց արշավանքներն ու մոնղոլական նվաճումները:

Աշակերտներին հիշեցնենք, թե որ ճյուղերի զարգացում բերեց Եվրոպայում Արևելքի հետ կապերի խորացումը: Այս ամենը մեզ հնարավորություն կտա աշակերտներին լավ ցույց տալ, թե ինչպես է արտացոլվել առևտրային հումքի դրական ազդեցությունը եվրոպական տնտեսության վրա, և ինչպես է այն փոխակերպվել: Խնդրենք աշակերտներին ընդգծել, թե ինչ նշանակություն ունեին Եվրոպայի տնտեսական առաջխաղացման գործում Մոնղոլական կայսրության հետ առկա առևտրային կապերը:

Չափազանց կարևոր է ընդգծել XIII-XIV դդ. եվրոպական պետություններում կառավարման համակարգերի փոփոխությունը և դասային-ներկայացուցչական միապետությունների առաջացումը: Կարևոր է, որ աշակերտները լավ վերլուծեն այն մարտահրավերները, որոնց բախվեցին եվրոպական միապետները, և որ տնտեսական և քաղաքական գործոնները հանգեցրին պառլամենտի ձևավորմանը: Կարևոր է նաև, որ աշակերտները ընդգծեն, թե ինչ նպատակ ու ծանրաբեռնվածություն ունեւ պառլամենտը, որ շերտերն էին ներկայացված դրանում: Ամենակարևորն այն է, որ ուսուցիչն աշակերտների հետ ուշադիր քննարկի տեքստի այն հատվածը, որտեղ բացատրվում է, թե ինչու է իշխանությունների տարանջատման սկզբունքը բնորոշ միայն եվրոպական աշխարհին:

Նշված դարաշրջանը լավ հասկանալու համար խնդրենք աշակերտներին իրար հետ համեմատել պարագրաֆում քննարկված երկու դարերի բնութագրերը և վերլուծել, թե ինչպես են դրանք փոխել իրավիճակը XIV դարում: Հիմնականում շեշտը կարելի է դնել ռազմական ոլորտի արդիականացման վրա: Աշակերտների հետ միասին ծանոթանանք պարագրաֆում տրված նյութին և վերլուծենք, թե ինչ գործոններ են առաջացրել այսպես կոչված «Հարյուրամյա պատերազմի» ժամանակ ռազմական գործի հիմնարար վերափոխումներ:

§23-24. Ինչպես փորձեց Լենկ Թեմուրը ստեղծել Միասնական Մոնղոլական կայսրություն

Նախքան նշված պարագրաֆը մշակելը, կրկին կարևոր է ակտիվացնել նախապես ունեցած գիտելիքները, մասնավորապես, աշակերտներին պետք է հիշեցնել Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակը Չինգիզ խանի հսկայական կայսրության փլուզումից հետո: Համապատասխան տեղեկությունները հիշելուց հետո կարող ենք անցնել Լենկ Թեմուրին, որն անհերքելիորեն հետաքրքիր և կարևոր երևույթ է Արևելյան աշխարհը բնութագրելու համար:

Նախ պետք է ընդգծել նրա ծագումնաբան կենսագրական տվյալները, որպեսզի աշակերտները հստակ պատկերացում ունենան ասիական նոր զավթչի մասին: Այստեղ ամենակարևորն այն է, որ ուսուցիչն աշակերտներին լավ բացատրի, թե կայսրությունների փլուզման և քաղաքական քառուսի պայմանները ինչպես են մեծացնում Թեմուրի նման տաղանդավոր ռազմական առաջնորդի հնարավորությունները իր ձեռքն առնել իշխանությունը և հասնելու այնպիսի փառքի, որն անհասանելի կլինեք քաղաքական կայունության դարաշրջանում: Ուստի աշակերտները դեռ լավ պետք է հասկանան, թե ինչ իրավիճակ է եղել այն տարածքում, որին հաջողվել է տիրել Թեմուրը: Նշված պարագրաֆի շրջանակներում ուսուցչի հիմնական նպատակը երկու նպատակային հասկացությունների՝ Տարածության և Իշխանության մշակման համար անհրաժեշտ տեսական մասի ուրվագծումն է: Ինչ վերաբերում է Իշխանությանը, ապա պետք է շեշտը դնել այն գործոնի վրա, թե ինչ միջոցներով էր Լենկ Թեմուրը փորձում իրեն կապել Չինգիզիդների դինաստիայի հետ: Ինչ վերաբերում է Տարածությանը, ապա այստեղ կարևոր է ընդգծել, որ Թեմուրի նպատակը եղել է տիրապետել այն տարածքներին, որոնք մի ժամանակ ընդգրկված են եղել Չինգիզ խանի կայսրության մեջ:

Կարևոր է խնդրել աշակերտներին, որ համեմատեն Լենկ Թեմուրին Չինգիզ խանի հետ, որի ժառանգորդ էր համարում իրեն վերջինս: Լավ պետք է ուրվագծվեն նրանց ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները: Աշակերտներին խնդրենք նաև նկարագրել Լենկ Թեմուրի արշավանքները և գնահատել նրա գործողությունները: Վերջում նկարագրեն Լենկ Թեմուրի կայսրությունը և դատողություն անեն, թե ինչու այն կենսունակ չէր: Գնահատեն Թեմուրի կերպարը և դարձյալ համեմատության առարկա ընտրեն Չինգիզ խանին:

ԹԵՄԱ 2. ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ ԵՎ ՎԱՂ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

ԳԼՈՒԽ 3. ՄԻՋՆԱԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՁԱՆ

§25-26. Ինչպես Բյուզանդական կայսրությունը կործանվեց օսմանյան թուրքերի կողմից

Այս պարագրաֆում խոսվում է աշխարհի պատմության ամենակարևոր գործընթացի մասին, որը հսկայական ազդեցություն է ունեցել Մերձավոր Արևելքի հետագա զարգացման վրա և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ մշակութային տեսանկյունից:

Կարևոր է, որ ուսուցիչը աշակերտներին հենց սկզբից բացատրի ուսուսասիրվող պարագրաֆում տրված տեղեկությունների իմաստը: Այս դեպքում կարևոր է իրադարձությունը վերլուծել՝ հիմնվելով նախորդող պատճառների ու գործընթացների քննարկման վրա, և ոչ միայն արդյունքն ուսուսասիրել:

Կարևոր է աշակերտներին հիշեցնել, թե երբ են թուրքերը հայտնվել Փոքր Ասիայում և ինչպես է նրանց հաջողվել ամրապնդվել այս տարածաշրջանում: Ինչպես նաև, նախորդ պարագրաֆներից աշակերտներն արդեն տեղեկություններ ունեն, թե ինչ ուժ էր իրենից ներկայացնում Օսմանյան սուլթանությունը: Այս պարագրաֆում, որպես ներածություն, ժամանակագրական սկզբունքով ներկայացվում է Բյուզանդական կայսրության անկման գործողությունների զարգացումը, ինչը մանկավարժն ու աշակերտները հեթո՞ղ պետք է քննարկեն:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Բյուզանդական կայսրության և եվրոպական պետությունների միջև առկա հարաբերությունների քննարկմանը և նրանց փոխադարձ վերաբերմունքին:

Աշակերտները համապատասխանաբար պետք է քննարկեն նաև Ֆերարա-Ֆլորենցիայի խորհրդի և Վառնայի խաչակրաց արշավանքի, որպես երկու կարևորագույն պատմական իրադարձությունների, պատճառները և դրանց հետևանքները, ինչպես նաև դրանց ազդեցությունը վերջնական արդյունքի վրա:

Անմիջապես Կոստանդնուպոլսի պաշարման և օսմանցիների կողմից քաղաքը գրավելու մասին աղբյուրները և տեքստի հիմնական մասը քննարկելիս՝ ցանկալի է աշակերտների մոտ պատկերացում ստեղծել այս երկկողմանի ըմբռնման մասին, բյուզանդական և հունական տեսանկյունից, ինչում մեզ կօգնեն «Աղբյուր 10»-ի շրջանակներում ներկայացված տեղեկությունները: Ինչպես նաև աշակերտներին խնդրեք գնահատել այս իրադարձության պատճառները և քննարկել դրա հետևանքները: Նաև պարագրաֆում ներկայացված սխեմայի միջոցով աշակերտները պետք է ծանոթանան և քննարկեն այն նշանակությունը, որ ձեռք է բերել այս իրադարձությունը ինչպես արևմտյան, այնպես էլ օսմանյան աշխարհի համար:

Նշված պատմական իրադարձության բնույթը հնարավորություն է տալիս, ներկայացված աղբյուրների վրա հիմնվելով, որ խնդրենք աշակերտներին այս իրադարձությունը քննարկել բազմաճյուղային կտրվածքում: Քանի որ պարագրաֆում ներկայացված են ինչպես արևմտյան, այնպես էլ թուրքական աղբյուրները: Հատկապես հետաքրքիր է պարագրաֆի վերջում բերված դատողությունը, թե ինչպես Մեհմեդ II-ին հաջողվեց հաջողությամբ պահպանել քաղաքը: Մեծ ուշադրությամբ քննարկենք նաև այստեղ ներկայացված սխեման, աղբյուրներըն ու տեքստի հիմնական մասը և աշակերտներին խնդրենք վերլուծել այն:

§27-28. Ինչպես հումանիզմի և Վերածննդի դարաշրջանը փոխեցին եվրոպական աշխարհը

Նշված պարագրաֆում առավելապես ներկայացված է տեսական դատողություն և ավելի քիչ է փաստերի և իրադարձությունների նկարագրություն: Համապատասխանաբար, ցանկալի է, որ այս պարագրաֆում ներկայացված տեղեկություններն ուսուցիչն աշակերտների հետ մանրամասն ուսուսմասիրի՝ մանկավարժի բացատրությունների և առաջարկվող դասի ակտիվությունների շնորհիվ:

Նշված պարագրաֆի նպատակը եվրոպական հասարակությունում տեղի ունեցած մշակութային բնույթի փոփոխությունների նկարագրությունն ու ծանոթացումն է աշակերտներին, դրանց պատճառներն ու հետևանքները ներկայացնել: Որպեսզի նշված դարաշրջանի փոփոխությունները հեշտությամբ ընկալելի դառնան, աշակերտներին պետք է հիշեցնենք, թե ինչ մշակութային ու աշխարհայացքային հատկանիշներ ունեւ եվրոպական հասարակությունը միջնադարում, և ինչ գործոններ և իրադարձություններ են ձևավորել դրա փոփոխությունը: Աշակերտներին պետք է ուշադրություն դարձնել նրա վրա, թե որոնք էին հումանիզմի և Վերածննդի հիմնական հատկանիշները և խթն տանք վերլուծելու այն գործընթացները, որոնք հանգեցրին եվրոպական ինտելեկտուալ հանրության ընդերքում տարբեր միտումների տարածման:

Պետք է առանձնացնել այն կարևորագույն հատկանիշները, որոնք առանձնացրել են հումանիզմը և Վերածնունդը եվրոպական մտքի ու արվեստի բնագավառներից: Այստեղ կարևոր է, որ բոլոր աշակերտները հասկանան, թե որն էր իտալական ֆլեմմենը և նրանում հայտնաբերեք տարածքի տարբեր բնութագրերի և նախորդ պատմական գործընթացների արժանիքները: Պետք է ընդգծվի այն գործոնը, որ մշակույթի տարբեր ոլորտների առաջընթաց պայմանավորել է վերադարձը հնագույն ավանդույթներին և աշակերտներին հիշեցնենք, թե դարեր առաջ ինչու է եվրոպական աշխարհը հեռացել հնագույն ավանդույթներից:

Կարևոր է, որ աշակերտները լավ հասկանան, թե ինչ տեսակի փոփոխությունների է ենթարկվել եվրոպական աշխարհը հումանիզմի և Վերածննդի դարաշրջանում, և որոնք էին այդ գործընթացների զարգացման մեջ եվրոպական հասարակության տարբեր հատկանիշները, օրինակ՝ Իտալիայի գտնվելու վայրը, քաղաքների զարգացումը և այլն: Ինչպես նաև՝ ինչու էր այս երևույթը բնորոշ միայն եվրոպական աշխարհին, և ինչու տեղի չի ունեցել նմանատիպ բնույթի մշակութային իրադարձություն Բյուզանդիայում և Մերձավոր Արևելքում:

§29-30-31. Ինչպես և ինչու սկսվեցին Աշխարհագրական մեծ հայտնագործությունները

Նշված պարագրաֆը շատ ծավալուն է և պարունակում է տեղեկություններ համաշխարհային պատմության անվիճելիորեն գլոբալ նշանակության իրադարձության մասին: Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջան, այն ընդգրկում է ժամանակագրական առումով ընդարձակ ժամանակաշրջան, թեև այս առումով հատկապես ռեզոնանսային իրադարձություններով այս գործընթացն առանձնանում էր XV-XVI դարերում: Տվյալ պատմական գործընթացը, դրա առանձնահատկություններն ու ազդեցությունները լիովին հասկանալու համար կարևոր է, որ աշակերտներն ուսուցչի հետ միասին վերլուծեն ինչպես պարագրաֆում ներկայացված հիմնական տեքստը, այնպես էլ աղբյուրներում և ներդիրներում տրված

տեղեկատվությունը: Առաջին փուլում կարևոր է որոշել, թե ինչու էր կարևոր եվրոպական աշխարհի համար Հնդկաստանի աշխարհագրական տարածքը և հնդկական հումքը: Բացի այդ, խնդրենք աշակերտներին ուշադրությունը կենտրոնացնել այն պատմական իրադարձությունների վրա, որոնք հանգեցրել են XV դարի երկրորդ կեսին աշխարհում մինչ այդ գոյություն ունեցած ամենակտիվ առևտրատնտեսական տարածքի թուլացման, և ինչու եվրոպացիները սկսեցին ծովային ուղիներ որոնել Ասիայի հետ կապվելու համար:

Ցանկալի է նաև, որ աշակերտները հիշեն, թե պատմական որ գործընթացներ են նպաստել մեծ քանակությամբ ասիական հումքի ներհոսքին Եվրոպա, և ինչպիսի տեխնոլոգիական առաջընթաց ապրեց եվրոպական աշխարհը տվյալ դարաշրջանում, ինչպես են փոխվել եվրոպացիների պատկերացումներն աշխարհի մասին: Խնդրենք աշակերտներին լավ խորանալ այն հանգամանքի մեջ, որ ծովային հայտնագործությունները սկսվել են Պիրենեյան թագավորությունների կողմից և հստակ ընդգծեն այս ամենի պատճառները: Նույն համատեքստում պետք է բնութագրենք Էնրիկե Մոլագնացի կերպարը և նրա վաստակը աշխարհագրական հայտնագործությունների առումով: Կարևոր է, որ աշակերտները համեմատեն իսպանացիների ու պորտուգալացիների ծովային հայտնագործությունների ուղղությունը և նրանց հայտնագործությունների ազդեցությունը, նախ՝ Պիրենեյան պետությունների, իսկ հետո՝ ամբողջ եվրոպական աշխարհի վրա: Հենց այստեղ մենք պետք է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնենք Վասկո դա Գամայի և Քրիստափոր Կոլումբոսի հայտնագործությունների: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնենք նաև Քրիստափոր Կոլումբոսի շուրջ առկա վիճահարույց հարցերին և աշակերտներին խնդրենք ձևակերպել իրենց կարծիքները Կոլումբոսի ինքնության և նրա արշավախմբերի նպատակների մասին և հիմնավորել դրանք: Պատմական իրադարձություններից հատկապես կարևոր է Տորդեսիլյասի պայմանագրի քննարկումը, որի շնորհիվ եվրոպական աշխարհը մի կողմից՝ խուսափեց իսպանացիների և պորտուգալացիների միջև դիմակայությունից, մյուս կողմից՝ աշխարհի բաժանման նախադեպ ստեղծեց: Աշակերտներին հիշեցնենք նախորդ դասարանում սովորած տեղեկությունը Ամերիկա մայրցամաքի հետ եվրոպացիների նախակոլումբոսյան կապերի մասին, ապա վերլուծենք, թե ինչպես է փոխել և՛ այդ դարաշրջանի եվրոպական հասարակության աշխարհայացքը, և՛ առօրյան Ամերիկա մայրցամաքի հայտնագործումը և ամերիկյան հումքի ու ռեսուրսների ներհոսքը Եվրոպա: Եվ վերջում, ամփոփման տեսքով պետք է ուրվագծվի, թե ինչպես են աշխարհը փոխել Աշխարհագրական մեծ հայտնագործությունները: Ինչու է Ամերիկայի հայտնագործումը համարվում պատմական դարաշրջանների սահմանագիծ, և ինչն են աշակերտները համարում ամենակարևոր բեկումնային գործոն այս դարաշրջանի հետ կապված իրադարձությունների շարքում:

§32-33. Ինչու սկսվեց Բողոքական ռեֆորմացիան Եվրոպայում

Նշված պարագրաֆում ներկայացված է Եվրոպայի պատմության կարևորագույն պատմական գործընթաց, որը նշանակում էր Բողոքական ռեֆորմացիայի ծնունդ և դրա տարածում: Այս գործընթացի ազդեցությունն անչափ մեծ էր եվրոպական հասարակության աշխարհայացքի, ապրելակերպի վրա: Հարկ է նշել, որ Բողոքական ռեֆորմացիան տրամաբանորեն ավարտեց դարերի ընթացքում եղած ճգնաժամը Հռոմի կաթոլիկ եկեղեցու սրտում: Պարագրաֆի առաջին

մասում խոսվում է իրադարձությունների և գործընթացների մասին, որոնք հանգեցրել են եվրոպական աշխարհի վրա Հռոմի կաթոլիկ եկեղեցու ազդեցության թուլացման: Դա դրսևորվում էր մի շարք քաղաքական և կրոնական բնույթի գործընթացներով: Կարևոր է, որ աշակերտները դրանք բոլորը (Ավինյոնյան գերություն, Արևմտյան սխիզմ, ժողովական շարժում) մշակեն ժամանակագրական սկզբունքով: Դրանից հետո աշակերտներն արդեն կունենա հիմնական գիտելիքներ՝ XVI դարի Գերմանիայում զարգացած գործընթացները ճիշտ ընկալելու համար: Կարևոր է նաև, որ աշակերտները ճիշտ պատկերացում ունենան այդ դարաշրջանի գերմանական տարածության քաղաքական բնութագրերի մասին, քանի որ հենց այս հանգամանքների վերլուծումը նրանց հնարավորություն կտա պատասխանել այն հարցին, թե ինչու հաջողություն չեն ունեցել վաղ բողոքական շարժումները, և ինչու դրանք առաջին անգամ տեղի ունեցան Գերմանիայում: Պետք է լավ նկարագրենք Մարտին Լյութերի պատմական կերպարը և նրա տեսլականները: Պետք է հստակ ներկայացվեն նաև քաղաքական հանգամանքները, որոնք հանգեցնում են նրա հաջողությանը, որովհետև դա է կարևորագույնը բողոքականության տարածման հաջողությունը բացատրելու համար: Աշակերտները պետք է լավ հասկանան, թե ինչով էր բողոքականությունը տարբերվում ավանդական կաթոլիկ հավատքից, և ինչու դա կարող էր լինել գերմանական հասարակության մի մասի համար ընդունելի:

Բացի Լյութերից, կարևոր է մեծ ուշադրություն դարձնել բողոքականության շվեյցարական և անգլիական հոսանքներին: Ամենակարևորն է սահմանել այն տարածքի աշխարհագրական և մշակութային, ինչպես նաև հասարակական բնութագրերը, որոնք ընդունեցին բողոքականությունը և որոնք մնացին կաթոլիկ հավատքին: Ինչով էին տարբերվում այս պետությունները և հասարակությունները միմյանցից, այս տարբերությունները բազմաթիվ մեկնաբանությունների հնարավորություն կտան մեզ: Անպայման պետք է նշել, բողոքականության ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական և տնտեսական նշանակությունը և բնութագրերը, քանի որ վերջինս ոչ պակաս կարևոր էր:

Կարևոր է սահմանել, թե բողոքական հոսանքները հասարակության որ շերտերում են տարածվել, և որոնք էին դրա պատճառները, ինչպես նաև, ինչ նոր հնարավորություններ է ավելացրել բողոքական հավատը եվրոպական հասարակությանը, և ինչ նոր արժեհամակարգ է ձևավորվել բողոքական համայնքում:

§ 34-35. Ինչ կարևոր իրադարձություններով էր բնութագրվում XVI դարը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում

Այս պարագրաֆի նպատակն ու նշանակույթն է աշակերտներին տեղեկություններ տրամադրել, թե ինչպիսի բեկումնային իրադարձություններ ու գործընթացներ էին բնորոշ XVI դարի Եվրոպային և Մերձավոր Արևելքին: Ինչպես է փոխվել հասարակության կենսակերպն ու աշխարհայացքը: Այս դարաշրջանին բնորոշ համաաշխարհային նշանակության իրադարձությունները, ինչպիսիք են Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, Վերածնունդը, Ռեֆորմացիան, նախորդ պարագրաֆներում մանրամասն քննարկեցինք: Այս անգամ աշակերտները հիմնականում տեղեկություններ կստանան քաղաքական փոփոխությունների և գործընթացների մասին:

Տվյալ պարագրաֆում հիմնականում ներկայացված են տեղեկություններ Հաբսբուրգների

կայսրության և Օսմանյան սուլթանության, որպես երկու քաղաքական դոմինանտների մասին: Մինչ այդ աշակերտների ուշադրությունը պետք է կենտրոնացնենք Ամերիկայի հայտնագործման և Բողոքական ռեֆորմացիայի ազդեցության մասին, որը եվրոպական աշխարհի վրա իր ազդեցությունն ունեցավ հենց XVI դարի ընթացքում: Աշակերտները պետք է հստակ հասկանան, թե ինչպիսի խնդիրներ է առաջացրել եվրոպական աշխարհում բողոքականության տարածումը, թե ինչպես է այն կրոնական հողի վրա բաժանել հասարակությունները երկու թշնամական ճամբարների, որոնք հանգեցրել են արյունալի պատերազմների Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում: Կարևոր կլինի նաև ընդգծել, թե ինչպես է դրանից օգտվել Օսմանյան պետությունը, որը գտնվում էր քաղաքական հզորության գագաթնակետում, և մայրցամաքներում ընդարձակել էր իր տարածքները:

Աշակերտները պետք է լավ վերլուծեն Օսմանյան կայսրության հզորացման միտումը նշված դարաշրջանում և համեմատեն այն Մերձավոր Արևելքի այլ մահմեդական պետությունների հետ: Նաև ուշադիր ծանոթանան և քննարկեն, թե ինչ գործոններով է պայմանավորված օսմանյան ռազմական հաջողությունը բոլոր թևերում՝ ինչպես Արևելքում, այնպես էլ Եվրոպայում: Այստեղ օսմանցիների եվրոպական զավթողագործությունը քննարկելիս պետք է աշակերտներին անպայման խնդրենք ուշադիր ծանոթանալ, թե ինչու եվրոպական աշխարհը չկարողացավ միավորվել նրանց դեմ:

Կարևոր է իմանալ, թե ինչպես է եվրոպական աշխարհում ձևավորվել միապետական կառավարման նոր տեսակ, որը կապված էր Անգլիայի թագուհի Եղիսաբեթ Թյուդորի և Ֆրանսիայի միապետ Անրի Բուրբոնի հետ: Պետք է հստակ սահմանվի, թե ինչ տարբեր մոտեցումներ ընդգծվեցին այս միապետների կառավարման ոճում, և ինչով էին նրանք տարբերվում եվրոպական այլ տիրակալներից: Բացի այդ, աշակերտներին խնդրենք գնահատել XVI դարում Եվրոպայում և Արևելքում գործող միապետների և անվանել իրենց ֆավորիտներին: Դատողություն անեն նաև, թե ինչու է XVI դարը կոչվում միապետների դարաշրջան: Աշակերտները պետք է գնահատեն XVI դարը և դատողություն անեն, թե ինչպիսի փոփոխություններ վերապրեց Եվրոպան այս դարաշրջանում, և ինչու է այն համարվում դարաշրջանների սահմանագիծ:

ԳԼՈՒԽ 4. ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

§36. Ինչպես է ազդել հոլանդական հեղափոխությունը եվրոպական միապետությունների վրա

Կարևոր է ընդգծել, թե որքան տարբեր էր Նիդեռլանդների և Սրբազան Հռոմեական կայսրության (այդ թվում Իսպանիայի թագավորության) տնտեսական կառուցվածքը և այս տարբերությունն ինչպես է ծնում տարբերություն քաղաքական տեսլականների և պետական կազմակերպման ձևերի միջև: Որպեսզի աշակերտը գա այն մտքին, որ առևտրային շերտում ավելի հեշտ է ձևավորվում տնտեսապես անկախ միջին խավ, որը հետո սկսում է պայքարել քաղաքական իրավունքների համար՝ ի տարբերություն ավելի ագրարային/երկրագործական տնտեսության, որն այնուհետև օգնում է, որ ամբողջական իշխանությունը հայտնվի իշխող վերնախավերի ձեռքում, որովհետև նրանցից տնտեսական կախվածության աստիճանը մեծ է: Այս համատեքստում պետք է

մշակվի տարածական խնդիրը, քանի որ քաղաքը՝ արհեստավորների և առևտրի տարածքը, ավելի հեշտ է նպաստում միջին խավի ձևավորմանը և ինքնակառավարման ու ժողովրդավարական մշակույթի ձևավորմանը: Նիդերլանդները հիմնականում քաղաքների տարածք էր՝ այնտեղ էին գտնվում առևտրային և տնտեսական կենտրոնները:

Ցանկալի է կենտրոնանալ կրոնական հարցի վրա՝ Նիդերլանդական հեղափոխությունն ընկալվի որպես կրոնական հակամարտություն բողոքական և կաթոլիկ հատվածների միջև, ինչը հետագայում ազդություն կունենա նաև տնտեսական և քաղաքական հարցերի վրա:

§37. Եվրոպայում ինչո՞ւ սկսվեց 30-ամյա պատերազմը (1618-1648)

Այս պատերազմի վրա աշխատելու համատեքստում անհրաժեշտ է, որ աշակերտը հասնի կայուն պատկերացման, որ այս պատերազմը Եվրոպայի պատմության մեջ առաջին նախադեպերից է, երբ կրոնական մոտիվացիան փոխարինվում է ազգային-քաղաքական դրդապատճառներով, և մեծ պետություններն իրենց ռազմավարությունը որոշում են ոչ թե կրոնական, այլ ազգային-քաղաքական շահերին համապատասխան:

§38-39. Ինչո՞ւ Անգլիայում սկսվեց քաղաքացիական պատերազմը թագավորի և պառլամենտի միջև

Կարևոր է, որ աշակերտները հստակ հասկանան Անգլիայում իշխանության հայեցակարգը, այսինքն՝ ինչպես է բաժանվում իշխանությունը: Ինչ է նշանակում Ստյուարտների բացարձակ մենիշխանության մոդելը, և որքան կարևոր է իշխանությունը տարանջատել՝ ի դեմս հզոր ու պառլամենտի: Կարևոր է նաև հասկանան, թե որ քաղաքական և հասարակական խմբերի շահերն է արտահայտում պառլամենտը և այն, որ Անգլիայի պառլամենտը արիստոկրատական է:

Անգլիայում տեղի ունեցող հեղափոխությունները աշակերտները պետք է դիտարկեն որպես իշխանության համար պայքարի գործընթաց միահեծան թագավորի և արիստոկրատական պառլամենտի միջև:

§40. Ինչպես ձևավորվեց բացարձակ միապետությունը Ֆրանսիայում

Ցանկալի է, որ աշակերտները հասնեն ֆրանսիական աբսոլյուտիզմի, այսինքն՝ տոտալ իշխանությունը թագավորի ձեռքն ընկնելու հայեցակարգային ըմբռնմանը:

Լավ կլինեք, որ աշակերտները տեսնեն, թե որքան կարևոր էր կաթոլիկ կրոնը բացարձակ իշխանության պահպանման գործընթացում, ինչն առաջացնում էր եկեղեցու և պետության, կրոնական և քաղաքական իշխանության միավորում և նրանց ընդհանուր շահեր: Այս առումով կարևոր է, թե ինչպես է պետությունն օգտագործում եկեղեցին իր բացարձակ մենիշխանության պահպանման առումով:

§41. Ինչպե՞ս Իրանում հզորացավ Սեֆյանների դինաստիան

Ուսանողի համար կարևոր է հասկանալ, թե ինչ սկզբնական պայմաններով սկսեց Շահ Աբբաս I-ն իր իշխանությունը, որքանով էր Իրանը հետ մնում Օսմանյան կայսրությունից, և ինչու էր անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնել:

Ցանկալի է ընդգծել, թե ինչպես է Շահ Աբբաս I-ը փոխում իշխանության և հասարակական կյանքի հայեցակարգը և ինչպես է նա փոխարինում ավանդական էլիտաներին ավելի արժանի հասարակական խմբերով, որոնք անձամբ հավատարիմ են իրեն:

Ցանկալի է, որ աշակերտը հասկանա, թե ինչու են եվրոպացի միապետները շահագրգռված Իրանի հետ լավ հարաբերություններով, և ինչպես է Իրանը բարեփոխումներ իրականացնում եվրոպական փորձի համաձայն:

§42. Ինչպես Պետրոս I-ը հին Ռուսաստանը վերածեց եվրոպական պետության

Ցանկալի է, որ աշակերտները հստակ հասկանան, թե ինչու էր Պետրոսը ցանկանում բարեփոխումներ իրականացնել ըստ եվրոպական պետությունների, որ այդ բարեփոխումները ներառել են տեխնոլոգիական, հասարակական և ենթակառուցվածքային հարթությունները և չէին փոխում քաղաքական մոդելը: Այսինքն՝ Պետրոսի եվրոպական բարեփոխումները չէին ներառում կառավարման մոդելը:

Անհրաժեշտ է, որ աշակերտը վերլուծի Ռուսաստանի աշխարհագրական առանձնահատկությունները և նրա համար դեպի ծով (ներառյալ Սև ծով) ելք ունենալու ռազմավարական նշանակությունը:

ԹԵՄԱ 3. ԵՐԿԱՐԱՏԵՎ XIX ԴԱՐԸ

ԳԼՈՒԽ 5. Համաշխարհային հեղափոխությունների և մեծ փոփոխությունների ժամանակաշրջանում

§43-44. Ինչպես փոխեցին լուսավորիչները Արևմտյան աշխարհը

Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ վերլուծի, թե ինչպիսի քաղաքական իրավիճակ էր 18-րդ դարի արևմտաեվրոպական տարածքում, և ինչպես չէին համընկնում իրար բացարձակ մենիշխանության և բնակչության բացարձակ մեծամասնության շահերը:

Ցանկալի է, որ աշակերտը վերլուծի, որ այն պատկերին, երբ քաղաքական տարածքը, այդ թվում մամուլը, փակ էր քաղաքական տարբերվող կարծիքի համար, հանրային շահերը բարձրաձայնող դարձան արվեստը, մշակույթն ու փիլիսոփայությունը:

Լավ կլինի, որ աշակերտը վերլուծի, որ առաջին փուլում փոփոխությունը պետք է տեղի ունենան մենտալ-քաղաքական մակարդակում, իսկ հետո սկսվում է դրա գործնական իրականացումը:

§45-46. Ինչպես ստեղծվեց Ամերիկայի Միացյալ Նահանգները

Մինչև Ամերիկյան քաղաքացիական պատերազմի սկզբնական ժամանակաշրջանի ուսումնասիրությունը աշակերտը պետք է հստակ գիտակցի, որ ամերիկյան գաղութներն ունեին ինքնակառավարման մեծ մշակույթ և անկախ նրանց գաղութային կարգավիճակից, տեղական մակարդակում նրանք բավականին մեծ իրավունքներ և կառավարման փորձ ունեին: Սա ստեղծեց ամերիկյան ժողովրդավարության հիմքերը: Լավ կլինի, որ աշակերտը հասկանա, որ Ամերիկայում ձևավորվել էին տարբեր մշակույթներ, էթնոսներ և հետաքրքրություններ ունեցող հասարակական-քաղաքական խմբերի միասնական քաղաքական մշակույթի մեջ ընդգրկելու և նրանց միջև ընդհանուր շահեր գտնելու երկարատև մշակույթ:

Ցանկալի է, որ աշակերտը իմանա, որ Ամերիկյան ունեցել է իրավունքների համար պայքարի երկարատև մշակույթ, իսկ Ամերիկյան հեղափոխությունը մենիշխանությունն էլ ավելի անընդունելի կառավարման ձևի վերածեց:

Աշակերտի համար կարևոր է հասկանալ, որ Ամերիկյան այն ժամանակ է ստեղծել հանրապետություն, երբ Եվրոպան դրա փորձը չունեց, իսկ Եվրոպայում բացարձակ ու սահմանադրական մենիշխանության դարաշրջան էր: Այս առումով, քաղաքական զարգացման տեսանկյունից Ամերիկյան առաջ էր անցել Եվրոպայից:

§47-48. Ինչպես փոխեց հեղափոխությունը Ֆրանսիան

Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ հասկանա, թե ինչ տեսակի համակարգ էր բացարձակ մենիշխանությունը, որքան անարդար էր այն լայն զանգվածների աչքում, և ինչպես չէր արտացոլում այն բնակչության շահերը, ինչը լավ նախապայման ստեղծեց Ֆրանսիական

հեղափոխության համար:

Լավ կլինի, որ աշակերտը գա այն մտքին, որ հեղափոխությունն ուներ ոչ միայն քաղաքական, այլև՝ տնտեսական հիմք, և սխալ քաղաքական համակարգն անպայման ազդում է նաև տնտեսական և սոցիալական մակարդակի վրա:

Պետք է, որ աշակերտը չշփոթվի ու հստակ հասկանա, թե ինչպես է փոխվում կառավարման մոդելը հեղափոխության տարբեր փուլերում՝ սահմանադրական միապետությունից մինչև ավելի չափավոր, իսկ հետո ավելի արմատական հանրապետություն:

Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ հասկանա, թե որ հասարակական խմբերն են աջակցել/չեն աջակցել հեղափոխությանը, և որոնք էին նրանց շահերը:

§49-50-51. Ինչպես փոխեց Նապոլեոնը Եվրոպայի պատմությունը

Լավ կլինի, որ աշակերտը լավ հասկանա, թե ինչու է Նապոլեոնի գալը Ֆրանսիական հեղափոխության փաստացի ավարտը և կռահի, թե կառավարման ինչ ձև է ձևավորվում, թե որքանով են նախատեսվում/չեն նահատակվում Ֆրանսիական հեղափոխության քաղաքական գաղափարները:

Ցանկալի է ընդգծել, թե ինչու է Նապոլեոնի կառավարումն անընդունելի եվրոպական մյուս միապետությունների համար, և ինչու է Նապոլեոնի համակարգը նշանակում Նոր ժամանակվա մուտք Եվրոպայի քաղաքական կյանք:

Նապոլեոնի հաղթանակների վերլուծության ժամանակ լավ կլինի շեշտել ու բացատրել, թե ինչ դրական գործոններ է բերում իր հետ մերիտոկրատական համակարգը, և ինչու է մերիտոկրատական համակարգը պարտության մատնում դասային-միապետականին:

ԳԼՈՒԽ 6. ԵՎՐՈՊԱՆ ՎԻԵՆԱՅԻ ԿՈՆԳՐԵՍԻ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

§52-53. Ինչպես փոխեց արդյունաբերական հեղափոխությունը Եվրոպան

Պետք է հստակ բացատրել, թե ինչպես արդյունաբերական հեղափոխությունը փոխարինեց ձեռքի աշխատանքը մեքենայական աշխատանքով, և աշակերտին ցույց տալ արդյունաբերական հեղափոխության կապը գիտության զարգացման հետ: Աշակերտը պետք է տեսնի, թե ինչպես է պայմանավորաձև տնտեսության և տեխնիկայի զարգացումը գիտության զարգացմամբ:

Ցանկալի է, որ աշակերտը տեսնի, թե ինչու էր Անգլիայի համար կարևոր գաղութներից ստացված հումքի գործարանային վերամշակումը և դրա վերածումը արտադրանքի: Հասկանա, թե ինչ գործոններ են նպաստել Անգլիայում արդյունաբերական հեղափոխության մեկնարկին: Անհրաժեշտ է, որ աշակերտը հասկանա, թե ինչպես է արդյունաբերական հեղափոխությունը փոխել եվրոպական հասարակությանը, ինչպես և ինչու է սկսվել ուրբանիզացիայի գործընթացը և քաղաքը վերածվել տնտեսական ու քաղաքական կենտրոնի, և ինչպես են ձևավորվել նոր

հասարակական խմբեր և շերտեր:

Ցանկալի է, որ աշակերտը տեսնի, որ հենց նոր ձևավորվող հասարակական շերտերից են աճել և առաջացել առաջին քաղաքական կուսակցությունները, որոնք արտահայտում էին այս շերտերի ինքնությունը, հետաքրքրությունները և մտահոգությունները: Լավ կլինի, որ աշակերտը հասկանա, որ քաղաքական կուսակցությունը արևմտյան քաղաքական ավանդույթում հենց հասարակական խմբերի շահերն արտահայտողն է:

Անհրաժեշտ է, որ աշակերտը գա այն կայուն պատկերացմանը, որ այս դարաշրջանում հենց արդյունաբերականացման որակն է առաջընթացի և զարգացման հիմնական որոշիչը:

§54-55. Ինչու է XIX դարը համարվում Բրիտանական կայսրության փառքի դարաշրջան

Լավ կլինի, որ աշակերտը հստակ հասկանա Վիեննայի կոնգրեսի հետևանքները և հասկանա, թե Ինչու Վիեննայի Կոնգրեսը նպաստեց Եվրոպայում քաղաքական կայունության երկար ժամանակով պահպանմանը:

Անհրաժեշտ է շեշտադրում անել իշխանության և կառավարման մոդելների ըմբռնման վրա, և աշակերտը կհասնի այն մտքին, որ Վիեննայի Կոնգրեսի գլխավոր նպատակը Եվրոպայում նոր հեղափոխական ալիք թույլ չտալն էր և միապետական համակարգը պահպանելը: Աշակերտը պետք է կարողանա Ֆրանսիական հեղափոխությունը և Վիեննայի կոնգրեսն ընկալել որպես երկու տարբեր քաղաքական արժեքային համակարգեր մեկ համատեքստում և դրանց հակադրությունը գաղափարական մակարդակում:

Ցանկալի կլինի, որ հստակ սահմանել, թե ինչ գործոնների վրա էր հիմնված Բրիտանական կայսրության հզորությունը, և որն էր Բրիտանիայի քաղաքական-տնտեսական ռազմավարությունը:

§56-57. Ինչպես Ռուսաստանը դարձավ Արևելքի կարևորագույն քաղաքական ուժը

Ցանկալի է, որ աշակերտը հստակ տեսնի Ռուսաստանի զարգացման պատմությունը Պետրոս I-ից ողջ XVII-XVIII դարերում և ընկալի այն ռազմավարական տարածքները (այդ թվում Կովկասը), որոնց ուղղությամբ Ռուսաստանը փորձում է ընդլայնվել:

Լավ կլինի, որ աշակերտը համեմատի Ռուսաստանը և Արևմտյան Եվրոպայի պետությունները, ըմբռնի, թե ինչպես և ինչու է Ռուսաստանը ետ փնտրում Եվրոպայից և հասկանա, որ հրաժարվելով բարեփոխումներից և պահպանելով միահեծան միապետությունը՝ Ռուսաստանը հիմնովին հետ կժամա Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններից:

Անհրաժեշտ է, որ աշակերտը կարողանա ըմբռնել Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները Եվրոպական համատեքստում, համեմատել նրա հետ և դատողություն անել նմանությունների ու տարբերությունների մասին:

§58-59. Ինչպես փոխեցին 1848 թվականը և Ղրիմի պատերազմը եվրոպական իրականությունը

Ցանկալի է, որ աշակերտը հստակ տեսնի, որ Ֆրանսիայում միապետության վերականգնումից հետո նույնիսկ անհնար էր հեղափոխության և Նապոլեոնի կառավարման հետևանքներն ամբողջությամբ չեղարկել և մինչհեղափոխական անցյալ վերադառնալ:

Լավ կլինի, որ աշակերտը գա այն մտքին, որ այդ ժամանակահատվածի համար միապետական համակարգը այնքան հետաժամաց էր և հաշվի չէր առնում լայն զանգվածների ցանկություններն ու շահերը, որ հեղափոխությունը միայն ժամանակի հարց էր:

Անհրաժեշտ է, որ աշակերտը տեսնի, թե ինչպես է փոխվում Ֆրանսիայի քաղաքականությունը 1848 թվականի հեղափոխությունից հետո:

Անհրաժեշտ է, որ աշակերտը Ղրիմի պատերազմի համատեքստում հստակ տեսնի և համեմատի Արևմտաեվրոպական աշխարհը և Ռուսաստանը, որպեսզի ընկալի, որ Ռուսաստանի ձախողումը քաղաքական-տնտեսական բարեփոխումներից հրաժարվելու հետևանք է:

ԳԼՈՒԽ 7. ԳԼՈՒԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

§60-61. Ինչպես ռոմանտիկ ազգայնականությունը հանգեցրեց միացյալ Իտալիայի ստեղծման

Անհրաժեշտ է, որ աշակերտը բացատրի, թե ինչպիսին էր իշխանությունն ու պետության ընկալումը նախորդ պատմական ժամանակաշրջաններում, և ինչպես են ստեղծվում իշխանության ու պետության նոր գաղափարն ու հայեցակարգը, որինչը հիմնվում է ընդհանուր մշակույթ և պատմական անցյալ ունեցող ժողովրդի միասնության վրա:

Լավ կլինի, որ աշակերտը հասկանա, թե ինչով են իրարից տարբերվում ազգայնականության ֆրանսիական և գերմանական ըմբռումը, և որն է տարբերությունը ժամանակակից և XIX դարի ազգայնականության միջև:

Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ տեսնի, թե ինչ գործոններ են նպաստում Միասնական Իտալիայի ստեղծմանը, և որ մեծ քաղաքական պետությունների շահերն էին հատվում Իտալիայում:

§62-63-64. Ինչու սկսվեց քաղաքացիական պատերազմը Ամերիկայում

Պետք է, որ աշակերտը տեսնի, թե որքան օրգանական է Ամերիկայի համար ներքին քաղաքական քննարկումը և այս քննարկման փոխզիջումային լուծման մշակույթը:

Ցանկալի կլինեք, որ աշակերտը տեսնի, որ պատմականորեն Ամերիկայի համար օրգանական է դիմակայությունը դաշնային կառավարության և նահանգների միջև, և այս դիմակայությունը վերաբերում է իշխանության տարանջատման մոդելին:

Անհրաժեշտ է, որ աշակերտը վերլուծի, թե ինչպես են տարբերվում միմյանցից հյուսիսային և հարավային նահանգները՝ նրանց տնտեսությունները, հասարակությունները և քաղաքական տեսլականները:

Լավ կլինի, որ աշակերտը հստակ ընկալի, թե ինչպես է փոխվում հասարակությունը և կռահի,

որ արդյունաբերականացման բարձր աստիճանը հյուսիսային նահանգների հաղթանակի հիմնական պատճառն է:

§65. Ինչպես զարգացավ Հեռավոր Արևելքը

Աշակերտը պետք է կարողանա քննարկել Արևելքի և Եվրոպայի պատմությունը մեկ համատեքստում և համանման քաղաքական-տնտեսական խնդիրներն ընկալել միասնական տեսանկյունից կտրվածքում:

Ցանկալի է, որ աշակերտը գա այն մտքին, որ Ճապոնիան ու Չինաստանը առաջին փուլում չկարողացան համաքայլ գնալ արևմտյան աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին տեխնոլոգիական, տնտեսական և քաղաքական մակարդակով, ինչը հանգեցրեց այս երկու աշխարհների միջև մեծ տարբերության:

Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ տեսնի, թե ինչպես է Ճապոնիան արձագանքում ճգնաժամին բարեփոխումների ճանապարհով, իսկ Չինաստանը դառնում է ավելի փակ, ինչը միայն խորացնում է այս ճգնաժամը:

§67-68. Ինչպես փոխվեց Եվրոպան Գերմանիայի միավորմամբ

Անհրաժեշտ է, որ աշակերտը հասկանա, թե ինչ գործոններ են խանգարել Գերմանիայի միավորմանը՝ ինչպես, ինչ հիմնական մասերի էր բաժանվում Գերմանիան, և ինչպիսին էին այս մասերի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական առանձնահատկությունները:

Լավ կլինի, որ աշակերտը Գերմանիայի ստեղծումը կապի արդեն սովորած նյութի հետ՝ ազգային պետությունների ստեղծման մասին:

Անհրաժեշտ է, որ աշակերտը Պրուսիայի արտաքին պատերազմներում հաղթանակը կապի իր արդեն սովորած արդյունաբերականացման հարցի հետ և բացատրի այս գործոնով:

Լավ կլինի, որ աշակերտը հասնի այն պատկերացման, թե ինչպես է դարի վերջին փոխում Միասնական Գերմանիայի ստեղծումը Եվրոպայում քաղաքական հավասարակշռությունը, թե XIX դարի վերջին ինչպես է սկսվում նոր կռալիցիաների ստեղծումը: